

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱՆԱՐԱՆ

Վաչագան Ավագյան

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԸ

ԵՎ ՎԵՐԱԾՆԿԱԾ

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԵՍԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. Ավագյան

**ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԸ
ԵՎ ՎԵՐԱԾՆՎԱԾ
«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
2025**

ՀՏԳ- 070(091)

ԳՄԴ 76.0

Ա 770

Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Գրախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալբերտ Մակարյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Մուրադյան

Խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Անահիտ Բրուտյան

Ավագյան Վ.

Ա 770 Արշակ Չոպանյանը և վերածնված «Անահիտ» հանդեսը. -Եր., ԵՊՀ հրատ., 2025, 194 էջ:

Գրքում առաջին անգամ փորձ է արվում հնարավորին չափ համակողմանիորեն և հիմնավոր ներկայացնելու հեղինակավոր «Անահիտ» (Փարիզ) հանդեսի երկրորդ շրջանի (1929-1941 թթ., 1946-1949 թթ.) պատմությունն ու գործունեության բազմաբովանդակ համայնապատկերը, տարու նրա հասարակական, ազգային-քաղաքական ու գեղագիտական դերի գնահատականը: Մենագրության մեջ զուգահեռաբար անդրադարձ է արվում հանդեսի խմբագիր Արշակ Չոպանյանի ընդարձակ ու բեղմնավոր գործունեությանը պատմական այդ ժամանակաշրջանում, այցելությանը Խորհրդային Հայաստան: Ա. Չոպանյանը ներկայացված է որպես հմուտ գրաքննադատ, ազգային-մշակութային խոշոր գործիչ, լայնախոհ խմբագիր ու հրատարակիչ, որը չափազանց մեծ դեր է ունեցել հայ գրականության նվաճումները գնահատելու և մատուցելու, հայեվրոպական, մասնավորապես՝ հայ-ֆրանսիական ժողովուրդների գրական-մշակութային կապերն ամրապնդելու ու ծավալելու, օտար հեղինակների ստեղծագործությունները թարգմանելու և հայ ընթերցողին փոխանցելու, ինչպես նաև Սփյուռք-Խորհրդային Հայաստան փոխառնչություններն ընդլայնելու և զարգացնելու գործում:

Գիրքը օգտակար կլինի հայ գրականության և մամուլի պատմությանը զբաղվողներին, բանասիրության, պատմության և լրագրության ֆակուլտետների ուսանողներին, ինչպես նաև ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԳ- 070(091)

ԳՄԴ 76.0

ISBN 978-5-8084-2701-3

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427013>

© ԵՊՀ հրատ., 2025

© Ավագյան Վ., 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1	
ՆՈՐԱՍՏԵՂԾ «ԱՆԱՀԻՏԻ» ԾՐԱԳԻՐԸ.....	8
ԳԼՈՒԽ 2	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	16
ԳԼՈՒԽ 3	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԱՆԱՀԻՏԻ» ԵՐԿՐՈՐԳ- ՇՐՋԱՆՈՒՄ 40	40
3.1. Համաշխարհային գրականության քարոզը հանդեսում.....	40
3.2. Հայ միջնադարյան գրականությունը և նրա ավանդները ..	53
3.3. Հայ նոր գրականության արժևորումը.....	62
3.4. Հայ գրականության նոր դարազրույիսը և գրական ուղիների հարցը.....	81
ԳԼՈՒԽ 4	
ՀԱՆԴԵՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ.....	134
ԳԼՈՒԽ 5	
ՎԵՐԱՀԱՍ ԱՂԵՏԸ ԵՎ «ԱՆԱՀԻՏԻ» ՓԱԿՈՒՄԸ.....	167
ԱՄՓՈՓՈՒՄ.....	176
PEՅIOME.....	180
SUMMARY.....	181
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	182
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ.....	187

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյանի խմբագրած ազգային, գրական-գեղարվեստական «Անահիտ» հանդեսը, հիրավի, բացառիկ տեղ և նշանակություն ունի հայ պատմամշակութային կյանքի տարեգրության մեջ¹: Շուրջ երեսուն տարի լինելով ասպարեզում՝ պարբերական անփոխարինելի դեր է խաղացել հայ մշակույթի, գրականության և գեղարվեստի զարգացման գործում, մեծապես նպաստել հայ ու եվրոպական ժողովուրդների գրական կապերի ամրապնդմանը, Հայ դատի պաշտպանությանը, արևմտահայ և արևելահայ, իսկ հետագայում Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի հասարակական-մշակութային առնչությունների առաջընթացին ու զորացմանը և հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել է իր կայուն և կարևոր տեղը: Հանդեսի հրատարակությունը, ինչպես հայտնի է, սկսվել է 1898 թ. Փարիզում ու երբեմն երկարատև, երբեմն համեմատաբար կարճատև ընդհատումներով շարունակվել մինչև 1949 թ.: Այն ունեցել է հրատարակության երկու շրջան.

¹ Արշակ Չոպանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված են մի շարք մենագրական ուսումնասիրություններ և հոդվածներ: Մենագրություններից տես **Արմեն Ե.**, Արշակ Չոպանյան: Կենսքը եւ գրական ու հասարակական գործունեությունը, Կ. Պոլիս, տպ. Ռ. Սազաեան, 1913, **Հապէշեան Հ.**, Արշակ Չոպանյան: Կենսագրական գիծեր, Փարիզ, տպ. Կ. Յ. Ներսէս, 1924, **Ֆէնէրեան Գ.**, Արշակ Չոպանյան: Կենսագրական եւ մատենագրական նօթեր, տպ. Խ. Մաթիկեան, Փարիզ, 1938, **Ալեքսանյան Տ.**, Արշակ Չոպանյան, Աբեմք, տպ. Պարթեւոն, 1939, **Գալսթյան Կ.**, Արշակ Չոպանյան, Երևան, «Սովետական գրող» հրատ, 1987: Իսկ հոդվածներից տես **Ստեփանյան Գ.**, Արշակ Չոպանյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1972, №3, էջ 129-142, **Ավետիսյան Յու.**, Արշակ Չոպանյան. Կյանքի և ստեղծագործության ուրվագիծ (ծննդյան 125-ամյակը), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1997, №3, էջ 42-56, **Ավագյան Վ.**, Արշակ Չոպանյանի կյանքի և գործունեության նկարագիրը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2022, №3, էջ 63-88:

առաջինը՝ 1898-1911 թթ., և երկրորդը՝ 1929-1941 թթ. ու 1946-1949 թթ.: Վերջին համարը ընդգրկում է 1949 թ. առաջին կիսամյակը:

«Անահիտի» առաջին շրջանի գործունեությունը դարձել է առանձին հետազոտության նյութ², մինչդեռ հանդեսի երկրորդ շրջանը հատուկ ուսումնասիրության առարկա դեռ չի եղել: Իհարկե, թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում տարբեր հեղինակներ այս կամ այն չափով անդրադարձել են «Անահիտի» երկրորդ շրջանի գործունեությանը, նրա վերաբերյալ բնութագրական խոսք է ասվել նաև տարբեր գրողների ու հրապարակախոսների գրական ժառանգությանը, ինչպես և հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին ու գրականությանը նվիրված բազմաթիվ հոդվածներում ու հետազոտություններում, ակադեմիական առանձին հրատարակություններում և այլն, սակայն այդ գնահատականները կամ դիտարկումները, հաճախ լինելով ակնարկային, գրված առաջաբանների սահմանում, բանախոսությունների ոճով կամ ընդհանուր գնահատանքի մակարդակով, չեն ներկայացնում հանդեսի երկրորդ շրջանի լայնածավալ ու բազմաբնույթ գործունեության ամբողջական պատկերը, չեն տալիս նրա ազգային-հասարակական ու գեղագիտական գնահատականը: Առկա ուսումնասիրությունների շարքում առանձնանում է Կարլեն Դալլաբյանի «Արշակ Չոպանյան» բարձրարժեք մենագրությունը, որտեղ հեղինակը մի առանձին գլխով (էջ 414-475) անդրադարձել է «Անահիտի» երկրորդ շրջանին³: Արժանին մատուցելով անվանի չոպանյանագետին, պետք է նկատել, սակայն, որ նա չի տվել հանդեսի ամբողջական նկարագիրը, մասամբ է բացահայտել նրա հասարակական ու գրական-գեղարվեստական բովանդակ նշանակությունը:

Մենք փորձ ենք արել թեև հակիրճ, այնուամենայնիվ առավել հիմնավոր ներկայացնել «Անահիտի» գործունեության երկրորդ շրջանի էական կողմերը, տալ նրա ազգային-հասարակական ու

² Տե՛ս **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1999, 228 էջ:

³ **Դալլաբյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, «Մովետական գրող» հրատ, Երևան, 1987, էջ 414-475:

գեղագիտական գնահատականը, ինչպես նաև տեսանելի դարձնել հանդեսի խմբագրապետի՝ աշխատակիցներից մեկի դիպուկ բնութագրմամբ՝ «Անահիտական (Անահիտի- Վ. Ա.) պերճ մեհեանին քրմապետի»⁴ այդ ժամանակաշրջանի այլազան գործունեությանը վերաբերող տարբեր դրվագներ ու էջեր:

⁴ **Մորճիկեան Պ.**, Յաղագս ըթաղութեան (նամակ **Անահիտի** խմբագրութեան), «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, քիւ 1, էջ 4:

ԳԼՈՒԽ 1 ՆՈՐԱՍՏԵՂԾ «ԱՆԱՀԻՏԻ» ԾՐԱԳԻՐԸ

Հայտնի է, թե 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին «Անահիտը» ինչ դեր ունեցավ արևմտահայ գրական-գեղարվեստական ընթացքի կազմակերպման գործում, որքան սկզբունքային եղան Չոպանյանի՝ հանդեսում տեղ գտած գեղագիտական դրույթները: «Անահիտը» նպաստեց հայ ժողովրդի, մանավանդ նրա արևմտյան հատվածի քաղաքական ինքնագիտակցության հասունացմանը, նրա բազմակողմանի լուսավորության ու ազգային արժանապատվության զգացմունքի զարգացմանը⁵: Բայց և հայտնի է, որ 1911 թ. նյութական միջոցների պակասը և մանավանդ առաջ եկած նյարդային հիվանդությունը ստիպեցին Չոպանյանին դադարեցնել «Անահիտի» հրատարակությունը, որը հոգեկան մեծ ցավ պատճառեց նրան⁶: Թվում է՝ բազմաթիվ նպատակներ մնացին անկատար, մեծաքանակ ծրագրեր՝ կիսատ: Բայց ահա արդեն 1928 թվականի վերջերից Ա. Չոպանյանը գործնական նախապատրաստական աշխատանքներ է տանում «Անահիտ» հանդեսի վերահրատարակության ուղղությամբ⁷՝ նպատակ ունենալով շարունակելու նախորդ շրջանի գրական-ծրագրային ավանդները, Առաջին համաշխարհային ժամանակ մեր ժողովրդին և մշակույթին պատուհասած դժբախտություններից հետո կազմակերպելու և վերածնելու նոր ժամանակների ազգային-գրական կյանքի ընթացքը: 1929

⁵ Այդ ամենի մասին մանրամասնորեն տե՛ս **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 41-173:

⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Հուսկ բանք, «Անահիտ», Փարիզ, 1911, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 9-12, էջ 193: Նաև՝ **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1987, էջ 292:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 414:

թ. սկզբին նա Ռամկավար ազատական կուսակցության՝ Եգիպտոսում հրատարակվող «Արեւ» պաշտոնաթերթում, որին աշխատակցում էր պարբերաբար, մի հայտարարություն տպագրեց «Անահիտի» նոր շրջանի վերսկսման մասին, որում ըստ էության շարադրեց իր նպատակադրումներն ու մղումները, ներկայացրեց հրատարակության ծրագիրն ու դրույթները⁸: Ինչպես հասկանում ենք նրա խոսքից, նա քարեկամների հաճախ կրկնվող ջերմ պնդումներն են դրդել վերահրատարակելու հանդեսը, բայց առավել էականը, անշուշտ, եղել է հենց իր՝ Չոպանյանի նախաձեռնությունը՝ գրական և ազգային-հասարակական ամենատարբեր աշխատանքներին զուգահեռ իր ազգի առջև ստանձնելու պարտականություն՝ երևան բերելու նոր «Անահիտը»:

Եվ ահա տասնութ տարվա ընդմիջումից հետո՝ 1929 թ. մայիսին, հրատարակվեց նոր «Անահիտի» առաջին համարը:

Իսկ ինչպիսի՞ն էր այդժամ հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայության վիճակը: Մի կարճ հայացք նետելով պատմական մոտ անցյալի համաշխարհային իրադարձությունների, դրանց հետևանքների և ներկա իրողությունների պատկերի վրա՝ Չոպանյանը դառնությամբ գրում է. «Աշխարհը հիւանդ է: Մարդկային պատմութեան ամենէն մռայլ, խառնաշփոթ ու ավտատոր շրջաններէն մէկուն մէջ է որ կը գտնուինք... Բարոյական ընդհանուր անկում կայ»⁹: Քաղաքական անհաստատ, «վատախտարակ» (Ա. Չոպանյան) պատմական այս շրջանում արևմտահայության մեծ մասը, ցրված աշխարհով մեկ, տարագրության մեջ իր համար ստեղծված նոր իրավիճակում ապրում էր անհանգստություն, եթե չասենք տագնապ: Կար ինքնապահպանության ծանր ու բարդ խնդիրը: Եվ եթե շատերը, արդեն հուսալքված ու մռայլ, հաշտվել էին վերջնական անկմանն ու ուժացմանը, Չոպանյանը

⁸ **Չոպանյան Ա.**, «Անահիտ» հանդեսին նոր շրջանը (վերջը յաջորդով), «Արեւ», Գահիրէ, 1929, 30 յունվար, թիւ 3036, էջ 2, **Չոպանյան Ա.**, «Անահիտ» հանդեսին նոր շրջանը (Շար. երէկի թիւէն եւ վերջ), «Արեւ», Գահիրէ, 1929, 31 յունվար, թիւ 3037, էջ 2:

⁹ **Չոպանյան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 159:

չկորցրեց իր լավատեսությունը, տեսավ ու գտավ «յուսադրիչ, ոգեւորիչ, սրտապնդիչ քանի մը կէտեր», որոնք կապահովէին մեր ժողովրդի հետագա գոյությունը¹⁰: Նոր «Անահիտի» առաջին համարում՝ «Յեղին կոչումը» խորագիրը կրող առաջնորդում, լրացնելով ու զարգացնելով արդէն «Արեւից» ծանոթ ծրագրային դրույթները, Չոպանյանը սահմանեց հանդեսի նպատակն ու բովանդակությունը: Մեր ժողովրդի համար բազմաթիվ առանձնահատկությունների համեմատ առավել ընդհանրականն ու տևականը համարելով նրա աշխատասիրությունն ու հնարամտությունը, մանավանդ մտավորական ձիրքը՝ Չոպանյանը կարծում է, որ հենց դրանցում պետք է փնտրել ու տեսնել հայ ցեղի մեծությունը¹¹: Նա ընդառաջ է գալիս տարածական այն մտայնությանը, թե անկախության կորստից հետո հայ ազգությունը պահպանող գլխավոր ուժը դարձել է մեր ազգային եկեղեցին¹², սակայն այն ճշմարիտ ընկալմամբ, որ եկեղեցին եղել է մեր ազգային մշակույթի խտացումը, ազգային գիտակցության այն կարևոր միջնաբերդը, որ իր գրողներով, ճարտասաններով, գիտուններով ու արվեստագետներով պահպանել է սերը հայրենի հողի ու ավանդույթների հանդեպ: Ազգային ինքնավարությունից դարբերով այրիացած մեր ժողովրդի համար Չոպանյանը մասնավորապես մշակույթն է համարում այն քանկագին ու առանցքային լծակը, որն ապահովել է մեր ժողովրդի ինքնուրույնության դիմագիծը, այն էական գործոնը, որ կենսունակություն է հաղորդել ազգային իդճերին: Առաջին համաշխարհային պատերազմի՝ մեր ժողովրդին պատճառած բազմաթիվ աղետներից հետո, ճիշտ է, թեև անհամար երազանքներ ավերվել էին, սակայն, ինչպես նշում է մեծ մտավորականը, որպես սփոփանք հառնել է «Ազգային Տունը»՝ «Արարատին ու Արագածին մէջտեղ ապրող ու

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 161:

¹¹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 1-2:

¹² Նույն միտքը տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Տպարտութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 94:

գարգացող մանրիկ Հայ Տէրութունը»՝ որպէս հայ ազգի և հայ մշակույթի ապագան ապահովող էական ազդակ¹³: Մթափ գնահատելով բուն հայրենիքում ստեղծված նոր կացութիւնը՝ Չոպանյանը կարծում է, որ անցած մեծ աղետներից, պայքարներից ու մեծ հուսախաբութիւններից ու հույսերից հետո մեր ազգի ամենաէական հաջողութիւնը նորաստեղծ Խորհրդային Հայաստանի գոյության իրողութիւնն է. «Ասիկա,- գրում է նա,- մեծ ու բարեբաստիկ նորութիւն մըն է մեր ազգային կեանքին մէջ, և այդ վերականգնած հայրենիքին հողային ծայրայեղ փոքրութիւնը ու հոն տիրող թէժմին մեր ռամկավարական ու ազատական սկզբունքներուն համաձայն չըլլալը՝ այդ փրկարար ու բեղմնատր նորութեան հիմնական արժէքն ու նշանակութիւնը պետք չէ երբեք նուազեցնեն: Հողամասը կրնայ օր մը մեծնալ, թէժիմը բարեշրջուիլ, էականը՝ արդի բոլորիկ համար այն է որ հոն, հայրենի հողին վրայ, Հայութեան մէկ ստուար գանգուածը կ'ապրի հայկական կեանքով, և կարելիութիւնն ունի ազգային քաղաքակրթութեան գլխատր տարրերը պահպանելու և զանոնք զարգացման մէջ դնելու»¹⁴: Ասվածից դժվար չէ կռահել, որ եթէ Չոպանյանի համար Արևելյան Հայաստանում հաստատված քաղաքական կարգերն անգամ ինչ-որ իմաստով ընդունելի չէին, կային գաղափարական ինչ-ինչ խոչընդոտներ, որոնք արգելակում էին մտավոր կյանքի լիակատար զարգացումը, և անվանի մտավորականը ուներ որոշ վերապահումներ, որոնք երբեմն-երբեմն տարբեր առիթներով արտահայտել է¹⁵, այնուամենայնիվ նա այդ

¹³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 161:

¹⁴ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 3-4:

¹⁵ Տե՛ս, օրինակ, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 163: Նաև՝ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 161, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 171, **Չոպանեան Ա.**, Հայաստանի կուլտուրայի պատմութեան ինստիտուտը, Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 12, նույն տեղում, էջ 91, **Չոպանեան Ա.**, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 8, 10, 22, **Չոպանեան Ա.**, Տպատրութիւններ ու յի-

ամենը երկրորդական է համարում այն կարևոր փաստի համեմատությամբ, որը Խորհրդային Հայաստանի գոյությունն է՝ իր պետական լեզվով, համալսարանով, մատենադարանով, թատրոնով ու դպրոցներով. «Մենք կ'ընդունինք արդարեւ որ Խորհ. Հայաստանը միակ փրկութեան լաստն է հայ ազգի եւ հայ մշակոյթի գոյութեան, որովհետեւ ուրիշ Հայաստան չունինք եւ կարելի ալ չէ ներկայ պայմաններուն մէջ որ ունենանք, եւ որովհետեւ այդ Հայաստանը իրեն իրական ու դրական պաշտպան ունի իր դրացի ու շահակից զինուորական ու քաղաքական այն մեծ կազմակերպութեան որ է Խորհ. Միութիւնը...»¹⁶:

Չոպանյանն առանձնահատուկ կարևորություն էր տալիս նաև բնօրրանից տարագրված արևմտահայության ճակատագրի հարցին, նրա ազգային-հավաքական նկարագրի պահպանման խնդրին: Գաղթօջախներում ապաստանած հայության մեջ Չոպանյանը տեսնում էր գրական-գիտական հսկայական ներուժ, որը գոնե կես դար, ինչպես ինքն էր կարծում, կարող էր ապահովել ազգային կյանքի ինքնուրույնությունը և իր օգուտը բերել թե՛ Հայաստանին, թե՛ սփյուռքահայությանը և թե՛ ընդհանուր ազգային մշակույթին¹⁷:

Համոզված, որ հայկական այդ հսկա զանգվածը լի է բարոյական ու մտավոր ուժերով՝ Չոպանյանը յուրաքանչյուր տարագիր հայի համար տվյալ շրջանում հարկադրական էր համարում հայ մնալու պահանջը, իրավացիորեն պնդում, որ փոխանակ կորուստների համար շարունակաբար ողբալու և վիատվելու, մեր միտքը, գործված անարդարությունների վրա սևեռելով ամլացնելու, պետք է ամեն ինչ անել՝ նպաստելու հայ ոգու ու դիմագծի պահպանման-

շատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 16, **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 14-15:

¹⁶ **Չոպանեան Ա.**, Մեր երէկն ու այսօրը. Ա., «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 12: Գրեթէ նույն միտքը տեսնաւ նույն տեղում՝ էջ 17:

¹⁷ Տես **Չոպանեան Ա.**, Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 4:

նր: Այս հարցերում Չոպանյանը տեսնում էր երկու հիմնական ուղի: **Առաջին.** մշտապես աչքի առաջ ունենալով ներկա Հայաստանի պատկերը՝ հոգով կապվել նրա հետ, մասնակցել նրա վերակառուցման աշխատանքներին, ոգևորվել նրա յուրաքանչյուր հաջողությամբ, հետևել ազգային մշակույթի զարգացման համար գործադրվող բոլոր ճիգերին, գնահատել այն ամենը, ինչ կա ամուր և մնայուն: Եվ **երկրորդ.** գաղթօջախներում ապաստանած հայության և մասնավորապես արևմտահայության աջակցությունը բերել հայ ազգային մշակույթի զարգացման ընդհանուր գործին, պահպանել արևմտահայ լեզուն (իր խոսքով՝ բարբառը- **Վ. Ա.**) ու գրականությունը, որ ինքնատիպ ճոխություն են մեր ազգային մտավոր գանձարանի մեջ, եվրոպական և ամերիկյան քաղաքակրթության բարձր արժեքները յուրացնելով՝ նպաստել մեր ազգային մշակույթի ընդլայնմանն ու զարգացմանը¹⁸: Սա էր գլխավորապես նոր «Անահիտի» ազգային-հասարակական, գրական-գեղագիտական հայեցակարգը, որը հետևողականորեն նա պաշտպանեց իր գործունեությամբ:

Ըստ Ա. Չոպանյանի՝ հարաբերությունները Խորհրդային Հայաստանի և գաղթօջախների միջև գոնե մշակութային բնագավառներում պիտի սերտանան, լրացնեն միմյանց, և ինչպես սփյուռքահայությունը կարող էր Հայաստանի մշակութային կյանքից շատ բան սովորել, այնպես էլ Հայաստանի մտավորականները և գրողները կարող էին օգտվել գաղութահայության գրական-գեղարվեստական, գիտական արտադրություններից: Փոխադարձ կապը հայրենիքի և սփյուռքահայության միջև նա համարում է պարտադիր՝ վստահ, որ միայն այդ կերպ կարելի էր ապահովել մեր մշակույթի ընդհանուր առաջխաղացումը: Ուրեմն՝ հայրենիքի և գաղութահայության միջև առնչությունների ամրապնդման, մտավոր ուժերի՝ հանուն ընդհանրական ու միաձույլ մշակույթի միավորման ու մեկտեղման ուժգին ձգտումն էր նաև, որ Չոպանյանին մղեց

¹⁸ Տես նույն տեղում: Նույն գաղափարները Ա. Չոպանյանը առաջադրում է և հետագայում. տես, օրինակ, **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 92:

ձեռնամուխ լինելու «Անահիտի» վերսկսմանը¹⁹: 1928 թ. Գարեգին Լևոնյանին ուղղված նամակում Չոպանյանը գրում է. «Կուգեմ որ «Անահիտը» կապ մը ըլլա Խորհրդային Հայաստանի և արտասահմանի հայ մտավոր լավագույն ուժերուն միջև և անոնց գործակցությամբ ծառայե մեր ազգային մշակույթի զարգացմանը»²⁰:

Ահա այս իդեերի իրականացմանը նաև պետք է իր նպաստը բերեր նոր «Անահիտը»՝ կոչված հիշյալ նպատակների ու ծրագրերի կենսագործմամբ ապահովելու Սփյուռքի հայության, մանավանդ նորահաս սերնդի ազգային ինքնությունությունը:

«Մշակույթը հոգին է ազգերուն»²¹, - իրավացիորեն նշում է Չոպանյանը՝ համոզված, որ թվով ու քաղաքական կարողություններով փոքր ազգերը իրենց ծնած սեփական հանճարների շնորհիվ, ինչպես փաստում է նրանցից շատերի պատմությունը, դարձել են գորեղ ու մնայուն: Երբեք չի կարելի վիճարկել այն ազգի գոյությունն ու ապագան, որն ընդունակ է ծնելու հանճարներ, գրական-գիտական տաղանդներ: Սակայն կա մի կարևոր նախապայման՝ երբեք չխաբել կապերը անցյալի հետ: Այստեղից էլ բխում է Չոպանյանի, ըստ էության, հերթական ու արդեն ծանոթ ծրագրային դրույթը, որը հնչում է որպես պատգամ հայության բոլոր սերունդներին. «Ճանչցեն՝նք ճշգրտօրէն մեր նոր սերունդին ինչ որ մեր հին նախահայրերն ըրեր են քաղաքակրթութեան համար, ինչ որ երկուսն ու այսօրուսն հայ մտքի տաղանդաւոր ներկայացուցիչները կը շարունակեն ընել. զօրացնենք մեր երիտասարդութեան մէջ իր հաւատքը ցեղին արժէքին վրայ, մղենք զայն սիրել իր ցեղը՝ իբր մարդկութեան մտաւոր ուժերէն մին, խրախուսենք այդ մտաւոր ուժն աճեցնելու նուիրուած ու է ճիգ որ մեր մէջ կը յատնուի. և անցեալին մէջ Նարեկացին ու մեր միջնադարեան բանաստեղծներեն ու Անիի և Աղթամարի ճարտարապետներն արտադրող ազգը օր մը

¹⁹ Տե՛ս **Գաբրիելյան Վ., Ա.** Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, №1, էջ 40:

²⁰ **Չոպանյան Ա.,** Նամականի, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1980, էջ 176:

²¹ **Չօպանեան Ա.,** Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 5:

կարող պիտի դառնայ Երևանը նոր Աթէնք մը դարձնել և հայ Ֆի-դիաս մը հայ Շէքսպիր մը, հայ Բամպրանտ մը կամ հայ Պէթովըն մը տալ ինքզինքին ու մարդկութեան»²²:

Ուշագրավ է, որ նոր «Անահիտի» առաջին իսկ համարում Չոպանյանը առաջարկություն է անում բնօրրանում՝ Հայաստանում ապրող հայագետներին, արվեստագետներին ու գրողներին աջակցություն «բերել այս մտաւոր ձեռնարկին», անձնական գործերը տպագրելով հանդեսի էջերում՝ սեփական խոսքը միացնել «պանդուխտ հայութեան ձայնին»²³: Չոպասելով վերջիններիս արձագանքին՝ նա իր նախաձեռնությամբ հենց առաջին համարում տպագրում է ստեղծագործություններ Գ. Մահարուց, Վ. Նորենցից, Ե. Չարենցից, Ն. Չորյանից, Ավ. Իսահակյանից, Ա. Բակունցից, Դ. Դեմիրճյանից, Մ. Արմենից, Ստ. Չորյանից և ուրիշներից, անդրադառնում է հայրենիքում կազմակերպված մշակութային իրադարձություններին, մասնավորապես Հ. Թումանյանի ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառումներին՝ մեկ անգամ ևս բերելով իր երախտագիտության և գնահատանքի խոսքը մեծ բանաստեղծին ու արտաստպելով նրա բանաստեղծություններից մի քանիսը:

²² Նույն տեղում, էջ 6-7:

²³ Նույն տեղում, էջ 13:

ԳԼՈՒԽ 2

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ինչպես նախկինում, այնպես էլ նոր շրջանում «Անահիտը» անկախ հրատարակություն էր՝ առանց կուսակցական ինչ-որ ընդգծված գաղափարախոսության. «Ազգին շահը կուսակցութեան շահեն վեր դնել միշտ»²⁴, - այս էր Չոպանյանի նշանաբանը: «Ճշմարիտ գրագետն ու բանաստեղծը, - գրում է նա, - կոչովի Թումանյան կամ Չարենց, Թեքեան կամ Միամանթո, Ահարոնյան կամ Իսահակյան, Րաֆֆի կամ Ալիշան, իրենց բուն գրական գործերում մեջ՝ ամեն կուսակցությունէ վեր կը բարձրանան, կը դառնան ներկայացուցիչները ազգին հոգւոյն ու հանճարին: Ասիկա չհասկցողը՝ բուն գրական քննադատութեան – ու նաեւ ճշմարիտ կուսակցական գործունէութեան – անգիտակ կը մնայ»²⁵:

Իսկ սա նշանակում էր, որ Չոպանյանի համար ազգը ավելի լայն հասկացություն էր, քան այս կամ այն կուսակցությունը կամ նրա գաղափարաբանությունը: Ակամա հիշում ես Մխիթար Սեբաստացու խոսքը՝ անշուշտ, ասված այլ առիթով ու նշանակությամբ: Երբ Սեբաստացին լուսավորչական եկեղեցու սարկավագից վերափոխվում է կաթոլիկ եկեղեցու կրոնավորի ու դառնում նշանակալի դեմք, շատերը նրան մեղադրում ու արհամարհում են դավանափոխության համար: Մի կողմ դնելով կրոնական խնդիրը և առաջնորդվելով ազգին իր ծառայությունը բերելու ազնիվ նպատակով՝ իրեն ամբաստանողներին և քննադատներին աբբահայրը

²⁴ **Չոպանյան Ա.**, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 8:

²⁵ **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 91:

պատասխանում է. «...հայ անունն որ ազգի անուն է և ոչ աղանդոյ»²⁶, «Ես ազգով Հայ եմ, կրօնքով կաթոլիկ»²⁷: Իր մեծ նախորդի օրինակով Չոպանյանի համար էլ էականը ազգային շահն էր, նրան բերած օգուտը:

«Ժամանակի սվյոտքահայ պարբերականներից ոչ մեկը թերևս այնքան ուշադիր ու հետևողական չի եղել Խորհրդային Հայաստանի նկատմամբ իր վերաբերմունքում ու գնահատումներում, որքան «Անահիտը»²⁸: Որպես ավանդույթ՝ հանդեսի «Լրատու արուեստի եւ գրականութեան՝ Հայաստանից եւ Կովկասից»²⁹, «Հայաստանէն ձայներ»³⁰, «Տպաւորութիւններ Խորհ. Հայաստանից»³¹ հոդվածաշարերում պարբերաբար տեղեկություններին էին տրվում Խորհ. Հայաստանի, նրա աշխարհագրության, տեղանքների, քաղաքների, ճարտարապետական տարբեր կառույցների ու կոթողների մասին, ինչպես նաև հայաստանյան մշակութային կյանքի, ամենատարբեր միջոցառումների, արվեստի այս կամ այն գործչի գործունեության, նորատիպ հրատարակությունների ու ստեղծագործությունների վերաբերյալ, ներկայացվում էին Հայաստանում տեղի ունեցող տնտեսական վերափոխումները, իսկ ինքը՝ խմբագիրը,

²⁶ **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն (5-19-րդ դարեր), Երևան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986, էջ 146:

²⁷ **Չոպանեան Ա.**, «Բազմավեպ»ի հարիւամեակը, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, քիւ 1, էջ 3:

²⁸ **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը», Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 210:

²⁹ Տե՛ս **Թղթակից**, Լրատու արուեստի եւ գրականութեան Հայաստանից եւ Կովկասից, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, քիւ 6, էջ 124-127, **Թղթակից**, Լրատու արուեստի եւ գրականութեան Հայաստանից եւ Կովկասից, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, քիւ 1, էջ 126-128, **Թղթակից**, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, քիւ 5-6, էջ 189-191, **Թղթակից**, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, քիւ 5-6, էջ 187-190:

³⁰ **Ռոբաքիծ Գ.**, Հայաստան. Հայաստանէն ձայներ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, քիւ 3, էջ 66-76:

³¹ Տե՛ս **Սուրիաբեան**, Տպաւորութիւններ Խորհ. Հայաստանից, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., քիւ 4, էջ 124-126:

իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկներում, որն իր իսկ որակմամբ սովորական հրապարակագրություններ չէին, այլ գրական արտադրություններ³², Խորհրդային Հայաստանին ցվիրված հատուկ բաժիններ ուներ՝ «Հայաստանի մեջ», «Տպառութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն», «Դեպի Հայաստան», «Կացութիւնը Խորհ. Հայաստանի մեջ», որոնցում իրեն հատուկ գեղեցիկ ու գունագեղ ոճով գրում, պատմում էր երկրի մտավոր կյանքի, գիտական նորաստեղծ գլխավոր հաստատությունների, կրթական, գրական-գեղարվեստական մարզերում կատարված գործերի, հայտնված էական երևույթների ու նաև հոգսերի մասին³³:

Հայրենիքից ստացած հրատարակություններից Չոպանյանը մասնավորապէս կարևորում է Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագրերը, «Գրական դիրքերում» և նորաստեղծ «Նոր ուղի» ամսագրերը, որոնցից ստացած տեղեկությունները՝ նորատիպ ուսումնասիրությունների և գրքերի մասին, հակիրճ ծանուցումներով իրագեկում է «Անահիտ» ընթերցողներին: Օրինակ, ամսագրի 1930 թ. հունվար-փետրվարյան համարում հաղորդում է, որ համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Հարություն Սուրխաթյանի «Հին հունական գրականություն», Լեոյի «Հայոց պատմության նորագույն շրջանը» ուսումնասիրություններ-

³² Տե՛ս **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի ընթերցողներում, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 44:

³³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 104-119, **Չոպանեան Ա.**, Տպառութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 78-129, **Չոպանեան Ա.**, Տպառութիւններ եւ յիշատակներ Խորհ. Հայաստանէն, «Անահիտ». Բ., Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 1-29, **Չոպանեան Ա.**, Տպառութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Գ., «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 54-71, **Չոպանեան Ա.**, Տպառութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 1-10, **Չոպանեան Ա.**, Տպառութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 1-15, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 74-81, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1940, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 33-36:

րը, Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» Ա և Բ հատորները և այլ աշխատություններ, իսկ «Նոր ուղին»՝ Արսեն Տերտերյանի, Պողոս Մակինցյանի, Գրիգոր Ղափանցյանի և այլոց մասնագիտական հետազոտությունները՝ «մերթ հմտալից... ու մերթ, թեպէտ՝ աւելի կամ նուազ չափով միակողմանի, համոզման ջերմութեամբ լի...»³⁴: Անհրաժեշտ համարելով բոլոր այդ գրքերը տարածել արտասահմանի հայության մեջ՝ Չոպանյանը մաս պահանջում էր լուրջ նյութական օժանդակություն հասցնել մտավոր աշխատանքի ընդարձակմանն ու զարգացմանը հայրենիքում:

Բացի «Քրոնիկից»՝ մաս «Լրատու արուեստի եւ գրականութեան Հայաստանից եւ Կովկասից», «Ակնարկ մը այժմեան հայ մտաւոր կեանքի վրայ Հայաստանի մէջ» խորագրերի տակ Չոպանյանը դարձյալ հաղորդումներ էր հրապարակում Հայաստանի գրական կյանքի, գրողների հոբելյանների, գրական միջոցառումների մասին, «Անահիտում» զետեղում էր խորհրդահայ գրագետների, բանասերների, արվեստագետների, մշակույթի քննադատների աշխատանքներն ու ուսումնասիրությունները, իր բարձր գնահատականը տալիս նրանցից շատերին: Չոպանյանը մեծ ոգևորությամբ է գրում մաս հայրենիքում երաժշտական արվեստի բուն զարգացման մասին. «Հաճոյք մըն է տեսնել հոն ինչ լավ զարգացում կը գտնէ այժմ Հայաստանի մէջ մեր նոր երաժշտութիւնը, եւրոպական արուեստի նրբութիւններով ու հմտութեամբ վերանորոգուած ու ճոխացած, եւ խորքին մէջ հայ ժողովրդական երգին հետ կապ պահող, եւ որ հետզհետէ կը յառաջանայ ու կ'ընդարձակուի տաղանդաւոր արուեստագէտներու շքեղ հոյլի մը շնորհիւ, հոյլ որուն կուգայ փայլը հարստացնել նորածիլ երաժիշտներու թարմ ու յուսատու խումբ մը»³⁵:

Հանդեսում Չոպանյանը մաս տպագրում էր տարբեր մարդկանց նոթերը՝ Հայաստանից ստացած տպավորությունների մասին, ինչ-

³⁴ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 105-106:

³⁵ Նույն տեղում, էջ 115:

պես, օրինակ, Մ. Գորկու «Մի օր Խ. Հայաստանում» ուղեգրության հայերեն թարգմանությունը³⁶, բարեկամներից՝ Կարեն Միքայելյանի «խանդավառ մամակը»՝ Խորհրդային Հայաստանի մասին «սրտապնդիչ տեղեկություններով լի»³⁷, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի ամփոփ տեղեկությունները՝ Հայաստանի գիտական-քաղաքակրթական հաստատությունների վերաբերյալ³⁸, և այլն³⁹: Հետևելով հայրենիքում ազգային մշակույթի զարգացման համար գործադրվող ջանքերին ու ձեռքբերումներին՝ Չոպանյանը չէր թաքցնում իր ոգևորությունը ամեն նոր հաջողությունից, սփյուռքահայ ընթերդին ծանոթացնում էր նոր Հայաստանի իրականությանը՝ համոզված, որ «Ինչքան շատնայ Հայությունը Հայաստանի մեջ, ինչքան հայ ուժեր՝ փոխանակ օտար երկիրներ չքառորութեան մեջ փճանալու կամ իրենց զուակները օտարացման վտանգին ենթարկուած տեսնելու՝ երթան հայրենիքի ծոցը հաւաքուին ու վերաշինութեան գործին մասնակցին, այնքան աւելի կ'ամրանայ հայ պետութեան եւ հայ ազգի ապագան»⁴⁰:

1931 թ. աշնանը նկատի ունենալով աշխարհում տիրող միջազգային լարվածությունը՝ դասակարգային ատելություն, ազգային հարաբերությունների մեջ առկա նախանձ, անվստահություն ու անհավատարմություն, ընդհանուր բարոյական անկում և եսականության իշխում՝ Չոպանյանը ցավով խոստովանում է. «Աշխարհի հիւանդ է: Մարդկային պատմութեան ամենէն մռայլ, խառնաշփոթ

³⁶ Կորքի Մ., Մի օր Խ. Հայաստանում, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 117-121:

³⁷ Տե՛ս Միքայելեան Կ., Նամակ, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 123:

³⁸ Յովսէփեան Գ., Մի պտոյտ Երեւանում, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 8-21:

³⁹ Տե՛ս, օրինակ, Քիրոսեան Յ., «Հայաստանի հնութիւնների պահպանութեան կոմիտե՛ն (ակնարկ մը անոր գործունէութեան վրայ)», «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 145-156: Նաև՝ Շահէ արքեպիսկոպոս Գասպարեանի վերջին մամակը, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 30-34:

⁴⁰ Չոպանեան Ա., Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 171:

ու ախտաւոր շրջաններէն մէկուն մէջ է որ կը գտնուինք»⁴¹: Ստեղծված իրավիճակում սթափ գնահատելով հայ ժողովրդի ներկա կացութիւնը՝ Չոպանյանը դարձյալ իբրև «յուսադրիչ, ոգետրիչ, սրտապնդիչ» հանգամանք է հիշատակում «Արարարտին ու Արագածին մէջտեղ ապրող ու զարգացող մանրիկ Հայ Տէրութիւնը»՝ համոզված, որ «Ինչ պակասութիւններ ալ ունենայ ընկերական ընթիւնը որ հոն կը տիրէ, էականը մեզի համար գոյութիւնն է այդ Տէրութեան... Ատիկա հայ ազգի եւ հայ մշակոյթի ապագան ապահովող գլխաւոր ազդակն է»⁴²: Եվ նա կրկին կոչ է անում սփյուռքահայութեանը օգնել Խորհ. Հայաստանին, աջակցել նրա վերաշինութեանը, տարագրված հայերին ներգաղթել և համախմբել հայրենիքում՝ օժանդակելով նրա զորանալուն⁴³: Համոզված, որ մեր ժողովուրդը, առավել քան որևէ մեկը, անհրաժեշտություն ունի խաղաղության, Չոպանյանը այդ «փոքրիկ տունը» (Խորհ. Հայաստանը- Վ. Ա.) շենացնելու համար պահանջ է տեսնում հմուտ, լուրջ, ձեռնհաս, կարող գործիչների ու մանավանդ տաղանդների արարման. «...տաղանդներ՝ բոլոր ազգերուն սքանչացումը գրաւելու կարող, և որ մեր լաւագոյն վրէժն են ու մեր ազգին ու մշակոյթին գոյութեան ամրացման ու վարկին բարձրացման հզօրագոյն նեցուկներէն մին»⁴⁴, - գրում է նա:

Խորհրդային Հայաստանի իրականութեան գնահատութեան հարցում Չոպանյանի գնահատականները առավել առարկայական ու շոշափելի դարձան, երբ 1932 թվականի աշնանը նա՝ որպէս

⁴¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 159:

⁴² Նույն տեղում, էջ 161: Հետագայում էլ՝ Երկրորդ համաշխարհայինից հետո, Ա. Չոպանյանը հավատարիմ է մնում իր այս գաղափարին՝ բազմիցս նշելով, որ Խորհրդ. Հայաստանն է ողջ հայութեան ազգային գոյութեան կենտրոնը. տե՛ս, օրինակ, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 56:

⁴³ Այդ մասին տե՛ս նաև Հրաչ Զարդարյանի ճառը «Անահիտում». **Զարդարեան Հր.**, Դէպի Հայաստան, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 106-108:

⁴⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 163:

Լիոնի ազգային գավառական խորհրդի պատգամավոր, ընտրված Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի կազմում, եկավ հայրենիք՝ մասնակցելու Հայոց հայրապետի, ինչպես և Գերագույն հոգևոր խորհրդի ընտրություններին⁴⁵: Ընտրություններից դեռ չորս ամիս առաջ Կ. Պոլսի «Արևելք» թերթից իմանալով գումարվելիք եկեղեցական-ազգային ժողովի կանխավ որոշված ամսաթվի մասին (1932 թվ. նոյեմբերի 10- Վ. Ա.)⁴⁶ Չոպանյանը ոգևորված գրում է, որ «ամենէն հեռավոր գաղութներու պատգամատրներն իսկ լայնօրէն ատեն պիտի ունենան իրենց պատրաստութիւնները տեսնելու, որպէսզի կարենան կատարել այդ ճամբորդութիւնը որ իրենց թոյլ պիտի տայ ոչ միայն կաթողիկոսական ընտրութեան մասնակցիլ, այլ և այժմեան Հայաստանը և անոր ծոցին մէջ իրականացող վերաշինական աշխատանքը անձամբ տեսնել»⁴⁷:

Այդ ճամբորդության համար անհրաժեշտ էր նվազագույնը 15.000 ֆրանկ, որ Չոպանյանը, անշուշտ, չունէր: Ֆրանսահայ գաղթօջախում հայ կամավորների բացած հանգանակության շնորհիվ այդ գումարը հավաքվում է⁴⁸: Սկզբում այն ընթանում է անարդյունք: Բայց այն պահին, երբ Չոպանյանը արդեն գրեթե համակերպվել էր անհաջողության մտքին, պահանջված դրամը անակնկալ գոյանում է, և նա սահմանված ժամկետից երկու օր ուշացումով՝ նոյեմբերի 12-ին, հասնում է Էջմիածին՝ կարողանալով մասնակցել միայն քվեարկությանը⁴⁹:

⁴⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ և յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 78: Արշակ Չոպանյանի հարավկովկասյան ուղևորությունների մասին առավել մանրամասն տես **Ավագյան Վ.**, Աշակ Չոպանյանի կովկասյան կենսապատումը և մասնակցությունը կաթողիկոսական ընտրություններին, «Էջմիածին», 2022, №7, էջ 66-84:

⁴⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 167:

⁴⁷ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 186:

⁴⁸ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Մեր երէկն ու այսօրը. Ա., «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 10:

⁴⁹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ և յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 78:

Հակիրճ նկարագրելով «ամենայն կանոնաորոշեամբ ու ազատութեամբ» տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովին վերաբերող առանձին մանրամասներ՝ Չոպանյանը վկայում է, որ երկրորդ քվերակությանը ձայների ծանրակշիռ մասով կաթողիկոս է ընտրվում Խորեն արքեպ. Մուրադբեկյանը⁵⁰:

Այստեղ արժի հիշատակել այն բանավեճը, որ գրեթե մեկ տարի անց Չոպանյանն ունեցավ «Բազմավեպի»՝ այդ տարիների խմբագրապետ Հ. Եղիա վարդապետ Փեչիկյանի (1930-1939) հետ⁵¹: Վերջինս իր «ձախաւեր ձեռով» հարձակվել էր Չոպանյանի վրա, կոպիտ գրպարտությամբ մեղադրել նրան՝ իբրև «յանկարծ» «ջերմեռանդ հաւատացեալ» ձեւացող», որը, որպէս ազատախոհ մարդ, իրավունք չունէր մասնակցելու կաթողիկոսական ընտրությանը: Ազգանվեր գործչի պատասխանը ոչ միայն անզիջում հերքումն է իր անձի դեմ ամբաստանության, այլև ուշագրավ մի ինքնաբնութագրական է. «Այդ պետին ընտրութեան կրնայ մասնակցիլ ո եւ է Հայ որ ազգասէր է եւ կը յարգէ այդ հաստատութեան մեր ազգին ու մեր մշակոյթին մատուցած ծառայութիւնները. «հաւատացեալ» ըլլալու պէտք չկայ ատոր համար...»⁵²:

Նորընտիր կաթողիկոսի օժման արարողությունից հետո՝ մեկ օր անց՝ նոյեմբերի 14-ին, Չոպանյանը մասնակցում է Չորագետի էլեկտրակայանի բացման արարողությանը⁵³, ապա վերադառնում Էջմիածին, երկու օր մնում միաբանության իր բարեկամների մոտ

տանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 91, **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 6: Նաև՝ **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 461:

⁵⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1940, ապրիլ-մայիս-յունիս, թիւ 4, էջ 40:

⁵¹ Տե՛ս **Փեչիկեան Ե.**, «Սիոն», Երուսաղէմ, 1964, մարտ, թիւ 3, էջ 78:

⁵² **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 70:

⁵³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարտութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 93, 96, 115-116:

և ուսումնասիրում տեղի ձեռագրերը: Տեղում ստացած տպավորություններից ոգևորված՝ նա գրում է. «Էջմիածին այսօր դարձած է կրօնական կեդրոն, որ Հայաստանի ազգային կեանքին մեջ դեկավար ռեժե դեր չունի կատարելիք, բայց կը մնայ երկրին հաւատացեալ քաղաքացիներուն կրօնական կեանքին վարիչ եւ իր բարոյական ուժերու աջակցութիւնը կը բերէ նաեւ կառավարութեան հայրենաշէն գործին, իսկ հայրենիքէն հեռու օտար երկիրներ ցրուած գաղութահայոց համար՝ իբր գերագոյն հեղինակութիւնը Հայաստանեայց ազգային Եկեղեցւոյն՝ կը շարունակէ կազմել ամենամեծ կապ մը այդ տարտղնած Հայորդիները իրարու գօրոզ, ազգապահպան թանկագին ուժ մը՝ օտարացման վտանգին դէմ (այդ երկրորդ դերը կատարելով՝ անշուշտ՝ Հայաստանի կառավարութեան հետ գուզընթացաբար...)»⁵⁴:

Էջմիածնից այնուհետև Չոպանյանը մեկնում է Երևան, որտեղ մնում է շուրջ մեկ ամիս⁵⁵ վայելելով մտերիմների ջերմ հյուրասիրությունը՝ «եղբայրական ճաշասեղանները կամ թէյասեղանները», տարբեր հին ու նոր սիրելի մտավորական բարեկամների, պաշտոնակիցների, արվեստագետների, ղեկավար անձնավորությունների ընկերակցությամբ շրջում է քաղաքի հին ու նոր թաղամասերով, այցելում ուսումնական հաստատություններ՝ համալսարան, քիմիաբանական ինստիտուտ, անասնաբուժական վարժարան, թանգարաններ⁵⁶, նորակառույց և անավարտ գործարաններ, հիվանդանոցներ ու առողջարաններ, ներկա գտնվում ներկայացումների, համերգների՝ վայելելով դերասաններ Արուս Ոսկանյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետյանի, Սուրեն Քոչարյանի, Վաղարշ Վաղարշյանի, Հովհաննես Արեյանի⁵⁷, երգիչ Շարա-Տալյանի և այլ

⁵⁴ Նույն տեղում, էջ 91:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 78, 96:

⁵⁶ Երևանի պետական թանգարան այցելության և տպավորությունների մասին տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարորդիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, յոկտեմբեր-դեկտեմբեր, քիւ 3-4, էջ 20-29:

⁵⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., քիւ 5-6, էջ 23:

նշանավոր մշակութային գործիչների արվեստը⁵⁸. «Ձիս կը զգայի մեր Տան մէջ,- գրում է Չոպանյանը,- ու մեր Արուեստը մանաւանդ՝ իր Տան մէջ. ի՞նչ ամուր, շօշափելի սփոփանք՝ ա՛յնքան երագներէ, սպասումներէ, մաքառումներէ, զոհաբերութիւններէ, թափառումներէ եւ յուսախաբութիւններէ յետոյ»⁵⁹:

Հետագա մեկ ուրիշ համարում գրում է. «Եօթն անգամ գացի Պետական Թատրոնը, ամէն անգամուն՝ ասեղ ձգելու տեղ չկար: Եւ ի՞նչ ուշադիր, ի՞նչ խանդավառ հասարակութիւն: Պետական Թանգարանը լեցուն է միշտ այցելուներով, մանաւանդ «հանգստեան օրերուն»...»⁶⁰:

Չոպանյանի վրա բացառիկ տպավորություն է թողնում Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը, որտեղ մի քանի տեսակցություն է ունենում «Կաճառի» տնօրեն Հակոբ Չորյանի, աշխատակիցներից Աշխարհաբեգ Քալանթարի և Կարո Մելիք-Օհանջանյանի հետ, որոնք մանրամասն տեղեկություններ են տալիս գիտական այդ կազմակերպության գործունեության բազմակողմանի ու մեծապես շահեկան ծրագրերի վերաբերյալ⁶¹: Մանրամասն ներկայացնելով ինստիտուտի հիմնական բաժիններն ու դրանց անդամներին՝ Չոպանյանը, ոգևորված այդ ծրագրերով, արտասահմանի հայ բանասերներին կոչ է անում մասնավոր ուշադրություն դարձնել բանահյուսական նյութերի հավաքագրմանը, «որպէս զի Խորհրդային Միութիւնից դուրս ապրող հայ ժողովրդական ֆօլքլօրը չկորչի»⁶²: Նաև պահանջ է դնում նյութական օժանդակություն բերել հայրենիքում ծավալված այդ մեծարժեք

⁵⁸ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 2-7:

⁵⁹ **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 3:

⁶⁰ **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 10:

⁶¹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտը, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 1-2:

⁶² Նույն տեղում, էջ 5:

գործին և չբավարարվել՝ սոսկ հանդիսատեսի դիրք բռնելով: Անգամ ներկայացնում է այն անհրաժեշտ պարագանների շարքը, որոնք ուղարկելով ինստիտուտին՝ «ամեն Հայ որ Հայաստանն ու Հայ մշակոյթը կը սիրէ», կբերի իր հրամայական օժանդակությունը⁶³:

Չոպանյանը, բազմաթիվ թատերական ներկայացումներից բացի, ներկա է գտնվում նաև արդեն հանգուցյալ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի փորձերին, որով պետք է նշանավորվեր Ալ. Թամանյանի ղեկավարությամբ կառուցված պետական օպերայի և թատրոնի հսկա շենքի բացումը: Շատ է ափսոսում, որ շինարարական աշխատանքների հետաձգման պատճառով չի կարողացել վայելել հաճույքը՝ տեսնելու օպերայի բեմի վրա խաղացված առաջին այդ հայ երաժշտախաղը⁶⁴:

Չոպանյանը լինում է նաև Մատենադարանում՝ Գրապալատում, ու վարիչից (Սուրեն Մարկոսյան- Վ. Ա.) տեղեկանում, որ արդեն համախմբված գրքերի քանակը գերազանցում է 800.000-ը⁶⁵: Ափսոսանքով նկատում է, որ «Անահիտի» հավաքածուն պահվում է գաղտնի բաժնում՝ հասարակության մեծ մասի համար մնալով անմատչելի, քանի որ, ինչպես ինքն է ենթադրում, «հաւանօրէն նկատուելով շատ ազգայնական ոգով հրատարակութիւն»⁶⁶:

Երևանում Չոպանյանը երեկոներին հյուրընկալվում է իր «ազնի սապնջական», բանաստեղծ Լևոն Սիրաքյանի համեստ տանը⁶⁷, մեկից ավելի անգամ հանդիպում Ռոմանոս Մելիքյանի հետ,

⁶³ Նույն տեղում, էջ 11: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 232:

⁶⁴ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 5:

⁶⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Գ., «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 54:

⁶⁶ Նույն տեղում, էջ 55:

⁶⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 98, նաև՝ **Չոպանեան Ա.**, Տպարութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 2:

երկար խոսակցություններ ունենում երկուստեք սիրելի նյութերի, ծրագրերի վերաբերյալ⁶⁸: Լինում է Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոջոյանի, Արա Սարգսյանի, Նիկողայոս Բունիաթյանի⁶⁹ արվեստանոցներում, հյուրանոցում հաճախ տեսակցվում Փանոս Թերլեմեզյանի հետ, այցելում Ալեքսանդր Թամանյանին⁷⁰, Թորոս Թորամանյանին⁷¹, Շիրվանզադեին՝ ստանալով այնքան «համեղ» տպավորություններ. «Մտաւորական բարեկամներու կամ եղբայրակիցներու տուներուն մէջ սարքուած այդ հաւաքոյթներէն պահած են անջնջելիօրէն քաղցր յիշատակ մը,– հետագայում գրում է Չոպանյանը:– Մեր երկրին, մեր ժողովուրդին, մեր մշակոյթին ներկան ու ապագան, արուեստի եւ գիտութեան հետ կապ ունեցող մեծ հարցեր, գլխաւոր միւթն էին այդ խօսակցութեանց որ այդ հաւաքոյթները կ’ոգեւորէին եւ որոնց հրապոյրը կը բազմապատկուէր՝ ոչ միայն Երեսանի համեղ գինիներուն ներշնչած անմեղ զարթութեամբ, այլ մանաւանդ մեր վերածնած հայրենիքի մայրաքաղաքին մէջ հայ արժէքաւոր մտաւորականներու հետ մեզի ամենէն աւելի սիրելի եղող հարցերու վրայ խօսակցելու, խորհրդակցելու թանկագին հրճուանքով»⁷²:

Չոպանյանի վրա վշտալից տպավորություն է թողնում Թորոս Թորամանյանի առողջական ծանր վիճակը: Բաժանումից շուրջ երկուսուկես տարի անց ստանալով նրա վաղաժամ մահվան գույժը՝ Չոպանյանը իր քրոնիկներից մեկում բազմապատակ գիտնականի կատարած գործի նշանակությունը ցույց տալուց ավելի նկարագրում է նրա կյանքի ողբերգությունը⁷³:

⁶⁸ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-մայիս, թիւ 3-4, էջ 69-70:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 78:

⁷⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 34:

⁷¹ Տե՛ս նույն տեղում:

⁷² **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 5:

⁷³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 104-108:

Չոպանյանը Երևանում հանդիպումներ է ունենում ժամանակի հայ մշակույթի ու գիտության գրեթե բոլոր մեծերի ու նշանավորների հետ՝ Դերենիկ Դեմիրճյան, Հակոբ Մանանդյան, Հրաչյա Աճառյան («իմ դպրոցական սիրելի ընկերս»⁷⁴), Մանուկ Աբեղյան, Ավետիս Քալանթար⁷⁵, Դրաստամատ Սիմոնյան, Վահան Թոթովենց, Սպիրիդոն Մելիքյան⁷⁶ և էլի շատ ուրիշներ⁷⁷: Աբեղյանին, որի հետ բարեկամացել էր դեռ 1908 թ.՝ Էջմիածնում գտնված ժամանակ, հաճախ է այցելում, հետաքրքրվում նորահնար ուղղագրությամբ, որը, ինչպես ինքն է բնութագրում, «անճոռնի եւ անիմաստ խաթարում մըն էր Մեսրոպեան պատուական ուղղագրութեան»: Երբ Չոպանյանը հետաքրքրվում է փոփոխության պատճառներով, անվանի գիտնականը տալիս է մի բացատրություն, որը լրացուցիչ լույս է սփռում նրա գործունեության այդ բազմաչարչար կողմի վրա: «Առաջին տեսակցութեանս ընթացքին,- պատմում է Չոպանյանը,- իրեն հարցուցի թէ ինչո՞ւ այդ արտառոց ուղղագրութիւնը մէջտեղ նետած էր: «Ռուսերը, պատասխանեց, իրենց այբուբէնին մէջ բարեփոխութիւններ մտցուցին: Կառավարութիւնը զիս կանչեց եւ հարցուց ինձի թէ հայ ուղղագրութեան մէջ ալ պէտք կա՞յ բարեփոխութիւններ մտցնելու»: «Ինչո՞ւ չըսիք, ընդմիջեցի զինքն իսկոյն, թէ հայ ուղղագրութիւնը պէտք չունի բարեփոխման»: «Մի՞թէ կարելի է այդպիսի բան ըսել», բացազանչեց Աբեղեան: Հասկցայ որ **Նոր Գարի** նախկին աշխատակից Աբեղեանը վախցած էր կառավարութեան աչքին պահպանողական երեսալէ եւ «Պէտք կայ» վճռած էր...»⁷⁸: Ուրեմն, բազմավաստակ Աբեղյանը զգուշացել էր

⁷⁴ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարտութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 129:

⁷⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկի, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 92:

⁷⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 59:

⁷⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպարտութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 9:

⁷⁸ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յունուար-յունիս, թիւ 1, էջ 50:

չասենք ուղղակի երկյուղել էր հեղափոխական իշխանությունից և նախընտրել էր հնարել հայոց լեզվի նոր ուղղագրություն, քան վտանգել իր անձը:

Պետական անձանցից Ա. Չոպանյանը տեսակցում է «նախկին դաշնակցական պարագլուխ, Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ», այդ պահին ճարտարապետ Հովհաննես Քաջազնունուն⁷⁹, Արամայիս Երզնկյանին, Աղասի Խանջյանին⁸⁰ և ուրիշների. «Աղասի Խանջեան եւ Արմէն Անանեան՝ երիտասարդ, կորովի եւ խանդավառ գործիչներու տպաւորութիւնն ըրին վրաս»⁸¹, - խոստովանում է նա:

Չոպանյանը մեկից ավելի հանդիպումներ է ունենում նաև Եղիշե Չարենցի հետ նրա բնակարանում, որը «Նոր Հիւրանոցի» սենյակներից մեկն էր: Նրանք երկար գրույցներ են ունենում գրական ամենատարբեր հարցերի վերաբերյալ⁸²: Երևանում Չոպանյանը մի քանի անգամ հանդիպում է նաև Յուլյա Խանգաղյանին, երբ վերջինս դասավանդում էր Երևանի պետական համալսարանում. նրա անձը գտնում է «այնքան հրապուրիչ որքան իր գրիչը»⁸³:

Ամեն օր՝ մեկ-երկու ժամ, Չոպանյանը հասցնում է անցկացնել նաև, իր բնութագրմամբ, «համբաւաւոր **Քաֆէ-Թուրիսթին** մէջ», որը դարձել էր Երևանի մտավորականների հավաքավայրը⁸⁴:

Չոպանյանը մի քանի անգամ լինում է նաև Գրողների տանը, մասնակցում Դերենիկ Դեմիրճյանի՝ մինչ այդ արդեն Ավետ Ավետյանի և Արուս Ոսկանյանի մասնակցությամբ դիտած «Ֆոսֆորային շող» պիեսի կապակցությամբ հրավիրված ասուլիսին,

⁷⁹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 129:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 109: Տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 22:

⁸¹ **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 11:

⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁸³ Նույն տեղում, էջ 42:

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 4-5:

Լեռնի հիշատակին նվիրված հարգանքի հավաքությին, որտեղ բանախոսում են Դրաստամատ Սիմոնյանն ու Սիմոն Հակոբյանը, հրավիրվում է Խորհրդային Հայաստանի 12-րդ տարեդարձի տոնախմբման միջոցառմանը, ունկնդրում Մարտիրոս Սարյանի, Փանոս Թերլեմեզյանի ճառերը, լսում Գեղամ Սարյանի «ազնուաշունչ մեկ քերթուածն», «քնարերգակ» Վահան Թոթովենցի «մեկ ալիւնալից ու գունագեղ արձակ բանաստեղծութիւնը»՝ նոր Հայաստանի մասին⁸⁵. «Հասարակութիւնը որ կը լեցնէր սրահը,- վերջին միջոցառման մասին գրում է Չոպանյանը,- մեծ մասամբ կը բաղկանար մտաւորականներէ եւ ուսանողներէ. ուրախ ու հպարտ խանդավառութիւն մը կը տիրէր ամբողջ այդ հասարակութեան մէջ, խանդավառութիւն որ ինծի տուաւ ամենէն երջանիկ յուզումները գորունեցած ըլլամ կեանքիս մէջ»⁸⁶:

Երևանում Չոպանյանը հանդիպում է նաև Հովհաննես Աբելյանին ու Շիրվանգաղեին՝ «երկուքն ալ ֆիզիկապէս ու բարոյապէս առոյգ ու գորեղ, ուրախ ու խորխտ, գործելու, արտադրելու, արուեստին ծառայելու աւելի քան երբեք խանդավառօրէն տրամադիր»⁸⁷:

Մեկ օրով հետաձգելով իր վերադարձը՝ Չոպանյանը Ալազանի հրավերով մասնակցում է նաև իր վաղեմի բարեկամ Գարեգին Լևոնյանի՝ մեծ աշուղ Ջիվանու որդու 40-ամյա գիտական գործունեության հորելյանական հանդեսին⁸⁸, բանախոսում՝ արտահայտելով իր պաշտամունքը աշուղի քերթողական արվեստի նկատմամբ, նաև իր սերն ու հարգանքը հորելյանի անձի ու գործի հանդէպ: Չի թաքցնում նաև իր հրճվանքը հայրենիքում տեղի ունեցած «մեծ գործերի» կապակցությամբ⁸⁹: Հանդեսից հետո, ինչպես պատմում է Չոպանյանը, սրահի մեջ գտնվող մի խումբ ուսանողներ շրջա-

⁸⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Գ. (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, քիւ 5-6, էջ 56-58:

⁸⁶ Նույն տեղում, էջ 58-59:

⁸⁷ Նույն տեղում, էջ 59:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 61-62:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 62-63:

պատում են իրեն, արտառուչ գրույցներով ոգևորում և հրճվանք պարգևում: Օրն ավարտվում է հացկերույթի զվարթ սեղանի շուրջ, որտեղ արտասանվում են սիրուն բաժակաճառեր, երգվում «գեղեցկագոյն» էջեր Սայաթ-Նովայից, Ջիվանուց, Կոմիտասից և ուրիշներից⁹⁰:

Երևանում Չոպանյանը հանդիպում է նաև Ալազանին, երբ վերջինս Գրողների միության քարտուղարն էր և «Գրական թերթի» խմբագիրը: Այդ հանդիպման կապակցությամբ հիշարժան է մի պատմություն, որ խիստ բնութագրական է երկու մեծ մտավորականներին, մասնավորապես ընդգծում է Չոպանյանի մի շատ գնահատելի բարձր հատկանիշը: 1932 թ. փետրվարին Չոպանյանը ռումին հայտնի քաղաքական գործիչ, գիտնական, արևելագետ և հայագետ Նիկոլա Յորգայի հրավերով, որ այդ ժամանակ ռումինական կառավարության նախագահն էր, մեկնում է Ռումինիա, բացի Բուխարեստից՝ լինում նաև այլ վայրերում՝ ամենուր հանդես գալով ֆրանսերեն բանախոսություններով՝ ռումին հասարակությանը ծանոթացնելով հայկական հին ու նոր մշակույթի պատմությանը. «Ուե՛ օտար ազգի մեր մշակույթը ճանչցնել՝ մեր պարտականությունն է, ի՞նչ վնաս կրնան ունենալ ատկից (օգուտ՛ գատ) Հասաստանն ու հայ ժողովուրդը»⁹¹, - իրավացիորեն նկատում է Ա. Չոպանյանը:

Ռումինիայի մտավորականությունը միաժամանակ կազմակերպում է հանդիսություններ, հայ մշակույթը օտար ազգերի մեջ քարոզելու գործում ունեցած մեծ ներդրման համար Չոպանյանին պարգևատրում «Ռումինական աստղ» շքանշանով⁹²: Եվ ահա Չոպանյանի այսպիսի մեծարումը իր ժամանակին տեղիք է տալիս

⁹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

⁹¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յուրուար-յունիս, թիւ 5-6, էջ 174:

⁹² Տե՛ս նույն տեղում: Նաև՝ **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 460-461, **Գաբրիելյան Վ.**, Ա. Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 1, էջ 44:

ավելորդ բանասարկությունների և նրա դեմ հարձակումների, ինչպես ինքն է գրում, «մեկտրամական ծիծաղաշարժ մեկնությունների»⁹³: Չոպանյանի մասին վիրավորական հողվածներ են տպագրվում թե՛ Սփյուռքի, թե՛ Խորի. Հայաստանի մամուլում⁹⁴, որոնց մեջ նա բնութագրվում է որպես «դաշնակցականամիտ» բուրժուա, «հակասովետ» և այլն: Թյուրիմացությունը հասնում է մինչև այնտեղ, որ Չոպանյանին վերագրվում է ռումինական բանակում հրամանատարական պաշտոնի ստանձնում. «...ինչպես կարելի է այս աստիճան burlesque կերպով չոչորդ ըլլալ,- ցավով գրում է նա և պարզաբանում:- Commandeur եւ commandant նոյն բանը չեն. Ֆրանսիական Պատուոյ Լեգէոնին կամ Ռումանական Աստղին «ասպետ»ի, «սպայ»ի, «քօմանտէօր»ի աստիճանները կրնան տրուիլ նկարչի մը, բնագէտի մը, գրագէտի մը, ինչպէս եւ քաղաքական կամ զինուորական անձնավորութեանց. բարոյական վարձրատրութիւն է, որ զինուորական կամ քաղաքական բնոյթ չունի»⁹⁵:

Չոպանյանի դեմ, որքան էլ զարմանալի է, հանդես են գալիս նաև Ալազանն ու Գուրգեն Մահարին. առաջինը, Չոպանյանի բնութագրմամբ, «ցաւագար ու զգուելի» մի հողվածով, իսկ երկրորդը՝ «միջակօրէն չար ոտանաւորով մը»՝ «տգեղ ծաղրանկարով» լրացված⁹⁶: Չոպանյանը միայն մեկ տարի անց շատ զուսպ տողերով պատասխանում է նրանց և «կարմիր թերթերի»՝ իր դեմ զրպարտանքներին՝ «խենթուխելառ բաներին»⁹⁷: «Ոչ մէկ քաղաքական կողմ ունէր իմ այցելութիւնս,- ստիպված դառնացած բացատրում է ազգանվեր գործիչը,- ոչ թագաւորին ոչ ալ ռեւէ նախարարի հետ տեսակցեցայ՝ ինչպէս մեր կարմիր թերթերը կը յատարարեն, այլ գործ ունեցայ միայն Պ. Եորկային հետ, որ ամէն բանէ առաջ մեծ

⁹³ **Չօպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 174:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

⁹⁶ Նույն տեղում, էջ 173:

⁹⁷ Տե՛ս **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1987, էջ 461:

մտաւորական մըն է, ու տարիներէ ի վեր հայ քաղաքակրթութեան ու հայ մշակոյթին ջերմ բարեկամներէն մին է. ան է որ յղացեր է ինծի պատուանշան տալու գաղափարը, զոր ես մտքէս չէի անցըներ, եւ այդ պատուանշանը ինծի տրուեցաւ «հայ գրականութեան մատուցած ծառայութեանցս համար- ի՜նչ վնաս ունի ասոր մէջ Խորի. Հայաստանը»⁹⁸:

Իսկ Երևանում, երբ հանդիպում է Ալազանին, իմանալով, որ նա իր այդ հողվածը գրել է արտասահմանի մի քանի «անձկամիտ» հայերի կողմից արված հիմար մեկնությունների ազդեցության տակ, մեծահոգաբար ներում է նրա այդ արարքը և հաստատում փոխադարձ բարեկամությունը. «Ինծի դէմ այլանդակ յօդուած գրողներ շատ եղած են. բայց ատոնցմէ քիչերը գիտցած են իրենց գործած անարդարութիւնը այնքան ազնուօրէն դարմանել, ինչքան Ալազան ըրավ: Մեր մէջ ընդհանրապէս՝ անարդար եւ անազնի յարձակում գործողը կը կարծէ իր արժանապատուութիւնը նսեմացնել եթէ իր սխալը ճանչնայ եւ դարմանէ, մինչ ընդհակառակն ատիկա ապացոյց է սրտի մեծութեան: Ալազան ինքն իսկ, Գրողներու Միութեան մէկ երեկոյթին ուր հրաւիրուած էի, եկաւ բարեկամի մը միջոցաւ ինծի ներկայացնել տալ ինքզինքը, եւ ամբողջ ժամանակը որ մնացի Երեւան, անկեղծ ու գուրգուրոտ բարեկամութեան բոլոր արտայատուցումներով պաշարեց զիս: Իր այդ վերաբերմունքը եւ խորապէս գնահատեցի եւ այդ գնահատումը հրապարակաւ յայտնել հաճելի պարտք մը կը նկատեմ»⁹⁹:

Կանխահաս ձմեռվա վաղ սկսված անախորժ ցուրտն ու խստությունները Չոպանյանին թույլ չեն տալիս հայրենի բնօրրանում իրականացնել բազմաթիվ նպատակներ. նա ցավով խոստովանում է, որ չի կարողացել մեկնել ո՛չ Սևան, ո՛չ Դիլիջան, ո՛չ Լենինական, լինել Գառնիում, Գեղարդում, Հաղպատում ու Սանահինում, սեփական աչքերով տեսնել հայ արվեստի բազմաթիվ հին հուշար-

⁹⁸ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 174:

⁹⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 65-66:

ձաններ¹⁰⁰, և նրա համար ամենամեծ հոգեկան հրճվանք դարձել են այցելությունները սրտակից ընկերներին և նրանց հետ ապրած ժամերը¹⁰¹:

Կարոտը սրտում՝ երբևէ վերադառնալու հույսով Չոպանյանը դեկտեմբերի կեսերից հետո թողնում է Երևանը, մեկնում Թիֆլիս, որպեսզի այնտեղից Խարկովով հասնի Փարիզ¹⁰²: Ականատեսի աչքով տեսնելով այն ամենը, ինչ կատարվել էր միակ կենդանի բնօրրանում, «անոր բարին ու չարը ձեռքովս շոշափելով, - ինչպես ինքն է ասում,- անոր լոյսն ու ստուերները անձամբ դիտելով»¹⁰³ Չոպանյանը ոգևորված գրում է. «...առելի քան երբեք համոզուեցայ թէ այդ երկիրը իրական Հայաստան է, «Հայ ինքնավար Պետություն» է, սահմանափակ ինքնավարութեամբ մը, բայց որուն սահմանափակումը- իրեն անհրաժեշտ եղող ապահովութեան ու խաղաղութեան եւ իր ապագային ամրացման տեսակետով՝ բարերար,- անոր ազգային հանգամանքը չի խափաներ, այլ ընդհակառակն...»¹⁰⁴:

Հասնելով Թիֆլիս՝ Չոպանյանը չորս օրերի ընթացքում դարձյալ հանդիպումներ է ունենում իր վաղեմի բարեկամներից Եղիշե Թադևոսյանի¹⁰⁵, նաև Ստեփան Մալխասյանցի հետ, որը Չոպանյանին ներկայացնում է մի քանի էջ իր՝ հայոց լեզվի ընդարձակ բացատրական բառարանից¹⁰⁶: Մասնակցում է հավաքույթների,

¹⁰⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 1-2:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

¹⁰² Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 78: Նաև՝ **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 9:

¹⁰³ **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 79:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ եւ յիշատակներ Խորհ. Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 24: Տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 33:

¹⁰⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Տպաորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն,

այցելում Թիֆլիսի քանգարան, անձնապես ծանոթանում Պողոս Մակինցյանի, Արամ Երեմյանի հետ, որոնց հետ մի քանի տարի արդեն նամակագրությամբ էր կապված¹⁰⁷: Ծանոթություն է հաստատում նաև Հարություն Սուրխաթյանի, Արմեն Տիգրանյանի հետ, որը հայտնում է, թե սկսել է վերամշակել «Անուշ» օպերան¹⁰⁸: Այցելում է Հովհ. Թումանյանի այրուն և Համլիկ որդուն, նրանց կողմից արժանանում ջերմ ու սիրալիկ ընդունելության: «Յուզմունքով տեսայ բանաստեղծին աշխատութեան սենեակը, գոր այրին պահած է նոյնութեամբ՝ իր բոլոր կահերով, նկարներով, գեղօճերով, գրքերով ու թղթերով, ինչպես որ մեր ողբացեալ բանաստեղծը զայն ձգած էր՝ ծանր հիւանդ դէպի Մոսկուա մեկնած ատեն»¹⁰⁹, - թախծով գրում է Չոպանյանը:

Միայն դեկտեմբերի վերջին՝ Կադանդից մեկ-երկու օր առաջ՝ Չոպանյանը, ծանրաբեռնված «այդ ուխտագնացութեան» թանկագին հիշատակներով, գնացքով հասնում է Փարիզ:

Խորհրդային Հայաստանից ստացած իր տպավորությունները Չոպանյանը «Անահիտում» հաջորդաբար տպագրում է շուրջ երեք տարի: Նա լայնորեն ու խորությամբ շարունակաբար լուսաբանում է հանրապետության իրականությունը՝ ծանրանալով թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ հատկապես գիտական-մշակութային տարբեր երևույթների վրա¹¹⁰: Մտավոր-մշակութային հարցերի շրջանակում Չոպանյանը հատկապես ընդգծում է հայոց լեզվի իշխող գործածությունը Հայաստանում. «Երկրին ազգաբնակչութեան ստուար մեծամասնութիւնը (հարիւրին իննսունը) Հայ է,- գրում է նա,- եւ հայերէնը պաշտօնական, տիրական լեզուն է հոն: Հայ մտաւորական գործիչը հոն իր հայրենի հողին վրայ իր ցեղային միջավայրին մէջ կը զգայ ինքզինքը, միմիայն իր պապեճական լեզուն

տանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 11:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 10-11:

¹¹⁰ Այդ մասին մանրամասնորեն տե՛ս նաև **Գալլաթյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 423-428:

կը լսէ հոն ամէն տեղ, համալսարանին ու բանակին, քատրոնին ու վարչական շրջանակներուն մէջ, այդ լեզուով է որ կը մտածէ, կ'արտայայտուի ու կը գործէ»¹¹¹: Ու թէն ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Խորհրդային Միութեան մաս կազմող յուրաքանչյուր հանրապետութիւնում ազգային լեզվի և մշակույթի ամուր հաստատումը համարում է արդյունք նոր համակարգի հիմնական սկզբունքներից մեկի, քան «ազգասիրական» մղումների, որով նա ձգտում է սոցիալիստական գաղափարները ավելի արագ ու բնական կերպով տարածել ու արմատավորել աշխատավոր ժողովուրդների մէջ, այնուամենայնիվ Չոպանյանը այդ դիտավորության մէջ տեսնում է նաև հարգանք և գնահատանք յուրաքանչյուր ազգի մշակույթի, գեղեցկագիտական ու բարոյական արժեքների նկատմամբ, որի շնորհիվ հետզհետե է՛լ ավելի պիտի ընդգծվեն ամեն մեկի տոհմային ինքնատիպությունն ու յուրահատկությունը:

Կրթական կյանքում էլ Չոպանյանը տեսնում է մեծ առաջընթաց, ու թէև, ճիշտ է, այստեղ էլ ուսման տարածման ջանքերում տեսնում է խորհրդային «րեժիմին» կուսակցական մասնավոր նպատակները՝ նոր գաղափարախոսության ոգով դաստիարակելու հասարակ ժողովրդին, սակայն, մինևույնն է, համոզված է, որ «...այսօր, Խորհ. Հայաստանի մէջ կրթական գործին տրուած լուրջ մղումը, գրականութեան, գիտութեան, արուեստներու ընծայուած աշակցութիւնը՝ համայնավար վարդապետութեան տարածումը միայն չէ որ ունին իբր արդիւնք, այլ աւելի ընդարձակ, խոր ու բարերար հետեւանք մը. այն է ժողովրդական բոլոր խաւերուն մէջ թափանցումը ուսման սիրոյն, մտաւոր կեանքի ճաշակին, գրական, գիտական, գեղարուեստական արտադրութեանց համար յարգանքի»¹¹²:

Վերլուծելով «Մեր երեկն ու այսօրը»՝ պատմական այդ շրջանի վերաբերյալ Չոպանյանը տալիս է անաչառ, լուրջ, «արի» գնահատականներ, որոնք հանգում են այն կարևոր գաղափարին, որ գլխավորը հայ ժողովրդի՝ իր հայրենիքում գորանալու, պետական

¹¹¹ **Չոպանեան Ա.**, Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 6:

¹¹² Նույն տեղում, էջ 9-10:

ինքնուրույն կյանքով ապրելու ակնառու փաստն է. «...մեր ազգին ու մեր մշակույթին գոյութեան պահպանման միակ երաշխիքը կազմող այդ Խորհ. Հայաստանը այնքան թանկագին է ինձի համար,- գրում է նա,- որ անոր հանդեպ չափազանց պահանջկոտ ըլլալը աններելի իմաստականութիւն ցոյց տալ, իրականութեանց զգացումէն զուրկ երեւալ պիտի նշանակէր ըստ իս: Մեր ցեղի պատմութեան ներկայ թուլէին, Խորհ. Հայաստանի մասին յատնուած ո եւ է կարծիք պէտք է բանաձեւուի մեր ժողովուրդի մօտաւոր անցեալն ու նաեւ վաղուան գէշ ու լաւ կարելիութիւններն ի նկատի ունենալով»¹¹³:

Այստեղ անցողակի նկատենք, որ երբ Չոպանյանի գաղափարական-կուսակցական հակառակորդներից շատերը (նաև Ս. Վրացյանը - Վ. Ա.), իր բնորոշմամբ՝ «մաղձաթաթախ բամբաստողները», զրպարտում են Խորհրդային Հայաստանի իշխանություններին, թե ինչու նրանք սփյուռքահայ անվանի մտավորականին չեն թույլատրել չորս շաբաթվա փոխարեն, օրինակ, մնալ երեք ամիս կամ ընդհանրապես հաստատվել հայրենիքում, իսկ Չոպանյանի և նրա ընկերակիցները երթը որակում են իբրև մակերեսային «Հայաստանասիրութեան» «դերասանական» արտահայտություն կամ սոսկ որպես օտարի զբոսաշրջություն, որից օր առաջ իբրև թե Չոպանյանը փութացել է «շունչ առնել իր իրապես սիրեցեալ Փարիզի մէջ», պատկառելի մտավորականը տալիս է մի համոզիչ պատասխան, որը իրապես նաև կերպավորում է նրա՝ իբրև անմնացորդ հայրենասերի անձը. «...Խ. Հայաստանի վարիչները հոն (Հայաստանում- Վ. Ա.) մնալու ժամանակիս համար որևէ սահմանափակում չդրին... Իսկ եթէ ուզէի հաստատուիլ հոն, ապահովապես ատալ պիտի դիրացնէին, ինչպէս դիրացուցին հոն հաստատուիլը իմ ընկերներու... կամ իմ եղբայրակիցներու՝ Շիրվանզադէին ու Ա. Իսահակեանին: Դիշդ է սակայն որ այդ խնդրանքը ես չըրի, ու չէի կրնան ընել, որովհետեւ ինչ որ կրնամ ես ընել Հայաստանի մէջ,

¹¹³ **Չոպանեան Ա.**, Տպարտութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 12:

բազմաթիւ են անոնք որ ատիկա շատ լավ կ'ընեն հոն: Մինչդէռ ինչ որ տարիներէ ի վեր ես կ'ըմենմ Փարիզի մէջ՝ հայ գրականութիւնն ու արուեստը արեւմտեան մեծ ժողովուրդներուն ճանչցնելու, եւրոպացի մտաւոր վարպետներու եւ հայ ժողովուրդին, գրականութեան ու դատին միջեւ կապ հանդիսանալու, եւրոպական մշակոյթը մեր ժողովուրդին ծաօթացնելու գործին աջակցելու համար, բազմաթիւ չեն ատիկա ընողները... Փարիզին մէջ իմ համեստ մտաւոր ուժերս ատիկ օգտակար կրնան ըլլալ մեր գրականութեան, մեր ժողովուրդի վարկին, նոյն ինքն Խորհ. Հայաստանին... Օր մը պիտի գայ անշուշտ, ուր ես ինքս ալ հոն պիտի ցանկամ գտնել իմ կեանքիս հուսկ հանգրուանը... որպէս զի ապահով ըլլամ թէ պանդուխտ ծնած, պանդուխտ ապրած ոսկորներս պիտի կարենան հանգչիլ մեր տոհմային հիմաւորց հողին մէջ ուր կը քնանան մեր ազգը կերտող ու դարերու ընթացքին զայն պահպանող ու զարգացնող նախահայրերս»¹¹⁴:

Յավոք, այս վերջին ցանկությունը չիրականացավ: Մահվանից հետո էլ նա մնաց պանդուխտ՝ վերջնական հանգրվան գտնելով Փարիզի՝ հայ մշակոյթի գործիչների պանթեոնում¹¹⁵:

Չոպանյանի՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի և քաղաքական հայացքների կապակցությամբ հիշարժան է նաև նրա մի հոդվածը՝ գրված Սիմոն Վրացյանի դէմ¹¹⁶: Վերջինս, հոդվածագրի որակմամբ, իր մտածումով տկար, լուրջ փաստերից զուրկ, նաև «ամենաողորմելի գռեհկութեան» հասնող թեթևամիտ, գրպարտիչ հոդվածաշարքում փորձել էր քննադատել Չոպանյանին՝ նրա մէջ տեսնելով տրամագծորեն ներհակ երկու անձ. «...մին «վաստակատր գործիչ հայ մշակոյթի ասպարեզում, բանաստեղծ, բանասէր, քննադատ, թարգմանիչ, հայ գրականութեան եւ արուեստի արժէքները ժողովրդականացնող եւ օտարներին ծանօթաց-

¹¹⁴ **Չոպանյան Ա.**, Տպարտութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Գ., «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 64-65:

¹¹⁵ Տե՛ս **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 475:

¹¹⁶ Այդ մասին տե՛ս նաև նույն տեղում, էջ 428-429:

նող եւ որ իր կարեւոր տեղն ունի հայ իրականութեան մէջ», միւսը «հանրային եւ քաղաքական գործիչ, մեծամիտ, կրթոտ, միջոցների մէջ խտրութիւն չդնող, հայիոյաբան, ատելութիւններով յագեցած, սիրահարուած ինք իր վրայ, անբարեխիղճ դէպ ի ուրիշները»¹¹⁷:

«Առաջին» Չոպանյանի մէջ, ինչպէս տեսնում ենք, վառ գույներով դրսևորվում է ազգային-մշակութային գործունեությունն ծավալված վաստակաշատ անձի կերպարը, որը ներկայացնում է նրա հակառակորդը: Դիմանկարն ամբողջանում է «երկրորդ» Չոպանյանի՝ իր իսկ բնութագրած ինքնապատկերի շնորհիվ, որը ոչ միայն հերքում է Վրացյանի ամբաստանական բնորոշումը, այլև պատասխանի շեշտադրությամբ և հակաշիտ փաստերով հաստատում սեփական վարքագծի անաչառությունն ու համարձակությունը. «... կը բաւէ ուշադրութեամբ հետեւած ըլլալ իմ երկար տարիներէ ի վեր ունեցած գրական թէ ազգային գործունեութեանս,- գրում է Չոպանյանը,- տեսնելու համար որ «երկրորդ Չոպանեանին» պատկերը գոր կը գծէ Պ. Վրացեան, հիւանդ երեւակայութեան մը ծնունդ է, թէ իրականին մէջ մէկ Չոպանեան կայ միայն, որ միեւնոյն ոգիով ու միեւնոյն մեթոտով կը կատարէ իր քննադատի դերը ազգային կեանքի ինչպէս գրականութեան ու արուեստի երեւոյթներու հանդէպ: Ոչ մէկ «ատելութիւն» է որ զիս դէկավարած է երբեք իմ դատումներուս մէջ, այլ մեր ժողովուրդին շահերը պաշտպանելու, զանոնք վտանգող սխալները մատնանիշ ընելու, գործունեութեան ուղիղ ճամբան ըստ իմ հայեացքներուս ցոյց տալու պարտականութեան զգացումը»¹¹⁸:

Ուշագրավ է, որ իր խորհրդածություններում Չոպանյանն ամենևին չի դառնում հավակնոտ, այլ ընդունում է, որ ինքն էլ՝ «իբր սխալական մարդ», կարող է երբեմն սխալված լինել¹¹⁹:

¹¹⁷ Ա. Չոպանեան, Մեր երէկն ու այսօրը. Ա., «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 2:

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում:

ԳԼՈՒԽ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԱՆԱՀԻՏԻ» ԵՐԿՐՈՐԳ ՇՐՋԱՆՈՒՄ

3.1. Համաշխարհային գրականության քարոզը հանդեսում

Ինչպես հրատարակության առաջին շրջանում, այնպես էլ երկրորդում «Անահիտի» ուշադրության կենտրոնում գլխավորապես գրականության հարցերն էին: Գրական հետաքրքրությունների շրջանակը հանդեսում, պետք է ասել, շատ լայն էր: Առանցքում անշուշտ ունենալով հայ ժողովրդի ազգային-գեղարվեստական նկարագիրը ներկայացնող հին ու նոր արժեքավոր ստեղծագործությունների տպագրումն ու գնահատումը՝ Չոպանյանը գուցահեռաբար ձգտում էր նաև ընդարձակել ազգային մշակույթի զարգացման սահմանները. «Գրականութիւն, արուեստ,- ասի՛ մեծ, անդիմադրելի ու բարերար միութեան գծերը՝ բոլոր ազգերու միջև»¹²⁰, - գրում է նա: Առաջնորդվելով այս հայեցակետով՝ նոր «Անահիտի» խմբագիրը հանդեսի էջերում թարգմանաբար պարբերապես տպագրում է համաշխարհային գրականության կոթողներից՝ ինչպես արևելյան, այնպես էլ եվրոպական հին ու նոր հեղինակների գործերից:

Չոպանյանը վերստին խնդիր է դնում մեր մտավոր-թարգմանական գործունեության մեջ կարևոր տեղ հատկացնել Արևելքի, մասնավորապես պարսից, արաբ և թուրք գրականությունները մեզ ծանոթացնելուն, որով «հազիւ թերաբացիկ» դուռը կարող էր ընդարձակվել հայ ընթերցողի համար: «Մենք Հայերս, թէև դարե-

¹²⁰ Չոպանեան Ա., Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 100:

րով մշտական շփման մեջ եղած ենք Պարսիկներու, Արաբներու և Թուրքերու հետ, անոնց գրականութենէն շատ քիչ բան գիտենք,- անկեղծ ավստասանքով արձանագրում է Չոպանյանը:- Մեր այս տգիտութիւնը կրնայ չափով մը չքմեղանալ միմիայն սա իրողութեամբ՝ որ Պարսիկները, Արաբները և Թուրքերը մեր գրականութեան մասին ալ աւելի քիչ բան գիտեն,- չըսելու համար թէ ոչինչ գիտեն»¹²¹:

Ու թեև արդեն Գառնիկ Ֆնտգլյանը և ուրիշներ թարգմանել էին պարսից միջնադարյան մեծանուն հեղինակների (Խայամ, Սաադի, Հաֆրզ և ուրիշներ) գործերից, ինքը՝ Չոպանյանը, թուրքերեն չիմանալով, ֆրանսերեն հավաքածուից օգտվելով, «Անահիտի» ընթերցողների համար թարգմանում և հրատարակում է հատընտիր էջեր՝ համոզված, որ արվածը դեռ շատ քիչ է¹²²:

Վերաստեղծ «Անահիտի» առաջին իսկ համարում Գևորգ Թերգիպաշյանի թարգմանությամբ «պատառիկներ» են տպագրվում Ֆիզուլու ստեղծագործություններից¹²³, ինքը՝ խմբագրապետը, ողջունում է նաև նույն Թերգիպաշյանի՝ Ֆիզուլիին նվիրված աշխատության լույսընծայումը, այնուհետև գնահատում այն՝ գրական-բանասիրական տարբեր հարցերի առնչությամբ բերելով իր դիտարկումներն ու դիտողությունները, նաև առարկություններն ու պատճառաբանությունները: Օրինակ, նա չի համաձայնում արևելագետի այն ենթադրությանը, թե Ֆիզուլին ազգությամբ թուրք է, և այս կապակցությամբ անում է մի հետաքրքիր դիտարկում, որ վերաբերում է մեր Սայաթ-Նովային և միաժամանակ ընդգծում Գրիգոր Նարեկացու իշխող տեղը միջնադարյան արևելյան քնարերգության մեջ. «Իսկապէս՝ անիկա (Ֆիզուլի - Վ. Ա.) «Արևելցի» մըն է, որ իբր քերթող թէ՛ Արաբ, թէ՛ Պարսիկ և թէ՛ Թուրք յաջողած

¹²¹ Նույն տեղում, էջ 95:

¹²² Տե՛ս նույն տեղում:

¹²³ Տե՛ս **Ֆիզուլի**, Պատառիկներ (Թարգմանութիւն Գեր. Գևորգ Թերգիպաշեանի), «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 108-110:

է հանդիսանալ, քանի որ մեծ տաղանդով ու հարազատութեամբ գրած է այդ երեք լեզուներով ևս, ինչպէս մեր Սայեաթ-Նովան, մեծ «Կովկասցի» մը հայացեղ, երգած է վրացերէն, թուրքերէն և հայերէն (թէն պէտք է խոստովանել որ Ֆիզուլի աւելի մեծաթիչ ու խոհալից բանաստեղծ է քան մեր տաղանդաւոր աշուղը, և անոր դէմ հանելու համար մենք Նարեկացին է որ կրնանք ցոյց տալ, նուազ այլազան ու լայնատես, նուազ ազատախոս ու իմաստասէր, նուազ «հելլէն»), բայց աւելի հզօր, աւելի խորագգաց, աւելի ջղուտ, աւելի խիտ ու նուրբ, աւելի անձնադրոշմ և աւելի խորապէս Ասիացի»¹²⁴:

«Անահիտի» հետագա համարներում դարձյալ Գ. Թերզիպաշյանի հայերեն փոխադրոջամբ տպագրվում են ստեղծագործություններ ինչպէս Ֆիզուլուց, այնպէս էլ Հաֆիզից ու Ռումիից¹²⁵: Հրատարակվում են նաև ավելի վաղ շրջանի պարսից բանաստեղծների գործերից՝ ուրիշների թարգմանությամբ և հակիրճ գնահատականներով¹²⁶: Հանդեսի էջերում երևում են նաև հայերենով վերարտադրված հատվածներ՝ Ֆիրդուսու նշանավոր «Շահնամէից»¹²⁷:

Հետագայում Չոպանյանը Խորհրդային Հայաստանի բանասիրական ուշագրավ հրատարակությունների շարքում ոգևորությամբ հիշատակում է Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի կապակցությամբ պարսիկ մեծ դյուցազներգակին նվիրված ուսումնասիրությունները (Կ. Մելիք-Օհանջանյան, «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվ-

¹²⁴ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 98:

¹²⁵ Տե՛ս «Էջեր արեւելեան բանաստեղծութեան», «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 45-49:

¹²⁶ Տե՛ս Պարսկական բանաստեղծութիւն, ղազալներ (թարգմ. Ռումբէն Աբրահամեան), «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 186-188, **Թիրեաքեան Յ.**, Ֆիրդուսի ծննդեան հազարամեակը, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 26:

¹²⁷ Տե՛ս **Ֆիրդուսի**, Երգիծական ընդդէմ սուլթան Մահմուդի (թարգմ. Միհրդատ Մ. Յ. Թիրեաքեանի), «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 28-32, **Շահնամէ** (թարգմ. Միհրդատ Յ. Թիրեաքեանի), «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 48-51:

ները «Շահնամնում» և հայ մատենագրության մեջ», Մ. Աբեղյան, «Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» և այլն) և Գևորգ Ասատուրի՝ «Ռուստամ և Չոհրապ» դրվագի և Ֆիրդուսու ուրիշ մի քանի գործերի տաղաչափորեն արված թարգմանությունը՝ զարդարված Մարտիրոս Սարյանի՝ պարսկական ոճով հորինված զմայլելի նկարներով¹²⁸:

Չոպանյանը հայ ընթերցողին մատուցում է մաս նմուշներ չինական¹²⁹ ու ճապոնական գրականությունից¹³⁰՝ հաճախ դրանց կցելով եվրոպացի արևելագետ-թարգմանիչների ուսումնասիրություններ, ինչպես, օրինակ, ֆրանսիացի հայտնի բանաստեղծ Թեոֆիլ Գոթիեի դասեր՝ Ժուղիթ Գոթիեի հետազոտությունը՝ նվիրված չինացի հին լավագույն բանաստեղծներին¹³¹:

Դնելով արևելյան դասական արժեքները յուրացնելու, ինչպես մաս մերը թարգմանաբար նրանց ներկայացնելու պահանջը՝ Չոպանյանը այստեղ, կարծում ենք, հետապնդում էր լրացուցիչ, թերևս ոչ պակաս կարևոր մի նպատակ, քան կարող էր լինել սուկ արևելյան մշակույթի, մասնավորապես թուրքական ու պարսից գրականությունների ճանաչումը կամ նրանց հետ համեմատվելու հնարավորությունը. այն է՝ ցույց տալ հայ գեղարվեստի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը արևելյան միջավայրում, համոզել, որ այն սերում է ազգային ակունքներից և ունի տոհմիկ առանձնակի յուրակերպություն: Հարցի էությունը ավելի պարզ է դառնում, երբ տեսնում ենք, թե ինչպես է Չոպանյանը բանակ-

¹²⁸ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-մայիս, թիւ 3-4, էջ 79:

¹²⁹ Տե՛ս Հատընտիր էջեր Լի-Թաի-Փե բանաստեղծէն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 30-32, Չինական բանաստեղծութիւն.- Հատընտիր էջեր Լի-Թաի-Փեի, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 145-147:

¹³⁰ Տե՛ս Ճափոնական բանաստեղծութիւն (թարգմ. ֆրնս. է. Գեղամ Մ. Խանամիրեան), «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 21-24:

¹³¹ Տե՛ս **Ժիստիթ Կոթիէ**, Չինական բանաստեղծութիւն-Նախերգանք, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 27-30:

ռիվ տալիս հատկապես այն թուրք կարծեցյալ արվեստաբանների դեմ, որոնք փորձում ու ջանում էին հայկականը սեփականացնել: Նրանցից էր, օրինակ, Օսմանյան համալսարանի թուրք գրականության պատմության դասախոս ոմն Քեօփրյույուգատե Ֆուատ բեյ, որ, հայ ժողովրդական երգերին ու միջնադարյան հայ աշուղական բանաստեղծություններին ծանոթանալով միայն Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությունների հատորներից, սկսել էր հողվածներ տպագրել հայ-թուրքական գրականության փոխադարձ հարաբերությունների մասին՝ ընթերցողին ձգտելով բերել այն արտառոց, բայց իշխող եզրակացությանը, թե իբր «Հայ բանաստեղծությունը պարզապես հետետողութիւն մըն է թրքականին»¹³²: Թուրքերը, որ Գևորգ Թերզիպաշյանի՝ Ֆիզուլիին նվիրված ուսումնասիրության շնորհիվ էին ճանաչել միջնադարի մեծ գրողին և սկսել հետաքրքրվել նրանով, շտապել էին ոչ միայն սեփականացնել նրան, այլև «հայտնաբերել» նրա ազդեցությունը հայ միջնադարյան տաղերգության վրա: Եթե այս հարցերում Չոպանյանը իր գնահատականներում դեռ գուսպ է, պահանջ է տեսնում հանգամանորեն ուսումնասիրելու փոխադարձ ազդեցությունների չափը, որոշելու ժամանակն ու հանգամանքերը, ապա նրա խոսքը շատ կրքոտ է դառնում ոչ սոսկ թուրք մտավորական շրջաններում հայտնի գրող, մոլեռանդ ազգայնական, հասարակական գործիչ Խալիտե Էտիպ հանըմի («թէն ցեղով Հրեայ» - Ա. Չ.)¹³³ դեմ, որը, ինչպես խմբագիրն է վկայում, «առեւանգուած խեղճ հայ աղջիկներ թրքացնելու համար ամիսներով մեթոտիկ ու զգուելի աշխատանք մը թափած է»¹³⁴: Վերջինս Ամերիկայում ներկայացրած իր մի բանախոսության մեջ թեև խանդավառորեն գովել էր Կոմիտաս Վարդապետի երաժշտական հանճարը, սակայն նրան ծագումով համարել էր

¹³² Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 103:

¹³³ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 185:

¹³⁴ Նույն տեղում:

թուրք, իսկ նրա երգած եղանակները՝ թուրքական արվեստի գործեր¹³⁵: Նման գնահատականը Չոպանյանը իրավացիորեն համարում է անպատկառ խարդախություն, միաժամանակ Ամերիկայի անգլիագետ հայ մտավորականներին նախատում այն բանի համար, որ նրանցից ոչ մեկը հարկ չի համարել հերքել այդ «լկտի խեղաթիւրումը» և ցույց տալ, որ Կոմիտասը ոչ միայն թուրք չէ, իսկ նրա երաժշտությունը թուրքական չէ, այլև Վարդապետը աշխատել է հայ բնիկ երգը ազատել թուրքական ազդեցությունից՝ դրան վերադարձնելով իր հին ու անաղարտ տեսքը¹³⁶:

Թուրքերի՝ հայ մշակույթի նկատմամբ ոտնձգության փորձերը¹³⁷ բնավ էլ պատահական չէին կամ միամիտ ենթադրությունների հետևանք: Դրանք, անշուշտ, հետապնդում էին որոշակի նպատակ, որը ներդաշնակ էր նրանց ընթացիկ ու հեռակա քաղաքական մտադրություններին. ոչնչացնել հայկական մշակութային դիմագիծն ու ինքնատիպությունը, որը հետզհետե կհանգեցներ ազգային մտածողության ուժացմանն ու վերացմանը: Ուրեմն, ինչպես համոզվում ենք, Չոպանյանի համար արևելյան մշակույթին ծանոթանալը չէր հետապնդում բացառապես ճանաչողական, բանասիրական, գիտական հետաքրքրությունների դիտավորություն, այլև ուներ ազգային-հայրենասիրական գաղափարաբանություն:

Ընդհանրապես նկատելի է, որ անցյալի հայ գեղարվեստական այլազան արժեքներում, օրինակ, մանրանկարչություն, զարդարվեստ, երաժշտություն, ճարտարապետություն և այլն, Չոպանյանը ձգտում էր հայտնաբերել և տեսանելի դարձնել բուն հայկական ոճի, ճաշակի, գծի ու գույնի առկայությունը, մասնավորապես արևելյան միջավայրում ընդգծել մեր ցեղային դրոշմի ինքնատի-

¹³⁵ Տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 111:

¹³⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 184-185:

¹³⁷ Տե՛ս նաև **Ալեքսանեան Ն.**, Հայ ժողովրդական երգը, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 34-38:

պոթյունը, որը իր ազդեցությունն է թողել անգամ համաշխարհային մշակույթի վրա: Օրինակ, խոսելով պարսից և հայ միջնադարյան մանրանկարչության առանձնահատկությունների մասին՝ նա նկատում է. «Ինչ որ յայտնի կ'երեւայ այդ երկու արուեստներուն բաղդատութենէն, այն է որ պարսկականը շատ քիչ ազդեցութիւն ունեցած է հայկականին վրայ... Հայկական մանրանկարը կը թուի կազմուած ըլլալ ասորական եւ բիւզանդական ազդեցութեամբ, որոնց վրայ աւելցած են նաեւ յետոյ արաբականին, պարսկականին եւ լատինականին ազդեցութիւնը, բայց Հայ տաղանդը, այդ բոլորէն օգտուելով՝ իր ուրոյն արուեստը ձեւացուցած է, ուր օտարէն վոխ առնուած տարրերը իր ճաշակին համեմատ իրարու խառնուած, այլափոխուած, ներդաշնակուած եւ միանալով իրմէ իսկ ստեղծուած ինքնատիպ տարրերու՝ երեսն բերած են յատուկ գեղեցկութիւն մը որ, մեծապէս այլազան գործերու մէջ... իր քանի մը էական բնորոշ յատկանիշներն ունի, եւ որու բարձրագոյն արտայատութիւնները թանգակին ընծաներ են մեր ցեղին կողմէ համաշխարհային արուեստին մատուցած»¹³⁸:

Ազգային մշակույթի հեռանկարի տեսանկյունից «Անահիտը» էական կարևորություն էր տալիս նաև հայերին Արևմուտքի գրականությունը ծանոթացնելուն: Արևմուտքի գրականություն ասելով այստեղ նկատի ունենք ոչ միայն սոսկ արևմտաեվրոպականը, այլև ընդհանրապես եվրոպական ժողովուրդների, նաև Հյուսիսի և ամերիկյան գրականությունները: Դիշտ է, թեև «Անահիտը» որքան էլ հաճախ ստեղծագործություններ էր առանձնացնում ֆրանսիականից, սակայն բազմադեպ էին նաև նյութերը՝ հունական, անգլիական, գերմանական, իտալական, լեհական և՛ դասական, և՛ ժամանակակից առավել տաղանդավոր հեղինակների գործերից: Հանդեսի էջերում թարգմանաբար տպագրվել են ինչպես, օրինակ,

¹³⁸ **Չօպանեան Ա.**, Պարսիկ եւ հայ մանրանկարչութիւն, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 17:

Էսքիլեսի, Վերգիլիոսի գործերից¹³⁹, այնպես էլ ստեղծագործություններ Պերսի Շելլիից¹⁴⁰, Ջովանի Պասկոլիից¹⁴¹, Ադամ Միցկևիչից¹⁴², Գաբրիելե դ'Աննուցիոյից¹⁴³, Ֆրեդերիկ Միսթրալից¹⁴⁴, Մի-

¹³⁹ Տե՛ս **Եսքիլես**, Պրոմեթեոս շրթայուած, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, քիւ 2, էջ 4-18, **Գաբրիելե Մ. Ա.**, Վիրգիլիոսի երկիագարամեակին առքիւ. (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, քիւ 1-2, էջ 26-35:

¹⁴⁰ Տե՛ս **Շելլի Փ.**, Արտոյտ մը (թարգմ. Յակոբ Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, քիւ 2, էջ 37-39, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յակոբ Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, քիւ 1, էջ 30-39, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յակոբ Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, քիւ 2, էջ 8-14, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յ. Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., քիւ 3, էջ 101-105, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յ. Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, քիւ 5-6, էջ 21-29, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յ. Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., քիւ 1-2, էջ 33-39, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած, թատերգութիւն չորս արարով, (Շար.) (թարգմ. Յակոբ Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, քիւ 5-6, էջ 120-125, **Շելլի**, Պրոմեթեոս արձակուած (թարգմ. Յ. Անտոնեան), «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, քիւ 3-6, էջ 64-77, **Շելլի**, Երգ (Անգլերէն բնագրէն հայացուց՝ Հրաչ Բաշարենց), «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, քիւ 3-4, էջ 55-56:

¹⁴¹ Տե՛ս **Փասքոլի ճ.**, Կոյսին երազը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, քիւ 1, էջ 24-26:

¹⁴² Տե՛ս **Միցքիեվիչ Ա.**, Վիլլիներու լիճը, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, քիւ 2, էջ 75-78, **Միցքիեվիչ Ա.**, Այլաբանութիւն, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, քիւ 3, էջ 105:

¹⁴³ Տե՛ս Տադէր Կապրիելէ տ'Աննուցիօէն (թարգմ. Անայիս), «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, քիւ 3, էջ 28-78:

¹⁴⁴ Տե՛ս **Միսթրալ Ֆ.**, Կոչերգ առ հոգին Փրովանսի, Գեղօն քաթալան բանաստեղծներուն ուղղուած, Գեղօն առ լատին ցեղ, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, քիւ 1, էջ 87-91:

խայիլ էմինեսկուլից¹⁴⁵, Վիկտոր Հյուգոյից¹⁴⁶, Շառլ Բոդլերից¹⁴⁷ և ուրիշներից:

Հանդեսի խմբագիրը չէր բավարարվում սուկ հիշյալ և այլ հեղինակների գործերի հրատարակմամբ: «Անահիտի» էջերում հաճախ կարելի է կարդալ սեղմ ու հակիրճ, սակայն խորունկ և իմաստուն քննական-գիտական ուսումնասիրություններ, օրինակ, հենց Եսփիլեսի «Պրոմեթևսը շղթայված»-ի վերաբերյալ, որը հեղինակել է Չոպանյանը¹⁴⁸, կցելով պիեսի հայերեն իր թարգմանությունը՝ արված ֆրանսերեն բառացի փոխադրությունից¹⁴⁹, Պերսի Շելլիի «Ազատագրած Պրոմեթևս» քնարական թատերգության մասին¹⁵⁰, որի հայերեն փոխադրությունը այս անգամ կատարվել էր Ա. Չոպանյանի առաջարկությամբ և սիրալիք պարտավորեցմամբ, ինչպես վկայում է թարգմանիչը¹⁵¹: Հանդեսի տարբեր տա-

¹⁴⁵ Տե՛ս **Էմինեսքու Մ.**, Բանաստեղծություններ (թարգմ. Յ. Դ. Սիրունի), «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 17-19, **Էմինեսքու Մ.**, Բանաստեղծություններ (թարգմ. Յ. Դ. Սիրունի), «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 29-31, **Էմինեսքու Մ.**, Բանաստեղծություններ (թարգմ. Յ. Դ. Սիրունի), «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 64-65:

¹⁴⁶ Տե՛ս **Հիլյո Վ.**, Մազեփիա (Հայացուց՝ Փայլակ Սանասար), «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 60-64, Բանաստեղծություններ Վիքթոր Հիլյոյէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս- սեպտեմբեր, թիւ 5, էջ 11-17, **Հիլյո Վ.**, Ողբ (Թարգմ. Ա. Չ.), «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս- դեկտեմբեր, թիւ 2, էջ 10:

¹⁴⁷ Տե՛ս **Պոլլեն Շ.**, Յարասացութիւնք սատանայի (Հայացուց՝ Հրաչ Քաջարեց), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 16-17, **Պոլլեն Շ.**, Փարոսներ (Հայացուց՝ Հրաչ Քաջարեց), «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 16-17, **Պոլլեն Շ.**, Դատապարտում կիներ (Թարգմանութիւն՝ Հրաչ Քաջարեցի), «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 59, **Պոլլեն Շ.**, Աբէլ եւ Կայէն, (Թարգմանութիւն՝ Հրաչ Քաջարեցի), «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 64-65:

¹⁴⁸ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Եսփիլեսի «Պրոմեթևս շղթայուած»ը, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 1-3:

¹⁴⁹ Տե՛ս **Եսփիլես**, Պրոմեթևս շղթայուած, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 4-17:

¹⁵⁰ Տե՛ս **Անտոնեան Յ.**, Շելլիի «Պրոմեթևս Արձակուած»ը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 24-28:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

րեթվերի առանձին համարներում հանդիպում են նաև դարերի կամ ժամանակի համեմատաբար կարճ հոլովություն չվիճարկվող համբավ վայելած համաշխարհային մեծերից շատերի՝ Վերգիլիոսի¹⁵², Միգկևիչի¹⁵³, Գյոթեի¹⁵⁴, Վիկտոր Հյուգոյի¹⁵⁵, ռուսիական նոր գրականության հիմնադիր Միխայիլ Էմինսկուի¹⁵⁶ և ուրիշների գրական դիմանկարները: Երբեմն այդ դիմանկարները մատուցվում են միջնորդաբար՝ թարգմանաբար առնված այս կամ այն գրողի կամ քննադատի խոսքից, ինչպես, օրինակ, հայր և որդի Ալֆոնս և Լեոն Դոդենների վերլուծական-գնահատականները՝ ասված Ֆրեդերիկ Միսթրալի հարյուրամյակի կապակցությամբ, որ թարգմանել էր ինքը՝ Չոպանյանը¹⁵⁷:

Հայ-ֆրանսիական գրական առնչությունների կապակցությամբ հիշարժան է նաև Ա. Չոպանյանի «Victor Hugo, Chateaubriand et

¹⁵² Տե՛ս **Դաւիթ-Քէլ Մ. Ս.**, Վիրգիլիոսի երկհազարամեակին առթիւ (Շարունակելի) «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-յուկտ., թիւ 3, էջ 78-83, **Դաւիթ-Քէլ Մ. Ս.**, Վիրգիլիոսի երկհազարամեակին առթիւ. Գ., «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 100-103, **Դաւիթ-Քէլ Մ. Ս.**, Վիրգիլիոսի երկհազարամեակին առթիւ (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 26-35: **Դաւիթ-Քէլ Մ. Ս.**, Վիրգիլիոսի երկհազարամեակին առթիւ (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 46-55:

¹⁵³ Տե՛ս **Չօպանյան Ա.**, Քրոնիկոն, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 69-73:

¹⁵⁴ Տե՛ս **Չօպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 160-162:

¹⁵⁵ Տե՛ս **Չօպանյան Ա.**, Վիքթոր Հիւկօ, «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս- սեպտեմբեր, թիւ 5, էջ 1-10:

¹⁵⁶ Տե՛ս **Սիրունի Յ.**, Միխայիլ Էմինսկու. Ռուսն Բանաստեղծը, Ալկնարկ մը իր կենսաբն ու գործին վրայ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 88-94, **Սիրունի Յ.**, Միխայիլ Էմինսկու. Ռուսն Բանաստեղծը, Ալկնարկ մը իր կենսաբն ու գործին վրայ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 99-104, **Սիրունի Յ.**, Միխայիլ Էմինսկու. Ռուսն Բանաստեղծը, Ալկնարկ մը իր կենսաբն ու գործին վրայ, «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 10-17:

¹⁵⁷ Տե՛ս **Տօմէ Ա.**, Միսթրալ Բանաստեղծը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 81-85, **Տօմէ Լ.**, Ֆրեդերիք Միսթրալի գործը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 85-86:

Lamartine dans la littérature Arménienne» («Վիլլբրոր Հիլո, Շաքոպրիան եւ Լամարթին հայ գրականության մէջ») հատորը, որտեղ հեղինակը իր «փափկաճաշակ» թարգմանությամբ համախմբել էր արևմտահայ մի շարք հայտնի գրողների՝ Ղ. Ալիշանի, Նար-Պեյի (Խորեն Գալֆայան), Հովհաննես Մեթյանի, Գրիգոր Օտյանի և ուրիշների բանաստեղծություններից՝ գրված 19-րդ դարի ֆրանսիացի հիշյալ նշանավոր հեղինակների գործերի ներշնչմամբ ու նրանց պատվին, ինչպես նաև նվիրված նրանց հողավածներ, բանախոսություններ: Այդ գրքի կապակցությամբ Չոպանյանը «Անահիտում» թարգմանաբար տպագրել է ֆրանսիացի մի քանի հայտնի դեմքերի գնահատականներից քաղվածքներ, որոնցում բոլորն էլ իրենց երախտագիտությունն են հայտնում մեծանուն հայ գործչին¹⁵⁸:

Ուշագրավ է նաև «Անահիտի» վերաբերմունքը ռուս գրականության նկատմամբ, որի ձեռքբերումներով դարձյալ Չոպանյանը ձգտում էր հարստացնել հայ գեղարվեստական մտածողությունը, ընդլայնել մասնավորապես արևմտահայ ընթերցողի հետաքրքրությունների շրջանակը: Հանդեսի էջերում պարբերաբար հանդիպում են ռուս մեծերից Տուրգենևի¹⁵⁹, Դոստոևսկու¹⁶⁰, Չեխովի¹⁶¹ ստեղծագործությունների հայերեն թարգմանություններ: Տարբեր առիթներով «Անահիտում» ու նրա խմբագիրը բարձր են գնահատում

¹⁵⁸ Տե՛ս «Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature Arménienne» հատորի մասին յայտնուած կարծիքներ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 50-51:

¹⁵⁹ **Թուրկենևի Ի.**, Յաղթական սիրոյ երգը (թարգմ. Պ. Շէքերջեան), «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 73-78, **Թուրկենևի Ի.**, Յաղթական սիրոյ երգը (Շիգակօ, թարգմ. Պ. Շէքերջեան. Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 163-165, **Թուրկենևի Ի.**, Յաղթական սիրոյ երգը (թարգմ. Պ. Շէքերջեան), «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 176-180, **Թուրկենևի Ի.**, Յաղթական սիրոյ երգը (թարգմ. Պ. Շէքերջեան), «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 67-73:

¹⁶⁰ Հատուած մը Տոստոյեւսքիի «Քարամագով եղբայրներ»էն (թարգմ. Գ. Կիրակոսեան), «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 29-42:

¹⁶¹ **Չեխով Ա.**, Գեղեցկուհիներ (թարգմ. Ս. Աբելեան), «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 89-94:

Մաքսիմ Գորկու գեղարվեստը, նրա դերը ժամանակի հայ մեծ արձակագիրների լավագույն գործերի ռուսերեն թարգմանության, խմբագրման ու հրատարակման աշխատանքում: Չոպանյանին այս հեղինակի գործունեության մեջ գրավում է նաև ու հատկապես այն, որ նա ցանկացել և ձգտել է մեղմացնել բռնատիրոջ կուսակցական ճնշումները խորհրդային գրականության և արվեստի վրա. ««Պրոլետ-գրողի» եւ «Խորհրդային գրող»ի զանազանութեան՝ որ ծնունդ առած էր նոր բեժիմի տիրապետումէն ի վեր՝ ջնջուելուն պատճառ եղաւ,- Մ. Գորկու մասին գրում է Չոպանյանը.- հզօրապէս նպաստեց որ նոր գրողները, յեղափոխական ներկայ փուլին արտայայտիչ գրողները, կապը չխզեն անցեալի մեծ հեղինակներու գրական ժառանգութեան՝ ինչպէս եւ ժողովրդական բանահիւստութեան հետ, այլ գիտնան՝ իրենց ձեռը ճոխացնելու համար՝ օգտուիլ հին վարպետներէն ու ֆօլքլօրական գանձերէն»¹⁶²:

Արևելքի, Հյուսիսի և եվրոպական գրականությունների նկատմամբ իր նմանօրինակ քաղաքականությամբ, այսպիսով, կարելի է հաստատել, որ «Անահիտ» հանդեսը ոչ միայն ցանկանում էր գոհացում տալ իր ընթերցողի պահանջներին, ազնվացնել նրա ճաշակն ու հայացքները, այլև մտահոգված հայ գրականության զարգացման խնդիրներով՝ հետևողականորեն ձգտում էր հայ գեղարվեստը հարստացնել նոր շեշտադրումներով ու հարցադրումներով, ստեղծել բարձր մշակույթ, որը, պահպանելով իր ազգային դիմագիծը, չէր լինի միակողմանի և կտրված համաշխարհային գրական ընթացքից: Համաշխարհային դասական գրականությունը Չոպանյանի կողմից գնահատվում է որպես ցանցակերպ այն հյուսքը, որը, իր մեջ առնելով հայ գրողին ու գիտնականին, կարող էր ներշնչել, դառնալ գեղարվեստական կատարելության չափանիշ, ընդարձակելով հայ ընթերցողի գեղագիտական ճաշակի և գիտական ընկալումների հորիզոնը, կապահովեր նրա գեղարվեստական ճաշակի զարգացումը և մտքի առաջընթացը:

«Անահիտը» միաժամանակ մեծ կարևորություն էր տալիս եվրոպացի նշանավոր արևելագետ-հայագետներին հայ ընթեր-

¹⁶² **Չոպանյան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 19:

ցողին ծանոթացնելուն: Այն դիմանկարները, որ ավելի հաճախ տպագրվում էին օտարազգի որևէ գիտնականի մահվան կապակցությամբ՝ ուրվագծելով նրանց կյանքի պատկերը, հարևանցի ակնարկով ներկայացնելով յուրաքանչյուրի գիտական ժառանգությունը, շեշտը հիմնականում դնում էին հայագիտության ասպարեզում նրանց բերած վաստակի վրա: Այդպես, օրինակ, անչափ բարձր է գնահատվում գերմանացի ականավոր արևելագետ Յոզեֆ Մարկվարտը (1864-1930), որի վերաբերյալ հոդվածի հեղինակ Ներսես Ալիկյանը խոսքը ավարտում է շնորհակալական ընդգծված շեշտադրումներով. «Յոզեֆի Բդեշխական», ինչպես սովոր էր ստորագրել երբեմն իր մասնակներուն տակ հայերեն գրերով, եթե առհասարակ արեւելագիտութեան մէջ պիտի մնայ անմահ, բայց ես կը սիրեմ յուսալ թէ հայ սրտերը պիտի պահեն զայն դրոշմած ոսկի տառերով, երախտագէտ զգածումները¹⁶³ պիտի պայծառացնեն ոսկոյն փայլը. եւ հայասերն հայ սրտերու մէջ պիտի ապրի անուշակ երանութիւնը»¹⁶⁴:

Իսկ Ա. Չոպանյանը, որի խնդրանքով Ն. Ալիկյանը շարադրել էր իր մասնավոր հոդվածը՝ իբրև Մարկվարտին մոտիկից ճանաչող և նրա գործի արժեքը ներհունորեն գնահատող հայ գիտնական, գերմանացի անվանի հայագետի կապակցությամբ գրում է. «Սուգուելով մեր անցեալին մէջ, անիկա հոն մեր ցեղը սիրելու եւ յարգելու զինքը մղող իրողութիւններ գտած է, եւ իր հայասիրութիւնը գիտակից ու պատճառաբանեալ էր. ոչ մէկ Հայ աւելի խորին սքանչացմամբ չէ խօսած Մաշթոցի եւ Սահակայ փրկարար գործին վրայ, որքան Մարքուարթ՝ հայ գրի գիտին նուիրած իր ուսումնասիրութեան մէջ...»¹⁶⁵:

Նույն «Բրոնիկում» գուծելով և սգալով հայ ժողովրդի, Հայ դատի «վեհանձն ու արի պաշտպան» Ֆրիտյոֆ Նանսենի մահը՝

¹⁶³ Այս և հետագա շեղումները ուղղագրական կանոններից բնագրային են - Վ. Ա.:

¹⁶⁴ **Ալիկեան Ն.**, Յոզեֆ Մարկուարտ, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 60:

¹⁶⁵ **Չոպանեան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 112:

Չոպանյանը նրա ծավալած հայանպաստ գործունեության մեջ կարևորում է նաև հայոց անցյալին և ներկային նվիրված հոյակապ այն գիրքը, որը, ինչպես ինքն է փաստում, քարգմանված լինելով եվրոպական մեկից ավելի լեզուներով, մեր ազգին ու դատին մատուցված ամենից արժեքավոր ու տևական ծառայություններից է¹⁶⁶:

Նման գնահատականներով, համոզված ենք, Չոպանյանը, մեր հին ու նոր պատմության լուսաբանման կարևոր գործին նվիրված, մեր ժողովրդին կենսական ծառայություն մատուցած օտարազգի մեծանուն գիտնականներին ու գործիչներին հայտնելով իր երախտագիտությունը, նպատակ ուներ նաև նրանց միջնորդությամբ, նրանց խոսքով ու գրով ոչ միայն մեր ազգի բարեկամ ազնիվ ժողովուրդների մեջ լրացուցիչ հետաքրքրություն և համակրանք ստեղծել, այլև լեցնել բոլոր նրանց, ովքեր կասկածի տակ էին առնում կամ մերժում հայ ժողովրդի պատմական վաղեմությունը, փորձում համոզել, թե հայ հոգևոր բազմադարյան արտադրությունը սոսկ պատվաստն է օտար մշակույթների:

3.2. Հայ միջնադարյան գրականությունը և նրա ավանդները

Ինչպես արդեն նկատեցինք, «Անահիտի» նախորդ շրջանի ավանդների լավագույն շարունակությունն էր նաև հայ գրական արժեքների հրատարակումն ու գնահատումը, որի շրջանակում կարևորվում էր նաև նոր սերնդի ծանոթացումը հայ հին գրականությանը: Ծարունակելով հրատարակել միջնադարյան մեր հեղինակների զմայելի բանաստեղծությունները՝ Չոպանյանը նպատակ ուներ հայ արդի գրական միտքը հաղորդակցության մեջ դնել իր անցյալի հետ, իսկ անցյալի գրական այդ ժառանգությանը գրականագետի տված գիտական մեկնաբանություններն ու բացատրությունները պայմանավորված էին դարձյալ ազգային բանաստեղ-

¹⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 113:

ծական ավանդների ու արմատների բացահայտման ձգտմամբ¹⁶⁷:

Վերածնված հանդեսի տարբեր տարիների զանազան համարներում պարբերաբար տպագրվում են միջնադարյան հայ հեղինակների ավելի հաճախ դեռ անծանոթ ու անտիպ ստեղծագործություններ, ինչպես, օրինակ, Հովհաննես Թլկուրանցուց¹⁶⁸, Հովհաննես Երզնկացուց¹⁶⁹, Նահապետ Քուչակից¹⁷⁰, Նիկողայոս

¹⁶⁷ Ա. Չոպանյանի՝ «Անահիտ» հրատարակության երկու շրջաններում հայ միջնադարյան հեղինակների վերաբերյալ ուսումնասիրությունների մասին անդրադարձումները տե՛ս **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 177-198, 309-314, **Ավագյան Վ.**, Հայ միջնադարյան գրականության արժեքավորումը Ա. Չոպանյանի կողմից, «Պալքար», Երևան, 1996, բիվ 9-10, էջ 46-50, **Գողովխանյան Ա.**, 2004, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը, Երևան, 2004, «Զանգակ-97» հրատ., 134 էջ, **Գողովխանյան Ա.**, 2005, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2005, №1, էջ 107-124:

¹⁶⁸ Տե՛ս Անտիպ տաղ մը Յովհաննես Թլկուրանցույ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, բիւ 1, էջ 47, Անտիպ տաղ մը Յովհաննես Թլկուրանցիի. Տաղ ի վերայ դատաստանի, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետուար, բիւ 5, էջ 62-64, Նորին Յովհաննեսի ասացեալ վասն սուրբ Յովհաննու գլխատման, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, բիւ 5-6, էջ 3-7:

¹⁶⁹ Տե՛ս **Երզնկացի Յ.**, Խրատ ոգեշահ յաղագս մանկանց եկեղեցույ, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, բիւ 1-2, էջ 10-19:

¹⁷⁰ Տե՛ս Քուչակեան տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, բիւ 1, էջ 14-17, Քուչակեան անտիպ տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., բիւ 4, էջ 4-11, Քուչակեան անտիպ տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, բիւ 5-6, էջ 167-187, Քուչակեան անտիպ տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, բիւ 1-2, էջ 8-16, Քուչակեան անտիպ տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-յոկտեմբեր, բիւ 1-2, էջ 28-39, «Քուչակեան» տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, բիւ 3-4, էջ 99-103, «Քուչակեան» տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, բիւ 5-6, էջ 19, Քուչակեան տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, բիւ 1-2, էջ 11-14, Քուչակեան տաղեր. Ա. խումբ, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, բիւ 3-4, էջ 18-19, Քուչակեան տաղեր. Ա. խումբ (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս-սեպտեմբեր, բիւ 5, էջ 26-27, Քուչակեան տաղեր. Ա. խումբ, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, բիւ 1-2, էջ 34-36, Քուչակեան տաղեր, «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս-օգոստոս, բիւ 4, էջ 23-24, Քուչակեան տաղեր (Շար.) «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, բիւ 1-2, էջ 26-27, Քուչակեան տաղեր. Ա. խումբ (Շար. եւ վերջ) «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, բիւ 3-4, էջ 32-33:

Ստամպուլուց¹⁷¹, Ստեփանոս Դաշտենցից¹⁷² շատ անգամ հենց Ա. Չոպանյանի աշխարհաբար փոխադրություններով և ծանոթագրություններով: Էական տեղ էր հատկացվում նաև միջնադարյան մատենագիրների ու տաղերգուների գործերի ուսումնասիրությանը, որոնցից կարևոր են մասնավորապես Գ. Ֆնտըլյանի՝ Կորյունին և Մ. Խորենացուն¹⁷³, Ներսես Ալիմյանի, Աբրահամ Ջամինյանի, Հակոբ Մանանդյանի՝ դարձյալ Պատմահորը նվիրված հետազոտությունները¹⁷⁴, Ստեփանոս Դաշտենցի մասին հոդվածները¹⁷⁵, ինչպես նաև Նիկողայոս Ադոնցի քննությունը՝ Մովսես

¹⁷¹ Տե՛ս **Ստամպուլցի Ն.**, Ողբ Դարկօզի կղզոյն ասացեալ է, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 69-73:

¹⁷² Տե՛ս Ազգային նշխար. Ստեփանոս Դաշտենցի ոտանատրներ զանազան բաներու վրայ շարադրուած, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 8-11:

¹⁷³ Տե՛ս **Ֆնտըլեան Գ.**, Ուսումնասիրութիւններ Կորիւնի շուրջ. Ա., «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 111-116, **Ֆնտըլեան Գ.**, Ուսումնասիրութիւններ Կորիւնի շուրջ. Ա., «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 79-86, **Ֆնտըլեան Գ.**, Ուսումնասիրութիւններ Կորիւնի շուրջ. Բ. (Ազաթանգեղոս եւ Կորիւն), «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 21-28, **Ֆնտըլեան Գ.**, Կորիւն եւ Խորենացի. Ա. Խորենացի, իր նպատակը, արժանիքը եւ թերութիւնները. Ա., «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 48-53, **Ֆնտըլեան Գ.**, Կորիւն եւ Խորենացի. Բ., «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 62-74, **Ֆնտըլեան Գ.**, Կորիւն եւ Խորենացի. Գ., «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 58-69, **Ֆնտըլեան Գ.**, Դոկտ. Յ. Մանանդեան.- «Խորենացու ամեղծուածի լուծումը», Երեւան 1934 (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 49-56, **Գ. Ֆնտըլեան Գ.**, Դոկտ. Յ. Մանանդեան, Խորենացու ամեղծուածի լուծումը (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս-օգոստոս, թիւ 4, էջ 66-76:

¹⁷⁴ Տե՛ս **Ալիմեան Ն.**, Մովսէս Խորենացոյ ժամանակն եւ անճամարտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 67-77, **Ջամինեան Ա.**, Մովսէս Խորենացին իր ժամանակը, ընկերակիցներն ու գործերը, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ, թիւ 1-2, էջ 117-136, **Մանանդեան Յ.**, Խորենացու ամեղծուածի լուծումը, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 182-185:

¹⁷⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Ստեփանոս Դաշտենցիի մէկ հետաքրքրական գրուածքը, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 1-2, **Սիմոնեան Ա.**, Ստեփանոս Դաշտենցի. Նորայայտ աշուղ մը (Տաղեր եւ ուսումնասիրութիւն),

Կաղանկատվացու մասին¹⁷⁶, կամ, օրինակ, Սիմոն Սիմոնյանի դիտողությունները՝ Վարդան Այգեկցուն վերաբերող ձեռագրերի վերաբերյալ¹⁷⁷:

Հայ միջնադարյան բանաստեղծների, մասնավորապես Ն. Քուչակի կապակցությամբ մի առանձնակի նշանակություն է առնում գերմանացի քնարերգակ Հանս Բեթգեի «Հայ Սոխակ» (Die Armenische Nachtigall) վերնագրված հատորը, որի կազմության, գիտական բովանդակությամբ վերջաբանի մասին տեղեկություններ է տալիս Արտաշես Աբեղյանը՝ գրքի հայերեն քարգմանությունից հատվածաբար մեջբերելով ուշագրավ կտորներ: Պարզվում է՝ օգտվելով Ա. Չոպանյանի՝ ֆրանսերեն արձակով իրեն տրամադրած նյութից՝ գերմանացին իր մայրենիով առաջին անգամ առանձին գրքով ներկայացրել է Ն. Քուչակին՝ նրանից քարգմանելով սիրո և խրատական բազմաթիվ երգեր: Մի քանի քառյակների բնագրերի և Բեթգեի ազատ «վերստեղծությունների» ու իր՝ դրանց կցված բառացի փոխադրությունների օրինակով Ա. Աբեղյանը ընթերցողին գաղափար է տալիս կատարված աշխատանքի մասին: Իսկ դառնալով գերմանացու՝ Աբեղյանի բնորոշմամբ թեև պարզ, սակայն գիտական արժեք ունեցող վերջաբանին, հողվածագիրը վկայակոչում է տողեր, որոնցում Քուչակը կարևորվում և իր արժանի տեղն է զբաղեցնում Արևելքի ամենանշանավոր քնարարեգուներից Օմար Խայամի ու Հաֆիզի կողքին. «Տարօրինակ է,- գրում է նա,- որ Քուչակը մինչև այսօր գրեթե անծանօթ է մնացած Գերմանացիներին, որ առելի քան մի ուրիշ ժողովուրդ՝ իրենց առջև բանալ

«Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թի 3, էջ 51-68:

¹⁷⁶ Տե՛ս **Արոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատուացու. Ա., «Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թի 3, էջ 69-77, **Արոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատուացու. Գ., «Անահիտ», Փարիզ, 1939, յունիս-սեպտեմբեր, թի 4-5, էջ 22-31, **Արոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատուացու. Դ., «Անահիտ», Փարիզ, 1939, հոկտ.-նոյեմ.-դեկտ., թի 6, էջ 4-9, **Արոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատուացու, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թի 1-3, էջ 20-29:

¹⁷⁷ Տե՛ս **Սիմոնեան Ս.**, Նկատողություններ Վարդան Այգեկցիի նորայայտ ձեռագիրներում վրայ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թի 3-4, էջ 77-87:

գիտցել են համաշխարհային գրականությունը: Վասնզի, Արեւելքի ամենէն կախարդիչ բանաստեղծական դէմքերից մէկն է այս երգիչը: Սէր նուագող իր տալիդի արբեցուցիչ դաշներգութեան մէջ տեղ ունին ե՛ր բուռն կիրքը, ե՛ր մեղմ հեգութիւնը՝ միանգամայն»¹⁷⁸:

Օտարագոհներից ուշագրավ է նաև ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի՝ Հեթում Պատմիչին նվիրված բանախոսության նյութը¹⁷⁹, որտեղ գիտնականը արժևորում է միջմադարյան ֆրանսերենով Արևելքի մասին շարադրված հնագույն գործը՝ մեծարելով հայագոհի հեղինակին, որը, ինչպես գրում է Չոպանյանը, «արժանի է ճանչցուելու, սիրուելու եւ յարգուելու հայ արդի սերունդներէն, ինչպէս եւ ապագայ բոլոր հայ սերունդներէն, իբր մեր հին մեծ ազգային գործիչներէն մին, իբր նախորդ մը Իսրայէլ Օրիներուն, Աշտարակեցիներուն, Վարժապետեաններուն եւ Խրիմեաններուն, եւ իբր երոպական լեզուով մը արտայայտուող ու միջազգային գնահատման արժանացած առաջին հայ արժէքաւոր հեղինակը»¹⁸⁰:

Հիշյալ և արժեքավոր բազմաթիվ այլ ուսումնասիրություններ նկատի ունենալով՝ Չոպանյանը, փարատելով անտեղի ամեն կասկած, արձանագրում է. «...հաճոյքով ու գոհունակութեամբ կարելի է նկատել որ մեր բանասիրական գրականությունը հեռու է անկման մէջ ըլլալէ, ինչպէս մեր գուտ գրական ու քերթողական արտադրութիւնը հեռու է տկարացած ու նուաղած ըլլալէ. մէկ քանի մշտադժգոհ ու թթուած մտքերու կարծածին նման, եւ թէ հակառակ անօրինակ աղէտներու շարքի մը որ ասիական քանակութեամբ ուժ խլեց մեր ազգէն, հայ միտքը կը մնայ միշտ բեղուն, ստեղծագործ, իր մշակոյթը ճոխացնելու ճիգին մէջ ոչ թէ կասկած, ոչ թէ ընկրկած, այլ ինքզինքին միշտ հաւասար, նոյն իսկ որոշ յառաջդիմութիւն մը

¹⁷⁸ **Արեղեան Ա.**, Նահապետ Քուչակը գերմաներէն լեզուով, «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 7:

¹⁷⁹ Տե՛ս **Ֆէյդի Ֆ.**, Հեթում Պատմիչ. «Ծաղիկ պատմութեանց Արեւելեան աշխարհին» գրքին հեղինակը, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 75-94:

¹⁸⁰ **Չոպանեան Ա.**, Հեթում Պատմիչ, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 74:

ցոյց տուող»¹⁸¹:

Խմբագրապետը ինքն էլ շատ հաճախ հանդես է գալիս մի շարք հողվածներով, որոնցից հատկապես հիշարժան են Մ. Խորենացուն («Գրագէտն ու մարդը Մովսէս Խորենացիին մէջ») ¹⁸², Հովհաննէս Երզնկացուն («Յովհաննէս Երզնկացի») ¹⁸³, Հովհաննէս Թլկուրանցուն («Յովհաննէս Թլկուրանցի») ¹⁸⁴ և մասնավորապես Նահապետ Քուչակին և հայրեններին նվիրված ուսումնասիրությունները («Հայրեն»ներու Բուրաստանը) ¹⁸⁵, «Քուչակեան տաղերու նոր շարք մը» ¹⁸⁶:

Պետք է ասել, որ հայոց անցյալի գրական ժառանգութեան գնահատումներում Չոպանյանին գիտական, պատմաբանասիրական, ազգագրական խնդիրներից առավել հետաքրքրում էին միջնադարյան գրականութեան գեղարվեստական-բանաստեղծական արժանիքներն ու ստեղծագործական անուրանալի շնորհները՝ իբրև իսկական ու ճշմարիտ գրական արտահայտություններ: Գեղագետ Չոպանյանի համար Խորենացին առաջին հերթին հայ տոհմիկ դպրության պատմության մէջ արձակ բանաստեղծության մեծագույն ներկայացուցիչն է՝ «իբր քնարերգական էջերէն ոմանց մէջ («Վարդավառի ճառ») նարեկացիական ոճին իսկ նկարագիծը արդէն տուած» ¹⁸⁷, Հ. Թլկուրանցին «զգայուն, աշխոյժ, ինքնաբոլխ»

¹⁸¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 185:

¹⁸² Տե՛ս **Չոպանեան Ա.**, Գրագէտն ու մարդը Մովսէս Խորենացիին մէջ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.- դեկտ., թիւ 1-2, էջ 1-11:

¹⁸³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Յովհաննէս Երզնկացի, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թիւ 1-3, էջ 1-9:

¹⁸⁴ **Չոպանեան Ա.**, Յովհաննէս Թլկուրանցի, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 1-3:

¹⁸⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, «Հայրեն»ներու Բուրաստանը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 3-14:

¹⁸⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քուչակեան տաղերու նոր շարք մը, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 96-98:

¹⁸⁷ **Չոպանեան Ա.**, Գրագէտն ու մարդը Մովսէս Խորենացիին մէջ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.- դեկտ., թիւ 1-2, էջ 10: Ա. Չոպանյանի՝ Խորենացու վերա-

քնարերգակ է՝ «իրեն յատուկ գունագեղ ու թրթռուն» ոճով¹⁸⁸:

Իսկ եթե բանասիրական նյութի պակասը, սակավ տեղեկությունները հնարավորություն չեն տալիս, օրինակ, ճշգրտորեն որոշելու հայրենների հեղինակային հարցը, միևնույնն է, կարևորը դրանցում հայկական կերտվածքի, ազգային կայուն խառնվածքի հայտնաբերումն է՝ իբրև աշխարհիկ բնավորության գեղարվեստական դրսևորում. «**Անահիտի** ընթերցողները,- մի քանի անտիպ տաղերի հրատարակման կապակցությամբ գրում է Չոպանյանը,- հրճուանքով պիտի հոտոտեն անշուշտ այս նոր գտնուած ծաղիկները Հայրեններու Բուրաստանին, որ մեր հին բանաստեղծութեան ընդհանրապէս մռայլ կամ ծանրախոհ ամբողջութեան մէջ կը ներկայացնէ գարնանագեղ կենսայից հմայիչ դրախտ մը հայ սրտին ու հայ հանճարին ամենէն ներքին ալքերէն բղխած»¹⁸⁹:

Հայ միջնադարյան բանաստեղծության հեղինակավոր դեմքերից նաև Ֆրիկին, Հ. Երզնկացուն է անդրադառնում նոր «Անահիտը», որոնց ստեղծագործությունները դարձյալ արժևորվում են նույն մոտեցմամբ. Ֆրիկի բանաստեղծության մեջ ընդգծվում է հանդուգն, ըմբոստ ու բողոքական ոգու մեծությունը՝ ընդդեմ համատարած համակերպական և փառաբանական աստվածապաշտության¹⁹⁰, Հ. Երզնկացու ստեղծագործություններից առանձնացվում են հատկապես նրանք, որ գրված են «ժողովրդական քնարին հետևողութեամբ», ունեն «թէ՛ հայրենաշունչ էս թէ՛ անձնադրոշմ» կնիք¹⁹¹:

բերյալ հիշյալ հոդված մասին տե՛ս Բյուսեյան Հ., Խորենացին Չոպանյանի գնահատմամբ, «Պատմության տարեգիրք», Երևան, 2020, էջ 519-526:

¹⁸⁸ **Չոպանյան Ա.**, Յովհաննէս Թլկուրանցի, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 1:

¹⁸⁹ **Չոպանյան Ա.**, «Հայրեն»ներու Բուրաստանը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 13:

¹⁹⁰ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 122:

¹⁹¹ **Չոպանյան Ա.**, Յովհաննէս Երզնկացի, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թիւ 1-3, էջ 6:

Արդարև, շատ մեծ է Չոպանյանի դերը Ֆրիկի ստեղծագործության բացահայտման ու հռչակման գործում¹⁹², և իրավացի էր նա, որ 1937 թ. իր քրոնիկներից մեկում առանց դույզն-ինչ չափազանցության գրում է, թե «Հայոց մեջ ցարդ այնչափ սիրած, քննած, ըմբռնած եւ հայ ժողովուրդին ինչպէս եւ օտարներուն ծանօթացուցած է Ֆրիկը իր գործին բոլոր երեսներով՝ որքան այս տողերը գրողը»¹⁹³: Իմանալով, որ Խորհրդային Հայաստանի Պետհրատը որոշել է լույս ընծայել բանաստեղծի քերթվածների հավաքածուն՝ հուսալով, սակայն, հարցողական գրում է. «...հատորին ներածութեան մեջ արդեօք գէթ երկու տողով պիտի յիշատակուի՞՞ Ֆրիկի գործին ծանօթացման համար իմ կատարած դերս»։ Յավոք, չի հիշատակվում¹⁹⁴: Սակայն մեծահոգի գիտնականի համար ամենևին էլ կարևորը դա չէր, ինչպես ինքն է նշում, այլ այն, «որ Ֆրիկի պէս ինքնատիպ, յուզիչ ու խորապէս Հայ բանաստեղծի մը գործը երեսա, ինչ որ ո եւ է մէկէն ատելի ինծի հաճոյք պիտի պատճառէ»¹⁹⁵:

Այստեղ՝ Ֆրիկին վերաբերող հատվածում, Չոպանյանը անցողակի՝ առանց բանաստեղծի գործի համակողմանի և մանրամասն քննության պահանջի, սակայն կարծեք գուշակելով գռեհիկ սոցիոլոգիզմի դիրքերից նրան վերագրվելիք «հեղափոխական», «աքեիստ» հորջորջումները¹⁹⁶, գրում է. «...Ֆրիկ միմիայն յեղավոխական խիզախ եւ ըմբոստ միտք մը համարիլն ալ չափազանցութիւն մը պիտի ըլլար եւ զայն սխալ ըմբռնելու պիտի առաջնորդէր: Ֆրիկ եկեղեցական մը չէ եղած, այլ աշխարհական մը որ ունե-

¹⁹² Տե՛ս նաև **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 187-192, **Քախչինյան Հ.**, Ֆրիկի բանաստեղծական ժառանգությունը. Բնագրեր և քննություն, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2021, էջ 5-6:

¹⁹³ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 122:

¹⁹⁴ Տե՛ս նաև **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 192:

¹⁹⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 124:

¹⁹⁶ Տե՛ս **Քախչինյան Հ.**, Ֆրիկի բանաստեղծական ժառանգությունը. Բնագրեր և քննություն, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2021, էջ 11:

ցած է արեկոծ կեանք մը գոր հանրային աղետներն ու անձնական դժբաղդութիւնները մթագնած են... հաւատացեալ մըն է, քրիստոնէական կրօնքն ու բարոյականը իր հոգիին մէջ կը տիրեն, կը սիրէ Աստուած իբր իր լաւագոյն բարեկանը, պաշտպանը, նեցուկը, եւ իր քերթուածներուն մեծագոյն մասը սրտաբուխ, խորագգաց, սիրապատար միսթիքականութեամբ մը տոգորուած տաղեր են, կամ քրիտոնէական վարդապետութեամբ ու բարոյականով թափանցուած քերթուածներ»¹⁹⁷:

Ուշագրավ է, որ Ֆրեդերիկ Միսթրալը, ծանոթանալով Չոպանյանի «Les Trouvées arméniens» («Հայ աշուղներ») (1906) հատորին, որի մէջ ամփոփված էին թարգմանություններ ինչպես Ֆրիկից, Նահապետ Քուչակից, այնպես էլ միջնադարյան ու նոր ժամանակների աշուղներից¹⁹⁸, գրքի հեղինակին ուղղված նամակում Ֆրիկի մասին գրել էր. «Ֆրիկը Յոբա մէկ թռն է»¹⁹⁹:

Չոպանյանի գրականագիտական խառնվածքի բնութագրման համար այստեղ տեղին է նկատել, որ նա, ըստ կարևորության, չի անտեսում ժամանակի ընթացքում որևէ հարցի վերաբերյալ իր երբեմնի արած սխալ, վիճելի սահմանումներն ու բնութագրումները և անհրաժեշտության բերումով խմբագրում է դրանք: Այսպես, օրինակ, միանգամայն որոշակի է երևում սեփական տեսակետի վերանայումը հետևյալ ակնարկում. «Քէօչէկ» թուրքերէն բառով ստուգաբանութիւնն այդ անունին, զոր «Նահ. Քուչ. Դիւան»-ի գրքիս յառաջաբանին մէջ առաջարկած էի, եւ որ քննադատուեցաւ, այժմ ինձի ալ խորթ կը թուի»²⁰⁰:

Մեկ անգամ ևս նկատենք, որ միջնադարյան գրականության գեղագիտական արժևորմամբ Չոպանյանը անշուշտ նպատակ ուներ

¹⁹⁷ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 123:

¹⁹⁸ Տե՛ս **Հակոբեան Հ.**, Արշակ Չոպանեան. կենսագրական գիծեր, Փարիզ, տպ. Կ. Յ. Ներսէս, 1924, էջ 15, նաև՝ **Դակլաբյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 309-310:

¹⁹⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 123:

²⁰⁰ **Չոպանեան Ա.**, «Հայրեն»ներու բուրաստանը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 8-9:

Ժամանակակից գրականությունն ու գեղարվեստը հարստացնել հայանշան ու ինքնաբնույթ այն հատկանիշներով, որոնցով այն-քան առատ էր մեր անցյալի մշակույթը:

3.3. Հայ նոր գրականության արժևորումը

«Անահիտի» երկրորդ շրջանում գեղագիտական նույն մոտեցմամբ են վերլուծվում և գնահատվում նաև հայ նոր գրականության ու ժամանակակից հեղինակների ստեղծագործությունները: Ինչպես նախկինում՝ ժամանակակից իմաստով Սփյուռքի գոյացումից դեռ շատ տարիներ առաջ, հանդեսի էջերում լայն տեղ է տրամադրվում թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ դեմքերին: Ներկա ժամանակներում պակաս կարևոր չէր մտավոր-գրական փոխառնչությունների և փոխանցումների շարունակությունը աշխարհով մեկ ցրված հայության մեջ:

Վերսկսված «Անահիտի» էջերում կարելի է տեսնել նոր շրջանի հեղինակներից՝ Հովհաննես Թումանյանից²⁰¹, Ավետիք Իսահակյանից²⁰², Վահան Միրաքյանից²⁰³, Թղկատինցուց²⁰⁴, Գրիգոր Չոհրա-

²⁰¹ Տե՛ս Յովհաննես Թումանյանին տաղ մը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 15:

²⁰² Տե՛ս **Իսահակեան Ա.**, Կ'ուզենայի..., Երկու քառեակ, Գիրք ծննդոց, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 15-16, **Իսահակեան Ա.**, Վերջալոյսին..., Սաառնում ես..., «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 24-25:

²⁰³ Տե՛ս Անտիպ կտորներ Վահան Միրաքեանի «Լալուարի որսը» քերթուածէն, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 69-72:

²⁰⁴ Տե՛ս Անտիպ էջ մը Թղկատինցիէն. Տանձ թող չհասկնան, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 19-20:

այից²⁰⁵, Ռուբեն Ջարդարյանից²⁰⁶, Թովմաս Թերզյանից²⁰⁷, Տիգրան Կամսարականից²⁰⁸, Շղիա Տեմիրճիպաշյանից²⁰⁹, Վահան Թեքեյանից²¹⁰ և ուրիշներից նյութեր, որոնց երբեմն խմբագիրը կցում կամ տողատակում մատուցում է հակիրճ ու սեղմ, սակայն բովանդակալից վերլուծական-գնահատականներ: Օրինակ, տպագրելով Թովմաս Թերզյանի մի քանի անտիպ էջերը՝ Չոպանյանը հարկ է համարում «Անահիտում» արտատպել մաս բանաստեղծի՝ շուտով Ս. Ղազարի տպարանից հրատարակ ելնող քերթողական գործերի երկհատորյակին կցված իր քննական ուսումնասիրության մախաբանը, որտեղ մա շատ ամփոփ արժևորել էր Թ. Թերզյանին ու նրա գործը²¹¹. «Թերզեան,- գրում է նա,- մին եղած է ամենէն լուսատր ու ներդաշնակ դէմքերէն որ մեր մէջ երեւցած ըլլան: Իր կեանքն ու գործը, երկու բառով կարելի է ամփոփել. ան սիրեց ու երգեց, եւ

²⁰⁵ Տե՛ս **Ջօհրապ Գ.**, Ռեհան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 13-15:

²⁰⁶ Տե՛ս Անտիպ էջ մը Ռուբեն Ջարդարեանէն. Շղմիկ ախբարը (հէքեաթ), «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետուար, թիւ 5, էջ 6-9:

²⁰⁷ Տե՛ս Անտիպ էջեր Թովմաս Թերզանի, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետուար, թիւ 5, էջ 69-81:

²⁰⁸ Տե՛ս **Կամսարական Տ.**, Մերկիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 43-47, **Կամսարական Տ.**, Յարօ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետուար, թիւ 1-2, էջ 55-58, **Կամսարական Տ.**, Մեծ վէճ մը Հայ Սուրբին խուցին մէջ, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 1-9:

²⁰⁹ Տե՛ս Շղիա Տեմիրճիպաշեանէն անտիպ քերթում մը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 21-22:

²¹⁰ Վահան Թեքեյանի բանաստեղծություններից հանդիպում են հանդեսի գրեթե բոլոր համարներում:

²¹¹ Թ. Թերզյանի բանաստեղծությունների ամբողջությունը՝ մեծադիր երկու հատորներով՝ յուրաքանչյուրը մոտավորապես 500 էջ, որ տպագրվել է քերթողի որդու՝ Էդուարդ Թերզյանի նախաձեռնությամբ, կազմվել, համակարգվել է Ա. Չոպանյանի շնորհիվ: Նրան էր հանձնարվել մաս առաջաբանը և ծանոթագրությունների հոգար. տե՛ս Անտիպ էջեր Թովմաս Թերզանի, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետուար, թիւ 5, էջ 69: Չոպանյանը Թ. Թերզյանի մասին, որ եղել իր ուսուցիչը, մի ուսումնասիրություն էլ գրել էր դեռ 1909 թ. «Անահիտում» և այնուհետև տպագրել «Դեմքերի» առաջին հատորում. տե՛ս **Գալլաբյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 409:

սէր, գեղեցկութիւն ու երգ սորվեցուց. բանաստեղծ եղաւ եւ ուսուցիչ, բանաստեղծութեան ուսուցիչ, գեղեցկութեան ուսուցիչ. այս է ամենէն ինչ որ ըրաւ, եւ ի՞նչ կարելի ընել՝ այս աշխարհիս մէջ՝ աւել վեհ ու բարերար»²¹²: Իսկ տողատակում տալիս է արդէն տպագրված գործերի վերաբերյալ ուշագրավ ծանոթագրություններ, որոնցից առավել հետաքրքիր է «Կայսրուհի՛դ մեծագօր ՚ւ երջանիկ...» բանաստեղծությանը վերաբերողը, որը, կարծում ենք, արել է հատուկ նկատառմամբ՝ արտահայտելու նաև սեփական վերաբերմունքը Գերմանիայի հայադավ իշխանությունների նկատմամբ. «Թէրգեանի այս վրեժխնդիր բանաստեղծութիւնը, ա՛յնքան ազնիւ գայրոյթով մը թրթռուն, կ'ուղղուի Գերմանիոյ կայսրուհւոյն որ իր շնական ամուսնոյն հետ Համիտեան ջարդերէն յետոյ եկաւ Պոլիս Կարմիր Սուլթանը ողջագուրել, երբ Հայ ժողովրդի մարտիրոսութիւնը շահագործելով իրենց Տերութեան վասալ դարձուցին Օսմանեան պետութիւնը եւ իրենց համար ալ ստացան անձնական շքեղ նուէրներ»²¹³:

Հանդեսի էջերում հանդիպում են նաև անտիպ, հետաքրքիր բովանդակությամբ բանախոսություններ²¹⁴, ինքնակենսագրականներ²¹⁵, դեռ «Ծաղիկիկն» ուղարկված, սակայն խմբագրի՝ Պոլսից Փարիզ հեռանալու պատճառով անտպագիր մնացած նյութեր²¹⁶, նամակներ, օրինակ, Գ.ր. Օտյանից՝ ուղղված «մեծ Հայէ մը ուրիշ մեծ Հայու մը»՝ ազգային-քաղաքական գործիչ Արմենակ Սաքոյա-

²¹² Անտիպ էջեր Թովմաս Թէրգանի, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետուար, թիւ 5, էջ 69:

²¹³ Նույն տեղում, էջ 77:

²¹⁴ Տե՛ս Կոմիտաս վարդապետի անտիպ մէկ բանախոսութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 1-9:

²¹⁵ Տե՛ս Կոմիտաս վարդապետի ինքնակենսագրութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 2-6: Այստեղ Վարդապետը հակիրճ շարադրել է իր կենսագրությունը՝ մինչև 1908 թ.: Արտատպումներ կան ձեռագիր օրինակից:

²¹⁶ Օրինակ, տե՛ս **Գուրեան Ե.**, Մարդագոհ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս- դեկտեմբեր, թիւ 2, էջ 15-16, Անտիպ էջ մը օրիորդ Չապէլ Յովհաննիսեանի (Չապէլ Եսայեան), «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս- դեկտեմբեր, թիւ 2, էջ 17-18:

նին²¹⁷, Գ. Ջոհրապից՝ Ա. Չոպանյանին²¹⁸, Եղիա Տեմիրճիպաշյանից՝ Հրանտ Ասատուրին²¹⁹, Հրանտ Ասատուրից՝ Տիգրան Կամսարականին²²⁰, Կոմիտաս Վարդապետից՝ Վահրամ եպիսկոպոս Մանկունուն²²¹, Գառնիկ Ֆնտզյանից՝ Անայիսին (Եվփրիմե Ավետիսյան)²²², Մաղաքիա եպս. Օրմանյանից՝ Սրբուհի Տյուսաբին²²³, Շահե արքեպիսկոպոս Գասպարյանի վերջին նամակը՝ Ա. Չոպանյանին²²⁴, և այլն, որոնք ոչ միայն ուրվագծում են կողմերի տարբեր հարաբերություններ, այլև հաճախ բացահայտում են նրանց գործունեության անձանոթ եզրեր:

Ա. Չոպանյանը պարբերահանդեսում հրապարակել է նաև նոր գրականության պատմությանը վերաբերող մի շարք ուսումնասիրություններ, որոնցից հատկապես ուշադրության են արժանի Բաֆֆուն, Ավ. Իսահակյանին նվիրված հոդվածները:

Չոպանյանն իր ազգային-հասարակական, գրականագիտական գործունեության ընթացքում գրեթե միշտ էլ տեսադաշտում ունեցել է Բաֆֆուն, բազմաթիվ առիթներով անդրադարձել նրա ստեղծագործությանը: «Անահիտի» 1903 թ. թիվ 2-3 համարից տեղեկանում ենք, որ նա նպատակ է ունեցել ֆրանսերեն մեկ մա-

²¹⁷ Տե՛ս Գրիգոր Օտեանի անտիպ մեկ նամակ, «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 20-21:

²¹⁸ Տե՛ս **Ջոհրապ Գր.**, Նամակ (անտիպ), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 10-12:

²¹⁹ Տե՛ս Եղիա Տեմիրճիպաշյանի անտիպ նամակը մը առ Հրանտ Ասատուրին, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 14-17:

²²⁰ Տե՛ս Երկու նամակ Հրանտ Ասատուրի, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 113-117:

²²¹ Հայկական պատարագը եւ Կոմիտաս վարդապետ, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 228-230:

²²² Տե՛ս Գառնիկ Ֆնտզեանի նամակը առ տիկին Անայիս, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 92:

²²³ Տե՛ս Անտիպ էջեր. Օրմանեան սրբազանի նամակը տիկին Տյուսաբին, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 59-61:

²²⁴ Տե՛ս Շահե արքեպիսկոպոս Գասպարեանի վերջին նամակը, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.- դեկտեմբեր, թիւ 6, 30-34:

տենաշարով հայ գրականության լավագույն էջերը թարգմանաբար տրամադրելու օտար ընթերցողին: Այդ լայն ծրագրի մեջ նա կարևոր տեղ էր տրամադրել նաև Բաֆֆուն²²⁵: Ցավոք, Չոպանյանին չհաջողվեց այդ մտահղացումը ամբողջությամբ իրականացնել ու հրատարակել գործեր նաև Բաֆֆուց, սակայն այն հանգամանքը, որ Չոպանյանը Եղիշեի, Նարեկացու, Շնորհալու, Աբովյանի, Պարոնյանի, Դուրյանի և մեր այլ մեծերի ստեղծագործությունների հետ կարևորել է նաև Բաֆֆու գործերի թարգմանությունը, դարձյալ հուշում է, որ նա գրողին էական տեղ է հատկացրել մեր գրականության պատմության մեջ:

Մեծ վիպասանին նվիրված հատուկ աշխատություն գրելու առիթը Չոպանյանը ունեցավ միայն 1937 թվականին՝ Բաֆֆու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ՝ «Անահիտի» 5-6 միացյալ համարում հրապարակելով մի ծավալուն հոդված, որտեղ խորությամբ և բազմակողմանիորեն, ամբողջական ու հանգամանորեն ներկայացնում է գրողի դիմանկարը²²⁶:

Հոդվածում հանգամանորեն քննության առնելով մեծ գրողի՝ «խկապէս համազգային մեծութեան ու սրբութեան»²²⁷ ստեղծագործությունը և նրա գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները՝ Չոպանյանը նպատակ ուներ բացահայտելու Բաֆֆի-մտածողի վիթխարի մեծությունը, պարզելու նրա համաժողովրդական ճանաչման բացատրությունը, նրա հզոր արվեստի աննախադեպ ազդեցության հանելուկը: Այդ առեղծվածը պատճառաբանվում է Բաֆֆու անմնացորդ հայրենասիրությամբ, գա-

²²⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Հայկական մատենադարան, «Անահիտ», Փարիզ, 1903, փետրուար-մարտ, թիւ 2-3, էջ 40:

²²⁶ Մինչ այդ հոդվածի տպագրումը 1937 թ. տարեկգրյան համարում Ա. Չոպանյանը, տեղեկացնելով, որ Փարիզի «Համազգային» մշակութային կազմակերպության վարչությունը հրավիրել է խորհրդակցական ժողով՝ Բաֆֆու ծննդյան 100-ամյակը պատվելու, շատ հակիրճ՝ մի քանի տողով, ուրվագծում է գրողի տեղը հայ վիպասանության պատմության մեջ և դերը հայ ժողովրդի կյանքում. տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկոն, «Անահիտ», Փարիզ, 1937, յուճուար-մարտ, թիւ 1-2, էջ 110:

²²⁷ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 84:

դափարախոսության խանդավառությամբ ու վարակիչ կորովով, գեղարվեստական ազդու խոսքով և համոզիչ հավատով²²⁸:

Ուշագրավ է, որ հողվածում Չոպանյանը Բաֆֆու գործը գնահատում է ոչ թե ինքնաբավ ձևով, այլ համաշխարհային, ընդհանուր հայ, մասնավորապես հայ նոր գրականության տեսադաշտի վրա, անհրաժեշտ զուգահեռներով ու զուգորդումներով: Թեև այդ համեմատությունները ավելի հաճախ ծավալվում են ընդամենը մի քանի տողով, սակայն տրված գնահատականները ունեն գիտական լրջություն և ցույց են տալիս, թե ըստ ամենայնի որքան ճիշտ է Չոպանյանը ըմբռնել ու հասկացել Բաֆֆու ստեղծագործության առանձնահատկությունները, նրա գործի նշանակությունը մեզ համար: Օրինակ. «Չեմ կրար ըսեր թե Բաֆֆի ատելի մեծ է քան Աբովեանը: Աբովեան ամենէն մեծ դէմքերէն մէկն է որ հայ ցեղէն բղխած ըլլան, ան հիմնադիրն է արեւելեան Հայոց նոր գրականութեան գրեթէ բոլոր սեռերուն, եւ իր լաւագոյն էջերուն մէջ՝ անոր ոճը ատելի ջղուտ, գունագեղ եւ ինքնատիպ է քան Բաֆֆիինը. բայց եւ ան, շատ տեսակ քանի ձեռնարկած ըլլալով, մեծապէս անհաւասար է իր արտադրութեանց մէջ... Բաֆֆի ատելի սիստեմատր, ատելի գուսպ վիպագիր մըն է,- իսկական վիպագիր: Եւ անիկա ատելի ընդարձակ, ատելի բազմատարր վիպագիր, ատելի մեծաթռիչ ու ներուժ գրագետ է քան Ծերենցը...»²²⁹: Իսկ Բաֆֆու՝ Արսեն Բագրատունու ու Ալիշանի հետ համեմատության համատեքստում ընդգծվում է հատկապես Բաֆֆու լեզվի առավելությունը, նրա՝ արևելահայ գրական-գեղարվեստական խոսքի ձևավորման ասպարեզում ունեցած նշանակալից դերը. «...արեւելեան Հայոց գրական լեզուն... այդ հանճարեղ գրագետին բնագրական ճաշակին շնորհիւ եղաւ պարզ, յստակ, ճկուն, կորովի աշխարհաբար մը, արեւելեան գրական նոր հայերէնի առաջին գեղեցիկ ու յղկեալ կիրարկումը...»²³⁰, - գրում է

²²⁸ Այդ ամենի մասին մանրամասն տես **Ավագյան Վ.**, Բաֆֆին Արշակ Չոպանյանի գնահատմամբ, «Ակունք», Իջևան, 2016, թիվ 1, էջ 140-145:

²²⁹ **Չոպանյան Ա.**, Բաֆֆի, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 28:

²³⁰ Նույն տեղում, էջ 29:

Չոպանյանը:

Եվ վերջապես Չոպանյանը Բաֆֆու արվեստի ամենակարևոր հատկանիշներից մեկը համարում է այն «ինքնաստեղծ» տիպարները, որոնք, ի տարբերություն գրական նախորդների ստեղծած պատմական հերոսների և իրական դեմքերի, կոչված էին իրենց մտացածին արարքներով ժողովրդին ոգևորելու և նրան մղելու ազատագրական պայքարի: «Այդ նորանշան սիստեմը, զոր հայ գրականութեան մեջ դեռ ոչ մեկը չէր կիրարկած, եւրոպական գրականութեան մեջ ալ տակաւին հագուադէպ էր այն ստեմ»²³¹, - եզրակացնում է գրականագետը:

Ուշադրության արժանի է նաև քննադատի տեսակետը Բաֆֆու ռոմանտիզմի առանձնահատկությունների վերաբերյալ: «Բաֆֆի ռոմանթիկ մըն է էսպէս, բայց եւ ունի դիտելու կարողութիւն»²³², - գրում է նա: Գրողի ստեղծագործական համակարգում հանգուցային նշանակություն ունեցող այդ իրողությամբ է Չոպանյանը բացատրում նրա ստեղծագործության մեջ կենցաղի, բարքերի, իսկ հաճախ էլ առանձին դեպքերի ու դեմքերի ռեալ, իրական նկարագրությունը, հանգամանք, որ հիմք է տալիս գրականագետին նաև եզրակացնելու, թե Բաֆֆու մի շարք գործեր արդեն առաջին փորձերն են հայ իրապաշտ վեպի, որ հետագայում Շիրվանգադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Արփիարյանի, նաև Չոհրապի և ուրիշների գրչի տակ պետք է ստանար իր լիալիր զարգացումը²³³: Այս և հատկապես Բաֆֆու ստեղծագործական երևակայության ուժը նկատի ունենալով՝ Չոպանյանը իրավացիորեն նրա գրական մեթոդը կապում է Հյուգոյի ռոմանտիզմի հետ՝ եզրակացնելով. «Բաֆֆի ռոմանտիկ մըն է Հիւկոյի տեսակէն որուն խանդավառ հոգին ու մեծաթռիչ միտքը ոչ միայն կարող են մերթ իրականութիւնը դիտել եւ գոյութիւն ունեցող մարդկային տիպարները ճշգրտութեամբ ներկայացնել, այլ եւ կարող են – ինչ որ բարձրագոյն արուեստի մը մե-

²³¹ Նույն տեղում, էջ 35:

²³² Նույն տեղում, էջ 29:

²³³ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

ծագոյն տաղանդի մը ապացոյցն է – երեսակայութեամբ յղացուած դէմքեր կենդանի տիպարներու վերածել»²³⁴: Նման գնահատմամբ, կարծում ենք, Չոպանյանը ոչ այնքան ցանկացել է ցույց տալ ռոմանտիկ Բաֆֆու գրական մտածողութեան առանձնահատկութիւնը, որքան նրա ստեղծագործութեան գործնական, առարկայական ու պատմական նշանակութիւնը:

Գալով Բաֆֆու ստեղծագործական ժառանգութեան գրական-պատմական արժեքները՝ Չոպանյանը շատ բարձր է գնահատում հատկապէս գրողի գործի ազատատենչ ու մարտասեր ոգին, ներշնչման ու ոգևորման հզոր ուժը և վերջինիս՝ սերունդների վրա թողած մեծ ազդեցութիւնը: Այդ կերպ գրականագետը հաստատում է նաև Բաֆֆու գործի պատմական արժեքի հեռանկարային բովանդակութիւնը. «Ո՛չ մէկ հայ հեղինակ՝ ասիկա պէտք է ըսել ու կրկնել՝ Եղիշէեն ու Խորենացիէն ի վեր, այնպիսի խոր ազդեցութիւն ունեցած է իր դարաշրջանի հայ երիտասարդութեան վրայ, ինչպիսին ունեցած է Բաֆֆին»²³⁵:

Բաֆֆու արվեստի այս և նախորդ անկրկնելի յուրահատկութիւնները նկատի ունենալով էլ ահա Չոպանյանը նրան արժանացնում է «Հայոց «ազգային վիպասան» բարձրագոյն տիտղոսին:

Արշակ Չոպանյանի և Ավետիք Իսահակյանի փոխադարձ ջերմ բարեկամութիւնը թեև սկիզբ էր առել վաղուց²³⁶, սակայն բանաստեղծի ստեղծագործութեան, գրական արվեստի վերաբերյալ Չոպանյանը առանձին ծավալուն անդրադարձ կատարեց միայն 1936 թ.՝ բանաստեղծի ծննդյան 60-ամյա տարեդարձի և գրական գործունեութեան 40-ամյակի առիթով²³⁷:

²³⁴ Նույն տեղում, էջ 44:

²³⁵ Նույն տեղում, էջ 45:

²³⁶ Ա. Չոպանյանի և Ավ. Իսահակյանի հարաբերությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Ավագյան Վ.**, Ավետիք Իսահակյանի և Արշակ Չոպանյանի առնչություններից (Ավ. Իսահակյանի ծննդյան 145-ամյակին), «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Երևան, 2020, № 3, էջ 10-20:

²³⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Դէմքեր. Աւետիք Իսահակեան, «Անահիտ», Փարիզ, 1936,

Իսահակյանին նվիրված հոդվածում Չոպանյանը ևս մեկ անգամ հաստատում է, որ հայ բանաստեղծությունը հին ժամանակներից մինչև ներկա օրերը եղել է մեր ազգի մեծ փառքերից, նրա հոգեկան գործության շքեղագույն պոռթկումներից մեկը: Այն միշտ մեր ժողովրդին արժանապատվորեն կանգնեցրել է աշխարհի մեծ ազգերի կողքին: Ավ. Իսահակյանի քնարերգությունը գնահատվում է որպես մեկը հայ համճարի այդ մեծագույն արտահայտություններից, և բանաստեղծը արժանանում է բանախոսի «ազգային բանաստեղծ» բարձր պատվանունին²³⁸:

Չոպանյանը Իսահակյանին համարում է մեր նոր քերթության այն գլխավոր սյուներից մեկը, որը, ինչպես ինքն է գրում, «մեծ վիպերգող Թումանյանին կողքին՝ եկալ դառնալ մեծ քնարերգակր արեւելեան Հայութեան ու մեծագոյն քնարերգակներէն մին ամբողջ հայ ազգին»²³⁹: Հայ մեծանուն բանաստեղծների սեղմ համեմատության մեջ թեև Իսահակյանի ստեղծագործությունը նա տեսնում է Թումանյանից շատ տարբեր, սակայն գործի ուրույն արժեքով համարում է նրան հավասար, իսկ «հայ ժողովրդական բանահիւսութեան հանդէպ իր տաճած ջերմ սիրով եւ անոր մասին իր խոր հասկացողութեամբ՝ անոր մտաւոր եղբայր»²⁴⁰:

Ա. Չոպանյանը, որքան որ թույլ են տալիս բանախոսության և լրագրական հոդվածի ծավալն ու սահմանները, իրեն հատուկ մասնավոր խորաթափանցությամբ ուրվագրում է Իսահակյանի գործի էական հատկանիշները, բնութագրում ստեղծագործության զարգացման և թեմատիկ հետաքրքրությունների տարբեր փուլերը, մեկնում նրա արվեստի հոգեբանական առանձնահատկությունները, արժևորում տարբեր ժանրերով ստեղծված երկերը: Գրականագետը հատկապես բարձր է գնահատում Իսահակյանի սիրերգությունը՝ համոզված, որ նա, ինչպես ինքն է գրում, «սիրոյ համաշխար-

յունիս-օգոստոս, թիւ 4, էջ 49:

²³⁸ Տե՛ս նույն տեղում:

²³⁹ Նույն տեղում, էջ 53:

²⁴⁰ Նույն տեղում:

հային գրականության մեջ կրնայ յաջողապես մրցիլ ո եւ է ազգի բարձրագոյն բանաստեղծներու սիրերգներուն հետ»²⁴¹:

Ջերմ, հիացական տոնով է Չոպանյանը խոսում նաև Իսահակյանի՝ հայրենի բնության, մայրերգության, անհատական դրամայի, սոցիալական ու հայրենիքի թեմայով ստեղծված երգերի մասին, առանց կոնկրետ զուգահեռներ տանելու՝ նշում, որ մեզանում նման սիրո ու անկեղծության դրսևորման քչերին է հաջողվել հասնել «Քուչակէն մինչեւ Դուրեան ու Տէրեան ու Մեծարեանց»: Խոհափիլիսոփայական բանաստեղծության մեջ քննադատին մասնավորապես ոգևորում է «Աբու-Լալա Մահարին»՝ «իր մտածման քերթուածներուն մեծագոյնը»՝ «մարդկային յոռետես բանաստեղծութեան ամենէն հոյակապ հրաշակերտներէն մէկը»²⁴²: Անցողակի դառնալով Իսահակյանի՝ եվրոպական գրականությունից ունեցած ազդեցությանը՝ Չոպանյանը կարծում է, որ որքան էլ թեև գրողի միտքն ու սիրտը մարզվել և հղկվել են եվրոպական բարձր մշակույթների քուրայում, այնուամենայնիվ նա միշտ էլ իր ներշնչանքն առել է հայրենի բնության գեղեցկություններից, ազգային հարագատ միջավայրից, ժողովրդական երգերից՝ մտքով և սրտով մնալով խորապես Հայ (հայը մեծատառով) և ստեղծելով բանաստեղծություն, «որ բարձր քնարերգութիւն է՝ միջազգային տարողութեամբ, մերթ քնքուշ, մերթ ուժգին, բայց շեշտով ու գոյնով միշտ հարազատօրէն Հայ»²⁴³:

Դժվար չէ կռահել, որ Իսահակյանի գրականությանը տված բարձր գնահատականները սոսկ հիացման արդյունք չէին. դրանք, հաստատված կոնկրետ ստեղծագործություններով ու նյութով, գրական մվաճումներով ու շոշափելի ձեռքբերումներով, նպատակ ունեին ևս մեկ անգամ ցույց տալու, թե ինչպես, հավատարիմ մնալով հայ տոհմիկ բանաստեղծության ու մշակույթի ավանդներին, կարելի էր ներդաշնակորեն զուգակցել ազգայինն ու համաշխար-

²⁴¹ Նույն տեղում, էջ 54:

²⁴² Նույն տեղում, էջ 55:

²⁴³ Նույն տեղում, էջ 57:

հայինը, ստեղծել համամարդկային գործեր՝ հարազատ մնալով սեփական ոգուն:

Գրականագիտական տեսակետից «Անահիտի» էջերում հետաքրքիր նորություն է հարցազրույցի այն նյութը, որ Արամ Երեմյանը ունեցել է Նար-Դոսի հետ: Հեղինակը իրավացիորեն դժգոհում է, որ մեզանում դեռ չի ձևավորվել ավանդույթ՝ հենց իրենցից՝ հեղինակներից ստանալու լուսաբանություններ սեփական գործերի և կյանքի վերաբերյալ, որոնք կօգնեին ավելի լավ հասկանալու, առհասարակ ավելի լավ ընկալելու նրանց գրական ընդհանուր կերպարանքը: Իր հարցազրույցը այդ ուղղությամբ գնահատելով իբրև համեստ մի փորձ՝ Երեմյանը հույս է հայտնում, որ այն կունենա շարունակություն և կլինի ընդօրինակելի²⁴⁴:

«Անահիտում» Նար-Դոսին տարբեր առիթներով անդրադարձել է նաև Չոպանյանը²⁴⁵: Գրողի ստեղծագործությանը թեև ծանոթ լինելով՝ հեռվից՝ միջնորդապես, այնուամենայնիվ Չոպանյանը նրբին ու հետաքրքիր դիտարկումներ է արել արձակագրի աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի և մտածողության համակարգի վերաբերյալ:

Հանդեսի 1931 թ. մայիս-օգոստոսյան համարում՝ իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկում, կովկասյան թղթակցի միջնորդությամբ Չոպանյանը հաճույքով տեղեկացնում է, որ և՛ Երևանում, և՛ Թիֆլիսում տոնվել են Նար-Դոսի գրական գործունեության 45-ամյա և Դերենիկ Դեմիրճյանի 35-ամյա հոբելյանները: Չոպանյանը դրանք գնահատում է որպես «բերկրառիթ», «խորհրդային ռեժիմին պատուաբեր» երևույթներ, որոնք նաև վկայում են ամբողջ պետության և ոչ միայն հայ, այլև «դրացի ու դաշնակից ժողովուրդ-

²⁴⁴ Տե՛ս **Երեմեան Ա.**, Ջրոյց վիպագիր Նար Դոսի հետ, «Անահիտի», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 42-44:

²⁴⁵ Արշակ Չոպանյանի՝ Նար-Դոսի և նրա ստեղծագործության վերաբերյալ «Անահիտի» տարբեր համարներում տեղ գտած անդրադարձումների մասին առավել հանգամանորեն տե՛ս **Ավագյան Վ.**, Նար-Դոսը «Անահիտ» հանդեսում և Արշակ Չոպանյանի գնահատականներում, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Երևան, 2023, № 3, էջ 3-14:

ներու եւ... ազգերու եղբայրական» մեծարանքը, «միահամուռ յարգանքն» ու «սիրոյ արտայայտութիւնը» «ցեղին մտաւոր ու գեղարուեստական գործին վաստակատրներուն հանդէպ»²⁴⁶: Սակայն նրբազգաց մտավորականը նաև ցավով փաստում է, որ նման մեծ գրագետների հորելյաններին, «որ ամբողջ Հայութեան մտաւոր կեանքի սիւներէն են», արտասահմանի հայ գաղութներից որևէ մեկին հնարավորություն չի տրվել մասնակցելու²⁴⁷:

Երկու տաղանդավոր արձակագիրներին համատեղ գնահատելով և հաճախ զուգահեռներ տանելով՝ Չոպանյանը Նար-Դոսի առիթով մասնավորապես նկատում է, որ նա «հայ իրապաշտ վէպին մեծագոյն վարպետն է Արեւելահայոց մէջ», և անմիջապես նկատում՝ «Շիրվանգաղէէն յետոյ»²⁴⁸: Չեռքի տակ չունենալով Նար-Դոսի որևէ գիրք կամ ստեղծագործություն՝ Չոպանյանը նրա մասին տալիս է ավելի շատ ընդհանրական գնահատականներ՝ ավստասանքով փաստելով, որ գրողի գործերը Կովկասից դուրս շատ քիչ են կարդացված, իսկ ավելի հաճախ ծանոթ են միայն անունով: Համենայնդեպս, իր ընթերցողին խմբագիրը տեղեկացնում է, որ Նար-Դոսը, ինչպես և Դ. Դեմիրճյանը, որ արդեն Առաջին աշխարհամարտից առաջ դրսևորել և ապացուցել էին իրենց տաղանդը, «թէն ոչ համայնավար, ...առաջին բոլորէն բարեկամ եւ համակրող ցոյց տուած են նոր րեժիմին»²⁴⁹: Գալով Նար-Դո-

²⁴⁶ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 162: Այդ հորելյանների առիթով Ա. Չոպանյանը նաև արժանին է հատուցում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների մասնակցության երևույթին. տե՛ս նաև **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 423:

²⁴⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 162:

²⁴⁸ Գրեթե նույն միտքը, սակայն այլ ձևակերպմամբ ու բառերով արտահայտել է Հր. Թամրազյանը՝ գրելով. «Մեզանում ոչ որ այդպես խորը չի ըմբռնել ռեալիզմի բնույթը..., որքան՝ Շիրվանգաղէն»։ **Թամրազյան Հր.**, Հայ քննադատություն, Գիրք Գ., Երևան, «Նաիրի» հրատ., 1992, էջ 506:

²⁴⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 162:

սի ստեղծագործության բովանդակությանը՝ Չոպանյանը գրում է. «Նար-Դոսի վեպերը արդեն կծու քննադատությամբ մըն էին պորժուական ընկերութեան, պատկերացում մը մարդկային անարդարութեանց, կեղեքմանց, շահագործմանց»²⁵⁰:

Որպես առավելություն, Չոպանյանը նկատում է, որ երկու հեղինակներն էլ, իրենց աշխարհայացքը գուտ գրական գործերի մեջ արտահայտելով, մնացել են ճշմարիտ արվեստագետներ՝ հեռու կուսակցական «բռնազբօսիկ եւ անկենդան» քարոզներից: Չէ՞ որ «տաղանդը, երբ կայ, ու եւ վարդապետութեան կեղեքը կը ճեղքէ ու իր ծաղիկները դուրս կը հանէ, իրականացնելով գրականութեան եւ արուեստի բուն նպատակը, Գեղեցիկը»²⁵¹, - ինչպես շատ մոտ անցյալում այլ առիթով գրել էր քննադատը:

Վերջին անգամ Ա. Չոպանյանը Նար-Դոսին անդրադարձավ նրա մահվան կապակցությամբ՝ 1933 թ.: Իր խոսքի մեկնարկում գնահատելով Նար-Դոսին՝ ասես նրա մեծությունը ընդգծելու համար դարձյալ համենատառու է Շիրվանգաղեի հետ, սակայն այս անգամ նրանց դնում է նույն աստիճանի վրա. «Նար-Դոս (Միքայել Յովհաննէսեան) հայ իրապաշտ վեպին ռահվիրան եղած է մեր մեջ, Շիրվանգաղեի հետ, եւ իր գործերու շարքով այդ գրական սեռին մեջ մեծ վարպետ մը հանդիսացած է,- գրում է նա՝ քիչ ներքևում շարունակելով:- Նար-Դոս եւ Շիրվանգաղե, մտցուցին վեպի մեջ այդ իրապաշտ ուղղութիւնը, զոր Սունդուկեան, առաջինը հայ իրապաշտներուն, մտցուցած էր թատերգութեան մեջ»²⁵²:

Փոյթ չէ, որ ինչպես նախկինում²⁵³, այնպես էլ ընդամենը մի քա-

²⁵⁰ Նույն տեղում:

²⁵¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 107:

²⁵² **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 60:

²⁵³ Դեռ 1909 թ.՝ «Անահիտի» առաջին շրջանում, Ալ. Շիրվանգաղեին նվիրված հոդվածում Ա. Չոպանյանը գրում է. «Շիրվանգաղե մեր ամենէն իսկական «իրապաշտն» է». **Չոպանեան Ա.**, Շիրվանգաղե, «Անահիտ», Փարիզ, 1909, հոկտեմբեր-նոյեմբեր, թիւ 7-8, էջ 146:

նի տարի առաջ արևելահայ գրականության մեջ ռեալիստական վեպի սկզբնավորողի՝ իր իսկ կողմից Շիրվանգաղեին շնորհված բացարձակ առաջնորդությունը Չոպանյանը առնում է նրանից և այն հավասարապես բաշխում վերջինիս և Նար-Դոսի միջև: Առավել զարմանալիքն այն է, որ քիչ հետո էլ Նար-Դոսին գնահատում է «աւելի գուտ իրապաշտ», քան Շիրվանգաղեն է, «որուն աւելի ընդարձակ ու բազմատարր գործին մէջ,- ինչպէս գրում է,- քիչ մը ռոմանթիկմ կայ խառնուած»²⁵⁴: Եվ վերջին հանգամանքը Շիրվանգաղեի համար դիտարկելով որպէս առավելություն («ատոր համար՝ աւելի լայն ու այլազան, աւելի հրապուրիչ է ան»)՝ ասես մի տեսակ շփոթություն է ստեղծում: Եվ քանի որ քննադատը հետո չի պարզում իր միտքը, լռում է, և բացակայում է բացատրությունը, ուստի դժվար է գուշակել, թե ինչ նոր բան կարող էր տեսած լինել նա Շիրվանգաղեի ոճի և եղանակի մեջ՝ նման գնահատական տալու համար: Սակայն շուտով գալիս է ասվածի սրբագրումը. 1935 թ. Շիրվանգաղեի մահվան կապակցությամբ ասես արդեն վերջավորված օրինականացնում է իր նախկին տեսակետը. «...ան (Շիրվանգաղե - **Վ. Ա.**) արևելահայ գրականութեան մէջ մտցուց իրապաշտ վեպը եւ այդ գրական սեռին մէջ մեծագոյն վարպետը հանդիսացաւ...»²⁵⁵:

Վերադառնանք Նար-Դոսին: Համառոտ ակնարկ տալով գրողի կենսագրության վերաբերյալ ու ներկայացնելով հասարակական միջավայրը՝ Չոպանյանը, հավատարիմ իր որդեգրած քննադատական սկզբունքներին²⁵⁶, Նար-Դոսի նախընտրած գեղարվեստական նյութի տարածությունն ու թեմաները պայմանավորում է ոչ միայն նրա ապրած կյանքով ու շրջապատով, այլև, որ շատ կարևոր

²⁵⁴ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 60:

²⁵⁵ **Չոպանեան Ա.**, Շիրվանգաղե, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 44:

²⁵⁶ Ա. Չոպանյանի տեսական-քննադատական սկզբունքների մասին տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն (5-19-րդ դարեր), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 377-392:

է, անհատական խառնվածքով՝ դրանով չանտեսելով գրողի ներքին տարերքի դերը նրա ստեղծագործության մեջ. «...Նար-Դոս իր խառնուածքէն ու իր կեանքին ու շրջապատին իսկ պայմաններէն մղուած է արտադրել գործեր ուր մարդկային կեանքը կը պատկերացուի անոր անարդարութիւններէն, անհասարութիւններէն, անբարոյացուցիչ տգեղութիւններէն զգուած, ընդվզած, եսամոլ կեղեքիչներու դէմ ատելութեամբ լի, շահագործուող ու զոհուող տկարներուն հանդէպ արգահատանքով տոգորուն մտայնութեամբ մը... Իր գործերուն մէջ, հարուստ ջոջը եւ մամոնայի երկրպագու կղերական դեկավարը ժխտական գոյներով ներկայացուած են...»²⁵⁷:

Այնուհետև Չոպանյանը ցույց է տալիս խոշոր ռեալիստ գրողի արվեստի սոցիալական միտվածությունը, որը, ինչպես ինքն է վկայում, «չ'արտայայտուիր յեղափոխական տեսութիւններով ու մարդկային ընկերութեան անարդարութեանց դէմ կռուող հերոսներու պատկերացումներով...»²⁵⁸: Նար-Դոսի գործերը, ինչպես համոզված է Չոպանյանը, օբյեկտիվորեն ներկայացնելով ժամանակի հասարակական հարաբերությունները, իրենց թողած տպավորությամբ ընթերցողի մեջ սերմանել են «ընդվզման ու վերանորոգիչ պայքարի տրամադրութիւն», ճիշտ այնպես, ինչպես Սունդուկյանի և Շիրվանզադեի «ընկերական յեղափոխութիւն պատրաստող գործերը»²⁵⁹: Նման ձևակերպմամբ, կարծում ենք, գրականագետը շատ է խտացնում գույները և հեռանում ճշմարտությունից²⁶⁰: Անշուշտ չի կարելի ժխտել թե՛ Սունդուկյանի, թե՛ Շիրվանզադեի և թե՛ Նար-Դոսի աշխարհայացքի դասակարգային բովանդակությունը,

²⁵⁷ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 60:

²⁵⁸ Նույն տեղում:

²⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁶⁰ Ի դեպ, Կ. Դավլաբյանը Ա. Չոպանյանին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ առանց որևէ հիմնավորման լուռ ընդառաջ է եկել Ա. Չոպանյանի այս տեսակետին՝ բավարարվելով սոսկ նրա ասածի կրկնությամբ. տե՛ս **Դավլաբյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 440:

նրանց երկերի սոցիալական հագեցվածությունը, իրականության մերկացման քննադատական ուղղությունն ու դատապարտումը, այն, որ գրողները անտարբեր չեն եղել կյանքի անցուղարձի, հասարակական հարաբերությունների նկատմամբ: Սակայն դա դեռ չի նշանակում, թե նրանք իրենց ստեղծագործություններով նախապատրաստել են սոցիալական հեղափոխություն: Ասվածը ենթակա է խիստ վերապահության, անգամ՝ մերժման: Այլ բան, որ նրանք, պատկերելով իրենց ժամանակի սոցիալական միջավայրը, հասել են հասարակական կյանքի թերությունների և հակասությունների գեղարվեստական ամբողջացմանը, և այդ թերությունները ցանկանալով տեսնել վերացած՝ հասարակության վերափոխման և բարեփոխման մեջ ավելի հաճախ դրել են անհատի խնդիրը կամ նրա մաքրագործման պահանջը, գաղափարական բողոքը, որը եթե անգամ վերաճել է սոցիալական դժգոհության, ապա չի հասել դասակարգային ուղիղ կռվի կամ ըմբոստության նպատակի:

Գալով Նար-Դոսի կյանքի վերջին շրջանին՝ Չոպանյանը վերստին վկայում է, որ գրողը համակրանքով է ընդունել խորհրդային իշխանությունը, առանց համայնավար դառնալու՝ դարձել «նոր ռեժիմին» բարեկամ ուղեկիցը, հանգամանք, որ, ինչպես գրականագետն է բացատրում, շատ առումներով պայմանավորված էր նաև նրա գործերի հիմնական բնույթով: Մի քանի տողով էլ անդրադառնալով գրողի ստեղծագործական կյանքի վերջին շրջանին, հրատարակած նոր գործերին ու անավարտ մնացած հղացումներին՝ դարձյալ նկատում է, որ Նար-Դոսի գրական արտադրությունները գրեթե անձանոթ են արևմտահայությանը: Եվ ակնկալելով, որ գեթ մահվանից հետո նրա ստեղծագործությունների նոր հրատարակությունը կտարածվի արտասահմանում և կգրավի նաև արևմտահայ ընթերցողին՝ ավարտում է խոսքը իր որակմամբ «խնամոտ, դժուարահաճ, կատարելասէր գրող,- ժուժկալ, ճշգրիտ ու յստակ ոճով նրբավորձին իրապաշտ» հեղինակի մասին²⁶¹:

²⁶¹ **Չոպանյան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 61:

Արևելահայ նոր շրջանի գրողների վերաբերյալ տպագրված նյութերից ուշագրավ է նաև Միքայել Նալբանդյանի մասին Գևորգ Չուբարի հեղինակությամբ հոդվածը՝ մեծ մտավորականի նկարով²⁶²: Ճիշտ է, թեև այն որևէ էական նորություն չի պարունակում, մասնավորապես շարադրում է գրողի, հրապարակախոսի և ազգային անվանի գործչի «չարքաշ» կենսագրությունը, սակայն դա, կարծում ենք, ևս միջոց էր ընթերցողին, հատկապես սփյուռքահայ, Նալբանդյանի «հագուագիտ ոյժի» օրինակով դաստիարակել իբրև ազգանվեր ճշմարիտ հայի:

Ուշադրության արժանի են նաև Չոպանյանի՝ հատկապես քրոնիկներում տեղ գտած հակիրճ անդրադարձումները արևմտահայ հեղինակներից 80-ականների սերնդի ներկայացուցիչներին, որոնցում ակնառու է երախտագիտության և խորին հարգանքի զգացումը Արփիար Արփիարյանի, Տիգրան Կամսարականի, Լևոն Բաշալյանի, Գրիգոր Չոհրապի և մյուս գործիչների նկատմամբ, որոնց միջավայրում գաղափարապես սնվել և հասունացել էր ինքը: Օրինակ, բանախոսելով Լևոն Բաշալյանի պատվին Փարիզում կազմակերպված ցերեկույթին՝ Չոպանյանը նախ իր ջերմ ակնածանքն է արտահայտում «ժամանակակից հայ արձակի նրբագոյն» արվեստագետներից մեկի հանդեպ և հիշում գրական-պատմական այն շրջանը, երբ արևմտահայ գրականության մեջ, սկսած Հ. Սվաճյանից, Օ. Խոճասարյանից, Մ. Մամուրյանից, Հ. Պարոնյանից, հաստատվեց ազատամիտ, հասարակական կյանքի թերությունները անխնա ձաղկող քննադատական ոգին, որի զարգացնողը գրեթե նույն ժամանակի մեջ իրենց արձակ գործերով միմյանցից անկախ, հետևելով ֆրանսիական իրապաշտ գրականության վարպետներին, դարձան Ա. Արփիարյանը, Գ. Չոհրապը, Տ. Կամսարականն ու Լ. Բաշալյանը: Վերջինս, ինչպես գրում է գրականագետը, «օժտուած ի բնե արուեստագետի խառնուածքով մը, կը դառնար քիչ յետոյ արեւմտահայ աշխարհաբարի ամենէն նուրբ վարպետը, իր

²⁶² Տե՛ս **Չուբար Գ.**, Միքայել Նալբանդեան, «Անահիտ», Փարիզ, 1930, յունարփետրուար, թիւ 5, էջ 99-104:

շրջանի ամենէն խնամոտ, վայելուչ, կատարեալ արձակագիրը»²⁶³:

Բանախոսությունը շուտով առնում է ինքնակենսագրական բնույթ, որտեղ ոչ միայն արտացոլվում է արևմտահայ 80-ականների ստեղծագործական մթնոլորտը՝ ձևի ու բովանդակության իր հետաքրքրություններով, այլև այդ միջավայրում պատանի Չոպանյանի գրական ձևավորման կենսապատումը. «Արփիարեանի, Բաշալեանի, Զօհրապի ու Կամսարականի գրականութիւնն է, որ զիս հրապուրելով իր նորութեամբ ու կենդանութեամբ, վերջապէս քաշեց զիս դէպ ի անխառն աշխարհաբարի դպրոցը... **Արեւելք-Մասիս** այդ խումբին շնորհիւ է դարձեալ որ ես մղուեցայ հեռանալ լոմաթիզմէն... ու ձգտեցայ դէպ ի իրապաշտ, ու աւելի լայն բանաձեւով մը՝ դէպ ի կենդանի, ուղղակի, անձնական գրականութիւնը...»²⁶⁴:

Գրական հասունացման իր ճանապարհին հատկապէս կարևորելով Բաշալեանի դերը²⁶⁵՝ Չոպանյանը հակիրճ ուրվագծում է ժամանակի մամուլի երեք կարևոր հանդեսների՝ «Արեւելքի», «Մասիսի» և հատկապէս «Հայրենիքի» նշանակությունը, որոնք, տարբեր տարիների միմյանց գաղափարներն ու գործը շարունակելով, զարգացնելով և ընդլայնելով, հաճախ էլ զուգահեռաբար իրար լրացնելով, տարածեցին ու արմատավորեցին արևմտահայ աշխարհաբարը, սպահովեցին արևմտահայ ռեալիստական գրականության վերելքը, որի ակունքներում մասնավորապէս Հարություն Սվաճյանի և Հակոբ Պարոնյանի գրական-գեղագիտական, հասարակական-քաղաքական ավանդույթներն էին²⁶⁶:

²⁶³ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 96: Ա. Չոպանյանը Լ. Բաշալեանին երկու խոսքով անդրադարձել է նաև գրողի մահվան կապակցությամբ. տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, թիւ 1, էջ 31-32:

²⁶⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 97:

²⁶⁵ Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 15-17:

²⁶⁶ «Քրոնիկի» այս գլուխը որքան էլ համառոտ, սակայն ուշագրավ նյութ է պա-

Այն հանգամանքը, որ Չոպանյանը 80-ականների արևմտահայ սերնդին չի մեկուսացնում նախորդներից, վկայակոչում է մասնավորապես Հ. Սվաճյանի և Հ. Պարոնյանի գործունեությունը, կարծում ենք, պատահական չէ: Դա հոգևոր կապի այն որոնումն էր, որ գոյություն ուներ անցյալի ու պատմական ներկայի միջև: Սա Չոպանյանի գրական-մշակութային աշխարհայացքի կարևոր հատկանիշներից մեկն է:

Նույն սերնդի ներկայացուցիչներից Չոպանյանը կարևորում է նաև Սիպիլի (Չաբել Խանջյան - Վ. Ա.) տեղն ու դերը հայ նոր գրականության մեջ²⁶⁷:

Ճիշտ է, «Անահիտում» Չոպանյանը առանձին հողվածով չի անդրադարձել Հակոբ Պարոնյանին, սակայն տարբեր առիթներով կարևորել է նրա տեղն ու դերը արևմտահայ գրականության մեջ: Իսկ տպագրելով Հ. Օշականի «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» քննադատական ծավալուն ուսումնասիրության՝ Հ. Պարոնյանին նվիրված գլուխը²⁶⁸, որ իրեն էր ուղարկել հեղինակը, Չոպանյանը առանց ծավալվելու նկատում է, որ այդ աշխատության մեջ եթե կան շահեկան ինքնատիպ ու ճիշտ դիտողություններ, կան նաև դիտարկումներ, որոնց ինքը համաձայն չէ: Չոպանյանին հատկապես դուր չէր եկել այն, որ Օշականը Պարոնյանին արժևո՞րելու և բարձրացնելու համար ճգնել էր փոքրացնել նրա մեծատա-

րումակում «Արեւելք»-«Մասիս»-«Հայրենիք» խմբի կատարած գործի, հանրային կյանքի, գրականության ու լեզվի վրա ունեցած ազդեցության, անդամների կյանքի և գործունեության վերաբերյալ, որը կարող է շահեկան լինել այդ շրջանի մասնույն ուսումնասիրողին. տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 95-104:

²⁶⁷ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 95-96:

²⁶⁸ Տե՛ս **Օշական Յ.**, Յակոբ Պարոնեան, Վերջաբան, Պարոնեանի դերը մեր գրականութեան մեջ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 19-27, **Օշական Յ.**, Յակոբ Պարոնեան (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1, էջ 33-35, **Օշական Յ.**, Յակոբ Պարոնեան (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 31-34, **Օշական Յ.**, Յակոբ Պարոնեան (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, թիւ 1, էջ 6-9:

ղանդ հաջորդին՝ Երվանդ Օտյանին՝ փոխադարձ գուգակշռում վերջինիս անարդարացիորեն պակաս կարևորություն տալով: Առիթը օգտագործելով՝ Չոպանյանը հետադարձ հիշում է և վկայում. «Ոչ ոք ինձմէ աւելի սիրած եւ յարգած է Յակոբ Պարոնեանի գործն ու անձը, եւ այդ սէրն ու յարգանքը ես որոշապէս, թէւ չափաւոր, ճշգրտախոյզ ձեռով մը, երանգաւոր ոճով մը, արտայայտած եմ **1885**ին գրուած ընդարձակ յօդուածով մը, զոր հրատարակած եմ Պոլսոյ իմ **Ծաղիկ** երկշաբաթաթերթիթիս մէջ, որուն մէկ ամբողջ թիւը նուիրած եմ հայ երգիծական գրականութեան հիմնադրին»²⁶⁹:

3.4. Հայ գրականության նոր դարագլուխը և գրական ուղիների հարցը

Նոր «Անահիտի» էջերում արտացոլվեց նաև հայոց ընթացիկ գրական կյանքը իր բոլոր էական ու բնութագրական կողմերով: Նրա էջերում հյուրընկալվեցին բազմաթիվ ինչպես արդեն մոտ անցյալից հայտնի ու անվանի, վաղուց դասական դարձած, այնպես էլ դեռատի թե՛ սփյուռքահայ և թե՛ խորհրդահայ սկսնակ գրողներ: Սփյուռքահայ հեղինակներից իրենց ստեղծագործություններով հանդեսին կապված էին մասնավորապես Վահե Վահյանը (Սարգիս Ապտալյան), Ջարեհ Որբունի²⁷⁰, Նիկողոս Սարաֆյա-

²⁶⁹ **Չոպանյան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 65: Պետք է, սակայն, նկատել, որ Ա. Չոպանյանի՝ «Ծաղիկում» Հ. Պարոնյանին նվիրված հոդվածում կան մեկուսեջ արված բազմաթիվ վիճելի, անգամ ակնառու սխալ դատողություններ, որոնք «կարծես չեզոքացնում են դիտված արժանիքները». այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն (5-19-րդ դարեր), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 383-385:

²⁷⁰ Տե՛ս **Որբունի Ջ.**, Մարդուն մորթը (վէպ). Իբրեւ մուտք (Բանակէն, 1940), «Անահիտ», Փարիզ, 1940, ապրիլ-մայիս-յունիս, թիւ 4, էջ 17-21:

նր²⁷¹, Սեման (Գեղամ Աթմաճյան)²⁷², Միսաք Մանուշյանը և շատ ուրիշներ, որոնցից մի քանիսին գրական խոստումնալից սպագա էր սպասվում²⁷³:

Վերապրող սերնդից ավելի հաճախ «Անահիտի» գրեթե ամեն համարում երևում են բանաստեղծություններ Վահան Թեքեյանից: Դեռ «Ծաղիկից», որտեղ Թեքեյանը հաճույք էր վայելել՝ տեսնելու իր հրատարակված առաջնեկները, Չոպանյանը հետևում էր բանաստեղծի ստեղծագործական կենսագրությանը՝ «Անահիտի» նախորդ շրջանում ևս պարբերաբար տպագրելով նրա գործերից՝ Սուրեն Տիրանյան կամ Վահան Տիրանյան կեղծանուններով²⁷⁴: Մի փոքր հետ գնալով՝ հիշենք, որ դեռևս 1902 թվականին Չոպանյանը գրախոսական էր տպագրել Թեքեյանի անդրանիկ՝ «Հոգեր» ժողովածուի (1901) առիթով, ցույց տվել երիտասարդ բանաստեղծի ստեղծագործական խառնվածքի ինքնատիպ կողմերը, բացահայտել նրա գեղարվեստական աշխարհի ներքին միասնությունը, ընդգծել մտածողության այն հիմնական ուղղությունը, որի վրա խարսխվում էին գրողի անհատականությունը, գեղագիտական իդեալը²⁷⁵: Այժմ՝ նոր ժամանակներում, նրան համարում է «մեր ժամանակակից քերթութեան ամենէն հմայիչ, ինքնատիպ ու

²⁷¹ Տե՛ս **Սարաֆեան Ն.**, Տեղատուրիսն և մակընթացուիսն (Մնացեալը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 61-72, **Սարաֆեան Ն.**, Տեղատուրիսն և մակընթացուիսն (Շար. և վերջ). Բ., «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 32-43:

²⁷² Տե՛ս **Սեմա Ա.** (տասնապետ Գեղամ Աթմաճեան), Կռուի երթ, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թիւ 1-3, էջ 42:

²⁷³ Սփյուռքի գրականության նկատմամբ Ա. Չոպանյանի գրական քննադատության մասին տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 26-36:

²⁷⁴ Տե՛ս **Չոպանեան Ա.**, «Անահիտ», Փարիզ, 1947, յունուար-յունիս, թիւ 1, 1947, էջ 3:

²⁷⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Գրքեր և թերթեր, «Անահիտ», Փարիզ, 1902, մարտ, թիւ 3, էջ 45-50: Տե՛ս նաև **Չոպանյան Ա.**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, էջ 631-644:

կատարելաձև վարպետներէն մին»²⁷⁶, իսկ նրա նորատիպ «Սէր» ժողովածուի կապակցությամբ գրում. «Բարձր բանաստեղծութիւն սիրող ամէն Հայ պէտք է այդ հատորն ունենայ իր գրադարանին մէջ, կամ աւելի ճիշդը՝ իր սնարին մոտիկ»²⁷⁷:

Իսկ 1934 թ. փետրվարի 10-ին, երբ Փարիզի կենտրոնում՝ Սալ Գավո համերգասրահում, տոնվում է Վ. Թեքեյանի գրական գործունեության 40-ամյակը²⁷⁸, Չոպանյանը, բանախոսելով հանդեսում, ևս մեկ անգամ շատ բարձր է գնահատում բանաստեղծի քնարը՝ «արդիական ու դասական միանգամայն»: Սեղմ նկարագրելով Թեքեյանի ստեղծագործական կյանքի ուրվագիծը՝ սկսած պատանեկան առաջին քնքուշ ու երագուն երգերից մինչև վերջին խոհուն ու խորաթափանց բանաստեղծությունները, գրականագետը նրա ողջ քնարերգությունը գնահատում է իբրև «մեծատարած ու բազմազան բուրաստան մը թովիչ բուրմունքով գաղափարական հագուստով ծաղիկներու, որոնք կենդանի պիտի մնան ու սրտերն ու մտքերը պիտի դիտին՝ ինչքան ատեն որ հայ լեզուն հնչէ աշխարհիս վրայ...»²⁷⁹:

²⁷⁶ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 61-62:

²⁷⁷ Նույն տեղում, էջ 66-67:

²⁷⁸ Կ. Գալլաքյանը Ա. Չոպանյանին նվիրված մենագրության մէջ գրում է հիւնամայա հոբելյանը (տե՛ս **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 463), որ սխալ է, քանի որ Վ. Թեքեյանի առաջին «Հոգեր» ժողովածուն, իր մէջ ամփոփում էր բանաստեղծի՝ 1893-1901 թթ. գրած չափածո և արձակ գործերը, և հետո բանաստեղծի առաջին տպագիր գործը, որը ընդամենը էջուկէս էր, լույս է տեսել Կ. Պոլսի՝ Արփ. Արփիարյանի խմբագրած «Հայրենիք» օրաթերթի 1894 թ. նոր տարվա համարում՝ «Կաղանդը Կեսարիոյ մեջ» վերնագրով, որը ստորագրված էր Բ. Կ. Մ. տե՛ս **Ավագյան Ա.**, Վահան Թեքեյան. արևմտահայ կյանքի և գրականության մշակը, «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, №1 (13), էջ 106: Տե՛ս նաև **Ավագյան Ա.**, Վահան Թեքեյան. տարագիր մենավորը (Կահիրեից Կահիրե), «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, №2 (14), էջ 132:

²⁷⁹ **Չոպանեան Ա.**, Վահան Թեքեյան. ճառ՝ բանաստեղծին յոբելեանական հանդէսին արտասանուած, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 109-110:

Հանձին Թեքեյանի՝ Չոպանյանը տեսնում է հայ բանաստեղծության ամենաթանկարժեք դեմքերից մեկին: Քննադատը նաև ցույց է տալիս նրա տեղը և դերը արևմտահայ պոեզիայի մեծերի՝ Սիամանթոյի, Վարուժանի և մյուս հայտնի ժամանակակիցների կողքին և մեծարանքի իր խոսքը ուղղում բոլորին²⁸⁰:

Ի՞նչ ճանապարհով պիտի ընթանար Սփյուռքի գրականությունը: Ընթռնելով, որ տոհմիկ արմատներից կտրված, անցյալը մոռացած ու միայն ներկա հոգսերով ապրող գրականությունը վաղ թե ուշ, որքան էլ ուժեղ լինի, կորցնելու է ազգային դիմագիծը՝ Չոպանյանը առաջարկում էր հավատարիմ մնալ անցյալի գրական արժեքներին ու ավանդույթներին, խորապես ճանաչելով ու սիրելով մեր հին գրողներին ու նրանց գործերը՝ զարգացնել հայ մշակույթը²⁸¹: Նրան շատ էր անհանգստացնում, որ սփյուռքահայ շատ գրողներ, ընդառաջ գնալով համաշխարհային պատմության ներկա փուլի պահանջներին, ձգտելով հավատարիմ լինել նոր ժամանակների ոգուն, երբեմն հեռանում էին մեր ազգային նկարագրի և մտածողության համար այնքան կենսական ավանդական տարրերից: Սա ամենևին չի նշանակում, թե Չոպանյանը մերժում էր սփյուռքահայ գրողների՝ ժամանակի թելադրանքներին ընդառաջ գնալու մղումները. նա պարզապես կարծում էր, որ այդ ամենի կողքին ու դրանց զուգընթաց պետք է դնել ու օգտագործել այն ամենը, ինչը որքան էլ հին, այնուամենայնիվ առողջ է և գեղեցիկ: Օրինակ, անդրադառնալով Կ. Չարյանի՝ «Չուարթնոց» հանդեսում տպագրած մի հոդվածի բովանդակությանը, որտեղ վերջինս հեզնել էր մեր այն գրողներին, որոնք, թեև ապրելով եվրոպական կամ ամերիկյան քաղաքակրթության կենտրոններում, դեռ շարունակում էին իրենց ծննդավայր գյուղի «խոնարի տեսիլներն ու յիշատակները քրքրել»՝ վիոխանակ, ըստ նրա, համամարդկային բարձր մատենագրության

²⁸⁰ Վ. Թեքեյանի մասին տե՛ս նաև Ա. Չոպանյանի հակիրճ անդրադարձը գրողի մահվան կապացությանը. **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1949, յուրուար-յունիս, քիւ 1, էջ 35-36:

²⁸¹ Տե՛ս նաև **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 27:

կատարներին ձգտելու, Չոպանյանը պատասխանում է. «Ես այ կը ցանկամ որ համամարդկային մեծ տարողութիւն ունեցող գործեր մեր մէջ երեսան, որովհետեւ գերագոյն գրականութիւնը անոնց մէջ է. բայց ասոր համար չեմ ենթագնահատեր գիւղի կեանքի նուիրուած համեղ ու ինքնատիպ գրական էջերը»²⁸²:

Ընդհանրապես պետք է նկատել, որ Առաջին աշխարհամարտից հետո գրեթե բոլոր ազգերի մեջ էլ ծառայել էր գրական նոր ուղիների փնտրման հոգսը: Սփյուռքում էլ, ինչպես նկատում է Կ. Պոլսի «Չուարթնոց» հանդեսի խմբագրությունը, ճիշտ է, թեև հատվածական կերպով, «գրական փսփտութեան» ձևով, սակայն շոշափվում էին տեսակետներ հայ գրականության հետագա ընթացքի վերաբերյալ: Հղում անելով «Հայրենիք» և «Յարդգող» պարբերականներին՝ «Չուարթնոցը» արժարժում է մասնավորապես հետևյալ հարցերը. գրականության մեջ ազգային[՞], թե՞ համամարդկային ուղղությունը պետք է իշխի, արդյո՞ք հայ գրականությունը կարող է գաղութներում զարգանալ, թե՞ պետք է բուն հայրենիքում արմատավորվի ու աճի²⁸³: Բնականաբար այս հարցերը ծագում էին սփյուռքահայ գրականության ապագա ճակատագրի, վաղվա մասին խոր մտահոգությունից:

Ուշագրավ է, որ «Չուարթնոցը» հենց Ա. Չոպանյանի հոդվածով է բացում հիշյալ հարցերի վերաբերյալ քննությունը: Գրականության կամ արվեստի մեջ կարևորելով «ազգային» ուղղությունը՝ Չոպանյանը, սակայն, իրավացիորեն կարծում է, որ եթե գրողը ձգտի արտահայտել սուս կիր ազգին հետաքրքրող և հասկանալի հարցեր, մնա ազգային միջավայրում կաղապարված, ապա նրա ստեղծագործությունները կլինեն «նեղ ու չոր»՝ զուրկ կենսունակությունից, որ սեփական ազգի համար անգամ կղառնան միջակ ու սահմանափակ մի հորինվածք: Բննադատը նույնքան անընդունելի է համարում նաև ներհակ ձգտումը. երբ գրողը, արհամարհելով իր

²⁸² **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 97-98:

²⁸³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Ազգայինն ու միջազգայինը գրականութեան մէջ, «Չուարթնոց», Փարիզ, 1929, յունուար, էջ 12:

անմիջական միջավայրը, շրջանցելով ազգային խնդիրները, ձեռքն է առնում համամարդկային նյութեր և արհեստականորեն, առանց խորունկ ներշնչումի, բռնազբոսիկ ձևով ճգնում քարգման դառնալ միջազգային կյանքը հուզող հարցերի: «Էականը, ուրեմն,- ինչպես բացատրում է Չոպանյանը,- գրականութեան ինչպես և արուեստի մեջ, ազգային կամ միջազգային ձգտումը չէ, այլ տաղանդը, իրական ներշնչումը, անկեղծ ու բնական արտայայտումը աշխարհի ու կեանքի այս կամ այն երեւոյթին»²⁸⁴: Շարունակութեան մեջ լրացնելով իր այս միտքը՝ նա գրում է. «Իրապէս՝ չկայ ո՛չ դասակարգային, ոչ միջազգային, ոչ իսկ զուտ ազգային գրականութիւն: Ամէն ճշմարիտ գրագէտ՝ ո ու է գործի մեջ, մերթ հակառակ իր իսկ կամքին, բնագոյաբար ու անխուսափելիօրէն է՛ն առաջ ինքզինքը կ’արտայայտէ, յետոյ իր ցեղն ու իր անմիջական շրջապատը, եւ իր անձին, իր ցեղին եւ անմիջական շրջապատին մեջէն՝ մարդկութիւնը»²⁸⁵: Եվ օրինակներ բերելով հրեական հին գրականութիւնից, վկայակոչելով գրականութեան պատմութեան հազարամյակների փորձը, հիշելով և միմյանց զուգադրելով կամ տարբերակելով համաշխարհային խոշորագույն դեմքերից շատերին՝ Վիյյոն, Ռաբլէ, Լաֆոնտեն, Շեքսպիր, Ռասին և ուրիշներ, մեզնից ու մերոնցից վկայաբերելով քուչակյան տաղաշարքը, Համաստեղին, Թլկատինցուն, Վահան Թեքեյանին, Վահան Տերյանին, Կոստան Չարյանին՝ Չոպանյանը նրանց օրինակով հաստատում է այն անհերքելի իրողութիւնը, որ ճշմարիտ գրականութեան համար որքան անհրաժեշտ են «ցեղային գոյնը», խորին հետաքրքրութիւնը մարդկութեանը հուզող էական ու հավիտենական հարցերով, հին ու նոր դասական հեղինակների գործերը ճանաչելն ու նրանցից սնվելը, ազգային բանահյուսութիւնից օգտվելը, նույնքան էլ կարևոր են անձնական շեշտն ու խառնվածքը, անհատական մտածման ու զգայնութեան ինքնատիպութիւնը: Հաջորդում է եզրակացութիւնը. «Այն որ տաղանդ ունի և ա՛յդպէս կը մարզէ ու կը կիրարկէ զայն, կը հասնի, ինքնին,

²⁸⁴ Նույն տեղում:

²⁸⁵ Նույն տեղում:

արտադրելու գործեր որ, նիւթով ազգային ըլլան թէ միջազգային, ոճի մէջ ունենան մեծ կամ փոքր չափով ցեղային գոյն, կը ստանան համամարդկային տարողութիւն, պահպանելով հանդերձ իրենց խորքին մէջ էական և հիմնական կապը իրենց ցեղին հետ»²⁸⁶: Իբրև աշխատիք մեր գրականության մէջ տեսնելով Վահան Թեքեյանին, Վահան Տերյանին ու Կոստան Չարյանին՝ Չոպանյանը նրանց օրինակով ապացուցում է, որ առանց շեշտված «ցեղային գոյն» ի հայտ բերելու՝ նրանք ամենից համամարդկային և եվրոպական ճաշակ ունեցող բանաստեղծներն են մեզանում, որ նաև «հարագատօրէն հայ են իրենց զգայնութեան հիմնական տարրերուն մէջ և իրենց անձնական մեծ տաղանդով ամենէն գեղեցիկ ու տեսական զարդերէն են մեր ազգային գրականութեան»²⁸⁷:

Ու թեև քննադատը խոստովանում է, որ մեր հին ու նոր գրականության մէջ համաշխարհային տարողություն ու արժեք ունեցող գործերը շատ չեն, դարեր ի վեր արտաքին ու ներքին բազմապիսի խոչընդոտների ու աղետների պատճառով հայ հանճարը չի կարողացել ամբողջությամբ ու լիակատար դրսևորվել, սակայն աշխարհի տարբեր կողմերում ցրված մեր ժողովուրդը այսօր մտավոր վերելք է ցույց տալիս, որքան էլ «ցանցառ բայց (բնագրում՝ բաց, որ վրիպակ է - Վ. Ա.) նշանակալից ու մեծապէս յուսատու երեսոյթներ» երկնում: Ուրեմն, ինչպես նշում է Չոպանյանը, «Պէտք է մղենք մեր նոր սերունդը որ հայ մտքի այդ գերագոյն կարելիութիւններն իրականացնելու ազնիւ ու բեղուն փառասիրութիւնն ունենայ և հաւատարմութիւն ու գիտակից ճիգով մը այդ իրականացման ընդլայնումին ու զօրացումին աջակցի»²⁸⁸:

Այս մտքերի ծայրերում, կարծում ենք, դժվար չէ գուշակել նաև Չոպանյանի քողարկված հավատը՝ մասնավորապէս սփյուռքահայության կենսական գոյության, հոգևոր ինքնության հեռանկարների հանդեպ:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 14:

²⁸⁷ Նույն տեղում:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 15:

Առաջնային կարևորություն էր տրվում նաև արևմտահայ լեզվի կենսունակության ապահովմանը: Չոպանյանին տազնապեցնում էր այն սխալ մտայնությունը, ըստ որի՝ ազգային մշակույթի միության համար կարծեք ուրիշ այլ առավել լավ տարբերակ չկար, քան, բացի արևմտահայ գրականությունից հրաժարվելուց, արևելահայրենն էլ դարձնել ամբողջ հայության համար ընդհանուր լեզու այն միամիտ պատճառաբանությամբ, թե հայ քաղաքական կյանքի կենտրոնը տեղափոխվել է Կովկասյան Հայաստան, ինչպես մտածում էին, օրինակ, Կ. Չարյանը²⁸⁹ կամ, որքան էլ տարօրինակ է, Ավ. Իսահակյանը²⁹⁰: Հարցի կապակցությամբ հրապարակումներ էին եղել նաև մամուլում²⁹¹: «Եթե հայ ժողովուրդի ինքնուրոյն պետական կեանքին վերականգնումը Կիլիկիոյ կամ Թրքահայաստանի մէջ տեղի ունեցած ըլլար, մեր ազգի պետական լեզուն արեւմտահայերէնը պիտի ըլլար»²⁹², - հեզմաբար հարցնում է Չոպանյանը: Նա դեմ է դուրս գալիս մնացորինակ մտածումներին՝ բացատրելով, որ դա նախ գործնական չէ և ոչ էլ իրականանալի²⁹³: Եվ հետո՝ արդեն երկու դարից ի վեր մեր ժամանակակից գրականության երկու ճյուղերը զարգանում են զուգահեռաբար՝ յուրաքանչյուրն իրեն հատուկ մասնավոր գեղեցկություններով, և նրանցից ամեն մեկը յուրովի կազմում է մեր ազգային հարստությունը: Նույնը և արևմտահայ ու արևելահայ լեզուները. «Այսօր, արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը հայ մշակույթի թանկագին գանձերն են, իւրաքանչիւրն իր ուրույն գեղեցկութիւններն ունեցող»²⁹⁴: Ուրեմն,

²⁸⁹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 102:

²⁹⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Արեւմտահայ լեզուի ու գրականութեան ապագան, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 1, 2:

²⁹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

²⁹² Նույն տեղում:

²⁹³ Այդ մասին տե՛ս նաև **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը փյոյունքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 27:

²⁹⁴ **Չոպանեան Ա.**, Արեւմտահայ լեզուի ու գրականութեան ապագան, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս- դեկտեմբեր, թիւ 2, էջ 2:

ինչպես իրավացիորեն գտնում է Չոպանյանը, պետք է պահպանել ազգային այդ հարստությունները և ոչ թե տապանաբար դնել նրանցից որևէ մեկի վրա: Մի շարք փաստարկներով Չոպանյանը հիմնավորում է արևմտահայերենի գոյության պահանջը՝ հարցը տեղափոխելով նաև զգացական դաշտ. «...ատիկա պիտի ըլլար անարգանք մը բանաստեղծներու, վիպողներու, բանասերներու այն մէկ քանի հոյլերուն որ այդ բարբառը հասուցին իր այժմեան կատարելագործեալ ձեւին. ատիկա պիտի ըլլար անգիտակից մեղասակցութիւն մը արեւմտահայութեան բնաջնջումն ու արեւմտեան Հայաստանին թրքացումը հետապնդող թրքական եղեռնին...»²⁹⁵:

Ֆրանսիայի և ֆրանսերենի երկու՝ հարավային և հյուսիսային գործող ճյուղերի օրինակով Չոպանյանը լրացուցիչ պաշտպանում է իր տեսակետը և հակառակվում այն պարտվողական մտայնությանը, թե իբր արևմտահայերենը դատապարտված է անհետացման, քանի որ Արևմտահայաստանում և Կիլիկիայում գրեթե հայ չի մնացել, իսկ Պոլսի հայկական գաղութը մեծապես նվազել է և ընդունակ չէ հայ գրականության զարգացման մեջ իր նախկին դերը ունենալ, սփյուռքահայությունն էլ կարճ ժամանակում սահմանված է ձուլվելու:

Գրականագետը արևմտահայ լեզվի ու գրականության պահպանման ու զարգացման այնքան կարևոր գործը կապում է հատկապես գաղութահայության հետ՝ հիմնավորելով, որ «Թրքահայ գրականութիւն հիմայ ամբողջապէս հոն ապաստանած է», և սփյուռքահայ գրողներին հանձնարարում է. «...գէթ 40-50 տարուան համար, հայ տարեց կամ նոր տաղանդաւոր գրողներ արտասահմանի մէջ կարելիութիւն ու պարտականութիւն ունին իրենց մայրենի լեզուով գեղարուեստական արտայայտիչներն ըլլալու...»²⁹⁶: Իսկ եթե երբևէ արևմտահայերենն ու արևելահայերենը կարող էին միանալ, ապա դա, ըստ Չոպանյանի, պետք է կատարվեր «բնական

²⁹⁵ Նույն տեղում:

²⁹⁶ Չոպանեան Ա., Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 98:

ձեռով, ոչ երբեք արուեստական, բռնազբօսիկ կերպով»²⁹⁷:

Քննադատ Չոպանյանը հայտնում է ևս մեկ մտահոգություն. այն, որ արտասահմանյան հայ վիպագրության մեջ էական տեղ չեն զբաղեցնում ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի «ղիցագնական» զոհաբերության, նրա դեմ գործված անասելի ոճիրի, այնպես էլ տարբեր ճակատներում դրսևորած սխրալի քաջության թեմաները: Այդ առումով տեղին է հիշել Չոպանյանի խոսքը՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» (1933) հոյակապ վեպի հայերեն թարգմանության կապակցությամբ, որտեղ որքան խմբագիրը իր երախտագիտությունն է հայտնում ավստրիացի հանճարեղ և հայտնի գրողին, նույնքան էլ հանդիմանանքով զարմանում է, «թե ինչպե՞ս հայ վիպագիր մը չխորհեցաւ այդ սքանչելի նիւթէն գրական գործ մը հանել...»²⁹⁸:

Հարցի կապակցությամբ ահա թե ինչ է գրում գրականագետ Արծրուն Ավագյանը՝ հաստատելով Չոպանյանի միտքը. «Սփյուռքահայ զանգվածների կենսական հողի վրա դնելու և ազգային արժեքները տևական դարձնելու նպատակով ամենից առաջ անհրաժեշտ էր ըմբռնելի դարձնել եղեռնը իր ողջ խորությամբ ու հետևանքներով: 20-30-ական թթ. չկար ավելի հրատապ մի այլ խնդիր, քան ազգային աղետի պատճառած հետևանքների վերհանումը, ինչը նույնքան կարևոր էր առհասարակ մարդ արարածի և ազգային անցած ու անցնելիք ճանապարհի իմաստավորման առումով»²⁹⁹:

Ընդամենը մի քանի գործերում էր միայն, ինչպես նկատում է Չոպանյանը, որ մասնավորապես կոտորածի թեման դարձել էր ստեղծագործական ներշնչանքի նյութ, այն էլ, սակայն, անուղ-

²⁹⁷ Նույն տեղում, էջ 102: Նույն տեսակետը Ա. Չոպանյանը պաշտպանում է նաև հետագայում. տե՛ս **Չոպանեան Ա.**, Արեւմտահայ լեզուի ու գրականութեան ապագան, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 1-7:

²⁹⁸ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 103:

²⁹⁹ **Ավագյան Ա.**, Պատկերագարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 29:

դակի կերպով՝ առանց գործի բուն բովանդակությունը դառնալու: Քննադատի հավաստմամբ՝ պատերազմի ավարտից հետո այդ «ահաւոր» և «նուիրական» նյութին ուղղակի մոտեցել էին միայն Արամ Անտոնյանն իր ֆրանսերեն թարգմանված մի երկի առաջաբանի մեջ, ինչպես և «Այն սև օրերուն» տիտղոսով նորավեպերի ժողովածուում (1919), Համաստեղը՝ «Շան մը հետ գրույցը» (1929) պատմվածքում, իսկ Շ. Շահնուրի հայտնի «Նահանջը առանց երգի» վեպում (1929) այդ նյութի միայն հեռավոր ստվերն էր տարածված: Մինչդեռ, ինչպես համոզված էր Չոպանյանը, «Նիւթը սակայն, ահագին է, ամբողջ շարք մը գլուխ-գործոցներու ծնունդ տալու կարող: Հայերը կարծես դեռ կը վախնան անոր մօտենալու, որովհետեւ ահռելի է ան եւ հայ գրողի մը ձեռքը կրնայ դողացնել: Բայց այդ ահռելին վսեմ է նաեւ. ամենէն խորիմաստ, ամենէն բարդ տռամն է ան. ամեն ինչ կայ հոն. պիտի գայ անշուշտ ստեղծուր հայ վիպասանը պիտի արտայայտէ՝ Հայու տաղանդով՝ մարդկային պատմութեան այդ արտասովոր էջը»³⁰⁰:

Հետագայում էլ անդրադառնալով «**Մուսա Տաղին**» («Մուսա լեռան քառասուն օրը»- Վ. Ա.), նրա համաշխարհային տարածմանն ու մեծածավալ հռչակին, հարուցած հուզմանն ու հազվադեպ հաջողությանը՝ Չոպանյանը այն գնահատում է իրապես աննախընթաց գրական մի գործ, որի հեղինակը, ներշնչված հայ ժողովրդի սարսափելի ողբերգությամբ, լիակատար կերպով ըմբռնել է «հայկական տռամին ներքին նշանակությունը եւ մռայլ գեղեցկությունը», «բարձր հանճարով եւ խորունկ սրտով այդ տռամը երգած ու մեկնաբանած է»³⁰¹:

Չոպանյանը միաժամանակ դարձյալ գտնում է, որ մեզանում չի հայտնվել արժանավոր մի գրող, որը կարողանար ազգային նոր ողբերգությունը իր անօրինակ սոսկումի համապատկերով և հերոսական դիմադրության թեև բացառիկ, սակայն «տարօրինապես

³⁰⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 102:

³⁰¹ **Չոպանեան Ա.**, Ֆրանց Վերֆելի գիրքը եւ Հայաստանի հոգատարութեան հարցը, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 46:

գեղեցիկ» էջերով լիովին արտահայտել: 1915 թ. եղեռնի թեմայով Համաստեղի անավարտ «Սպիտակ ձիավորը»³⁰², Հ. Օշականի «Մնացորդած» (1932-1934) վեպերը Չոպանյանը որքան էլ բարձր է գնահատում, սակայն շահեկան արժանիքների կողքին տեսնում է և թերություններ³⁰³:

Չոպանյանին զայրացնում և անհանգստացնում էր շատերի այն համոզումը, թե իբր հայության աննախընթաց ողբերգության հավերժացումը ազդում է ժողովրդի մտքի և հոգու վրա, վիատեցնում ու տկարացնում նրան, որպես թե քաղաքականապես էլ վնասում: Հակառակվելով նման մտածողներին՝ Չոպանյանը գրում է. «Թե՛ բարոյապետ ես թե՛ քաղաքականապես անհրաժեշտ ես օգտակար է հայ ժողովուրդին՝ ես մանաւանդ անոր օտար երկիրներ ցրուած պանդուխտ զանգուածներուն համար՝ Հայ ըլլալուն պատճառով այդպիսի զարհուրելի մարտիրոսութեան մը ենթարկուող մեր հարիւր հազարաւոր արեւակիցներուն տառապանքը, ցոյց տուած բարոյական դիմադրութիւնը եւ ինչ ինչ վայրերու մէջ հերոսական ինքնապաշտպանութիւնը կամ արի ու յուսահատ կռիւով մահը յիշել միշտ, լեցուիլ այդ պատկերներուն ներշնչումով, որպէսզի վերապրող Հայերը միշտ իրենց մտքին ու սրտին առջև ունենան այդ նահատակ Հայութեան հանդէպ իրենց պարտաւորութիւնները, որպէսզի աւելի ուժեղ ճիգով մաքառին օտարացման վտանգին դէմ, որպէսզի հայ ազգային մշակոյթի զարգացման աւելի եռանդով ու հաւատքով նպաստեն, որպէսզի հայ ազգային դատին ներկայ եւ ապագայ պահանջներուն հանդէպ՝ առանց պոռոտախոսութեանց, առանց գրգռիչ յիմար սպառնալիքներու, իմաստուն ու գործանակական ոգիով, հնարաւոր ձեւերով կատարեն իրենց ամէն տեսակի

³⁰² «Սպիտակ ձիավորը» վեպն առանց 3-րդ և 4-րդ գլուխների տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում. տես **Համաստեղ**, Սպիտակ ձիավորը (Շարունակելի), «Հայրենիք», Բոստոն, 1931, մայիս, թիւ 7, էջ 1-37, **Համաստեղ**, Սպիտակ ձիավորը (Վերջ երկրորդ մասի), «Հայրենիք», Բոստոն, 1933, հոկտեմբեր, թիւ 12, էջ 43-60):

³⁰³ Տես **Չոպանեան Ա.**, Ֆրանց Վերֆելի գիրքը եւ Հայաստանի հոգատարութեան հարցը, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 45:

պարտականությունները»³⁰⁴:

Մեր վաղուց ծանոթ վիպասանների ու նորավիպագիրների առջև պահանջ դնելով գեղարվեստական զմայլելի գործեր դուրս բերել ողբերգական այդ նյութից՝ չի նշանակում, թե Չոպանյանը ձգտում էր սփյուռքահայ գրականության հետաքրքրությունների շրջանակը սահմանափակել սոսկ աղետալի իրողությունների, միայն ջարդերի, մահվան սարսափների, արհավիրքի հոգեբանական ապրումների, գաղթի, պանդխտության պատկերներով: Ամենևին: Նա նույնքան և գուցե առավել անհրաժեշտ էր համարում ավելի հաճախ հնչեցնել հույսի ու փրկության երգը, որը գոնե հոգեբանորեն արևմտահայությանը դուրս կբերեր անորոշ ու անսփոփելի կացությունից: Եվ իսկապես, արդեն 1930-ական թվականների սկզբներին սփյուռքահայ գրականությունը, աղետալի իրողությունների վերբերի դեռ չսպիացած ցավը հիշողության մեջ, տվեց մաքառման ու պայքարի, սպասումի ու հավատի թեման: Սա, անշուշտ, նաև «Անահիտի» խմբագրի հետևողական քաղաքականության դրսևորման արդյունք էր՝ հանդեսի գեղարվեստական էջերով ժողովրդին, մանավորապես սփյուռքահայությանը վարակել պայքարի, համառության, դիմադրության անսպառ ուժով, նրան ներարկել հայրենասիրական, ազգապահպան հերոսական ոգի ու տրամադրություն: «Մեր գրականությունը արտասահմանի մէջ վերափոթումի շրջան մը թեւակոխած է»³⁰⁵, - 1932 թ. հունվար-հունիսյան համարում գրում է Չոպանյանը, և ինքն էլ, ոգեշնչված հայ գրականության զարթոնքով, ձգտում ընթերցողին համակել աներեր լավատեսությամբ. «Ո՞վ ըսեր է որ այս ազգը «դժբաղդ» է, «տկար» է, «կորսուելու վրայ» է: Հայաստանի ինչպէս արտասահմանի մէջ, հայ հիմնաուրց ցեղը սուելի կենսունակ, սուելի առոյգ ու երիտասարդ, սուելի ստեղծագործ ու բեղմնատուր է քան երբեք, այն մարգերուն մէջ ուր ինք կոչուած է իր իսկական ուժը ցոյց տալ, եւ որոնք գերագոյն

³⁰⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 27-98:

³⁰⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 179:

մարզերն են, մտածման ու արուեստի մարզերը»³⁰⁶:

Չոպանյանին ոգևորում են նաև մասնավորապես Ամերիկայում հայ կյանքին և մշակույթին վերաբերող, անգլերենով շարադրված պարբերական հրատարակությունները, որոնք, նրա գնահատմամբ, այն ազդեցիկ միջոցներից էին, որոնք կարող էին հայերեն չիմացող, անգլիախոս նոր սերնդին կապված պահել հարազատ ազգի հետ³⁰⁷: Չոպանյանը արժևորում է նաև արտասահմանում օտար լեզվով ստեղծվող հայ գրականությունը՝ այդ երևույթի մեջ ամենևին վտանգ չտեսնելով բնիկ մշակույթի համար: Դեռ հակառակը. այդպիսի գործերի հաջողության պարագան, ինչպես համոզված էր նա, կրարձարացներ մեր ազգի վարկը, լրացուցիչ ապացույցը կդառնար մեր ժողովրդի քաղաքակրթության³⁰⁸:

Գրականության մեջ կյանքը հաստատող լավատեսական տրամադրությունների գերակշռության պահանջին զուգահեռ Չոպանյանը մեծ կարևորություն էր տալիս նաև սփյուռքահայության՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ նվիրվածության թեմաների արտահայտությանը և ընդհանրապես հայրենիքի հզորացման ու զարգացման համազգային գործին սեփական նպաստը բերելու անհրաժեշտությանը, որը դարձյալ «Անահիտի» բնութագրական կողմերից մեկն էր³⁰⁹:

«Անահիտը» բացառիկ դեր կատարեց ոչ միայն նոր սերնդի, իհարկե, ոչ միշտ տաղանդավոր հեղինակների ստեղծագործությունները իր էջերում տպագրելով, այլև շատ հաճախ, առջևում ունենալով մասնավորապես սկսնակների գեղագիտական դաստիարակության հարկավորությունը, ինչպես նաև ընթացիկ գրականության առանցքային խնդիրների ըմբռնման պահանջը, հան-

³⁰⁶ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիվ 3-6, էջ 221:

³⁰⁷ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիվ 1-2, էջ 186:

³⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 187:

³⁰⁹ Տե՛ս նաև **Գալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 443:

դես եկավ քննադատական վերլուծություններով ու գնահատումներով: Այս ասպարեզում դարձյալ մեծ են Ա. Չոպանյանի դերն ու ավանդը: Իր քրոնիկներում նա շատ հաճախ կարևորում և ճանաչել էր տալիս նորեկներին, հիշատակում նոր լույս տեսած ավելի կամ նվազ արժեքավոր նրանց գործերը, խրախուսում և ըստ անհրաժեշտության անում դիտողություններ: Բննադատը, օրինակ, շատ բարձր է գնահատում Համաստեղի «Անճրևը», Թորոս Ազատյանի «Քառասնակը», Բենիամին Նուրիկյանի «Այգեկուփքը»³¹⁰, ջերմությամբ է խոսում Վահրամ Կաքավյանի «Պողպատե սերմերը», Վահե Հայկի «Հայրենի ծխանը» ժողովածուների մասին («...խրաքանչիւրը ինքնայատուկ հրապոյրով լի է ու մնայուն արժէք կը ներկայացնէ»)՝³¹¹, որոնցում բարձր արվեստով պատկերված էր կորսված հայրենիքը՝ իր մարդկանցով, բնությամբ ու կենցաղով: Յուրաքանչյուր հեղինակի և ժողովածուի կապակցությամբ Չոպանյանը տալիս է հակիրճ գնահատականներ, անում համեմատություններ, սահմանում չափանիշներ, մատնանշում առավելություններն ու թերությունները, և ստացվում է այնպես, որ այդ վերլուծությունները, որքան էլ համառոտ ու հակիրճ, իրենց բովանդակությամբ դուրս են գալիս պարզ գնահատանքի շրջանակից և ստանում են լուրջ գրախոսության արժեք: Օրինակ, ահա թե ինչ է գրում Վահե Հայկի մասին. «Վահե Հայկ աւելի մօտ է խառնուածքով Համաստեղին քան Ազատեանին: Գիտէ երգել ու վիպել. իր արձակը ջղուտ է եւ արագ, թէւ յաճախ թրթռուն՝ ամենաքնքուշ, միամիտ, այերային քնարեզօրթեամբ սը, եւ ինչպէս Համաստեղին մէջ՝ իր մէջ ալ համեղ հեզնութեան տարրը կը խառնուի իր բանաստեղծական թռիչքներուն կամ իր դիտող մտքի կենդանի արտայայտմանց. բայց ո եւ է ազդեցութիւն չէ կրած Համաստեղէն, որովհետեւ անկից առաջ արդէն ինքը կազմուած եւ հրապարակ էր ելած. երկուքին ալ վարպետը Թլկատինցին ու Չարդարեանն են, Համաստեղին մէջ Թլկատին-

³¹⁰ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 97:

³¹¹ **Չոպանյան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 97:

ցին, Վահե Հայկին մեջ Չարդարեանը առաելապէս զգալի»³¹²:

Ամեն մի արժեքավոր գրական նոր ուժի հայտնութեամբ Չոպանյանը զալիս էր դարձյալ հաստատելու և հավաստելու, թե օտարութեան մեջ էլ՝ հայրենիքից հեռու, հայ գրականությունը կարող է ծաղկել և ստեղծել գեղարվեստական բարձր արժեքներ. «Այս բոլորը ուժեղ հերքում մըն է ոմանց այն սխալ կարծիքին,- գրում է քննադատը,- որու համեմատ արտասահմանի մեջ, հայրենիքէ հեռու, հայ գրականութիւն մը չի կրնար ծաղկիլ եւ կատարուած ճիգերը անկենդան, օտարախորթ, արուեստական արտադրութիւններ միայն կրնան ըլլալ»³¹³: Իհարկէ, ինչպէս նկատում է նաև Ժ. Քալանթարյանը³¹⁴, Չոպանյանը շատ լավ գիտակցում էր, որ ազգային մշակույթը պետք է հայրենի ազատ հողի վրա ստեղծվի, և ինքն էլ, ինչպէս համոզվեցինք, քարոզում էր Խորհրդային Հայաստանի մշակույթը, սակայն քանի որ մեր ժողովրդի մի սովոր հատված դուրս էր մնացել Հայաստանից, պետք էր հոգալ նաև այդ՝ բնօրրանից հեռացած հայերի գրականության մասին:

Մտահոգությունների և տագնապների մթնոլորտում սփյուռքահայ գրողը, սակայն, ոչ միայն հետ նայեց հայրենի գյուղին ու ժողովրդի ողբերգությանը, այլև ավելի հաճախ դիտեց իր շուրջը, փորձեց զննել ու վերլուծել տարագիր հայության կյանքը օտարության մեջ, նոր հանգամանքներում՝ ուժացման վտանգի առջև³¹⁵: Եվ արդեն Սփյուռքի գոյության առաջին տասնամյակում սփյուռքահայ արձակը կերպավորեց ժամանակակից հերոսին՝ իր օրերի հոգեբանությամբ, օտարության մեջ հասակ նետած տարագրի ոգորումներով: Այդպիսի հերոսի առաջին օրինակներ տվեցին Շահան Շահնուրն ու Չարեհ Որբունին՝ համապատասխանաբար «Նահանջը առանց երգի» և «Փորձը» վեպերում, որոնք լույս տեսան նույն տա-

³¹² Նույն տեղում, էջ 100:

³¹³ Նույն տեղում, էջ 98:

³¹⁴ Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 28:

³¹⁵ Տե՛ս **Պարրիեյան Վ.**, Սփյուռքահայ գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 224:

րում՝ 1929-ին: Եվ դարձյալ առաջինը Չոպանյանն էր, որ շտապեց արժևորել այդ «հրճուաբեր յայտնութիւնները» և գնահատել դրանց հեղինակներին:

Ուշագրավ է, որ Չոպանյանը Շահնուրի և Որբունու վեպերը քննում է համատեղ՝ նույն ուսումնասիրության մեջ՝ գուգահեռներ անցկացնելով հեղինակների և նրանց գործերի միջև: Իրենց անհատականությամբ միմյանցից տարբեր, «երկու գորեղ ու անձնադրոշմ» նորեկ գրողների համար Չոպանյանը ընդհանրական է համարում այն, որ երկուսն էլ մեր գրականության մեջ արծարծել են նոր թեմա՝ նյութ առնելով մեր ժողովրդին պատուհասած մեծ «աղետաշարքից»՝ հետո օտար երկրներում ապաստանած գաղթականության, մասնավորապես երիտասարդ սերնդի կյանքից³¹⁶:

Բնագրային հատվածական մեջբերումներով ցանկանալով ցույց տալ Որբունու վիպելու վարպետությունը, «կեանքն արտայայտելու ինքնատիպ ու հզոր եղանակին չափը»՝ Չոպանյանը նաև հակիրճ պատմում է «Փորձը» վեպում ծավալվող դժբախտ իրադարձությունների ընթացքը, վերլուծում երկը և գտնում, որ «Որբունի լաւ վիպող է. եւ խորքին մէջ՝ բանաստեղծ, ան ունի նուրբ դիտողութեան կարողութիւն, իրերն ու մարդիկը ցայտուն նկատումով ցոյց տալու շնորհք, դէպքերն ուժեղ ու հակիրճ ձեւով պարզելու ձիրք, սիրուն համեղ հեզմութիւն մը՝ գունագեղ, հոծ, տրոփուն քնարերգութեան մը հետ, որ վիպումին արագութիւնը երբեք չի ծանրացներ այլ գայն կը դարձնէ աւելի կենդանի, տպատրիչ ու յանկուցիչ»³¹⁷: Քննադատը այս «թանկագին» հատկությունների կողքին, սակայն, «Փորձը» վեպում նկատում է նաև հոգեբանական նկատելի վրիպումներ՝ մասնավորապես կապված վեպի գլխավոր հերոսի գործողությունների վերջաբանի հետ: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ շատ բարձր է գնահատում երիտասարդ արվեստագետին՝

³¹⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 105:

³¹⁷ Նույն տեղում, էջ 107:

նրա մեջ տեսնելով խոստումնալից ապագա ունեցող գրողին³¹⁸:

Չոպանյանը ավելի մասշտաբային և տարողունակ է համարում Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը³¹⁹: Այն համեմատելով Որբունու «Փորձը» վեպի հետ՝ քննադատող առավելությունը տալիս է առաջինին, որտեղ գլխավոր հերոսների գործողությունների ընթացքում ուրվագծվում են մի շարք տիպարներ, որոնց միջոցով ավելի բազմակողմանի ու ամբողջական է ներկայացվում հատկապես Ֆրանսիա տարագրված հայ պատանիների ողիսականը, իր բնութագրմամբ՝ «ղժբաղդ, ղեկակորոյս տողց «պոհեմ» մը»³²⁰:

Ներկայացնելով վեպի «կմախքը»՝ Չոպանյանը իր ընթերցողին խորհուրդ է տալիս ծայրեծայր կարդալ գործը՝ տեսնելու, թե «հեղինակը զայն ի՛նչպիսի բաբախում միսերով, եռուն արիւնով, թրթռուն ջիղերով կենդանացուցած ու շարժման մեջ դրած է»³²¹:

Շահնուրի՝ մեծապես ինքնատիպ բազմաթիվ ստեղծագործական առանձնահատկությունների ընդգծմանը զուգահեռ՝ Չոպանյանը շեշտում է նաև նրա տոհմիկ խառնվածքը՝ որպես գրողին բնութագրող կարևոր հատկանիշ. «...Ունի ինքնուրոյն դիտողութեան կարողութիւն, խոր գգայնութիւն՝ որ յաճախ նոյն իսկ բռուն կը դառնայ, հոգեբանական բարդ վիճակներ թափանցելու եւ արտայայտելու ձիրք, տիպարներ գծելու, բնանկարներ, բարքերու պատկերներ տրոփում կեանքով մը վերարտադրելու շնորհք»³²² և այլն: Չոպանյանի այս գնահատականը, որ վեպի ու նրա հեղինակի մասին հենց սկզբից ասված լավագույն խոսքն էր, ըստ էության մնաց ամենաճիշտ ձևակերպումը Շահնուրի գրականության ու ոճի հաս-

³¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 108-109:

³¹⁹ Վեպի մասին նրա տպագրումից սկսած՝ մեզանում արտահայտվել են ամենատարբեր կարծիքներ, տրվել են ընդհատումներ չունեցող իրարամերժ, երբեմն միակողմանի, անզամ անհեթեթության հասնող գնահատականներ: Այդ ամենի մասին մանրամասնորեն տե՛ս **Ավագյան Ա.**, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 42-119:

³²⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 109:

³²¹ Նույն տեղում, էջ 110:

³²² Նույն տեղում, էջ 111:

ցեխն:

Շահնուրի վեպում ևս Չոպանյանը նկատում է հոգեբանական վրիպումներ: Նախ՝ նա գրողին քննադատում է այն բանի համար, որ փարիզյան բուլվարների, սրճարանների ինչ-ինչ թափփուկների կյանքը ճանաչելով ու ներկայացնելով՝ միամտաբար ենթադրել է տվել, թե հենց նրանց վարքագծի մեջ է խտանում ամբողջ ֆրանսիական ազգի նկարագիրը³²³: Այդ առիթով դիտողություն անելով Շահնուրին և կարծիք հայտնելով, թե իր ճաշակով ու ոճով «յայտնապէս Շահնուր մինչեւ ծուծը տոգորուած է ֆրանսական մշակոյթով»՝ Չոպանյանը ընդհանրապէս զգուշացնում է հայ երիտասարդ գրողներին, որ առանձին ստոր, գծուծ, անբարոյական անհատների վարքով ու մտածելակերպով սխալ է կարծիք կազմել և միանշանակ եզրակացություններ անել մի ամբողջ ազգի մասին, ինչպէս ֆրանսիացի, անգլիացի կամ իտալացի, այնպէս էլ հայ: «...Պէտք չէ մոռանալ նաեւ որ մենք ալ Լէսքիւրներու համարժեքները ունինք մեր Արեւելքին մէջ...»³²⁴, - իր խոսքը ամփոփում է քննադատը:

Չոպանյանը Շահնուրին մեղադրում է նաև «տարփատենչ» նկարագրություններով չափից ավելի տարվելու համար: Գեղագիտական նկատառումներից զատ՝ քննադատին անհանգստացնում էր նաև այն, որ «հեշտախտատր» տեսարանները մեր՝ մեծ դժբախտություններից տկարացած ազգի բարքերի մաքրության պահպանման, բարոյական ուժի ու կորովի ամրացման համար կարող են լինել խիստ վտանգավոր: Իսկ ահա գրականագետ Արծրուն Ավագյանի գնահատականը վեպում գոյություն ունեցող «բաց» արտահայտությունների և սիրային պատկերումների վերաբե-

³²³ Գրականագետ Արծրուն Ավագյանի կրածիքով՝ վեպում հանդես բերված գրեթե բոլոր օտարազգի հերոսներին ներկայացնելով բացասական երանգներով՝ Շահնուրը, այնուամենայնիվ, ընդհանրացման չի գնացել, հատուկ միտում չի ցուցաբերել ֆրանսիացիների նկատմամբ. «Պարզապես նա շեշտում է օտար կյանքի ապակամիչ դերը հայի նկարագրի պահպանման մեջ»: **Ավագյան Ա.**, Պատկերագրող պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 82:

³²⁴ **Չոպանյան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 112:

րյալ շատ մեղմ է, ինչ-որ տեղ անգամ արդարացնող և հիմնավորող. «...վեպում առկա որոշ պատկերներ, ըստ էության, ոչ թե վավաշոտության են մոլում, այլ մարմնապաշտության, ավելի ստույգ՝ մարմններգության, մի բան, որ այնքան սովորական էր ոչ միայն մեր միջին ու ուշ շրջանի, այլև վաղ միջնադարյան գրականության մեջ: ...Շահնուրը վեպում երբեմն պատկերում է սեռային վայելքի պահեր, բայց այնտեղ չկան գռեհկություններ, ավելին, դրանք ուշագրավ են կանացի հոգեբանության, նազանքների ու նրբությունների իրենց վերհանումներով»³²⁵: Շուտով, սակայն, գրականագետի խոսքը դառնում է ավելի զգուշավոր. «Ինչ խոսք, իր որոշ պատկերումներում ու ժխտումներում Շահնուրը նաև անարդար ու խիստ է: Թեև հոգեբանորեն բացատրելի, սակայն միշտ չէ, որ կարողանում է պահպանել ասելիքի սահմաններն ու խոսքի չափը, բաներ, որ արդյունք են նաև ստեղծագործական ներշնչման պահի»³²⁶, - գրում է Ավագյանը՝ չմոռանալով հիշեցնել, որ գիրքը հեղինակի առաջին փորձն էր՝ հավանաբար դրանով ցանկանալով ենթադրել տալ, թե այդ ամենը կարող էր լինել նաև անփորձության հետևանք:

«Նահանջը առանց երգի» վեպի առնչությամբ ուշագրավ է Չոպանյանի բանավեճը Գեղամ Ֆեներճյանի հետ, որը այդ ժամանակ «Ավագյան» շաբաթաթերթի խմբագիրն էր և փորձել էր հոգուտ հեղինակի փաստարկել, թե իբր չի կարելի գրողին վերագրել իր ստեղծած կերպարների՝ հային ամուլ հայտարարող, Նարեկացու Մատյանը «Հայոց ամենէն զգուշի, սխալ, վատառողջ եւ անբարոյական» գիրք համարող մտքերը և մեղադրել նրան. «Ո՞ր է տեսուած որ վիպասան մը ամբաստանուի իր հերոսներուն բերնին մէջ դրուած խօսքերուն համար»³²⁷, - գրել էր նա: Հակադրվելով Ֆեներճյանին՝ Չոպանյանը որքան էլ համաձայնում է, որ, այո՛, որևէ

³²⁵ **Ավագյան Ա.**, Պատկերագրող պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 52-53:

³²⁶ Նույն տեղում, էջ 53:

³²⁷ **Չոպանեան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անսիխտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 87:

վիպասանի չի կարելի վերագրել իր բոլոր հերոսների արտահայտած զգացումները, սակայն «Նահանջում» Սուրենը, ինչպես և Պետրոսը ակներևաբար Շահնուրի նախասիրած տիպարներն են, և նրանց կարծիքները ներկայացնում են հեղինակի մտածումները և ուղիղ խնամություն ունեն նրա դատողությունների հետ³²⁸: Իբրև ասվածի հավաստում՝ Չոպանյանը իր ընդգծումներով մեջբերում է անում վեպից և հոդս ցնդեցնում Ֆեներճյանի փաստաբանությունը. «Արդէն հեղինակը, վեպին այդ մասին մէջ ուր Սուրեն հայ ժողովուրդի նկատմամբ իր ժխտական կարծիքները կը յայտնէ, կը գրէ՝ «Ներկաներէն ոմանք անընդունակ էին **չափազանցած ճՇՄԱՐ-ՏՈՒԹԻՆՆԵՐ** ըմբռնելու, եւ նեղացան Սուրենի խօսքերէն...»³²⁹:

Չոպանյանը չի հանդուրժում մաս վեպում Նարեկացուն ուղղված հայիոյանքները, որոնք չունեն հակաճառում կամ հերքում, և գրում է. «Շահնուր չի սիրեր Նարեկացին. իր մէկ յօդուածին մէջ, որ 7-8 տարի առաջ **Չուարթնոցի** մէջ երեցաւ, բացէ ի բաց դատափետած է Նարեկացին իբր միստիքականութեան տարածիչ Հայոց մէջ, իբր հայ կորովը, դիմադրականութիւնը ջլատող, զայն վերացեալ, երագող հօտ մը դարձնող...»³³⁰: Իսկ սա նշանակում է, որ Շահնուրի մնան բացասական ու մաս ծայրահեղ անարդար և կոշտ վերաբերմունքը տևական է եղել Նարեկացու նկատմամբ: Հակադրվելով Շահնուրին՝ Չոպանյանը, սակայն, ինչպես նկատում է Ա. Ավագյանը, խնդիրը սահմանափակել է տակ Նարեկացու պոետական արժեքով՝ անտեսելով նրա աշխարհայացքային կողմը³³¹: «Խնդիրը Նարեկացիին աշխարհահայեացքն ընդունելու կամ չընդունելու վրայ չէ,- գրել էր Չոպանյանը.- ես ինքս միստիքական հաւատացեալ մը չեմ. Նարեկացիին մէջ մեծ բանաստեղծն է,

³²⁸ Տե՛ս մաս **Ավագյան Ա.**, Պատկերագարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 67:

³²⁹ **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 87:

³³⁰ Նույն տեղում:

³³¹ Տե՛ս **Ավագյան Ա.**, Պատկերագարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 111:

հայ խօսքի կախարհներէն մէկն է, որ կը սիրեմ»³³²:

Հիշյալ թերութիւնները, սակայն, չեն խանգարում, որ Չոպանյանը բարձր կարծիք հայտնի Շահնուրի վեպի մասին և խոր հավատ գրողի ապագայի նկատմամբ. «Այս թերութիւնները արատներ են որ չեն եղծաներ գործին ամբողջութեան սքանչելի գեղեցկութիւնը եւ որ պիտի անհետանան անշուշտ Շահնուրի յաջորդ գործերուն մէջ»³³³:

Չոպանյանը անում է ևս մեկ նկատողություն, որը հավասարապես վերաբերում էր թե՛ Որբունու և թե՛ Շահնուրի վեպերին, և որը, դուրս գալով այս վեպերի շրջանակից, էական նշանակություն է ստանում Սփյուռքի գրականության համար ընդհանրապես³³⁴: Այն մեծ աղետը, որն ըստ էության երկու վեպերի հղացման ակունքն էր, տիրապետող չէր այդ գործերում: «Աղետը ներկայ է սակայն երկու վեպերու հերոսներուն հոգեբանութեան մէջ, եւ ներկայ է ժխտական արդիւնքով»³³⁵: Ահա թե ինչն էր անհանգստացնում Չոպանյանին, և նա իրավացիորեն կշտամբում է գրողներին, որ նրանք ստեղծել են օտար, անհարազատ միջավայրի մէջ ընկած հայի՝ բարոյապես կործանվող կամ լավագույն դեպքում ֆիզիկական քայքայման հասած, ազգային դիմագիծը կորցնող օրինակներ, որոնք, անշուշտ, ոչինչ «դրական, սրտապանդիչ» չէին կարող հաղորդել Մեծ եղեռնից հետո տարագրված հայերի բեկորներին՝ բացի նրանց հուսալքելուց: Ուրեմն՝ անհրաժեշտ էր նրանց վիոխարեն ստեղծել գորեղ, իրենց ազգի պահպանման, իրենց ցեղի վարկի համար պայքարող հպարտ կերպարների օրինակներ, որոնք կընդվզեին օտար միջավայրի կլանման վտանգի դեմ: Իսկ այդպիսիները կային, և իրակա-

³³² **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յումուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 87:

³³³ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 113: Տե՛ս նաև **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յումուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 92:

³³⁴ Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 32:

³³⁵ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 113:

նում նրանք, ինչպես շեշտում է Չոպանյանը, ավելի շատ էին, քան Ռբբունու կամ Շահնուրի՝ «իրենց ազգէն ուծացող, օտարացման մէջ հալող տկարները»³³⁶:

Հետաքրքրությունն ու ուշադրությունը երիտասարդ գրողների նկատմամբ շարունակվեցին և հետագայում: 1932 թ. Չոպանյանը «Անահիտի» 5-6-րդ միասնական համարում տպագրեց Շահնուրի «Համբարձումը» արձակ գործը³³⁷, իսկ 1933 թ. գնահատման խոսք ասաց գրողի նոր՝ «Յարալէզներուն դաւաճանութիւնը» խորագրով նորավեպերի ժողովածուի մասին: «Նահանջի» համեմատությամբ այստեղ հեղինակի տաղանդը տեսնում է ավելի խտացած և գտված՝ ընդգծելով նաև մի քանի նորավեպերում տեղ գտած մասնակի թերություններ, որոնք, այնուհանդերձ, Չոպանյանին չեն խանգարում Շահնուրին համարել հայ նորավեպի ամենից զգայուն, կենսալից ու ինքնատիպ վարպետներից մեկը³³⁸:

Նույն ոգևորությամբ չէ, սակայն, որ Չոպանյանը գնահատում է Շահնուրի քննադատական ու հրապարակախոսական գործունեությունը: «Շահնուրի մէջ լաւ վիպողին քով յոռի քննադատը ի յայտ եկած է...»³³⁹, - գրում է նա՝ տաղանդավոր վիպողի մէջ տեսնելով «շողորդաբան» քննադատին: Չոպանյանին հատկապես դուր չէր եկել գրողի՝ հայ մտքի, մեր հոգևոր մշակույթի նկատմամբ ունեցած արհամարհանքը և հայ գրական արժեքները նսեմացնելու փորձերը, բոլոր հայ գրողներին «կապկող» հորջորջելն ու գրականությունը նսեմացնելու տիրական ձգտումը: Մասնավորապես «Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ»

³³⁶ Նույն տեղում, էջ 114:

³³⁷ Տե՛ս **Շահնուր Շ.**, Համբարձումը, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 50-56:

³³⁸ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 80:

³³⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 94: Ա. Չոպանյանը նույն միտքն է հայտնում նաև ավելի ուշ. տե՛ս **Չոպանեան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 80:

հողվածում Չոպանյանը, վկայակոչելով գրողի «քննադատական» (ինքն է դրել չակերտների մեջ՝ թերևս իր հեզմանքը ցույց տալու համար - Վ. Ա.) գրվածքները և հաճախ նրանցից անելով մեջբերումներ, ցույց է տալիս Շահնուրի՝ երբեմն քամահրանքի ձգվող մտայնությունը՝ ամեն ինչ մեր գրականության ու մամուլի մեջ տեսնել կեղծ, անկատար ու անկենդան: Իսկ Շահնուրի ժխտողական վճիռներն ու բացասական բանաձևումները տարածվում էին այնպիսի գրողների վրա, ինչպես, օրինակ, Միամանթոն («մթնոլորտէ գուրկ»), Ռ. Չարդարյանը («միջակ գրագէտ»), Գ. Վարուժանը («քաղցր բայց գրքական»), Հ. Օշականը («կեղծ հօճա»), Բաֆֆին ու Ա. Ահարոնյանը («խեղճուկ արուեստագէտ»), Շիրվանզադեն և Լ. Շանթը ու էլի ուրիշներ³⁴⁰: Ըստ Շահնուրի՝ անգամ իր կողմից լավագույնը համարվող գրողները (Ինտրա, Գ. Չոհրասպ, Եր. Օտյան) ավելի «ամաթեօռ» (սիրողական - Վ. Ա.) են եղել, քան արժեքավոր գրագետ՝ «պարզ տարտամ առածգական **եւ այլնով** մը սահմանափակուած»³⁴¹: Չոպանյանին հատկապես զայրացրել էր Շահնուրի՝ Բաֆֆու՝ հայ ազատագրական պայքարը նյութ առած վեպերը «այդ պայքարին «վաւերաթուղթերը լրճող» որակելը, վիպասանին «անհամբոյր եւ յօգնեցուցիչ» անվանելը, ինչն ինքը, անարդարությունից բացի, համարում է տգիտություն³⁴²:

Չոպանյանը իր անհամաձայնությունն է հայտնում նաև Շահնուրին պաշտպանող Թեքեյանին, որը թեև ինքն էլ գրողին մեղադրել էր չափազանցությունների ու անարդարությունների համար, սակայն, օրինակ բերելով ֆրանսիացիներին, վճռել էր, թե պետք չէ արգելել երիտասարդ գրողների՝ համբավներին տապալել ձգտող փորձերը, մանավանդ, որ դրանցից վերջիններս ոչինչ չէին կորցնելու: «Ատով իրենց թոյլ մասերէն կը զտենք անոնց գործը եւ առողջ

³⁴⁰ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 91-92:

³⁴¹ Նույն տեղում, էջ 89:

³⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 84:

մասերուն վրայ աւելի կը հիանանք»³⁴³, - որոշել էր Թեքեյանը: Չոպանյանը մերժում է այս տեսակետը՝ կարծելով, որ մեր հուսաբեկ ժողովրդին անհրաժեշտ է հավատ ներշնչել սեփական ուժերի հանդեպ և ոչ թե պարտվողական թեզերով վիատեցնել. «Մենք դժբաղդ ժողովուրդ մըն ենք, որուն մէկ ստուար մասը ցրուած է օտար երկիրներ. պէտք չէ որ մեր նոր սերունդը, արտասահմանի մէջ մանաւանդ, տարուի ինքնարհամարհական, վիատեցուցիչ քարոզութիւններէ: Պէտք չէ անշուշտ որ մեր չունեցած մեծութիւնները վերագրենք մեզի եւ կամ մեր ունեցած արժէքները չափազանցենք. բայց մեր ունեցածը նսնմացնելը ոչ միայն սխալ է, այլ յանցանք»³⁴⁴, - իրավացիորեն եզրակացնում է քննադատը:

Հարցի առնչությամբ տեղին է Ժենյա Քալանթարյանի դիտարկումը. «Շահնուրի նպատակն, անշուշտ, ազնիվ էր, մա ուզում էր սին պատրանքներից ազատագրել իր ժողովրդին և իրական ու գործնական հողի վրա դնել նրա իդեալները, բայց հաճախ նրա ժխտման պաթոսը շատ մեծ չափեր էր ընդունում, որի պատճառով էլ բուռն բանավեճ սկսվեց նրա հողվածաշարի շուրջ»³⁴⁵:

Այսբանից հետո նկատենք, որ որքան էլ թեև Չոպանյանը դատափետում է Շահնուրի «թեթևօլիկ, անյաջող, նոյն իսկ տգեղ, խարանուելու արժանի» հրապարակագրությունն ու ազգային կյանքը քննադատող «տղայական» հողվածները, սակայն չի հանդուրժում գրողին ուղղված հայհոյախառն դիտողությունները, որոնք իրենց ժխտման մոլուցքի մեջ անտեսում էին նաև այն ամեն լավը, ինչ կար Շահնուր գրող-մտածողի մեջ³⁴⁶: Չոպանյանը իրա-

³⁴³ Նույն տեղում, էջ 89-90:

³⁴⁴ Նույն տեղում, էջ 90:

³⁴⁵ Քալանթարյան Ժ., Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 32:

³⁴⁶ Այստեղ արժի նկատել, որ Ա. Չոպանյանը այն եզակիներից էր, որ Շահնուրի հիվանդության տարիներին չմոռացավ նրան ու բարոյական ու նյութական օգնություն ցուցաբերեց՝ բարեգործական տարբեր կազմակերպություններին և անհատ գրասերներին հրապարակավ կոչ անելով նյութական միջոցներ հայթայթել և օժանդակություն բերել հիվանդին: Այդ մասին տես **Չոպանեան Ա.**, Առողջն ու

վացիորեն գտնում է, որ ցանկացած գրողի մեջ, գեղեցիկ ու արժեքավոր կողմերը նկատելուց բացի, անշուշտ, անհրաժեշտ է նաև միշտ տեսնել ու մատնանիշ անել այն ամենը, ինչ որ տկար է, կեղծ ու տգեղ: Սակայն այդ ամենը չպետք է ուղղվի ստեղծագործողին վարկաբեկելու նպատակին. իսկական քննադատությունը պետք է օգնի նրան՝ հաղթահարելու այդ թերությունները: Չհանդուրժելով ուրիշների՝ Շահնուրի դեմ «Ֆշացող կատաղութեան աղաղակներով» անարգանքներն ու հայհոյանքները՝ նա գտնում է, որ հայ վիպասանի պարագան ոչ թե պետք է գրական բանավեճի նյութ դարձնել, այլ հոգեբանական ու գրական վերլուծման աշխատանք՝ «իբր տարօրինակ ու գրեթե ախտաբանական երևույթ»³⁴⁷: Այս վերջին դիտարկման մեջ մեկ անգամ ևս ընդգծվում է Չոպանյանի քննադատական խառնվածքի էական կողմերից մեկը՝ հարցերին տալ անաչառ գնահատական, երևույթների մեջ ցույց տալ ինչպես արժեքավորն ու մնայունը, այնպես էլ անցողիկն ու մերժելին: Դեռ տարիներ առաջ՝ «Անահիտի» առաջին շրջանում, Չոպանյանը նույն սկզբունք էր գործադրել Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Վ. Թեքեյանի և ընդհանրապես նորեկ ու արդեն հայտնի շատ գրողների ստեղծագործությունները գնահատելիս, գրական կյանքում տեղ գտած տարբեր հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելիս, ինչը առանց որևէ չափազանցության հաստատում է և ինքը. «Պ. Ֆենելոնեանին ու Շահնուրին ծնելէն առաջ, ես սկսեի եմ գնահատել ու խրախուսել մեր գրականութեան մէջ յայտնուող բոլոր նոր ու իրական տաղանդները, եւ անկից ի վեր ալ կեանքիս մեծագոյն հաճոյքներէն մին համարեի եմ թէ՛ հին, անժանօթ մնացած, կամ մոռցուած, գրական գեղեցիկ գործեր, եւ թէ՛ նոր երեսան եկող, դեռ չմշակուած, չըմբռնուած կենսալից տաղանդներ մատնանիշ ընել ու լոյսի մէջ դնելը: Հիմայ, յիսուն տարուան գործունէութենէ յետոյ

վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 92-93:

³⁴⁷ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 94-95:

չէ որ այդ ուղղութիւնս պիտի փոխեմ»³⁴⁸: Սա ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում Չոպանյանը հետևողական էր մնացել իր նախընտրած քննադատության եղանակին³⁴⁹:

«Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ» հոդվածում ամենևին երկրորդական չէ նաև Չոպանյանի՝ Շահնուրի հոդվածներում հակադաշնակցական ինտրիզներ փնտրելու ռամկավար Գ. Ֆեներճյանի հավանական միտումների քննադատությունը: Թեև որքան էլ Ֆեներճյանի նման մտածումները մնում են առկախ, մեզ համար այստեղ կարևորն այն է, որ Չոպանյանը իսպառ ժխտում է գրականությունն ու գրական քննադատությունը կուսակցականությամբ օժելը և գաղափարական այլախոհների դեմ այդպէս թշնամական սրեր ճոճելը: «Տարախոհ կուսակցութեան դեմ պայքարի ամենէն տգեղ ու թոյլ ձևն է ատ»³⁵⁰, - գրում է քննադատը:

Շ. Շահնուրից ու Ջ. Որբունուց հետո սփյուռքահայ ժամանակակից կյանքը լավագույն կերպով ներկայացնող ստեղծագործություն էր Հրաչ Ջարդարյանի «Մեր կեանքը» վեպը, որի մասին ևս Չոպանյանը հանդես է գալիս գրադատական հակիրճ հոդվածով: Նա նախ ասխտասնք է հայտնում, որ մեր գրականության մեջ դեռ անհրաժեշտ ծավալով ուսումնասիրված և արտացոլված չէ սփյուռքահայ կյանքը, այն էլ այն դեպքում, երբ վերջինս հսկայա-

³⁴⁸ **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 92:

³⁴⁹ Ի դեպ, պարզվում է, Շ. Շահնուրը Ա. Չոպանյանի «Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ» հոդվածում իրեն ուղղված քննադատական մեղադրանքները անպատասխան չի թողել՝ «Ապագայ» հանդեսում տպագրելով «Ճշդում մը» տիտղոսով, Չոպանյանի որակմամբ, «մէկ լակոնական- ու լակոտական- գրուածք»: Արժան չգտնելով պատասխանել՝ Չոպանյանի ընդամենը կարճառոտ գրում է. «...վատառողջը հետզհետէ աւելի գերակշիռ դառնալու վրայ է այդ խեղճ տղուն ուղեղին ու նկարագրին մէջ ալ»: **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 84:

³⁵⁰ **Չոպանյան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 91:

կան ներշնչման դաշտ կարող էր ծառայել գրողների համար³⁵¹:

Չոպանյանը ընդհանրապես բարձր է գնահատում Հ. Չարդա-րյանի վիպասանական տաղանդը, նրա՝ կերպարներ կերտելու, հո-գեբանական բարդ կացությունները հմտորեն վերլուծելու ստեղծա-գործական կարողությունները: Բննադատը նկատում է նաև թերու-թյուններ, մասնավորապես՝ լեզվական անհարթություններ, վիպա-սանին ևս հանդիմանում է բաց տեսարանների նկարագրությամբ չափից ավելի տարվելու համար, «որոնցմէ գոռուացած են մեծա-գոյն իրապաշտները»³⁵²: Նույն դիտողությունն է անում նաև Նիկո-ղոս Սարաֆյանին վերջինիս «Իշխանուհին» վիպակի կապակցու-թյամբ: Ու ճիշտ է, թեև վեպի նյութը համարում է շատ սրտառուչ և եղերական՝ արտահայտված մեծ հուզմունքով, տեսնում բնության սքանչելի նկարագրություններ, գլխավոր հերոսների հաջող կեր-պավորում, սակայն նկատում է և թերություններ ու «արատներ», որոնք պատշաճ չեն տվյալ պատմության դրամատիկական բարձ-րությանը և հարմար չեն գալիս Սարաֆյանի մնան «դժուարահաճ» գրողին³⁵³:

Սփյուռքահայ գրականության առաջին տասնամյակը եթե ար-ձակի մեջ՝ վեպ-վիպակ, պատմվածք, ունեցավ ուշագրավ նվաճում-ներ, արձանագրեց լուրջ հաղթանակներ, ապա բանաստեղծությու-նը, հակառակ խոսքի առատության, չունեցավ նույն հաջողությու-նը³⁵⁴: Սփյուռքահայ գրականության կազմավորման շրջանի պոե-զիան աչքի էր ընկնում հիմնականում թույլ ու անգույն, աղմկոտ ու անարժեք ստեղծագործությունների քանակական գերակշռու-թյամբ: Եվ ահա 1930 թվականին Կոստան Չարյանի «Տատրագոմի հարսը» եկավ խախտելու ընդհանուր գորշությունը և ճանապարհ հարթելու իսկական բանաստեղծության համար: Դ-ա չլրիպեց

³⁵¹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 74:

³⁵² Նույն տեղում, էջ 74-75:

³⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 75:

³⁵⁴ Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննա-դատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 32:

Չոպանյանի ուշադրությունից. «Տատրագոմֆի հարսը» Կոստան Չարեանի լաւագոյն գործն է, եւ հայ ժամանակակից բանաստեղծութեան ամենէն ուժեղ ու մնայուն արտադրութիւններէն մին: Մեր յետպատերազմեան գրականութեան մէջ այն բոլորովին ինքնայատուկ տեղ մը կը գրաւէ»³⁵⁵, – շտապեց արձանագրել քննադատը:

Հավատարիմ իր քննադատական սկզբունքներին՝ Չոպանյանը մինչև բուն գործին անցնելը անհրաժեշտ է համարում քննել հեղինակի խառնվածքը, նրա սպրած միջավայրը, կրած ազդեցությունները, ուրվագծել հեղինակի անցած գրական ճանապարհը՝ պարզելու, թե այդ ամենը ինչպէս է նախապատրաստել նրա նշանավոր երկի ծնունդը:

Չնայած Չարյանի կովկասահայ լինելուն՝ Չոպանյանը գեղեցկագիտական նախասիրությունների առումով սվեդի լայն խնամություն է տեսնում նրա և արևմտահայ բանաստեղծներից Եղիա Տեմիրճիպաշյանի, Տիրան Չրաքյանի, Սիամանթոյի, Մեծարեցի, մասամբ նաև Վարուժանի և Թեքեյանի միջև: Իսկ «ռուսահայերից» գրողին մոտ է համարում միայն Ավ. Իսահակյանին, «խորհրդապաշտ» Վ. Տերյանին և մասնավորապես «թունդ արդիապաշտ» Չարեանցին³⁵⁶: Ու թեև քննադատը կոնկրետ ոչ մի բացատրություն չի տալիս՝ բացի այդ հանգամանքը այն բանով պարզաբանելուց, որ Չարյանը իր գրական ծնունդով կապված է արևմտահայ միջավայրի հետ, որ նա իրեն ուղեցույց է ունեցել լատին, մասնավորապես ֆրանսիական ժամանակակից գրականությունը և հատկապես Ռեմբոյին, դժվար չէ, սակայն, կռահել Չոպանյանի մտքի տրամաբանությունը: Հայտնի է, որ արևմտահայ գրականությունը իր գոյության գրեթե ամբողջ ընթացքում սերտորեն կապված էր ֆրանսիականին: Պատմական նոր ժամանակներում սփյուռքահայ գրականությունը՝ որպես նախորդի նորովի շարունակություն, չհրաժարվեց այդ «մտերմությունից»: Անցած տարիների կապերը թարմ էին և տեղափոխվեցին նոր օրեր: Իսկ Չարյանը այդ օրերի

³⁵⁵ **Չոպանյան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 105:

³⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

բանաստեղծն էր, որին խորթ չեղան օտար գեղարվեստի հատկանիշները: «Մտայնութեամբ, կրթութեամբ, ճաշակով՝ «Եւրոպացի» մը դարձած է ան, մերօրեայ Լատին մը»³⁵⁷, - նրա մասին գրում է Չոպանյանը: Սակայն քննադատը օտար ազդեցության հարցը չի խտացնում. նա Չարյանին ներքին ամուր ու խոր կապով կապված է տեսնում իր ցեղին ու հայրենիքին՝ «իր բնիկ Արեւելքին հետ»³⁵⁸, որ շատ կարևոր է և բնութագրական: Բնութագրական ենք ասում, որովհետև Չոպանյանի խորին համոզումն էր, թե ամեն տաղանդավոր գրող որքան էլ իր գեղարվեստական ճաշակի ու տաղանդի կազմակերպման ու զարգացման համար ուսում առնի այլազգի վարպետներից, յուրացնի օտար աղբյուրների ձեռքբերումներն ու հաջողությունները, իրեն առաջնորդ պետք է ունենա ազգային ինքնատիպության ոգին, միշտ մնա ազգային ձևի մեջ՝ հավատարիմ նրա ավանդներին: Միայն այդպես կարելի էր սպասելով սեփական ստեղծագործության ազգային և համամարդկային բովանդակությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում Չոպանյանը տարբեր հայ գրողների կապակցությամբ գրեթե միշտ մատնանշում է նրանց խնամության եզրերը օտար մշակույթների առանձնահատկությունների հետ, ընդգծում ազդեցության տարրերը: Հաճախ էլ ինքն է նույնիսկ այս կամ այն գրողին կողմնորոշում դեպի օտար օրինակելի գեղեցկությունները: Բոլոր դեպքերում, սակայն, գրականագետը ուսումնառության օտարամուտ ազդեցությունը ընդունելի է համարում և խրախուսում այնքանով, որքանով այն չէր խանգարի ազգային դիմագծի պահպանմանն ու դրսևորմանը:

Բնութագրելով Կ. Չարյանի ստեղծագործական խառնվածքը՝ Չոպանյանը նրան որակում է «փոթորկաշունչ բանաստեղծ մը, որ ամեն բան է առաջ քնարերգակ է, բայց եւ կարող է երգիծանքի մտրակը եւ դիւցազներգակի շեփորը կիրարկել»³⁵⁹:

Չոպանյանը շատ բարձր է գնահատում Չարյանի նախորդ՝

³⁵⁷ Նույն տեղում, էջ 106:

³⁵⁸ Նույն տեղում:

³⁵⁹ Նույն տեղում, էջ 105:

«Օրերի պասկը» և «Երեք երգ...» բանաստեղծական ժողովածուները, թեև նկատում է, թե այդ գործերը Գյոթեի, Բայրոնի, Մետերլինկի նույն սեռի ստեղծագործությունների յուրօրինակ կրկնություններն են: Վերջինի՝ «Երեք երգի» կապակցությամբ քննադատը հիշատակում է նույնիսկ արտասահմանյան մամուլում գրված գովեստի և հիացման խոսքերը. «Վերջին տարիներուն լոյս տեսած բանաստեղծական գրքերէն, **Երեք երգը** ամենէն արժէքաւորն է, եւ թէ ազգ մը որ այդպիսի բանաստեղծներ ունի, արժանի է իր ճակատագրին տէր դառնալու»: Կամ՝ «Հոն («Երեք երգ»-ում - Վ. Ա.) կան մասեր որ կը հասնին աստուածային գեղեցկութեան, եւ պէտք է երախտապարտ ըլլալ հեղինակին՝ մարդկութեան ըրած այդ նուէրին համար»³⁶⁰: Սակայն, այնուամենայնիվ, «Երեք երգի» համեմատությամբ Չոպանյանը ավելի ինքնատիպ և ավելի գորեղ գործ է համարում «Տատրագոմի հարսը» պոեմը, որով և ըստ էության նշանավորվեց Կ. Չարյանի մուտքը սփյուռքահայ պոեզիայի ասպարեզ: «Տատրագոմի հարսը»... խորապէս հայկական է, ոչ միայն նիւթով այլ եւ՝ յաճախ՝ ոճով, ...հոն Չարեանի քերթողական անհատականութիւնը աւելի շեշտուած ու հզօր դուրս կը ցատքէ»³⁶¹, - պարզաբանում է քննադատը:

Պատմելով Կ. Չարյանի կյանքի մասին՝ Չոպանյանը հիշատակում է նաև նրա՝ նախկինում հրատարակած այլ աշխատությունները և արժևորում դրանք: Օրինակ, քննադատը Չարյանի ստեղծագործական կյանքում հայտնություն է համարում «Անցորդը եւ իր ճամբորդը» տիտղոսով հողվածաշարը, գրական տեսակետից բարձր գնահատական է տալիս դրան՝ չընդունելով և չներելով, սակայն, հեղինակի՝ Խորհրդային Հայաստանի քաղաքական ու մտավոր գրեթե բոլոր ղեկավարների և ամբողջ հասարակարգի դեմ ուղղված կողմնակալ ու անարդար վերաբերմունքը:

Գրական-ստեղծագործական տեսակետից Չոպանյանը «Անցորդը եւ իր ճամբորդը» գործի գույակը համարում է Չարեանի

³⁶⁰ Նույն տեղում, էջ 107:

³⁶¹ Նույն տեղում, էջ 108:

«Երկիր Նաիրի» վեպը, «ուր նոյնպէս երգիծանք ու քնարերգութիւն գուգորդուած կը թաւալին՝ նոյնպէս արդիանով մրրկային նուազանութեամբ ոճի մը մէջ՝ որ սակայն որակով ու շեշտով տարբեր է Չարեանինէն եւ ուր երգիծական պլաքները հակառակ ուղղութեամբ կ'արձակուին»³⁶²: Այդ նույն՝ երգիծանքի ու քնարերգութեան հատկանիշների գուգորդման առումով Չոպանյանը ընդհանրություններ է նկատում նաև երկու հայ բանաստեղծների գործերի և Հայնեի «Ռայգելբիլդերի» («Ճանապարհորդական պատկերներ»- Վ. Ա.) միջև՝ վերջինիս համեմատությամբ, սակայն, դրանք գտնելով «նուազ նուրբ՝ հեզնութեամբ, նուազ փափուկ ու սրտայոյզ՝ քնարերգութեամբ, աւելի յորդ, աւելի ծայրայեղ, աւելի տարօրինամով,- ոճով աւելի մօտ Նիչչէին, Պլէյքին, Ռեմպօին քան Հայնէին,- բայց միշտ լի՝ խորքին մէջ՝ իրական բանաստեղծութեամբ...»³⁶³:

Կ. Չարյանի ստեղծագործության մեջ իբրև գրողին բնորոշ հատկանիշ Չոպանյանը ընդգծում է նրա մշտական մղումը դեպի բարդը, արտառոցն ու առեղծվածայինը և դրան հակառակ՝ մշտական խորշանքը ինքնաբոլիս, բնական ու հակիրճ ոճից: Այդ առիթով դիտողություններ անելով Չարյանին՝ Չոպանյանը պարզում է նաև սեփական նախասիրությունները գրական ոճի վերաբերյալ. «Ես կը սիրեմ պարզը, խորութիւն ունեցող, խտացած պարզը, Սաղմոսները, Փասքալի խորհրդածութիւնները, Հայնէի «լիտ»ը, Պոսլերի հնչեակը, Վերլէնի տաղիկը, Քուչակեան կամ Խայեամեան քառեակը, որոնք շատ ծանրաբեռն են մտածումով եւ զգացումով, բայց ոճով յստակ, հոծ, բնական,- ինչպէս եւ բոլոր ժողովրդական ընտիր երգերը, որ հիմքն են ամէն ճշմարիտ բանաստեղծութեան»³⁶⁴:

«Տատրագոմի հարսը» պոեմում, սակայն, Չոպանյանը արդեն տեսնում է Չարյանի որոշ հակումները դեպի պարզն ու բնականը, դեպի ժողովրդական երգն ու պատմվածքը՝ համարելով դա ստեղծագործության հաջողության հիմնական նախադրյալներից:

³⁶² Նույն տեղում:

³⁶³ Նույն տեղում:

³⁶⁴ Նույն տեղում, էջ 109:

«Մանրակրկիտ քննութեամբ» վերլուծելով Կ. Չարյանի «Տատրագոմի հարսը» «մեծարժէք գործը»՝ Չոպանյանը եզրակացնում է, որ ազգային հարցը չէ, որ պոեմում զբաղեցրել է Չարյանին: Նրան հետաքրքրել է մարդկային զգացմունքների ազատությունը, ազատ սիրո խնդիրը: Զննադատը իր վերլուծությունները զարգացնում է՝ Ա. Սհարոնյանի հետ բանավիճելով: Նախ ընդառաջ չի գալիս վերջինիս այն կարծիքին, թե իբր Չարյանի պոեմը շեքսպիրյան դրամա է: «Նիւթը Շէքսպիրի արժանի է արդարեւ, բայց Չարեանի այս քերթուածը Շէքսպիրեան գործ չէ: ...շէքսպիրեան միւթը կայ, բայց հեղինակը հոգեբան թատերգակ կամ վիպասան չէ. քնարերգակ, դիւցազներգակ, նկարիչ բանաստեղծ է»³⁶⁵, - ասում է Չոպանյանը և պարզաբանում իր միտքը³⁶⁶:

Վիճաբանության մեջ, սակայն, գլխավորը պոեմի հերոսուհու՝ Սանայի սիրո արդարացման կամ դատապարտման հարցն էր: Ահարոնյանը պաշտպանել էր Սանայի սերը, արդարացրել նրա «ազատ-սիրային» խոյանքը՝ թերևս չըմբռնելով, որ այդպիսով խփում է ստեղծագործության հենց գաղափարական նպատակաւացությանը, հիմքին, պոեմի հղացման բուն նպատակին: «Պատահածն ի՛նչ է: Արտաքուստ մի անմեղ սիրային արկած, որ շատ շատ կարող էր մի ժողովրդական երգի միւթ դառնալ...»³⁶⁷, - որոշել էր Ա. Սհարոնյանը՝ մեղադրելով նաև մեր ժողովրդին այն բանի համար, որ «**այսպիսի պարագաներում մեղմացուցիչ պարագաներ չի փնտռում եւ չի փնտռել**»: «**Թշուառ է այս տրամաբանութիւնը եւ անհրաւ...**»³⁶⁸, - եզրակացրել էր Ահարոնյանը:

Չոպանյանը հանդես է գալիս ահարոնյանական մեծամտորինակ վերաբերմունքի ու գնահատման դեմ՝ հասկացնելով, թե մնան մեկնաբանությամբ ինչ դեր կարող էր խաղալ Չարյանի այդ վիպերգը

³⁶⁵ Նույն տեղում, էջ 111, 116:

³⁶⁶ Այդ մասին տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 33:

³⁶⁷ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 116:

³⁶⁸ Նույն տեղում:

սփյուռքահայ գրականության մեջ և կյանքում: Քննադատը շատ ճիշտ է գնահատում անցյալ ու ներկա իրադրությունները՝ հիշեցնելով, որ Սանայի սիրո արդարացման մեջ Սփյուռքի ծանր պայմաններում հայի հոգեկան նահանջի ու ձուլման մեծ վտանգը կա: Չոպանյանը նկատողություն է անում և Կ. Չարյանին ոչ միայն առևանգիչ քրդի կերպարը ինչ-որ տեղ անորոշ թողնելու համար, այլև և առավել, որ հեղինակը Սանանին կամովին է հանձնել քրդին՝ առանց դիմադրության³⁶⁹:

Ինչ վերաբերում է Կ. Չարյանի ստեղծագործական ուղղությանը, ապա նա բնութագրվում է իբրև խորհրդապաշտ: Դիշտ է, պոեմի թեման վերցված էր իրական կյանքից, և ամբողջ գործը բաբախում է պարզ ու ժողովրդական տարրերով, բնության կենդանի պատկերներով, այնուամենայնիվ Չոպանյանը պնդում է, որ Չարյանը խորհրդապաշտ է, սակայն դեպի իրականը ձգտող. «Չարեան փարսախսներով հեռու է իրապաշտ գրականութենէն, իր գրական մեթոտը ներհակն իսկ է իրապաշտ մեթոտին, տեսիլներու շարքի մը մէջ խտացած պատկերացումն ու մեկնաբանումն է կեանքին»³⁷⁰:

Ուշագրավ են նաև գրողի լեզվի առնչությամբ արված դիտարկումները, որոնք ինքնին ստանում են ընդհանրական նշանակություն և տարածվում ժամանակի ողջ հայ գրականության վրա: Համարելով, որ «Պէտք է մեր ժամանակի գրողը մեր ժամանակի հայերէնով գրէ, եւ պէտք է ազգային լեզուին տարրերէն իր անձնական լեզուն քաղէ ու դարբնէ...», Ա. Չոպանյանը Չարյանի լեզուն մասնավորապէս «Տատրագոմի հարսի» մեջ, «իր քանի մը բիծերով» հանդերձ», գնահատում է համեղ և կենդանի³⁷¹:

Սփյուռքահայ գրական նոր սերնդի ինքնատիպ դեմքերից էր նաև «արդիաշունչ բանաստեղծ ու վիպող» Նիկողոս Սարաֆյանը, որի «14» խորագրով բանաստեղծական ժողովածուն ևս բարձր է

³⁶⁹ Տե՛ս նաև **Քալանթարյան Ժ.**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 33-34:

³⁷⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., քիւ 4, էջ 111:

³⁷¹ Նույն տեղում, էջ 121-122:

զնահատում Չոպանյանը: Քննադատին հատկապես ոգևորում է այն, որ գրողը իր ներշնչման համար նյութ էր առել համաշխարհային պատերազմի տարիներին հայ ազգային ողբի ու ողբերգության, ցավի ու արյան և, իհարկե, ընդվզման ու զայրույթի տեսարաններից և լայն շնչով ու ուժեղ տողերով կարողացել էր բանաստեղծացնել այդ թեմաները³⁷²:

Գրականության ականավոր գիտակը նորերից անտարբեր չէր նաև Արսեն Երկաթի ստեղծագործական հաջողությունների հանդեպ: Մասնավորապես կարևորելով գրողի ֆրանսերեն բանաստեղծությունների վերջին՝ «Les yeux limpides» հատորը՝ ավելի շատ բավարարվում է նրա մասին ֆրանսիացի և իտալացի տարբեր գրականագետների ջերմ կարծիքներից թարգմանաբար հակիրճ քաղվածքներ մեջբերելով, որով հաստատվում է ժողովածուի գեղարվեստական շահեկանությունը³⁷³:

Միշտ չէ, սակայն, որ Չոպանյանը հնարավորություն էր ունենում իր հողվածներում և հատկապես քրոնիկներում հանգամանորեն անդրադառնալու և բնութագրելու բոլոր նորընծա գործերը: Քննադատը ինքն էլ խորապես ավստում էր դրա համար: Սակայն միշտ խոստանում էր առաջիկայում անպայման հանգամանալից քննություններով անդրադառնալ այդ գործերին ու դրանց հեղինակներին: Ու եթե հանգամանքներն աննպաստ էին, իսկ դրանք շատ էին ու բազմազան, և նա չէր կարողանում կատարել իր խոստումները, ապա շատ հակիրճ՝ մեկ-երկու տողով, անպայման բնութագրում և զնահատում էր նոր հրատարակված ստեղծագործություններից շատերը ու նորեկ գրողներին: Այսպես, քննադատը փոքրածավալ քննությամբ ներկայացնում է Մուշեղ Իշխանին և նրա «Տուներու երգը»³⁷⁴, այնուհետև նաև «Կրակ» ժողովածուն՝

³⁷² **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 67-68:

³⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 68-69:

³⁷⁴ «Անահիտում» Մ. Իշխանի այս ժողովածուի մասին տե՛ս նաև **Վահէ-Վահեան**, Քնար արքայական քերթողի. «Տուներու երգը», հեղինակ Մ. Իշխան, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 21-33:

վերջինիս կապակցությամբ հատկապես ոգևորված, որ դեռ նախորդ ժողովածուի առիթով չէր սխալվել՝ սկսնակ գրողի մեջ «յուսատու ուժ մը» գուշակելով. «...ներկա հատորը կը հաստատել զիս նոյն համոզման մեջ թէ այս երիտասարդը մեր նոր բանաստեղծութիւնը անձնաշեշտ, նուրբ տաղերով ճոխացնելու կոչուած լաւագոյն ուժերէն մեկն է»³⁷⁵, - գրում է Չոպանյանը:

Սա ևս մի լրացուցիչ անգամ վկայում է, որ գրականագիտական հարուստ փորձն ու մասնագիտական հոտառությունը Չոպանյանին հնարավորություն էին տալիս նորեկ գրողների մեջ ճշմարիտ ստեղծագործողին տարբերակելու սովորական գրչակից և չսխալվելու: Եվ իզուր էին ոմանց ջանքերը՝ քննադատին մեղադրելու, թե նա, իբր արագ ոգևորվելով և անտեղի խրախուսելով, հաճախ վնասում է սկսնակներին, ինչպես, օրինակ, Մխիթարյան միաբանության անդամ, մեզ արդեն ծանոթ Հայր Եղիա Փեչիկյանն էր համոզված: Նա «Բազմավէպի» էջերում նախ մի «անձանօթ «գրագետ»ի» բերանով դիտողություններ էր ուղղել Չոպանյանին, թե իբր «նա շուտ կ'ոգեւորուի եւ շատ ածականներ կը շռայլէ փոքրիկ գրչակներու մասին»³⁷⁶, ապա վիրավորական հեզմաշարժ եղանակով անձնամբ ամբաստանել Չոպանյանին՝ «արուեստէ զուրկ մէկ երկու գրչակներ տաղանդաւոր հռչակած ըլլալու», «ընդհանրապէս գրչակներու երես» տալու, նրանց տաղանդավոր հռչակելու և «դիր գալու» համար³⁷⁷:

Այս մեղադրանքներին անվանի գրականագետը տալիս է ուշագրավ պատասխաններ, որ առավել հետաքրքիր են նաև իբրև ինքնաբնութագրական. «Գրական բաւական երկար գործունէութեանս մեջ,- գրում է նա,- գաղափարի անհամաձայնութիւններ ունեցած եմ բազմաթիւ հայրենակիցներու հետ, որոնց ոմանք հանրածանօթ

³⁷⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 111:

³⁷⁶ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 86:

³⁷⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 114:

մեծատաղանդ անձնատրուքիներ եղած են. երբեք չեմ խորհած **մուր քսել** անոնց... Հիմայ չե որ, ես այն ալ Հ. Փէչիկեանի յարձակումէն ծագած բանավէճի մը մէջ, պիտի սկսէի պայքարի այդպիսի խոտելի եւ տկար միջոց մը գործածել...»³⁷⁸:

Իսկ ինչ վերաբերում է սկսնակներին ավելորդ տեղը մեծարելուն, Չոպանյանը ինքն էլ գտնում է, որ երիտասարդ գրողների մէջ, անշուշտ, կարող են լինել ձիրքով, արժեքով նվազ, համեստ հեղինակներ, սակայն նրանք բոլորն էլ արժանի են գնահատման ու խրախույսի, և վերջապէս, չէ՞ որ իբրև փաստ ինքը «սկսնակներու մէջ իրական տաղանդը իրական գրչակէն զանազանել գիտնալը շատոնց ապացուցած» է³⁷⁹: Քննադատին «արդարացնող» փաստերը շատ էին. «Այո՛, ես կը սիրեմ նոր յայտնուող, յուսատու սկսնակներ՝ որոնց մէջ կը նկատեմ ինքնատիպ տաղանդ եւ անկեղծ ներշնչում՝ լոյսի մէջ դնել, խրախուսել, - խոստովանում էր Չոպանյանը.- Բայց ոչ մէկ «գրչակի» անականներ չեմ շռայլած. կը կարծեմ նոր յայտնուող ուժերու գնահատմանցս մէջ ցարդ սխալած չըլլալ, սկսեալ Ռուբէն Զարդարեանէն, Թէքէեանէն, Վահան Մանուէլեանէն, Ադ. Շաքլեանէն, Սիամանթօէն, Վարուժանէն, Օր. Զապէլ Յովհաննեսեանէն (յետոյ Տիկին Զ. Եսայեան), Աւետիք Իսահակեանէն, եւն, մինչեւ այս վերջերս ի յայտ եկած նորերը (Ն. Պէշիկբաշլեան, Շահնուր, Ռրբունի, Զարոյեան, Սարաֆեան, Չարենց, Նորենց, Մահարի, Ալազան, եւն): ...Իրական բանաստեղծութիւնն ըմբռնող մը ասոնք «գրչակ» կոչել չի կրնար մտքէն անցընել»³⁸⁰:

Բայց հանկարծ չստեղծվի այն տպավորությունը, թե Չոպանյանը, ոգևորելու և քաջալերելու ցանկությունից մղված, անխտիր բոլոր

³⁷⁸ Նույն տեղում: Տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 87:

³⁷⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար- յունիս, թիւ 5-6, էջ 115:

³⁸⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 86-87: Գրեթե նույն միտքը Ա. Չոպանյանը արտահայտել է նաև ավելի ուշ. տե՛ս **Չոպանեան Ա.**, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մէջ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 91, 92:

սկսնակներին մեծարում էր: Նա չէր հանդուրժում մեծամտությունը, «ժամանակից շուտ «վարպետության» հովեր առնելը»³⁸¹: Ըստ անհրաժեշտության՝ կարող էր նաև բավականաչափ խիստ արտահայտվել, ինչպես, օրինակ, Մինաս Թեոլեոյանի նկատմամբ 1937 թ. Սոֆիայում լույս տեսած նրա մի ժողովածուի կապակցությամբ. «Այդ երիտասարդ գրողը,- գրում է Չոպանյանը,- ունի ձիրքեր, ինչպես եւ գրական որոշ հմտութիւն... բայց ան ընդհանրապէս կը ձգտի դէպի «հանելուկային գրականութիւնը», շվիթելով մանուածապատն ու խրթինը խորութեան հետ, եւ այս «Նախերգանք»ին կտորները մեծ մասամբ, ինչպէս եւ **Անահիտի** մէջ երեցած վիպակին շատ հատուածները, արուեստակեալ, բռնագրօսիկ էջեր են, ուղեղի ճանկըտուր...»³⁸²:

Իսկ ահա Ահարոն Տատուրյանի նորատիպ «Մագաղաթներ» ժողովածուում եթե տեսնում է անվիճելի արժանիքներ ունեցող գեղեցիկ էջեր, միաժամանակ ցույց է տալիս ակնառու թերություններ, որոնք նրա բանաստեղծությունների մի մասը, ինչպես ինքն է բնորոշում, տաղը դարձրել են «զարդարուն լապտեր մը որուն ճրագը չեն վառած»³⁸³:

Չոպանյանը այսպերպ ևս մեկ անգամ առաջադրում է ճշմարիտ ու մնայուն գրականության ստեղծման բանաձևը. **այն պետք է կազմված լինի սրտի ու մտքի բնական, ներդաշնակ խառնուրդից**: Սա էր դեպի բարձր արվեստի գրականություն տանող սահմանումը, որը Չոպանյանը հանձնարարում էր բոլոր սկսնակներին:

Չոպանյանը ջերմ ոգևորությամբ է գրում նորահայտ Վիլյամ Սարոյանի մասին՝ 1935 թ. տարեմտյան համարում ազդարարելով մի նոր հայ գրողի ծնունդը. «...ունեցանք յայտնութիւն անգլիերէն լեզուով գրող հայ տաղանդաւոր վիպողի մը, Ուիլերմ Սարօե-

³⁸¹ **Գալլարյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 410-411:

³⁸² **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 105:

³⁸³ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 113:

ան»³⁸⁴: Իսկ ավելի ուշ արդեն՝ 1947 թ., փաստում է. «...Իր վեպերուն ու վիպակներուն մէջ այնպիսի համեղ, ինքնեկ, վառվռուն գրական անճնատրութիւն մը ի յայտ բերած է, որ այսօր ան կը համարուի Ամերիկայի լատագոյն գրագէտներէն մին... Ինչ որ նաեւ գովելի է իր մէջ, այն է որ նա չի ծածկեր իր հայ ծագումը, ընդհակառակը առիթ կը փնտռէ զայն գորովով ու հպարտութեամբ աղաղակելու համար...»³⁸⁵:

Նորեկներից Չոպանյանի տեսադաշտում էին նաև Սեման՝ Գեղամ Աթմաճյանն ու Միսաք Մանուշյանը, որոնք 1930-ականներից պարբերաբար աշխատակցում էին «Անահիտին»՝ նրա էջերում տպագրելով իրենց գործերից³⁸⁶: Այս հեղինակների ստեղծագործություններում Չոպանյանը առավելապես ընդգծում և փառաբանում է պայքարի ոգին, իսկ հետագայում՝ բռնակալության, մասնավորապես ֆաշիզմի դեմ մաքառման տրամադրությունները: «Երեք հերոսական նահատակներ» վերնագրով հողվածում՝ գրված Ֆրանսիայի ազատագրումից հետո, Չոպանյանը նրանց հետ արժևորում է և Երկրորդ համաշխարհայինին գերված ու գոհված

³⁸⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 102:

³⁸⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 8, էջ 64:

³⁸⁶ Օրինակ, տե՛ս **Սեմա Ա.**, Վերածնունդի երգեր (բանաստեղծ.), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 76-77, **Սեմա Ա.**, Անճրետոտ օր, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 81, **Մանուշեան Մ.**, Բնութեան հետ, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 156, **Մանուշեան Մ.**, Վերացում, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 91, **Սեմա Ա.**, Տրամութիւն, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 102, **Մանուշեան Մ.**, Հողի կարօտ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 70-71, **Մանուշեան Մ.**, Չանձրոյթ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 141, **Սեմա Ա.**, Սիրոյ եւ տարակոյսի երգ, Իրիկնամուտ աշնանային, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 85-86, **Մանուշեան Մ.**, Աղօթք, «Անահիտ», Փարիզ, 1933, յոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 38, **Մանուշեան Մ.**, Վահան Թէքէեանին, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 80, **Սեմա Ա.**, Ժառանգորդ եմ..., «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 36, **Սեմա Ա.** (տասնապետ Գեղամ Աթմաճեան), Կռուի երթ, «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թիւ 1-3, էջ 42:

Լուիզա Ասլանյանի (Լաս) կյանքն ու գործունեությունը՝ արտատպելով նրանց որոշ բանաստեղծություններ³⁸⁷:

Հրապարակվող սփյուռքահայ հեղինակների կողքին զուգահեռաբար և գրեթե «Անահիտի» յուրաքանչյուր համարում, ինչպես նկատեցինք, տպագրվում էին նաև խորհրդահայ գրողների գործերից: Հանդեսի հյուրընկալ էջերում տարբեր ժամանակներում հանդիպում ենք Ավետիք Իսահակյանի, Շիրվանզատեի, Տղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Վահան Միրաքյանի, Գուրգեն Մահարու, Մկրտիչ Արմենի, Վաղարշակ Նորենցի, Ալազանի, Գեղամ Սարյանի, Հովհաննես Շիրազի, Սարմենի, Նաիրի Չարյանի, Խաչիկ Դաշտենցի և ուրիշների ստեղծագործություններին: Հաճախ կարել է տեսնել նաև գնահատանքի խոսքեր մեկի կամ մյուսի մասին՝ գրված այս կամ այն առիթով: Այդ առումով հետաքրքիր է, օրինակ, Արամ Երեմյանի փոքրածավալ հոդվածը՝ մվիրված Վահան Միրաքյանին նրա գրական գործունեության 40-ամյակի առիթով, որտեղ հեղինակը, նկարագրելով գրողի գրական գործունեության ամբողջական պատկերը, պարզելով միջավայրն ու ազդեցությունները, հակիրճ ներկայացնելով կյանքը, գնահատում է նրա տեղն ու դերը հայ գրականության մեջ: Հոդվածում ուշագրավ է Վ. Միրաքյանի «Լավվարի որսը» պոեմի և Հ. Թումանյանի «Անուշի» փոխհարաբերության հարցի կապակցությամբ Ա. Երեմյանի փաստարկը: Նա պատմում է, թե ինչպես 1898 թ. Հ. Թումանյանը՝ Շուրվաղում եղած ժամանակ, երբ իմանում է Միրաքյանի պոեմի առաջին տարբերակի մասին, գալիս է նրա մոտ և առաջաբանը կարդալուց հետո ոգևորված բացականչում. «Եթե կաթսայի խուփը այսքան գեղեցիկ է, ապա մեջի կերակուրն ինչքան համեղ կը լինի»³⁸⁸: Սա այն ժամանակ, երբ, ինչպես վկայում է Ա. Երեմյանը, դեռ գրված չէր «Անու-

³⁸⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Երեք հայ հերոսական ցանատակներ, «Անահիտ», Փարիզ, 1946, յոնուար-յունիս, թիւ 1, էջ 1-18: Չոպանյանի այդ հոդվածի մասին առավել մանրամասն տե՛ս **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 447, 469-470:

³⁸⁸ **Երեմեան Ա.**, Բանաստեղծ Վահան Միրաքեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 68:

շի» մշակված երկրորդ տարբերակը: Այստեղից էլ գրականագետը եզրակացնում է, որ սխալ է մեր գրական աշխարհում և մանավանդ Լեոյի «Ռուսահայ գրականությունը» աշխատության մեջ իշխող այն կարծիքը, թե իբր իր նշանավոր պոետը գրելիս Սիրաքյանը ինչ-որ չափով գտնվել է Թումանյանի ազդեցության տակ³⁸⁹:

Ուշագրավ է նաև Ակսել Բակունցի և մանավանդ նրա «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մասին ֆրանսահայ արձակագիր և գրադատ Պետրոս Չարոյանի սեղմ վերլուծական փորձը, որը, սակայն, պետք է ասել, անհրաժեշտ ուշադրության չի արժանացել գրողի ստեղծագործությունը ուսումնասիրողների կողմից: Ծավալով փոքր, անտեսված այս հոդվածում քննադատը չափազանց ճիշտ ու լիակատար բազմաթիվ բնութագրական գնահատականներ է տալիս Բակունցի՝ գյուղական կյանքը վերարտադրող պատմվածքներին, որոնք իրենց նշանակությամբ խիստ առանցքային կարող են լինել հեղինակի ստեղծագործությունը ճիշտ ընկալելու, առանձին հատկանիշներ մեկնելու կամ գնահատելու համար: Գրողի պատմվածքները գնահատելով իբրև մարդկային ապրումների և բնության կենդանի նկարագրությունների ներդաշնակ մի գուգերգ, որտեղ յուրաքանչյուրը, իր ինքնությունը պահելով, լրացնում և ամբողջացնում է մյուսին՝ քննադատը Բակունցի ողջ գործը տեսնում է պարզ, անբռնագրոս, անպաճույճ և հռետորաբանությունից ու քարոզից զերծ: Առավել մանրամասնորեն վերլուծելով ժողովածուի պատմվածքներից մի քանիսը՝ Չարոյանը յուրաքանչյուրի կապակցությամբ բացահայտում է իսկական արվեստագետին, ցույց տալիս նրա ռեալիզմի առանձնահատկությունները, որ հանգում են տվյալ միջավայրի ու մարդկանց հոգեբանության հարազատ արտահայտությանը: «Այս իրապաշտութիւնը սակայն չոր, առարկայական չէ. գիտական իրապաշտութիւն մը չէ, ինչպէս մտածել եւ ըսել կուտայ ռմանց այս սահմանումը...- գրում է Չարոյանը և բացատրում:- Ամէն գրիչ շարժել գիտցողի տուած չէ անշուշտ ըլլալ իրապաշտ գրող մը այն լայն, ճշմարիտ ու խորունկ ըմբռնումով եւ

³⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

հասկացողութեամբ, որ մեզի իրապաշտ կոչել կուտան Պալգաքն ու Ջօլան, Ֆլօպեռն ու Մթանտալը: Իրապաշտ գրողը կեանքին մեջ մնալով հանդերձ, զայն իր բովանդակ իրականութեանը մեջ տեսնելով ու զգալով հանդերձ, գիտէ եւ կրնայ սաւառնիլ այդ կանքէն վեր ու նշմարել տալ, թելադրել ուրիշ, լաւագոյն կեանք մը»³⁹⁰: Այդպիսին է Բակունցը:

Քննադատը ընդգծում է նաև Ա. Բակունցի արձակի «առատասփիւռ» քնարականությունը, հատկանիշ, որին ուսումնասիրողները հետագայում պետք է ավելի հանգամանորեն անդրադառնային: Գեղարվեստական խոսքի կազմակերպման գործում էական տեղ հատկացնելով գրողի խոսքի ոճական այս առանձնահատկությանը՝ Ջարոյանը Բակունցի ստեղծագործությունը դիտարկում է իբրև արձակի և չափածոյի պատկերավորման սկզբունքների մերձեցման յուրահատուկ մի արտահայտություն. «...Բակունց անժխտելի վարպետ մըն է, անուրանալի արուեստագետ մը,- որքան նկարչի վրձին, նոյնքան եւ աւելի ներքին յորդահոսան քնարերգութիւն մը որ կը ծաւալի ամեն ինչի վրայ, անշունչ թէ շնչաւոր, եւ զանոնք կը պարուրէ քաղցր յուզականութեամբ մը: Իր այս առատ ու ինքնաբոլի քնարականութիւնը թաթաւուն է բարութեամբ, խոր կարեկցութեամբ: Երգ մըն է Բակունցի քնարերգականութիւնը, որուն նուագին տակ անկարելի է անզգայ մնալ, չթաթխուիլ անով»³⁹¹:

Ջարոյանը, որ տեսնում և ըմբռնում է Բակունցի արտասովոր գեղարվեստի ամենաբարձր արժեքը, գրողի ինչ-ինչ թերությունների վերաբերյալ խոսելիս մտքով ամենևին չի անցկացնում մտնացնել նրա մեծությունը և փոքրացնել գեղեցիկ գործերի արժեքը: Բակունցի պատմվածքների օրինակով Ջարոյանը նաև թոթափում է արտասահմանի հայության մեծ մասի շրջանում իշխող այն թյուր կարծիքը, թե իբր Խորհրդային Հայաստանի մեջ ստեղծվող գրականությունը, ինչպես և մշակույթը առհասարակ, գուրկ է ազգային

³⁹⁰ **Ջարոյան Ա.**, Ակսել Բակունց եւ իր Սեւ ցելերի սերմնացանը, «Անահիտ», Փափիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 102-103:

³⁹¹ Նույն տեղում, էջ 104:

բնորոշ դիմագծից և կոչված է սոսկ ժողովուրդներին առաջնորդելու ապագայնացման: Չմերժելով այդ տհաճ երևույթի դրսևորումներն ընդհանրապես՝ քննադատը, սակայն, Բակունցի գրականությունը բնորոշում է ազգային, բայց ոչ ազգայնամոլական. «Իր բոլոր պատմուածքներուն մէջ ալ ազգային մասնայատուկ ու սեփական շեշտը կայ, մարդոց ապրելակերպէն, արտայայտութեան եղանակէն, հոգեկան աշխարհէն մինչեւ բնութիւնն իսկ, շրջապատը»³⁹², - գրում է Ջարոյանը և իբրև օրինակ բերելով «Ճիրանի փողը»՝ Սասնա ջարդերից փրկված Հազրոյի կերպարով ընդգծում այն գաղափարը, թե գրողը մի կողմից ամրապնդում է հողի և մարդու հազարամյա կապը, որն արտահայտվում է հերոսի կարոտով ու սիրով դէպի խոշտանգված հայրենիքը, մյուս կողմից՝ նույն հերոսի՝ հայրենի քարոտ ու լեռնոտ Սասունի, Մարութա բարձր սարի տեսիլների միջոցով խորհրդանշում հույսն ու հավատը գալիքի նկատմամբ: Գրականագետ Սերգեյ Աթաբեկյանը, ասես ընդհանրացնելով և ամփոփելով Ջարոյանի միտքը, գրում է, թե Հազրոն «եզրափակում է հայապահպանութեան ենթահամակարգը՝ նրան հաղորդելով հայրենապահպանութեան բովանդակութիւն: Շարքային ու «աննշան» կերպարը խտացում է ազգային կեցութեան ուղիների հաստատման փիլիսոփայութեամբ»³⁹³:

Ի՞նչ իմանար Ջարոյանը, որ արյունոտ այդ ժամանակներուն թեև միայն պատրանքի մեջ կորուսյալ երկրի և նրա զավակների միասնության գաղափարը հնչեցրած մեծ գրողը այդ նույն պատմվածքի պատճառով պետք է հալածվեր և շուտով ձերբակալվեր ու գնդակահարվեր³⁹⁴:

Ինքը՝ Ա. Չոպանյանը, հավասար ուշադրությամբ հետևում էր ինչպես դասականներին, այնպես էլ խորհրդահայ երիտասարդ

³⁹² Նույն տեղում, էջ 106:

³⁹³ **Աթաբեկյան Ա.**, Հայապահպանութեան նուիրեալն ու նահատակը, «Բագին», Լիբանան, 1999, թիւ 4, էջ 66:

³⁹⁴ Գրական հառակորդների՝ Ա. Բակունցի դեմ «Ճիրանի փողի» առիթով քննադատական ելույթների մասին տես **Աթաբեկյան Ա.**, Ակսել Բակունց, պատմվածքի վիպական աշխարհը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1996, էջ 283-289:

ստեղծագործողներին ու արվեստագետներին, ոգևորվում էր՝ ամեն մի նորահայտ խոստումնալից գրողի ասպարեզ գալով, ձեռնամուխ լինում՝ հանդես գալու գրախոսություններով, ձգտելով առավելապես յուրաքանչյուր նորեկի մեջ ընդգծելու դրականն ու գեղեցիկը՝ չէր մոռանում, իհարկե, ցույց տալ նաև պակասներն ու վրիպումները:

Միանշանակ չէր խմբագրի գնահատականը նաև հայրենիքում տպագրված գեղարվեստական նոր գործերի վերաբերյալ: Օրինակ, գնահատելով ժամանակի խորհրդահայ քնարերգությունը՝ նա գրում է. «Բանաստեղծութեան բաժինը թոյլ է, ու գէթ առ այժմ՝ շատ սահմանափակ տեղ կը բռնէ հոն. մերթ բռնազբօսիկ է եւ միօրինակ, բայց եւ կան հոն Չարենցի եւ Նորենցի էջերէն ոմանք որ գեղեցիկ են, Գուրգէն Մահարիի մէկ քանի տաղերը որ սիրուն են»³⁹⁵:

Մենիմաստ չէր Չոպանյանի վերաբերմունքը նաև արձակի ու գրաքննադատության նկատմամբ. «Միրուն պատմուածքներու քով գոր ունին հոն Բակունց, Դեմիրջեան, Սկրտիչ Արմէն, Նայիրի Չարեան, Արագի, քննադատական, բանակոռուական, ուսումնասիրական յօդուածները բաւական լայն տեղ կը բռնեն հոն. ու բնականաբար կուսակցական մոլեռանդութիւնը՝ գրական մարզին մէջ փռուած՝ յաճախ կը հասնի այդտեղ տարօրինակ չափազանցութեանց»³⁹⁶:

Մշտապես ուշիուշով հետևելով խորհրդահայ գրական նոր սերնդի գաղափարական ու գեղարվեստական զարգացմանը, գրական աճին՝ Չոպանյանը, ցավոք, միշտ չէ, որ կարողացավ առանձին ուսումնասիրություններով հանդես գալ: Իրեն հուզող կամ հետաքրքրող հարցերի շուրջ նա ավելի հաճախ արտահայտվում էր քրոնիկներում կամ առանձին փոքրիկ ելույթների ու հակիրճ դասախոսությունների մեջ, տպագրում հաղորդումներ՝ գրողների հոբելյանների, նորատիպ գրքերի, գրական միջոցառումների մասին:

³⁹⁵ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 107:

³⁹⁶ Նույն տեղում, էջ 109:

Եղիշե Չարենցին, որին առանձին ուսումնասիրությամբ անդրադառնալու առիթը քննադատը ունեցել էր դեռ 1923 թ. «Ապագայ» թերթում³⁹⁷, և որը, ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի հավաստմամբ, բանաստեղծի մասին գրված առաջին և լավագույն հետազոտություններից մեկն է³⁹⁸, Չոպանյանը հետագայում էլ մշատապես պահեց իր տեսադաշտում՝ տարբեր առիթներով անդրադառնալով և բնութագրելով նրա նորատիպները: Այսպես, օրինակ, Չոպանյանը ոգևորությամբ է խոսում նոր լույս տեսած «Էպիկական լուսաբաց» ժողովածուի մասին, բարձր է գնահատում նաև 1934 թ. հրատարակված «Գիրք ճանապարհին»՝ վերջինիս կապակցությամբ գրելով. «Գրական նոր արտադրութեանց մէջ որ եկան Երեսնէն, պէտք է յիշատակել Չարենցի **Գիրք ճանապարհի** շատ կարեւոր քերթողական հաւաքածուն, ուր կան առաջնակարգ գեղեցկութեամբ, ներշնչւմով ու ձեւով շքեղ էջեր ու վիճելի, նոյն իսկ տգեղ էջեր. ատոնց վրայ մանրամասնօրէն պիտի խօսին ուրիշ տեղ»³⁹⁹: Հետագայում, իհարկէ, խոսելու առիթ ունեցավ, սակայն ոչ մանրամասնօրէն: Նկատի ունենալով «Գիրք ճանապարհի» «տգեղ էջերը»՝ քննադատը բացատրում է. «Երբեք հայ ժողովուրդի անցեալ ամբողջ պատմութեան դէմ այնքան հայիոյանք ու անարգանք չէ ուղղուած որքան Չարենցի **Գիրք ճանապարհին** «թխուած», անյաջող քերթուածներէն ոմանց մէջ. իշխանագուն Սիէրն ու Դաւիթը... այդ գրքի մէկ քերթուածին մէջ՝ հայ բռնակալ, արիւնարբու, կեղեքող ու շահագործող իշխաններուն հակադրուող «ժողովրդական հերոսներ» են դարձած...»⁴⁰⁰:

Ուշագրավ է Չարենցի «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» քերթվածի կապակցությամբ Չոպանյանի բանավեճը

³⁹⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Եղիշե Չարենց, «Ապագայ», Բարիզ, 1924, մարտ, թիւ 16, էջ 1, **Չոպանեան Ա.**, Եղիշե Չարենց, «Ապագայ», Բարիզ, 1924, մարտ, թիւ 17, էջ 1-2: **Ջրբաշյան Էդ.**, Ա. Չոպանյանի հողվածը Եղ. Չարենցի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1977, № 3, էջ 135:

³⁹⁸ Տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, Ա. Չոպանյանի հողվածը Եղ. Չարենցի մասին, էջ 136-141:

³⁹⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 80:

⁴⁰⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 120:

Մինոն Վրացյանի հետ: Քննադատը չի համաձայնում վերջինիս՝ Չարենցի այդ պոեմին տված գնահատականներին: Ս. Վրացյանը «ապապրած» գործ էր հռչակել այդ պոեմը, այն համարել հեղինակին անարժան մի գրվածք՝ պատճառաբանելով, թե նրանում անարդար է Չարենցի վերաբերմունքը մեր հին կրոնական, միստիկական երգիչների նկատմամբ, տեղին չեն նրանց դեմ ուղղված կրքոտությամբ ու ծայրահեղությամբ լի խոսքերը: Չոպանյանն ինքն էլ, որ ինչպես Չարենցի, այնպես էլ Վ. Նորենցի ու Գ. Մահարու դեպքում նկատում է, թե նրանք հաճախ իրենց տաղանդը գոհել են համայնավարական քարոզին, ինչը համարել են քաղաքացիական պարտականություն⁴⁰¹, ըստ էության, չի ժխտում Վրացյանի այդ մեղադրանքը, սակայն կարծում է, որ նա չի ըմբռնել ամենակարևորը: Այն, որ հեղինակը, այդպես մտածելով, ձգտել է հետևողական լինել իր «բազմաշառաչ օրերի» տրամաբանությանը և «կը մտածէ ինչպես յեղափոխական բանաստեղծ մը պէտք է մտածէ»⁴⁰²: Մի փոքր ուշ Չոպանյանը Չարենցին կրնութագրի որպես «դիւցազնական շունչով ուժեղ բանաստեղծ, Խորհրդային Հայաստանի այժմեան ազգային կեանքի ամենէն հզօր երգիչը...»⁴⁰³, իսկ բոլոր երեքի կապակցությամբ կգրի. «...անոնք անվիճելի արժանիքն ունէին իսկական տաղանդով օժտուած ըլլալու. անոնք իրապէս ճոխացուցին մեր գրականութիւնը՝ գործերով, ուր ինչ որ ինքնաբոլիս է եւ կենդանի, ո եւ է հայ կամ օտար գրասէրի համար գնահատելի ու սիրելի է. անոնց ընտիր գործերը ոչ միայն Նոր Հայաստանի գրականութեան լաւագոյն էջերէն եղան, այլ եւ հայ յեղափոխական համայնավարութեան ալ ամենէն գեղեցիկ գրական

⁴⁰¹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰² **Չոպանեան Ա.**, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 16-17:

⁴⁰³ **Չոպանեան Ա.**, Հայ մշակոյթի փառատօնը, «Անահիտ», Փարիզ, 1936, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 16: Նույն միտքը Ա. Չոպանյանը արտահայտել է նաև ավելի ուշ՝ 1946 թ. տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1946, յունուար-յունիս, թիւ 1, էջ 64:

արտայայտությունները հանդիսացան»⁴⁰⁴:

Խորհրդահայ գրական նոր սերնդի դեմքերից Չոպանյանը բարձր է գնահատում նաև Գուրգեն Մահարուն, Աբովին, Ալազանին, Ազատ Վշտունուն և մանավանդ Վաղարշակ Նորենցին՝ նրան համարելով «ամենէն նուրբ ու զգայուն քնարերգակը Խորհրդային Հայաստանի»⁴⁰⁵: Այս գրողները իրենց որոնումների ճանապարհին ունեցան նոր նվաճումներ, և Չոպանյանը տարբեր առիթներով խոսեց դրանց մասին:

Այսպես, վերաստեղծ «Անահիտի» հենց առաջին համարում Չոպանյանը տպագրել է Նորենցի բանաստեղծություններից, բարձր գնահատել դրանք: Ոգևորված գրողի ստեղծագործական ինքնատիպությամբ ու մտածողության դասականությամբ՝ ենթադրել է, թե «անհնար չէ որ օր մը Թումանյանի մը բարձրութեան հասնի, անկից շատ տարբեր ըլլով հանդերձ խառնուածքով ու ոճով»⁴⁰⁶: Չափազանցության ակնհայտ բաժին կա, իհարկե, այս գնահատականում. դժվար չէ գուշակել, որ քննադատը այդ չափազանցված ու համարձակ կարծիքին հանգել է ոգևորությունից մղված՝ առանց Նորենցի առաջին գործերը մանրակրկիտ ու մասնագիտական անհրաժեշտ քննության ենթարկելու, ուրեմն և, կարծում ենք, պետք չէ վճռական նշանակություն տալ դրան:

Նույն համարում քննադատը ստեղծագործություններ է տպագրել նաև Գ. Մահարուց, իսկ 1933 թ. հակիրճ անդրադարձել վերջինիս «Մրգահաս» ժողովածուին: Չոպանյանի կարծիքով՝ հավաքածուում ամփոփված չափածո գործերը նույնքան ուժեղ են, որքան արձակ գրվածքները: Քննադատը նաև դիտողություններ է անում երիտասարդ գրողին, մատնանշում նրա ստեղծագործական թերությունները՝ ընդգծելով հատկապես արտահայտության ձևի անխնամությունը. «Բայց երբ ձևն ալ կատարեալ է, ի՜նչքան հմայիչ

⁴⁰⁴ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 120:

⁴⁰⁵ **Չոպանյան Ա.**, Տպարտություններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 26:

⁴⁰⁶ **Չոպանյան Ա.**, Հայաստանէն ձայներ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 15:

են իր բանաստեղծութիւնները. գեղեցկագոյն էջերը տաղեր են, ժողովրդական երգերու մօտիկ գնացքով մը և գոյնով մը»⁴⁰⁷:

Իսկ դրանից շուրջ մէկ տարի առաջ Չոպանյանը առիթ էր ունեցել շատ սեղմ գնահատելու նաև Գ. Մահարու նորատիպ «Մանկություն և պատանեկություն» գիրքը՝ այն որակելով իբրև «գմայլելի գործ մը, հոսուն, թրթռուն արձակով, ուր յուզմունք, խանդադատանք ու չարածճի սիրուն սրամտութիւն մը իրարու կը խառնուին...»⁴⁰⁸:

Ալազանից ստանալով նրա նորատիպ «Մաքառումներ» բանաստեղծությունների հավաքածուն՝ Չոպանյանը հարկ է համարել, թեև որքան էլ կարճառոտ, անդրադառնալ և վերջինիս: Նախ տեղեկացնում է, որ Ալազանը իրեն բախտակից մյուս բանաստեղծների հետ Կովկաս է գաղթել Արևմտյան Հայաստանից պատերազմի արհավրալից օրերին: Եվ առաջին իսկ օրից հարելով Խորհրդային Հայաստանում ստեղծված նոր վարչակարգին՝ Նորեցի ու Մահարու պես իր երիտասարդ ուժերը նվիրել է նորաստեղծ երկրի ծաղկմանն ու զարգացմանը և ուրախությամբ ու հպարտությամբ տարփողել «վերանորոգման մեծ երեւոյթը որ կը կատարուի Հայաստանի մէջ»⁴⁰⁹: Խոսելով բանաստեղծի նոր լույս տեսած ժողովածուի մասին՝ Չոպանյանը այն բարձր է գնահատում, հեղինակի նախորդ՝ «Երգեր կառուցման և հաղթանակի» գրքի համեմատությամբ բնութագրում ավելի հաջողված, սակայն ոչ թերություններից բոլորովին ազատված: Հողվածագիրը բանաստեղծին դիտողություն է անում հատկապես քարոզչականության, հրապարակագրության համար՝ նկատելով, որ այդ թերություններից գերծ չեն նաև Նորեցն ու Մահարին և առհասարակ Խորհրդային Հայաստանի ժամանակակից

⁴⁰⁷ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 63:

⁴⁰⁸ **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 211:

⁴⁰⁹ **Չոպանեան Ա.**, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 64:

գրողներից շատերը⁴¹⁰: Այդ հանգամանքը դեռևս վաղուց էր անհանգստացնում Չոպանյանին և ամեն անգամ՝ առիթը եկած դեպքում, նա քննադատում է այդ տարիների խորհրդահայ գրականության ու քննադատության մեջ նկատվող միտումնավորության, քարոզականության, գռեհիկ սոցիոլոգիզմի արտահայտությունները: Այդ մտահոգությունը ինչպես անցյալում, այնպես էլ այժմ Չոպանյանի գեղագիտական հայացքներում գրավում է կենտրոնական տեղերից մեկը. նա միշտ էլ պահանջ էր դնում արվեստի մեջ քուղարկել հեղինակային միտումնավորությունն ու ջատագովությունը, գաղափարական բացահայտ ու անսքող քարոզը⁴¹¹: Բնական համարելով, որ Խորհրդային Հայաստանում իշխող «պրոլետարիատի դիկտատուրայի» պայմաններում գրականության մեջ պետք է իշխի հեղափոխական մարքսիստական գաղափարախոսությունը, այնուամենայնիվ Չոպանյանը իրավացիորեն նշում է՝ «պայմանով որ ան արուեստի սահմանին մեջ գիտնայ մնալ, ճշմարիտ ներշնչումի արդյունք ըլլայ, կենդանի ու յուզիչ ըլլա ամենքին համար առանց դասակարգի խտրութեան, «մարդկային» շեշտ կրէ, եւ ոչ նեղ-կուսակցական...»⁴¹²:

Մարքսիստական գրական ուղղությունը, ինչպես նկատում է Վ. Գաբրիելյանը, խորթ չէր Չոպանյանին⁴¹³. նա հասկանում էր նորի առաջադիմական լինելը, բայց և հանդես է գալիս գրականության սահմանների նեղացման դեմ, զգուշացնում մարքսիզմի գռեհկացումներից, մի երևույթ, որը երբեմն դրսևորվում էր պրոլետկուլտի

⁴¹⁰ Օրինակ, Վաղարշակ Նորենցի բանաստեղծությունների նոր լույս տեսած հատորի կապակցությամբ ցավով փաստում է, որ դրանում ավելի տիրապետող է հեղափոխական գաղափարախոսությունը, քան զուտ բանաստեղծությունը. տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, սպրիլ 1933, թիւ 3-6, էջ 211:

⁴¹¹ Տե՛ս նաև **Գալլաքայան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 453-454:

⁴¹² **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 110:

⁴¹³ Տե՛ս **Գաբրիելյան Վ.**, Ա. Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 1, էջ 42:

որոշ ներկայացուցիչների շրջանում:

Այս դիրքերից հետաքրքիր է Չոպանյանի բանավեճը «Գրական դիրքերում» ամսագրի քննադատներից ոմն Համո Հովհաննիսյանի դեմ, որը Սկրտիչ Արմենի «Շրջում էր էնտուզիաստը» պատմվածքը («գոր իբր բանաստեղծական նուրբ էջ մը արտատպեցինք **Անահիտի մէջ**»- **Ա. Չ.**)⁴¹⁴ քննադատել էր այն բանի համար, որ երկի հերոսը, փոխանակ «պրոլետարիատի դատին խանդավառիչ իտեալը» ունենալու, «կ'երագէ, կը թափառի, երեսկայական Կարինէ մը կը փնտռէ ու սիրտը նուրիած է այդ ցնորական իգութեան...»⁴¹⁵: «Վայ արուեստին ու գրականութեան,- նեղսրտած բացականչում է Ա. Չոպանյանը,- եթէ զանոնք սեղմեն այդ աստիճան նեղ ու քառակուսի վանդակի մը մէջ, ուր Գեղեցկին թռչունը – առանց որուն Արուեստ չկայ – թոպէ մը չի կրնար ապրիլ: Ամէն հեղինակ անշուշտ պէտք է ունենայ իր աշխարհայեացքը, իր տիրական ոգին, որ սակայն պէտք է **զգացուի** իր գործին մէջ եւ ոչ բռնաբար ու բրտաբար փռուի ու իշխէ հոն. ճշմարիտ ու տեսական գրագէտը այն է որ կեանքը իր բոլոր երեսներով կ'ըմբռնէ, եւ իր նախասիրութիւններն ունենալով հանդերձ՝ կը ձգտի արտայայտել մարդկային հոգույն բոլոր շարժումները, որոնց մէջ՝ մարդկային ճակատագրին մեծ հարցերուն վրայ խոսկումը, միատիքականութիւնը (ըլլայ ան՝ ընկերական, կրօնական, գեղասիրական, ազգասիրական կամ պարզապէս սիրային), Երազը՝ մէկ բառով, էական տեղ ունի, որովհետեւ առանց անոր՝ Արուեստը դասագիրք մը կը դառնայ, եւ կեանքն իսկ՝ միօրինակ ու անհոգի մարմնամարզանք մը: Երբ մանաւանդ միմիայն «թէորին», կուսակցական բանաձեւը կը մնայ, վէպը կամ բանաստեղծութիւնը կը դառրի գրականութեան հետ ո եւ է կապ ու-

⁴¹⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 110:

⁴¹⁵ Նույն տեղում: Մի ուրիշ տեղ գրում է. «...քաշքշեցին Սկրտիչ Արմենը, որովհետեւ իր նկարագրած «էնթուզիաստ» երիտասարդը տեսական գեղուի մը կը փնտռէ, առանց ճշդելու թէ այդ գեղուիին պրոլետա՞ր մըն է թէ պուրժուա».: **Չոպանեան Ա.**, Տպադրութիւններ եւ յիշատակներ Խորհ. Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4, էջ 16:

նենալ է, ինչքան ալ մարքսիզմին կամ ո եւ է **իզմի** հաւատարիմ արձագանք ըլլայ, կը դառնայ լրագրական ֆրագաբանութիւն, եւ այդպիսի էջեր, արձակ թէ ոտանաւոր, բաւական կարելի է գտնել **Գրական Գիրքերումի** մէջ, էջեր որ «պրովետ» են՝ ինչքան կ'ուզէք, բայց «գրականութիւն» չեն...»⁴¹⁶:

Չոպանյանի խոսքից առնված համեմատաբար ծավալուն այս քաղվածքը մեջբերեցինք ոչ միայն նրա՝ խորհրդահայ երիտասարդ գրականության մեջ տեղ գտած թերությունների մերժումը ցույց տալու դիտավորությամբ, այլև մեկ անգամ ևս ընդգծելու նրա համոզմունքները ճշմարիտ գեղարվեստի ու գրականության վերաբերյալ: Ըստ էության դա նույն՝ գրականության մեջ անօրինական բացահայտ միտումնավորության նկատմամբ անհանդուրժողականության տեսությունն էր, որը նա որոշակիորեն ձևակերպել էր նախկինում և հատկապես Գ. Մունդուկյանին, Հովհ. Հովհաննիսյանին և Շիրվանզադեին նվիրված ուսումնասիրություններում: Այստեղ գրական նոր երևույթների առնչությամբ այդ տեսությունը աճում և լրացվում է անդասակարգային, անկուսակցական գրականություն դրույթներով:

Նույն տեսակետից Չոպանյանը քննադատում է Նորենցին, Մահարուն ու նաև Չարենցին՝ ցավով նկատելով, որ եթե նրանք ունեն հեղափոխական պայքարը և համայնավարական իդեալը գովերգող անկեղծ, իսկական քնարերգությամբ ներշնչված գործեր, «ի՛նչքան ունին նաեւ քերթուածներ ուր իրենց տաղանդը զոհած են համայնավարական փրփականտին, զոր համարած են քաղաքացիական պարտականութիւն»⁴¹⁷:

«Անահիտում» ըստ ամենայնի ուշագրավ է Չարեհ Որբունու՝ Սկ. Արմենի «Երեք սիրավեպ» գրքույկի վերաբերյալ տպագրած հոդվածը: Լինելով գրող, քան դասական իմաստով քննադատ՝ Որբունին Սկ. Արմենի գրքում ընդգրկված երեք պատմվածքների

⁴¹⁶ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 110:

⁴¹⁷ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 120:

վերլուծությունը մատուցում է ավելի շատ արվեստագետի իրեն հատուկ լիրիկական գրելակերպով և պատկերավոր ոճով՝ ցույց տալով հերոսների ներքին ապրումների հոգեբանական նրբերանգներն ու տրամադրությունները: Հետաքրքիր է հոդվածի ընդհանրացնող վերջաբանը. Մ. Արմենին համարելով իրապաշտ՝ Որբունին անմիջապես ավելացնում է. «...անոր իրապաշտութիւնը ընկերավարական է, այսինքն պատմական ուժերու ընդհարումին անհատին մէջ անդրադարձումը: Իրականութեան չոր նկարագրութիւնը չէ որ կուտայ մեզի եւ ոչ ալ իրականութեան մակերեսը, այլ ներսէն մղուող ուժերուն դրսեւորումը որ կը յայտնուի մարդուն մէջ: Այսպէսով է որ Արմէն կը թորէ իրականութենէն բանաստեղծութիւնը, ինչպէս մեր ձեռքերը կը սեղմեն նարինջը ու անոր ջուրը կը տանին մեր բերնին: Նարինջը լաւ է, բայց նարինջին հիւթը կենսական է: Ահա թէ ինչու ես կը կոչեմ Սկրտիչ Արմէնի արուեստը՝ բանաստեղծական իրապաշտութիւն»⁴¹⁸:

Նորերից Ա. Չոպանյանը ուրախությամբ է ողջունում Հովի. Շիրազի «բերկրառիթ» հայտնությունը. ոգևորված վերջինիս «Գարնանամուտ» և «Միամանթո և Խջեզարե» գրքերով՝ գտնում, որ նա, «որ երէկ անապաստան, «խուժանային» որբ տղեկ մը եղած է Խ. Հայաստանի մէջ», այսօր «Երեսնի եւ ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մէջ ինքնուրոյն տեղ մը գրաւելու արժանի ներշնչեալ հմայիչ քնարերգակ մըն է»⁴¹⁹: Իսկ տպագրելով երիտասարդ բանաստեղծի «Լցվում է հոգիս...» տաղը՝ այն որակում է որպէս լուսավոր ներշնչմամբ և զորեղ ոճով գրված կենսախայտ մի երգ⁴²⁰:

Չոպանյանը բարձր է գնահատում նաև Վահան Թոթովենցի «Աղավնիներ» գիրքը, Բակունցի «Սև ցեղերի սերմնացանը», որտեղ կան «քերթողաշունչ վիպողի եւ վարպետ արձակագրի սքան-

⁴¹⁸ **Որբունի Ջ.**, Գիրքերուն իմաստը, «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 19:

⁴¹⁹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 30:

⁴²⁰ **Տե՛ս Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 127:

չելի էջեր», Գեղամ Սարյանի «Միջօրեն»:

«Անահիտի» էջերում Ա. Չոպանյանը հարկ է համարել անդրադառնալ նաև ամբողջ Անդրկովկասում «Ժողովրդական բանաստեղծ» տիտղոսն ստացած Հակոբ Հակոբյանին վերջինիս մահվան կապակցությամբ: Նրա գրական ժառանգության մեջ տեսնելով սեփական աշխարհայացքը արտահայտող գեղեցիկ ու «կորովի պերճախոսությամբ» գրված էջեր՝ Չոպանյանը, այնուամենայնիվ, իրավացիորեն գրում է. «Յակոբեանի բանաստեղծութիւնը մեծ մասամբ քարոզչական ոճ ունի, տաղաչափուած հրապարակախօսութիւն է, արուեստի տեսակէտով միջակ, մերթ բոլորովին տկար»⁴²¹:

Այսպիսով, «Անահիտի» երկրորդ շրջանում Արշակ Չոպանյանը, հավասարապես մտահոգ թե՛ Սփյուռքի, թե՛ բուն հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի գրական կյանքի ճակատագրով, իր կարողությունները անխտրաբար ծառայեցրեց հայ ազգի երկու հատվածների գեղարվեստը զարգացնելու նվիրական գաղափարին, դառնալով սփյուռքահայ գրականության կազմակերպիչներից և գրական քննադատներից մեկը՝ երբեք անտարբեր չմնաց բնօրրանում ծավալվող գրական երևույթներին:

⁴²¹ **Չոպանյան Ա.**, Բրոնիկյի, «Անահիտ», Փարիզ, 1937, յուրիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 91:

ԳԼՈՒԽ 4 ՀԱՆԳԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍԻ

«Անահիտում» էական տեղ էր հատկացված մաս գիտական տարատեսակ բովանդակությամբ ուսումնասիրություններին: Պատահական չէ, որ Չոպանյանը նոր «Անահիտը» անվանեց «Հանդես մտածման և արուեստի»: Պարբերականի տարբեր համարներում, բացի գրական-բանասիրական ուսումնասիրություններից (տե՛ս վերևում), տպագրվում էին մաս պատմագիտական նյութեր ու ակնարկներ⁴²², լեզվաբանական⁴²³, բնագիտական⁴²⁴, երաժշտագի-

⁴²² Տե՛ս **Գուշակեան Թ.**, «Կալկարա», «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 48-53, **Թիրեաքեան Մ.**, (Նիւ Եորք), Պերսեպոլիսի աւերակները (Նորագոյն պեղումներու առթիւ), «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 38-55, **Մագստտեան Ն.**, Արտաշունեաց հարստութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 20-32:

⁴²³ Տե՛ս **Ադոնց Ն.**, Արգար Պայազատի «Խալդերէն լեզուի բանալին», «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ. -հոկտ., թիւ 5-6, էջ 3-7:

⁴²⁴ Տե՛ս **Քեշիշեան Մ.**, Նիւթի կազմութեան արդի ըմբռնողութիւնը և համատիեզերային ուժերու ճառագայթումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 36-46, **Քեշիշեան Մ.**, Նիւթի կազմութեան արդի ըմբռնողութիւնը և համատիեզերային ուժերու ճառագայթումը, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 49-61, **Քեշիշեան Մ.**, Մետաղական քիմիաբանութիւն, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 125, **Սվաճեան Յ.**, Քիմիագիտութեան դերը հոգեբանութեան մէջ և վիթալիսք տեսութիւնները, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 37-39, **Սվաճեան Յ.**, Ժերմանիոմի քիմիագիտութեան նպաստը և գործարանատու ու ոչ գործարանատու քիմիագիտութեանց վարկածները միավորելու փորձ. Թէ՛զ Առաքել Չաքրրեանի, վերլուծում՝ Յ. Սվաճեանէ, «Անահիտ», Փարիզ, 1939, հոկտ. -նոյեմ. -դեկտ, թիւ 6, էջ 1-3, **Սվաճեան Յ.**, Շարժումի և ծաւալումի գաղափարները և մասնկային տեսութիւնները, «Անահիտ», Փարիզ, 1946, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 17-20, **Սվաճեան Յ.**, Շարժումի վոլյադարձութեան սկզբունքը, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1, էջ 14-19:

տական⁴²⁵, փիլիսոփայական⁴²⁶, իմաստասիրական⁴²⁷, հոգեբանա-

⁴²⁵ Տե՛ս **Կասթուէ**, Հայ երաժշտութեան մասին, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 121-122, **Ալիքսանեան Ն.**, Հայ ժողովրդական երգը (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 51-61, **Պատմագրեան Ա.**, Հայ ժողովրդական երգը, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.- դեկտ., թիւ 4, էջ 28-39, **Ալեքսանեան Ն.**, Հայ ժողովրդական երգը (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 30-56, **Չոպանեան Ա.**, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 103-126, **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտութիւն. Ներածութիւն, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 27-29, **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտութիւն. Բ, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 41-48, **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտութիւն. Գ., «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս-օգոստոս, թիւ 4, էջ 1-22, **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտութիւն, «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 28-32, **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտութիւն. Զ., «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 17-31:

⁴²⁶ Օրինակ, տե՛ս **Քէլիշեան Մ.**, Ի՞նչ է կամքը (Մնացեալ յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 15-25, **Քէլիշեան Մ.**, Ի՞նչ է կամքը (Շարունակութիւն եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 24-33, **Յարութիւնեան Ա.**, Իմաստասիրական խօսուրդոտութ, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 1-5, **Պէկեան Ն.**, Հայու մը մէկ կարեւոր երկը անգլիերէն լեզուով, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 200-205, **Սվաճեան Յ.**, Ժամանակի գաղափարին բարեշրջութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 68-74:

⁴²⁷ Տե՛ս, օրինակ, **Ղօնջէկիլեան Գ.**, Խաղաղութեան համար (Վերջը յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 106-113, **Ղօնջէկիլեան Գ.**, Խաղաղութեան համար (Վերջը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 106-113, **Ղօնջէկիլեան Գ.**, Խաղաղութեան համար (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 22-33:

կան⁴²⁸, բժշկագիտական⁴²⁹ և այլ բնույթի հետազոտություններ⁴³⁰, տրվում էին բժշկական խորհուրդներ, հակիրճ, ավելի հաճախ ճանաչողական և հանրամատչելի նյութեր էին հրատարակվում ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային նշանակություն առած մեծ գիտնականների ու արվեստագետների մասին⁴³¹:

⁴²⁸ Տե՛ս, օրինակ, **Քէշիշեան Մ.**, Երջանկութեան ուղին, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 114-117, **Արշարունի Վ.**, Խորհրդածութիւններ երջանկութեան գաղափարին շուրջ. Ա., «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 151-154, **Աղաջանեան Կ.**, Ջգայախաբութիւններն եւ իրական աշխարհը, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 57-59, **Աղաջանեան Կ.**, Նորմալ եւ հիւանդ տպաւորութիւն, ըմբռնում եւ դատողութիւն, «Անահիտ», Փարիզ, 1946, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 12-14:

⁴²⁹ Օրինակ, տե՛ս **Քասմաջեան Կ.**, Խեցգետի եւ քաղցկեղ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 120-121, **Քասմաջեան Կ.**, Երուանդ Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 122-123, **Քէշիշեան Մ.**, Հայ գիտունի մը յեղաշրջիչ դերը բժշկական աշխարհին մէջ, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932-ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 197-199 (վերջինիս Ա. Չոպանյանը անդրադարձել է նրա մահվան կապակցությամբ՝ մեծարելով իբրև ազնիվ ազգասեր և բարձր մտավորական. տե՛ս **Չոպանեան Ա.**, **Քրոնիկ**, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար- փետրուար, թիւ 1-2, էջ 100-101):

⁴³⁰ Օրինակ, տե՛ս, Հայ արուեստ. Հին հայկական մօզայիքներ, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 18-20, **Մազզզեան Ա.**, Կ. Պոլսոյ Հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 9-15, **Եղիաեան Բ.**, Դարուս քննական եւ գիտական մտահայեացքը (Մնացեալը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 92-99, **Եղիաեան Բ.**, Դարուս քննական եւ գիտական մտահայեացքը (Շար. նախորդ թիւին եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 16-22, **Վեցիկեան Ս.**, Իսկական յաղթանակը, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 96-100, **Զօրայեան Չ.**, Ելմտական աշխարհի մակընթացութիւնները, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 80-90, **Քասմաջեան Կ. Յ.**, Մխիթար Հերացի, «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս-սեպտեմբեր, թիւ 5, էջ 18-25, **Մուրաֆեան Չ.**, Նկարչութեան ձգտումները (Մնացեալ յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 51-58 և այլն:

⁴³¹ Օրինակ, տե՛ս Մեծ արուեստագետները. Օնօնէ Տօմիէ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 33-35, **Չօպանեան Ա.**, Հանրի տը Կրու եւ հայկական տարագրութեանց արիաւիրքը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 66-70, **Մազզզեան Վ.**, Եօհան Սեպասթիան Պախ, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, 147-150, **Վույշիք-Քեօփրիվեան Պ.**, Ֆրետերիք Շօփէն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 23-27, **Մարտիրոսեան Ն.**,

Օրինակ, անդրադառնալով արտասահմանում ապրող և գործող, մեծ ճանաչում առած հայ անվանի գիտնականներից հոգեբույժ Կարապետ Աղաջանյանին, բժիշկ-մանրէաբան Երվանդ Մանվելյանին՝ վերջինիս վերաբերյալ խմբագիրը իր խոսքը լրացնում է այլազգի երեք գիտնականների մասնագիտական գնահատականներով (թարգմանիչ՝ Ա. Չոպանյան- Վ. Ա.)՝ համոզված, որ «ազգասիրական խոր հաճոյք մը պիտի զգան անշուշտ՝ որոշ գաղափար մը կազմելով կարեւորութեանը վրայ այն տեղին գոր գիտական աշխարհին մէջ կը գրաւէ մեր վաստակաւոր հայրենակիցը»⁴³²: Չոպանյանը «Անահիտի» նույն համարում տպագրում է նաև Երվանդ Մանվելյանի դեռ անտիպ մի շարք գիտական նոթեր՝ կցելով նրա գլխավոր աշխատությունների՝ վաթսունին հասնող ցանկը: Նպատակը դժվար չէ գուշակել: Եթե իրագել կարդացողի համար այդ ամենը կարող էր սոսկ գիտական մասնավոր հետաքրքրություն ներկայացնել, ապա սովորական հայ ընթերցողը պիտի լցվեր ազգային վեհությամբ, ինչպես գնահատողներից մեկն է գրում, «Մանուէլեանի հայրենակիցները կրնան հպարտանալ այն նպաստովը գոր այս վերջինը բերած է... բնականոն ու ախտաբանական անդամաբանութեան եւ բժշկական գիտութեան յառաջադիմութեանց»⁴³³:

Չեյս մեծ արուեստագետ մը, փրոֆ. Ֆրանթիշէր Փավէլքա (PAVELKA), «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 133-139, **Մեսրոպեան Ա.**, Երաժշտագետ Նիկողայոս Տիգրանեան (Երաժշտական գործունէութեան յիսնամեայ յորելեանի առթիւ), «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 189-191, **Պետրոսեան Ա.**, Ռոմանոս Մելիքեան, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 16-17:

⁴³² **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 4:

⁴³³ Նույն տեղում, էջ 7: Երվանդ Մանվելյանի մասին տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 1-6: Նույն համարում Ա. Չոպանյանը թարգմանաբար տպագրել է նաև Ժ. Մակրոյի հոդվածը Ե. Մանվելյանի մասին. տե՛ս **Մակրոյ Ժ.**, Երուանդ Մանուէլեան (1872-1948), «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 14-16, և դիկտոր Փ. Սեկենի՝ Մանվելյանի բանաստեղծական ներշնչանքները գնահատող հոդվածը. տե՛ս **Սեկեն Փ.**, «Ստուերներ եւ լոյսեր» հատորին յառաջաբանը, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 17-18, ինչպես նաև չավածո մի քանի

Իսկ պրոֆեսոր Աղաջանյանը, ինչպես գրում է Չոպանյանը, «մին է այն հատընտիր Հայերեն որոնք մեր հինատուրց ցեղին քաղաքակրթական մեծ յատկությունները կ'ապացուցանեն եւ գոր մենք կրնանք ու պարտինք միշտ մատնանիշ ընել Արեւելքի ու Արեւմուտքի բոլոր ժողովուրդներուն՝ երբ ատոնց մօտ մեր ազգային դատը կը պաշտպանենք ու երբ Թուրքին մեր ցեղին դէմ գործած հրէշային ոճիրին դէմ կը բողոքենք ու անոր հատուցումը կը պահանջենք: Եթէ Թուրքը նոյն իսկ ուրիշ բան ըրած չըլլար բայց եթէ անլուր չարչարանքներով համեստ աշխատատրներու ժողովուրդ մը փճացնել, պատուհասման արժանի եւ հատուցման պարտաւոր պիտի հանդիսանար. բայց անոր յանցանքը կրկնապէս մեծ է եւ դատապարտելի, վասնզի ան բնաջինջ ընել խորհած ու փորձած է ցեղ մը որ դարերու ընթացքին տուած է եւ մինչեւ այսօր կ'արտադրէ ամբողջ հոյլ մը քաղաքակրթական առաջնակարգ ուժերու...»⁴³⁴:

Անշուշտ, շատ ավելի հարուստ էր հանդեսի արվեստի մասը: «Արուեստը վեր է բոլոր քաղաքական ու ընկերական վէճերէն, կուսակցական ու յարանուանական տարախոհութիւններէն: Ան մեծագոյն կապերէն մինն է, որ՝ քաղաքակիրթ բարձր ազգերու մէջ՝ գաղափարներով իրարմէ տարբեր բոլոր մարդիկը կը միացնէ...»⁴³⁵, - համոզված գրում է Չոպանյանը Կոմիտաս Վարդապետին նվիրված իր հոդվածներից մեկում:

Ինչպէս «Անահիտի» առաջին շրջանում⁴³⁶, այնպէս էլ հիմա Չոպանյանը յուրաքանչյուր ժողովրդի կենսունակութեան ու լինելիության առանցքային կովաններից մեկը իրավացիորեն համարում էր ազգային մշակույթը, մասնավորապէս հայերիս համար այն գնա-

էջեր Մանվելյանի բանաստեղծական հավաքածուից իր թարգմանությամբ. տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, 19-20:

⁴³⁴ **Չոպանեան Ա.**, Դէմքեր. Վահրամ Սվաճեան.-Փրոֆէսօր Կարապետ Աղաջանեան, «Անահիտ», Փարիզ, 1946, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 10:

⁴³⁵ **Չոպանեան Ա.**, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 103:

⁴³⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Գերագոյն ուժը, «Անահիտ», Փարիզ, 1910, մարտ-ապրիլ, թիւ 11-12, էջ 241:

հատում իբրև գոյության կարևորագույն գործոններից. «Այդ ուժը, որ գերագույն ուժն է,- ուժին ամենէն բարձր, գեղեցիկ ու բարի ձեւը,- ոչ ոք կրնայ խլել մեզմէ, ոչ ոք կրնայ զայն ճեմիշի (արտաքնոց - Վ. Ա.)⁴³⁷ մէջ խեղդել: Այդ ուժը ոչ մէկուն դէմ ուղղուած չէ, այլ դրուած է ի սպաս, ի հաճոյս, ի փառս ամբողջ մարդկութեան: Լաւ ճանչնանք այդ ուժը մեր մէջ, եւ գիտակցօրէն աշխատինք զայն զարգացնել, ընդլայնել, զօրացնել...»⁴³⁸, - գրում է նա և ուղերձ հղում հայ երիտասարդության օժտված ու կենսալից տարրերին. «Հոտ չկայ յուսախաբութիւն: Այդ է ճամբան որ կ'առաջնորդէ բարոյական մեծութեան եւ որ ցեղին ֆիզիքական զօրութիւնն ալ ամբացնելու ամենէն ապահով միջոցներէն մէկն է, թերեւս գլխատորը»⁴³⁹:

«Անահիտում» հայ արվեստին և արվեստագետներին վերաբերող նյութերը հիմնականում տպագրվում էին «Լրատու արուեստի եւ գրականութեան Հայաստանից եւ Կովկասից», «Արուեստի լրատու Հայաստանից եւ Կովկասից», «Մեծ արուեստագետները» (Եվրոպայի նշանավոր նկարիչների և քանդակագործների մասին - Վ. Ա.), «Մեր արուեստագետները», «Հայ հին արուեստ», «Հայաստանի արուեստագետները», «Հայ արուեստագետները արտասահմանի մէջ», «Մեր արուեստագետները արտասահմանի մէջ», «Մեր մտատրականներն ու արուեստագետները արտասահմանի մէջ», «Հայ արուեստագետներ», «Տպատրութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն», «Հայկական քրոնիկ», «Տեղեկատու հրատարակուած գրքերի» խորագրերով բաժիններում, ինչպէս նաև դրանցից դուրս՝ առանձին հոդվածներով⁴⁴⁰, և անշուշտ

⁴³⁷ Տե՛ս Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Երևան, Հայկական ՍՍՌ- պետական հրատ., 1944, էջ 207:

⁴³⁸ **Չոպանեան Ա.**, Զրոնիկոն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 3-4, էջ 164:

⁴³⁹ Նույն տեղում, էջ 164-165:

⁴⁴⁰ Օրինակ, տե՛ս **Սազըզեան Ա.**, Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 9-15, **Սազըզեան Ա.**, Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար. Բ. (Շարունակութիւն եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 39-51 (այս հոդվածը, ինչպէս տե-

խմբագրի նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկներում, որոնք իր իսկ գնահատմամբ սովորական հրապարակագրություններ չէին, այլ գրական արտադրություններ⁴⁴¹: Այսպես, օրինակ, 1930 թվականի 4-րդ համարում՝ «Լրատու գրականության եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից» խորագրի տակ, հանդեսի թղթակից Կարեն Միքայելյանը ոգևորությամբ մանրամասն ծանոթություն է տալիս խորհրդային հանրապետությունների մայրաքաղաքում՝ Մոսկվայում տեղի ունեցած մշակութային օլիմպիադայի մասին՝ արտատպելով բազմաթիվ լուսանկարներ թատերական տարբեր, մասնավորապես Հայաստանի պետական թատրոնի ներկայացումներից: Լուսանկարներում դրվագներ են «Խաթաբալայից», «Պեպոյից» և հայտնի այլ պիեսներից՝ Ավետ Ավետիսյանի, Հրաչյա Ներսիսյանի, Սուրեն Քոչարյանի, Վաղարշ Վաղարշյանի և ժամանակի ուրիշ անվանի հայ դերասանների խաղով⁴⁴²: «Հայ թատրոնն այլ ևս, - ուրախությամբ գրում է թղթակիցը,- գաւառական թատրոնի մակարդակի վրայ չէ կանգնած եւ իր ստեղծագործութեամբ կարող է մրցութեան դուրս գալ լաւագոյն ռուս թատրոնների հետ... Եւ եթէ Հայաստանի Պետական Թատրոնը լաւագոյն գնահատականներից մէկը ստացաւ Օլիմպիադի ժիւրիի կողմից, մեր կարծիքով դա խրախուսական դիտումներով չէր արւած եւ ոչ էլ չա-

դեկացնում է հեղինակը, ավելի համառոտ ձևով լույս է տեսել 1924 թ. մարտին «La Renaissance de L'Art Francais» գեղարվեստական հանդեսում «L'Orfèvrerie Arménienne à influence occidentale de Constantinople XVIII^e aux et XIX^e siècles» վերնագրով. տե՛ս **Սագրզեան Ա.**, Կ. Պոլսյ հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 9): Նաև՝ **Գալենքեարեան Չ.**, Յովսէփ Փուշման, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 57-63: **Տրապիգոնի Գ.**, Հայ վրձինը եւ «Ամենալի բուրաստանը», «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 95-99, **Ֆիլոն**, Յակոբ Կիրճեանի քանդակագործութիւնը (1), «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 154-155, **Փիաշօ Ռ.**, Մորիս Սարգիստֆ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 154-164:

⁴⁴¹ Տե՛ս **Զօպանեան Ա.**, «Անահիտ»-ի ընթերցողներում, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 44:

⁴⁴² Տե՛ս **Միքայէլեան Կ.**, Արեստների օլիմպիադը Մոսկվայում, «Անահիտ», 1930, Փարիզ, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 41-60:

փազանցուժեամբ, այլ իրական գնահատումով, որին արժանի էր նա»⁴⁴³:

Իսկ, օրինակ, նույն թվականի 6-րդ համարում «Անահիտը» համառոտ տեղեկություններ է մատուցում նորատիպ գեղարվեստական գրքերի հրատարակության վերաբերյալ, որոնց շարքում են Ալազանի «Ճանապարհին» վեպը, Ալ. Շիրվանզադեի երկերի լիակատար ժողովածուն, Գ. Սունդուկյանի «Պեպո»-ի թուրքերեն թարգմանությունը, «Երգեր խորհրդային» «նորագույն պօեզիայի ընտիր նմուշների ժողովածուն» (Հակոբ Հակոբյան, Եղիշե Չարենց, Ազատ Վշտունի, Ալազան, Սկրտիչ Արմեն, Գևորգ Աբով, Նաիրի Չարյան և ուրիշներ - Վ. Ա.)⁴⁴⁴: Հաղորդվում է, որ տպագրվել է «Առողջ կենցաղ» վերնագրով պատկերազարդ մի հանդես, «որի նպատակն է բարձրացնել արտադրական բանորութան եւ գիտի աշխատատրութեան կուլտուր-առողջապահական գիտելիքները, ինչպէս եւ նոր սերունդի ֆիզիքական եւ մտային կարողութիւնները: Նա հին մեռնող կեանքին հակադրելու է նորն ու առողջը»⁴⁴⁵:

Իրագեկվում է, որ տպագրության են պատրաստվում Կոմիտասի և Ալ. Սպենդիարյանի անտիպ աշխատությունները, Արամ Երեմյանի «Պարսկահայ նորագույն աշուղներ» ուսումնասիրությունը:

Տեղեկություններ են տրվում արդեն ցուցադրված և նկարվելիք կինոնկարների մասին. օրինակ. «**Չանգեզուր**».- Այստեղ դաշնակցական մի խմբապետի քաջագործություններն են ցուանալու: Սցենարիօ՝ Ակսել Բակունցի»⁴⁴⁶: Իսկ «Անուշ» օպերայի մասին գրված է. «Նիւթը վերցած է Յովհաննէս Թումանեանի համանուն պօեմայից: Սցենարիոյի մշակման ժամանակ պատկերի մէջ է մտցում 60ական թվականների Լուուայ գիւղացիութիւնն իր կենցաղային միստ ու կացով... Երաժշտական նւագակցութիւնն «Անուշ»ի պատ-

⁴⁴³ Նույն տեղում, էջ 49:

⁴⁴⁴ Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 126:

⁴⁴⁵ Նույն տեղում, էջ 124:

⁴⁴⁶ Նույն տեղում, էջ 125:

կերների համար յանձնւած է երաժշտագէտ Սպիրիտոն Մելիքեանին, իսկ որպէս նկարիչ հրաւիրւած է Մ. Սարեանը, որը պէտք է պատրաստի դեկորացիաները եւ կոստիւմները բնորոշ հայկական ոճով»⁴⁴⁷:

Նույն տեղում նաև հաղորդվում է, որ Հայաստանի պետական քանդարանում բացվել է Միք. Նալբանդյանին նվիրված ցուցահանդես՝ նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, իսկ Թիֆլիսում՝ Փանոս Թերլեմեզյանի նկարների պատկերահանդեսը, Լենինգրադում՝ Էրմիտաժում, կազմակերպվում է Անիին նվիրված ցուցահանդես, Լենինականում և Թիֆլիսում տեղի են ունեցել տոնական միջոցառումներ՝ նվիրված Շիրվանզադեի գրական գործունեության 50-ամյակին: Վերջիններից ներկայացվում են ինչ-ինչ մանրամասներ. ովքեր են ելույթ ունեցել, ինչպես է մեծարվել հորեյլանը և՛ հայ, և՛ վրացի, և՛ քուրք մշակութային գործիչների կողմից⁴⁴⁸:

«Անահիտում» ըստ ամենայնի ուշագրավ է Գարեգին Լևոնյանի՝ երկխոսության եղանակով կառուցված «Մի պտոյտ Երեսանի քանդարաններում» «շահեկան յօդուածը» (խմբ. - Վ. Ա.), որում հեղինակը Վենետիկից ժամանած իր բարեկամ, «հին բանուր» սինեոր Ֆրանչո (Ֆրանչեսկո) Բիանկիի հետ իբրև թե շրջում է Երևանում ու նրա քանդարաններում և իր հյուրին, ուրեմն և «Անահիտի» ընթերցողներին հակիրճ ծանոթացնում հայ հին ու միջնադարյան մշակույթին, գրողներից, նկարիչներից ու քանդակագործներից շատերին ու նրանց գործերին, խոսում ռուս և հայ նկարիչների ստեղծագործությունների մասին, բնութագրում նրանց արվեստը: Շարադրանքը ընդմիջարկվում է Հովհ. Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոչոյանի, Վարդան Ախիկյանի, Փանոս Թերլեմեզյանի, Եղիշե Թադևոսյանի բազմաթիվ նկարների, Արա Սարգսյանի, Սուրեն Ստեփանյանի և Այծեմնիկ Ուրարտու Քոչարյանի քանդակների լուսանկարներով⁴⁴⁹:

⁴⁴⁷ Նույն տեղում, էջ 124:

⁴⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 125-126:

⁴⁴⁹ Տե՛ս **Լեւոնեան Գ.**, Մի պտոյտ Երեսանի քանդարաններում, «Անահիտ», Փա-

Չոպանյանին շատ էր ոգևորում այն, որ Խորհրդ. Հայաստանի կառավարությունը հայ արվեստի զարգացումը խանդավառելու և հայ ազգի վարկը բարձրացնելու նպատակով մեջընդմեջ կազմակերպում էր ցուցահանդեսներ՝ նվիրված հայ տաղանդավոր արվեստագետների գործերի, ինչպես նաև մեր անցյալին առնչվող պատմամշակութային իրերի ներկայացմանը, ինչպես տեսանք, ոչ միայն հայրենիքում, այլև նրանից դուրս, ինչպես, օրինակ, Մոսկվայում⁴⁵⁰, Թիֆլիսում, Լենինգրադում⁴⁵¹:

Իսկ, օրինակ, 1935 թ. տարեսկզբյան համարում «Անահիտի» խմբագիրը տեղեկացնում է, որ Խորեն Ա կաթողիկոսը «վեհաշունչ կոնդակով մը» տարին հռչակել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի տարի և հրավիրել՝ մեծաշուք հանդիսություններով տոնելու հայ մատենագրության սկզբնավորման հոբելյանը: Այդ առիթով Չոպանյանը գրում է. «Հայ Գրի գիտն ու հայ մատենագրութեան հիմնարկութիւնը Ե. դարու առաջին կիսուն, այդ թուականը կը կացուցանեն մեր անցեալ պատմութեան ամենէն թանկագին ու պանծալի թուականը, եւ այդ յորելեանը պիտի տօնուի անշուշտ համազգային հանդիսութեամբ, իբր թուական վճռապէս ու գիտակցօրէն ազգային մշակոյթի մը ամենաշքեղ ու ամուր ձեռով կազմաւորման եւ ատով հայ ազգի գոյութեանն իսկ ընդ միշտ ապահովման»⁴⁵²:

Հետամուտ հայ գաղթօջախներ-հայրենիք մշակութային կապերի զարգացմանը, բնական է, նոր «Անահիտը» հավասար ուշադրություն էր դարձնում և հետևում թե՛ սփյուռքահայ և թե՛ հայրենիքում ապրող և գործող մանավանդ նորահայտ արվեստագետների

րիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 1-15, **Լեւոնեան Գ.**, Սի պոռոյտ Երեւանի թանգարաններում, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 1-16:

⁴⁵⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ (Ցուցահանդէսներ Երեւան ու Մոսկուայի մէջ), «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 28:

⁴⁵¹ Տե՛ս Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 124:

⁴⁵² **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 101:

ստեղծագործական ընթացքին: Մեր ժողովրդին պատուհասած ահավոր աղետներից հետո Չոպանյանին հատկապես ոգևորում էին արտասահմանում լայն ճանաչում առած այն դեմքերը, որոնք իրենց «հանճարի փայլակներով» գալիս էին հաստատելու, թե ողջ է մեր ազգը և իր մշակույթով կենսունակ ու մրցունակ. «...երբեք պիտի չդադրիմ այս սրտապնդիչ իրողութիւնը մատնանիշ ընելէ- մեր բզբտուած ազգին ծոցէն ելաւ ամբողջ բոյլ մը արուեստագէտներու որ յաջողեցան մրցիլ երոպական մեծագոյն ազգերու արուեստագէտներուն հետ և իրենց ինչպէս և իրենց ազգին անունը փառքով պսակեցին: Փարիզի պէս տիեզերական կեդրոնի մը մէջ, ոչ մէկ փոքր ժողովուրդ (մանաւանդ Արեւելքէն) ունի այսօր այնքան փայլուն գեղարուեստական տաղանդներու հոյլ մը, ինչքան հայ ժողովուրդը»⁴⁵³, - ոգևորությամբ գրում է նա: Մեկ ուրիշ անգամ խանդավառված զանազան երկրներում ցրված տարագիր հայ նոր տաղանդների՝ իբրև «կազդուրիչ երեւոյթների» ծնունդով և աճով՝ Չոպանյանը համոզված գրում է. «Այդ երեւոյթները ցոյց կուտան, որ մեր ժողովուրդը, թէև թուով նուազած, մտաւոր կորովի մէջ – այս հաստատումը կը կրկնեմ անգամ մը եւս – յառաջադիմելու, բարձրանալու վրայ է: Ամէն կողմ կը տեսնենք արուեստի մարզին մէջ – որ մարդկային գործունէութեան բարձրագոյն մարզերէն մէկն է,- հայ տաղանդներ որ կը փայլին, մերթ նորածագ յուսատու կամ արդէն իսկ ուշագրաւ ու սիրուն շողիւններով, ու մերթ համաշխարհային բեմին վրայ յաղթանակներ տոնելու կարող աստղերու ճաճանչումով»⁴⁵⁴:

Իսկ Բովխարեստում (ամսագրում՝ **Պուրբէշ - Վ. Ա.**) բացված Հայ արվեստի ցուցահանդեսի կապակցությամբ «Անահիտին» հասցեագրված մասնավոր թղթակցության հեղինակը, հանդեսին փոխանցելով բազմաթիվ մանրամասներ ցուցահանդեսի թեմատիկ հարուստ բովանդակության մասին (ցուցադրության է դրվել ժյուրիի

⁴⁵³ **Չոպանեան Ա.**, Մեր արուեստագէտները, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 99:

⁴⁵⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 163:

կողմից ընտրված ընդհանուր 643 նմուշ)⁴⁵⁵, ոգևորված այցելուների, նրանց մեջ նաև Ռուսիանիայի թագավորի և թագուհու, իշխանների և տարբեր պետությունների դեսպանների, բարձրաստիճան պաշտոնյաների ու արվեստագետների և այլոց աննախադեպ և բացառիկ ընդունելությունից, թարգմանաբար մեծաքանակ քաղվածքներ է մեջբերում ռուսինական մամուլում տպագրված խանդավառ, մեկը մյուսին գերազանցող դրվատական գնահատականներից՝ փաստելով. «Առիթ մը պետք էր անոր (ռուսինացիներին - Վ. Ա.) բանալու համար մեր հոգեկան գանձերը, եւ ցոյց տալու թէ Հայերս սուրճ խարկող, կօշիկ կարկտող, գորգ նորոգող, քիչ մըն ալ չարջի աւ ժողովուրդը չենք միայն...»⁴⁵⁶:

Իսկ մամուլից մեջբերված քաղվածքներից վկայենք միայն մեկը. «Պէտք է խոնարհիլ արուեստի այս արտայայտութեան առջեւ, եւ դիտել այն երկիւղածութեամբ, յարգանքով ու գեղեցկագիտական խոր զգացումով գորս կը պարտադրեն մեզի նրբաճաշակ եւ գեղարուեստի սիրահար ժողովուրդի մը յօրինած այս առարկաները»⁴⁵⁷:

Ուշագրավ է, որ «Անահիտի» խմբագիրն ինքը ևս թարգմանաբար տպագրում էր օտարագրի տարբեր հեղինակների ուսումնասիրություններ, հոդվածներ կամ հատվածներ դրանցից՝ հայ արվեստի մասին՝ ձգտելով հատկապես նրանց միջնորդությամբ և հեղինակությամբ հաստատել մեր մշակույթի վաղնջականությունը, ինքնատիպությունն ու ինքնուրունությունը, համաշխարհային

⁴⁵⁵ Ցուցահանդեսին մասնակցել են Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, Եվրոպայի հայ նկարիչների «Անի» միությունը, Ռուսինահայ կենտրոնական մատենադարանը, Պրահայի, Քիշնևի և Ռուսիանիայի հայկական եկեղեցիները: Ցուցահանդեսի նկարչական բաժնում ներկայացվել են Հովհաննես Այվազովսկու, Գևորգ Բաշինջաղյանի, Վարդան Մախոխյանի, Էդգար Շահինի, Ռաֆայել Շիլմանյանի, Արմինիա Բաբայանի, Մելքոն Քեպապճյանի, Ալեքսանդր Սարուխանի և այլոց ստեղծագործություններից. տե՛ս Պուքրէշի հայ արուեստի ցուցահանդէսը (Մասնատր թղթակցութիւն «Անահիտ»ի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 105-113:

⁴⁵⁶ Պուքրէշի հայ արուեստի ցուցահանդէսը (Մասնատր թղթակցութիւն «Անահիտ»ի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 107:

⁴⁵⁷ Նույն տեղում, էջ 108:

առնչություններն ու տեղը միջազգային ասպարեզում, ինչպես նաև գեղարվեստական բարձր ճաշակի արտահայտությունը և ներկա ժամանակներում:

Այսպես, օրինակ, անվանի երաժշտագետ Ժյուլեն Թիերսոյի «Encyclopédie de la Musique et Dictionnaire du Conservatoire» աշխատությունից հայ ժողովրդական երաժշտությանը հատկացված հատվածում կարդում ենք. «Քրիստոնեությունն ընդգրկող առաջին ժողովուրդներէն մին եղած ըլլալով, ան (հայ ժողովուրդը - Վ. Ա.) իրեն համար կազմած է եկեղեցական երգեցողութիւն մը այնքան հին, եթէ ոչ անլի, որքան բիզանդականն ու հռոմէականը, ու բոլորովին անկախ: ...երաժշտութիւնը ամէն ժամանակ, դարերու ընթացքին, իր բոլոր ձևերով մշակուած է Հայաստանի մէջ: Հայերը մեծ երգողներ են: Այդ կարողութիւնը այսօր ալ չեն կորսնցուցած»⁴⁵⁸:

Իսկ բյուզանդական երաժշտության հայտնի մասնագետ Պ. Ա. Կասթուեի «Հայաստան եւ իր աւանդական արուեստը» տիտղոսով հողվածում հայ հին ու ներկա երաժշտության վերաբերյալ ընդհանուր տեսությունից Չոպանյանը շահեկան է համարում հատկապես այն կարծիքը, որը դարձյալ ընդգծում է մեր երաժշտության մեղեդայնության յուրահատկությունն ու ճոխությունը⁴⁵⁹:

Ուշագրավ է նաև գերմանացի երաժիշտ-երգահան, ժողովրդական երգերի մասնագետ Ալոբրիս Մելիշարի հիացական վերաբերմունքը՝ հայ երաժշտության վերաբերմամբ⁴⁶⁰: Չի կարելի չհիշատակել նաև ֆրանսիացի երաժշտագետ Լուի Լալուայի⁴⁶¹ խան-

⁴⁵⁸ Թիերսո Ժ., Հայ երաժշտութիւն, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 114:

⁴⁵⁹ Տե՛ս Կասթուե, Հայ երաժշտութեան մասին, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 121-122:

⁴⁶⁰ Տե՛ս Մելիշար Ա., Երաժշտական տպարտութիւններ Հայաստանի միջով ճանապարհորդելիս. Մի էջ հայ ժողովրդական երգի ուսումնասիրութեան համար (Թարգմանութիւն Գերմաներէնից «Musikblätter des Anbruch»էն №4, 1927, Vienne), «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 79-82:

⁴⁶¹ Լուի Լալուան եղել է հայտնի մանկավարժ Սոֆյա Բաբայանի դստեր՝ դաշնա-

դավառ գմայլանքը հայ ժողովրդական երգով ու երաժշտությամբ: Կոմիտասսի՝ 1906 թ. Փարիզում տված համերգից հետո մայրաքաղաքի երաժշտական թերթերից մեկում՝ «Le Mercure Musical»-ում, նա ծավալուն հոդված էր նվիրել մշակութային այդ «յայտնութեանը» և Կոմիտասին՝ արժևորելով նաև հայ ժողովրդական եղանակները, որը, ըստ նրա, «իրապետ ոչ երոպական է եւ ոչ արեւելեան, այլ ունի նկարագիր մը՝ շնորհալի քաղցրութեան, խորաթափանց յուզման եւ ազնուական գորովի: Փափուկ եւ սակայն որոշ ոլորումներով մեղեդիներ, ճապուկ ու կենդանի կշռութիւններ, երաժշտութիւն մը որ ամբողջովին սրտէն կը բխի եւ կը հոսի ինչպէս ջուր մը գով, թափանցիկ ու պայծառ: Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ոչ Արաբիոյ եւ Պարսկաստանի անապատներուն հրատոշոր արեւը, այլ ոսկեգօծ լուս մը, համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու սպիտակութեան, անտառներու կանանչին եւ քաղցրակարկաջ առուններու ցոլքերուն: ...Եւ պարզասրտութեան այդ թանկագին գանձը, զոր ո՛չ Թուրքերը, ո՛չ Քիւրտերը, ո՛չ ալ Ռուսերը (Ռուսերուն՝ Թուրքերէն ու քիւրտերէն ատելի բարբարոս նկատուիլը տարօրինակ է ... - Ա. Չ.), ատելի եւս բարբարոս, կրցած են ո՛չ ըմբռնել ո՛չ յափշտակել, անեղծ փոխանցուած է մեզի այդ գեղագիծ երգերուն մէջ, որ գունավառ ու անուշահոտ ծաղիկներ են»⁴⁶²:

Իսկ երբ Կոմիտասը համերգ է տալիս Ժնևում և Լոզանում, տեղի թերթերը գրում են. «Հայ երաժշտութիւնը ոչ միայն մարդկային երաժշտութեան մէկ որոշ տարրն է, այլ եւ այնքան գեղեցիկ է ան որ կրնայ նախանձը շարժել փարթամ Գերմանիային եւ խրոխտ Ֆրանսային. ան կրնայ մեզի համար առաջնորդ մը ու իտեալ մը հանդիսանալ»⁴⁶³:

կահարուի Շուշանիկ Բարսեղյանի ամուսինը. տե՛ս էլ. հղումը՝ https://hy.wikipedia.org/wiki/%D5%87%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D5%B6%D5%AB%D5%AF_%D4%B2%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6 (մուտք՝ 16.12.2024):

⁴⁶² **Չոպանեան Ա.**, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 113-114:

⁴⁶³ Նույն տեղում, էջ 114-115:

«Անահիտը» փարիզաբնակ հայտնի մանկավարժ, երաժշտագետ, երգչուհի, Կոմիտասի մտերմուհի Մարգարիտ Բաբայանի (1874–1968)⁴⁶⁴ առաջաբանով ու նրա թարգմանությամբ 1935 թ. հունվար-փետրվարյան համարում տպագրում է նաև ռուս (ծագումով գերմանացի) հայտնի կոմպոզիտոր, դիրիժոր և դաշնակահար Թոմաս Հարտմանի (1885–1956) խորունկ ու ծավալուն դասախոսությունը Կոմիտասի մասին՝ կարդացված 1919 թ. Թիֆլիսում: Առաջիններից մեկը, ով բարձր է գնահատել Վարդապետի վաստակը, նրա բարձր ձիրքը և անգնահատելի ներդրումը հայկական երաժշտության պատմության մեջ, գրում է. «Այս օրուան երգահանդես- դասախոսութեան նպատակներից մինն է Կոմիտասին ներկայացնել ոչ միայն իբրև մի օժտուած երաժիշտ, այլ մի երգահան, որ քանքարի դրոշմն է կրում եւ որի անունը ոսկի տառերով կ'արձանագրուի հայ երաժշտութեան պատմութեան էջերին մէջ: - Ես հաւատում եմ Հայ երաժշտութեան ապագային, որովհետեւ մի ազգ, որ ստեղծած է հայ երգը, մի ժողովուրդ որի ձեռքն է եղած Պարսկաստանի երաժշտական կեանքը (յայտնի է, որ պարսիկ երաժիշտների մեծամասնութիւնը Հայեր են եղած) - մի ժողովուրդ, որ երաժշտական անցեալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայէ մի շարք մեծ անուններ»⁴⁶⁵:

Ուշագրավ է, որ դասախոսության մեջ հեղինակը Կոմիտասի մասին իր որակումները խաչաձևում է ժամանակակիցների գնահատանքի խոսքերով, որոնք առավել ամբողջացնում են մեր մեծ

⁴⁶⁴ Մարգարիտ Բաբայանի՝ Կոմիտասի հետ մտերմության և նրա երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում ունեցած դերի մասին տես **Կոտանդյան Ն.**, Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, «Կանթեղ», Երևան, 2016, №1, էջ 219-233:

⁴⁶⁵ Թոմաս Հարտման եւ Կոմիտաս Վարդապետ: Դասախոսութիւն Կոմիտասի մասին կարդացում Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 75: Թ. Հարտմանի՝ Կոմիտասի գործի արժևորման մասին մանրամասն տես **Չարարյան Ա.**, Կոմիտասը Թոմաս Հարտմանի կյանքում և գործունէության մեջ, «Պատմաբանասիրական հանդէս», Երևան, 2019, №3, էջ 23-32: Հոդվածի վերջում՝ կից, վերահրատարակվել է «Անահիտ» հանդեսում տպագրված հիշյալ դասախոսության նյութը. տես նույն տեղում, էջ 33-38:

երգահանի դերն ու նշանակությունը: Այսպես, օրինակ, Հարստմանը գրում է. «Յիշում եմ Պ. Չերեպնիցի (ռուս և ամերիկացի երգահան, դաշնակահար ու երաժշտության տեսաբան (1899-1977) - Վ. Ա.)⁴⁶⁶ հիացնունքը՝ զննելիս նրա երկը, նրա բացազանչությունը՝ «Ինչպե՛ս պիտի ուրախանար Մորիս Բավելը (ֆրանսիացի մեծահայտնի երգահան (1875-1937) - Վ. Ա.)⁴⁶⁷ լսելով աս երկերը»⁴⁶⁸: Ապա հիշատակում է արևմտյան երաժշտական մշակույթի ամենահեղինակավոր դեմքերի բարձր տպավորությունը «Էջմիածնայ համեստ վանականին» և նրա արվեստի հանդեպ:

Մարգարիտ Բաբայանի թարգմանությամբ «Անահիտը» հաջորդ տարվա՝ 1936-ի հունվար-մարտյան համարում տպագրել է նաև 1919 թ. Թ. Հարստմանի՝ Թիֆլիսում լույս տեսնող ռուսական մի թերթում հայ ժողովրդական երաժշտության և Կոմիտասի մասին տպված երկու շահեկան հոդվածները, որոնք լրացնում են նրա նախորդ բանախոսության նյութը⁴⁶⁹:

Հոդվածի առաջին մասում ռուս կոմպոզիտորը, խոսելով Կոմիտասի հոգեկան անմխիթար վիճակի մասին, այնուհետև հանգա-

⁴⁶⁶ Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/%D0%A7%D0%B5%D1%80%D0%B5%D0%BF%D0%BD%D0%B8%D0%BD,%D0%90%D0%BB%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%D0%BD%D0%B4%D1%80_%D0%9D%D0%B8%D0%BA%D0%BE%D0%BB%D0%B0%D0%B5%D0%B2%D0%B8%D1%87 (մուտք՝ 29.01.2024):

⁴⁶⁷ Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/%D0%A7%D0%B5%D1%80%D0%B5%D0%BF%D0%BD%D0%B8%D0%BD,%D0%90%D0%BB%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%D0%BD%D0%B4%D1%80_%D0%9D%D0%B8%D0%BA%D0%BE%D0%BB%D0%B0%D0%B5%D0%B2%D0%B8%D1%87 (մուտք՝ 29.01.2024):

⁴⁶⁸ Թոմաս Հարստման եւ Կոմիտաս Վարդապետ: Դասախօսութիւն Կոմիտասի մասին կարդացուած Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 75:

⁴⁶⁹ Տե՛ս **Հարստման Թ.**, Ժողովրդական երգը եւ նրա հաւարողները, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 22: Հոդվածները տպագրվել են «Закавказское слово» թերթում. այդ մասին մանրամասն տե՛ս **Զարարյան Ա.**, Կոմիտասը Թոմաս Հարստմանի կյանքում և գործունեության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2019, №3, էջ 25:

մանորեն ներկայացնում է Վարդապետի կյանքն ու գործունեությունը, որը տողատակերում լրացված է Մ. Բաբայանի հետաքրքիր դիտարկումներով և հիշատակումներով: Հոդվածի երկրորդ մասը, որ ավարտվում է Ա. Չոպանյանի՝ Թ. Հարսմանի՝ Կոմիտասի վերաբերյալ տված մի քանի տեղեկությունների մերժմամբ, նվիրված է «Մեծ Աշուղի» (Թ. Հարսմանի որակումն է - Վ. Ա.) ստեղծագործությունների վերլուծությանը, որտեղ Հարսմանը քննում է նրա գործերը՝ բացահայտելով դրանց մնայուն գեղագիտական արժեքը, նշում երգահանի բարձր ձիրքը և նրա անգնահատելի ներդրումը հայկական երաժշտության պատմության մեջ. «Կոմիտաս վարդապետը, որ **մարդկային գիտութեան շտեմարանին ա՛յնքան տուած է, հարստացրած է երաժշտական աշխարհը նոր գեղեցկութիւններով**: Նա օրինակ է իր ամբողջ կեանքով այն ուղիի, որը պիտի ընտրէ ամէն երաժիշտ, որ ցանկանում է պահպանել թէ՛ իր եւ թէ՛ իր ազգի ինքնությունութեան ամենացայտուն գծերը»⁴⁷⁰: Ի դեպ, նկատենք, որ հոդվածից ակնհայտ է դառնում, որ Թ. Հարսմանը իրազեկ էր նաև հայ ժողովրդի պատմության դաժան եղելություններին և մասնավորապես մեր ժողովրդի կյանքում հայոց եկեղեցու ունեցած հսկայական դերին⁴⁷¹:

«Անահիտում» Կոմիտասի վերաբերյալ շատ հետաքրքիր են նաև մտերիմներից Թագուհի Եղիազարյանի հուշերը՝ գրված Վարդապետի մահվան առիթով, որտեղ հեղինակը իր գնահատականները հաճախ շաղախում է սրտառույչ և հուզիչ տողերով⁴⁷²:

Եվրոպական մամուլից քաղված ներբողայից հոդվածների թարգմանությամբ «Անահիտը» ներկայացնում է նաև նույն Մարգարիտ Բաբայանին⁴⁷³, արվեստաբան, արևելագետ Արմենակ Սա-

⁴⁷⁰ **Հարսման Թ.**, Ժողովրդական երգը եւ նրա հասարակները, «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 33:

⁴⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

⁴⁷² Տե՛ս **Եղիազարեան Թ.**, Կոմիտաս Վարդապետ (Յուշատետրէս), «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 65-70:

⁴⁷³ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Մեր արուեստագէտներն արտասահմանի մէջ, Օրիորդ Մարգարիտ Բաբայեան.- Տիկին Ռօզ Պատմագրեան, «Անահիտ», Փարիզ, 1930,

գրգյանին, որի մասին հորվածներ էին երևացել ինչպես անգլիական, այնպես էլ գերմանական ու փարիզյան նշանավոր հանդեսներում, որոնցից ևս մեջբերումներ են արվում⁴⁷⁴: Ֆրանսիական մամուլից մեջբերված քաղվածքների շնորհիվ Չոպանյանը ցույց է տալիս նաև այն ջերմ ու խանդավառ ընդունելությունը, որ Փարիզը արժանացրել է Վահրամ Փափազյանին, գնահատել անվանի դերասանի արտակարգ տաղանդը⁴⁷⁵:

Ամերիկահայերից Չոպանյանը մասնավորապես արժևորում է օպերային տեևոր երգիչ-դերասան Արման Թոքաթյանին⁴⁷⁶, կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանին և գծանկարիչ Մելքոն Քեպապյանին՝ «իբր արուեստագիտական մեծ տաղանդներ», որոնք, իրենց հայտնությամբ հույս ներշնչելով մեր ժողովրդին, նաև լուսավորել են հայ մտավոր կյանքի հորիզոնը⁴⁷⁷: Արտասահմանյան տարբեր հանդեսներից մեջբերված գովեստալիք արտահայտություններից հետո Չոպանյանը Ռ. Մամուլյանի մասին հպարտորեն գրում է. «Իր տաղանդին կազմադրիչ միջավայրը ռուսական է եղած, միջավայրն ուր այդ տաղանդը իր անձնական բնաշրջման կատարը կը բարձրանայ՝ ամերիկեան է, բայց ինքն իսկ տաղանդը՝ մեր ցեղին բղիսած է, և մեր իրաւունքն է մեր ցեղին վերագրել աղբիւրը մտաւոր ուժին որ կը յայտնուի այդ երիտասարդին մէջ որ արդէն իր Հայ ըլլալը ամենուն կը յայտարարէ որոշապէս»⁴⁷⁸:

սեպտ.-հոկտ., քիւ 3, էջ 124-126: Մարգարիտ Բարայանի մասին տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., քիւ 1-2, էջ 172-173:

⁴⁷⁴ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Մեր մտաւորականներն ու արուեստագէտները արտասահմանի մէջ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, քիւ 6, էջ 117-118:

⁴⁷⁵ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, քիւ 5-6, էջ 178-179: Նաև՝ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, քիւ 3-6, էջ 217-218:

⁴⁷⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., քիւ 1-2, էջ 163:

⁴⁷⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, քիւ 1, էջ 89-92:

⁴⁷⁸ Նույն տեղում, էջ 90: Հանճարեղ հայ բեմադրիչի վերաբերյալ խանդավառ գնահատանքի խոսքեր ամերիկյան մամուլի էջերից Ա. Չոպանյանը մեջբերում է նաև «Անահիտ» 1930 թ. 6-րդ համարում. տե՛ս Մեր մտաւորականներն ու արուեստա-

Ուշագրավ է, որ Ռուբեն Մամուլյանը իրեն վերագրված արժանիքների ակունքներում տեսնում էր երկու իրողություն. մեկը՝ հայ ազգը, որից նա քաղել էր իր ներշնչանքները, երկրորդը՝ մորը, որը՝ որպես դերասանուհի, քաջալերել էր որդու թատերական հակումները: Հարազատ ազգի հանդեպ ունեցած այդ ազնիվ ու ճշմարիտ պահվածքը դրվատելով՝ Չոպանյանը վկայում է. «Մամուլեան, հասնել է յետոյ իր ճիւղին մէջ ամենաբարձր յաջողութեանց որոնց կարելի է հասնիլ, ոչ միայն ամէն առիթով ամէն տեղ աղաղակած է իր Հայ ըլլալը, այլ հայկական հաւաքոյթներու մէջ քանիցս յայտնած է թէ ինչ որ ինքը կրցած է ընել՝ կը պարտի է՛ն առաջ իր ցեղին, իր արիւնին, որուն մէջ հին քաղաքակրթութեան մը գանձերը կան»⁴⁷⁹:

Մամուլյանը ևս, հավատացած հայ ժողովրդի ստեղծագործ կարողություններին, վստահ էր, որ Հայաստանում աշխարհ են գալու նորանոր տաղանդներ, որոնց պետք էր նաև հեռվից ոգևորել, օգնել և ոչ թե լծվել «քանդիչ» քննադատությամբ: Այս առիթով նա անում է հետաքրքիր մի գրույց, որ հանդեսը մեջբերում է ամբողջությամբ. «Ճապոնացի նկարիչ մը,- պատմում է Մամուլյանը,- ինձի պատմած է սա այլաբանական պատմութիւնը. Մուհամմետ, Պուտտա եւ Յիսուս օր մը երեքը պարտէզ կ'իջնեն պտտելու: Պատէզին մէջ, ի տես փոքր տխակի մը, Մուհամմետ կը սպառնայ ըսելով. «Եթէ չերգես, քու գլուխդ կը կտրեն»: Պուտտա կը յարէ. «Պիտի համբերեն մինչեւ որ սկիս երգել»: Եւ Յիսուս կը մօտենայ թռչունին ականջն ի վար փսփսալով՝ «Օգնեն քեզի որ երգես»: Մենք ալ պարտինք համբերութեամբ ու համակրանքով օգնել Հայաստանի մինչեւ որ անոր բերնէն թռչի երգը»⁴⁸⁰, - հետևելով այդ գրույցի բովանդակությանը՝

գլտները արտասահմանի մէջ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 121-123: Չոպանյանի՝ Ռ. Մամուլյանի մասին ոգեշունչ գնահատականները տես նաև **Չոպանեան Ա.**, Բրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 171-172:

⁴⁷⁹ **Չոպանեան Ա.**, Բրոնիկի, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 87:

⁴⁸⁰ Հայ արուեստագետները արտասահմանի մէջ, «Անահիտ», Փարիզ, 1930, յունար-փետրուար, թիւ 5, էջ 127:

եզրակացնում է Մամուլյանը:

Արտասահմանում սպրող մանավանդ հայ նոր սերնդի ուծանալու և տարասերվելու վտանգը գուշակելով ու նաև տեսնելով՝ Չոպանյանը ցանկանում է Ռ. Մամուլյանի օրինակով աշխարհով մեկ ցրված հայրենակիցների մեջ դաստիարակել գիտակցված ազգասիրություն, հարազատ ժողովրդի նկատմամբ հարգանք և հավատարմություն:

Այս դիրքից ամենևին պատահական չէ Չոպանյանի քննադատությունը ծագումով հայ այն արվեստագետներին, որոնք, առնելով ճանաչում, երբեմն էլ համաշխարհային հռչակ, օտար մեծ ազգերի քաղաքակրթության փայլով հրապուրված, մոռանում էին իրենց ազգը, փոխում իրենց անունը՝ ներկայանալով այլազգի, ինչպես դա արել էր պարարվեստի երիտասարդ վարպետ ոմն Հրանտ Մուրադյան: Որքան էլ Չոպանյանը մեծարում է նրան՝ ֆրանսիական մամուլից թարգմանաբար մեջբերված քաղվածքներով հաստատում նրա փայլուն հաջողությունները, այնուամենայնիվ վերջինս իրեն ռուս ներկայացնելը համարում է մեղք: «Ատիկա յանցանք մըն է ցեղին դէմ, որ իրենց տուեր է այդ ձիրքը,- զայրացած գրում է Չոպանյանը և ցավով վկայում:- Այդ յանցանքը, մեր ժողովրդին իր քաղաքական գործիքներն ու անկախութենէն զրկելէն յետոյ՝ դարերու ընթացքին շատ մը հին հայ արուեստագետներ գործած են... Պետք չէ այդ յանցանքը այլեւս գործուի»⁴⁸¹: Չոպանյանի խոսքը անողոք է նաև Մայքլ Արլենի, առավել ևս դատափետող՝ Միշել Տրուայայի նկատմամբ, ով, լինելով տաղանդավոր վիպասան և գրական քննադատ, թաքցրել էր իր հայկական ծագումը և նախընտրել ներկայանալ ռուս կամ չերքեզ⁴⁸²:

Իսկ անդրադառնալով «տաղանդաւոր զարդանկարիչ»⁴⁸³ Մել-

⁴⁸¹ Ա. Չոպանյան Ա., Հայ արուեստագետներ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունարփետրուար, թիւ 1-2, էջ 70:

⁴⁸² Տե՛ս Ա. Չոպանյան Ա., Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 64:

⁴⁸³ Հայկ. կեանք, Նոր գնահատանք Քեպապճեանի, «Արեւ», Գահիրէ, 1930, 2 յունիս, թիւ 3446, էջ 2:

քոն Քեպապճյանին՝ Չոպանյանը նրան բնութագրում է որպես «խորապէս ու բնականօրէն արդիական ու խորհրդապաշտ, էականապէս բանաստեղծ խառնուածք, անսպառ ու ազնուական քնայքով նը հարուստ ստեղծագործող միտք»⁴⁸⁴։ Ի դեպ, Քեպապճյանը վերսկսված «Անահիտի» «գմայլելի» զարդանկար-ճակատագարների հեղինակն է՝ բացի 1948 թ. երկու համարների և 1949 թ. եզակի համարի շապիկներից, որոնք գծագրել է փորագրանկարչության խոշորագույն վարպետ Էդգար Շահինը⁴⁸⁵։ Նա նկարագարող է նաև ժամանակի ֆրանսիացի շատ նշանավոր գրողների, այդ թվում նաև Անատոլ Ֆրանսի գրքերից⁴⁸⁶։ Վերջինս, որ գծանկարել էր նաև

⁴⁸⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 93: Հետագայում ևս Ա. Չոպանյանը առիթ ունեցել է անդրադառնալու Մելքոն Քեպապճյանին, մասնավորապէս նրա՝ Փարիզում կազմակերպված անհատական ցուցահանդէսի կապակցութեամբ՝ «Անահիտում» հրատարակելով ցուցահանդէսի ցուցակի համար հեղինակավոր գեղարվեստական քննադատ Գուստավ Քանի գրած առաջաբանի թարգմանությունը, որին հաջորդում է նկարչի արվեստի մասին նյութորոշի քննադատ Գեղամ Խանամիրյանի վերլուծական հոդվածը: Շարադրանքը մեջընդմէջ ընդմիջարկվում է նկարչի մի քանի գործերի լուսանկարներով. տե՛ս **Կիսթավ Ք.**, Մելգոն Քեպապճեան, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 63-64, **Խանամիրեան Գ.**, Մելգոն Քեպապճեանի ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 64-71:

⁴⁸⁵ Էդգար Շահինի մահվան կապակցութեամբ «Անահիտում» փոքրիկ հոդված է տպագրել մտերիմներից Լևոն Կերտանը, որտեղ անվանի փորագրանկարիչը ներկայացվում է և՛ որպէս արվեստագետ, և՛ որպէս մարդ, որը, ինչպէս հեղինակն է փաստում, «Հպարտութեամբ կը յայտարարէր իր Հայութիւնը եւ իր յաջողութիւններուն փառքը կը վերադառնար մեր ազգին»։ տե՛ս **Կերտան Լ.**, Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 7-9: Նկարչի՝ սեփական ազգի նկատմամբ ունեցած նույն վերաբերմունքը ընդգծում է և Ա. Չոպանյանը. տե՛ս **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 8: Իսկ Ա. Չոպանյանի և Էդ. Շահինի հարաբերությունների մասին տե՛ս **Դալլարյան Կ.**, Արշակ Չոպանյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 270-273:

⁴⁸⁶ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 8: Նույն տեղում տե՛ս նաև օտարազգի արվեստաբանների գնահատականները Է. Շահինի արվեստի մասին, **Չոպանեան Ա.**, Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 9-11:

«Անահիտ» հանդեսի առաջին շրջանի շապիկը՝ սկսած երրորդ համարից՝ օգտագործել է միջնադարյան հայ ձեռագրերի խորանների ու անվանաթերթերի զարդանկարչության և թռչնագիր տառերի մանրամասները: Իսկ Մելքոն Քեպապճյանի նկարագարողուն առանձնանում է գրականության, կերպարվեստի ու երաժշտության խորհրդապատկերների համադրությամբ:

Նոր «Անահիտի» տարբեր համարներում երկու նկարիչների գործերից կարելի է հանդիպել բազմաթիվ արտատպումների: Վերատպություններ կան նաև ծնունդով եգիպտահայ Տիգրան Փոլատից, որը, աշակերտելով Էդգար Շահինին, ոչ միայն Ֆրանսիայում, այլև ողջ Եվրոպայում ձեռք էր բերել նրբաճաշակ, «սեպհական տոհմիկ ոճն ունեցող» արվեստագետի հատկանիշներ՝ իր մասնագիտական բարձր որակներով կանգնելով ժամանակի հայ և եվրոպացի լավագույն նկարիչների շարքում: Նրա փորագրանկարներով են նկարագարովել Անատոլ Ֆրանսի «Մենտ Զլեռի ջրհորը», Պիեռ Շենի «Առնետի հուշատետրը», Լաֆոնտենի «Առակների» ժողովածուն և այլ գրքեր, որոնցում «ան ցոյց տուած է նրբախոյզ տաղանդ մը, ըմբռնողական ճկուն միտք մը եւ արտայայտման ձիրքեր ու շնորհն ու վիսփկութիւնը զսպուած կորովի մը կը միանան»⁴⁸⁷, ոգևորված գրում է Չոպանյանը: Շատ արվեստագետներ են նկարագարողել Լաֆոնտենի այդ գիրքը, սակայն, ըստ խմբագրի, պարզվում է, Փոլատին է մասնավորապես հաջողվել առակների դերակատար կենդանիներին պատկերել այնպես, որ դրանք իրենց դեմքով, հագուստով և հոգով հարազատորեն խորհրդանշեն մարդկային այն տիպարներին, որոնց այլաբանորեն փոխարինում են: Իր բնութագրումները Չոպանյանը լրացնում և հաստատում է ֆրանսիական մամուլի էջերում նկարչի մասին բնորոշումներով, ինչպես նաև գրքի առաջաբանը գրած, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամներից մեկի «մեծարժեք» գնահատական-

⁴⁸⁷ **Չոպանյան Ա.**, Տիգրան Փոլատ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 87:

ներով⁴⁸⁸, որոնք թարգմանել է ինքը: Օրինակ, «L'Europe Nouvel» շաբաթաթերթում արվեստի տեսաբանը գրում է. «Եւ ի՛նչ անթերի փորագրիչ, այս Փօլատը: Կը վերգտնենք հոս **Մուկի մը յուշագրին** ճարտարութիւնները, գիտերը, փափկութիւնները: Մէկ խօսքով, շատ գեղեցիկ գիրք մըն է ասիկա, լաւագոյններէն մին, եթէ ոչ լաւագոյնը՝ այս տարեվերջին»⁴⁸⁹: Դժվար չէ գուշակել Չոպանյանի միտքը. ֆրանսիական գեղարվեստական քննադատության որակումներով նաև հաստատել Փոլատի փորագրանկարչական արվեստի տեղը եվրոպական կերպարվեստի զարգացման մակարդակում:

Չոպանյանը գմայլանքով ու ոգևորությամբ է գրում նաև Կովկասյան Հայաստանից Ֆրանսիա տեղափոխված, Ֆրանսիայում մեծ հեղինակություն վայելող գեղանկարչուհի, 20-րդ դարի ազգային կերպարվեստի պատմության մեջ լայն ճանաչման արժանացած առաջին կին արվեստագետի⁴⁹⁰: Արմինիա Բաբայան-Կարբոնելի մասին, ով անվանի մանկավարժ, հասարակական գործիչ Սոֆյա Բաբայանի դուստրն էր՝ Մարգարիտ և Շուշանիկ Բաբայանների քույրը: Արմինիա Բաբայանի գեղարվեստական ճաշակը պայմանավորելով նաև տոհմիկ խառնվածքով՝ Չոպանյանը թարգմանաբար մեջբերում է ֆրանսիացի մի քանի քննադատների հիացական գնահատականներից քաղվածքներ՝ արտատպելով նկարչուհու նկարներից մի քանիսը⁴⁹¹: Ուշագրավ է, որ թեև համաձայնելով նշանավոր արվեստաբան Գյուստավ Կանի այն կարծիքին, թե

⁴⁸⁸ Տե՛ս **Պարթու Լ.**, Պ. Ժան տը Լա Ֆօնթենի ստուերին, դժոխքին մէջ՝ Եղիստեան դաշտերը, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 98:

⁴⁸⁹ **Չօպանեան Ա.**, Տիգրան Փօլատ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 90:

⁴⁹⁰ Տե՛ս **Աղասյան Ա.**, Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից. Արմինիա Կարբոնել-Բաբայան, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2001, №1, էջ 98: Ի դեպ, Ա. Բաբայանի՝ Ա. Չոպանյանի՝ պատկերով արված դիմանկարը գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահում. տե՛ս **Աղասյան Ա.**, Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից. Արմինիա Կարբոնել-Բաբայան, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2001, №1, էջ 102:

⁴⁹¹ Տե՛ս **Չօպանեան Ա.**, Մեր արուեստագէտները. տիկին Արմենիա Բաբայեան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ. -հոկտ., թիւ 3, էջ 85-97:

ինչպես Էդգար Շահինը, այնպես էլ Արմինիա Բաբայանը լինելով հայազգի, բացահայտ և որոշակի կապ չունեն հայ և ընդհանրապես արևելյան մտայնության և զգայնության հետ, «երկուքն ալ հզորապես փարիզցիացած արուեստագետներ են», Չոպանյանը այնուամենայնիվ նկատում է, որ նրանց ստեղծագործություններում առկա է դարավոր տառապանքների ենթարկված հարազատ ցեղի ապրումների սարսուռը, որը նկարիչներին մղել է դեպի կյանքի ցավագին ու տխուր տեսիլների թարգմանությունը⁴⁹²: Այս կերպ Չոպանյանը դարձյալ գալիս է հաստատելու այն իրողությունը, որ արվեստագետի և նրան սերող ազգի միջև գոյություն ունեցող հոգևոր կապը անխափելի է, օտարությունն էլ չի կարող խոչընդոտել դրան:

Օտարության մեջ հաստատված ժամանակակից հայ արվեստագետներին վերաբերող ուշագրավ հոդվածներից է գեղանկարիչ, Փարիզում գործող հայ նկարիչների «Անի» խմբակցության համահիմնադիր Հովսեփ Փուշմանին նվիրված էսսեն՝ գրված ծնունդով պոլսեցի, գրող, Առաջին աշխարհամարտից հետո Նյու Յորքում բնակվող Ջարուսի Գալենքյարյանի կողմից: Արվեստանոցի գոլտրիկ անկյունում գրողի ու նկարչի գրույցի ընթացքում ուրվագծվում է Հ. Փուշմանի կյանքի ու ստեղծագործական ուղու ամբողջական պատկերը՝ նկարչի ծննդավայր Տիգրանակերտի, համիդյան առաջին ջարդերի ու գաղթի, ուսումնառության տարիների և առաջին ցուցահանդեսների անմոռաց հիշողություններով: Հեղինակն անդրադառնում է Փուշմանի՝ Փարիզում ու Նյու Յորքում կազմակերպած ցուցահանդեսներին, այն աշխատանքներին, որոնք գտնվում են Եվրոպայի և ԱՄՆ-ի հայտնի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում և իր խոսքն ավարտում հետևյալ ցավոտ հարցադրմամբ. «Եւ մեր ազգը կը ճանչնա՞յ արդեօք ըստ արժանոյն այս մեծ վարպետը, որը օտարներու մօտ մեզի պատիւ կը բերէ իր Հայ անունովը, Հայ տաղանդովը եւ Հայ սիրտովը»⁴⁹³:

⁴⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 95:

⁴⁹³ **Գալենքյարեան Ջ.**, Յովսեփ Փուշման, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, էջ 63:

Ա. Չոպանյանը իր սքանչացումն է հայտնում նաև հայ գեղարվեստական տաղանդի ևս մեկ շքեղ ապացույցի, Ֆրանսիայում հաստատված և եվրոպացի արվեստասերներից «ծովու նկարիչը» մականվանված Վարդան Մախոխյանի գործի ու տաղանդի նկատմամբ: Նա էլ թեև իր կյանքի ծանրակշիռ մասը անց էր կացրել օտար միջավայրերում, էությամբ միշտ մնացել էր հայ՝ իր ստեղծագործ հինավուրց ժողովրդի հանդեպ խորին հարգանքով և գործով լի: Ֆրանսիայի ազգային շքանշանով պարգևատրված Մախոխյանի նկարներին ֆրանսիացի քննադատների մվիրած հոդվածներից մեջքերված հատվածներում, որոնցում հաճախ հիշատակվում է նկարչի ազգությունը, ընդգծվում են նրա արվեստի քնարականությունն ու ինքնատիպությունը⁴⁹⁴:

Ա. Չոպանյանը Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավեպի տպագրման առիթով արժևորում է նաև նկարիչ Ալեքսանդր Սարուխանին, որի ծաղրանկարներով պետք է զարդարվեր գրողի գիրքը և անտարակույս, ինչպես վստահ էր խմբագիրը, ապահովեր «գեղարուեստական հրաշակերտ մը», որտեղ բացառիկ ինքնատիպությամբ երկու տաղանդներ պետք է միանային: Խմբագիրը շատ բարձր է գնահատում Սարուխանի արվեստը՝ նշելով, «որ այդ երգիծական ուժեղ գծանկարիչը իր ճիտին մեջ մեծ արուեստագետ մըն է, մեր մեջ իր հաւասարը չունեցող եւ օտարներէ ալ գնահատուած»⁴⁹⁵, ինչպես օրինակ, ֆրանսիացիներից:

«Անահիտում» առանձնահատուկ տեղ էր տրամադրված նաև

⁴⁹⁴ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 101-105: Վ. Մախոխյանի մասին «Անահիտում» տե՛ս նաև Ռ-աֆայել Շիշմանյանի ճառը՝ արտասանված նկարչի մահվան կապակցությամբ, որը վերջինիս կյանքին ու գործունեության մվիրված ամփոփ մի ուսումնասիրություն է, որտեղ, վերլուծելով նկարչի տարբեր հույզեր ու տրամադրություններ արտահայտող նկարները, հեղինակը հետաքրքիր զուգահեռներ է տանում Հովհ. Այվազովսկու արվեստի հետ, նկատում է որոշ ընդհանրություններ. տե՛ս **Շիշմանյան Ռ.**, Նկարիչ Վ. Մախոխյան, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 69-74:

⁴⁹⁵ **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 27-58: Տե՛ս նաև **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 110:

հայ հին գորգագործության գեղարվեստական ճարտարվեստին ու պատմությանը: Այս առումով անփոխարինելի արժեք են ներկայացնում Հարություն Քյուրդյանի և Արմենակ Սազրզյանի ծավալուն հոդվածները՝ հայկական բազմաթիվ գորգերի լուսանկարներով⁴⁹⁶:

Հանդեսի էջերում ավելի հաճախ մեկ-երկու էջով կամ շատ ավելի հակիրճ բնորոշ խոսք էր ասվում գեղարվեստի այս կամ այն սեռի հայ նորահայտ տաղանդների մասին՝ արվեստասեր հասարակության ուշադրությունը հրավիրելով նրանց վրա: Այդ տեսակետից, օրինակ, հատկանշական է Օ. Պերպերյանի հոդվածը կահիրեաբնակ երիտասարդ արվեստագետ, օֆորտի (մետաղի վրա փորագրության տեսակ - Վ. Ա.) վարպետ Օննիկ Ավետիսյան մասին, որտեղ հոդվածագիրը մանրամասն տեղեկություններ է տալիս մաս այդ արվեստի առանձնահատկությունների վերաբերյալ⁴⁹⁷: Ոգևորված արվեստագետի հաջողություններով՝ Չոպանյանն էլ անմասն չի մնում գնահատականներից՝ գրելով. «...Շահիմի եւ Փօլատի արժանի ընկեր մըն է որ կը ծագի, իրեն յատուկ տեսիլով ու ոճով, աւելի արեւելցի քան երկու ծանօթ վարպետները- այդ նրբարուեստ փորագրանկարչին մէջ»⁴⁹⁸:

Պակաս հետաքրքիր չեն մաս քրոնիկներում՝ սովորաբար «Մեկ-նոդները» ընդհանուր խորագրի տակ, հայագրի առավել կամ պակաս հանրաժանոթ և նշանակալից մշակութային դեմքերի, արվեստագետների մահվան առիթով Չոպանյանի ներբողալից հոդ-

⁴⁹⁶ Տե՛ս **Քիւտեան Յ.**, Գորգաշինութիւնը հայոց մէջ (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.- հոկտ., թիւ 3, էջ 67-75, **Քիւտեան Յ.**, Գորգաշինութիւնը հայոց մէջ (Բ. եւ վերջին մաս), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 118-128, **Քիւտեան Յ.**, Հայ եւ արար գեղարուեստի յարաբերութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-յոկտեմբեր, թիւ 1-2, էջ 67-81, **Քիւտեան Յ.**, Նոր հայկական եւ կովկասեան գորգերը, «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս-սեպտեմբեր, թիւ 5, էջ 28-44, **Սազրզեան Ա.**, Հայկական գորգերը ԺԵ.էն ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 72-87:

⁴⁹⁷ Տե՛ս **Պերպերեան Ռ.**, Պ. Օննիկ Աւետիսեանի օ-Ֆօրթները, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր 1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 32-36:

⁴⁹⁸ Նույն տեղում, էջ 220:

վածները, որոնցում հանգուցյալի համառոտ կենսագրականին առավել հաճախ ընկերակցվում էին նրա գործը արժևորող տողեր: Գնահատման գլխավոր չափանիշը դարձյալ նույնն էր. որքանո՞վ է նա իր գործով և արվեստով պանծացրել հայ անունը մանավանդ օտարների աչքում, ինչքանո՞վ է իր կարողություններն ու հմտությունները ի սպաս բերել իր ժողովրդին և բարձր բռնել նրա պատիվը⁴⁹⁹: Այդ առումով հոգեշարժ և խանդաղատիչ են Չոպանյանի խոսքերը՝ գրված ժամանակի մեր երեք տաղանդավոր արվեստագետներից նախ նկարիչ, «հայ արուեստի կատարներէն» Եղիշե Թադևոսյանի, ապա «Հայաստանի արդի մեծագոյն ճարտարապետ» Ալեքսանդր Թամանյանի ու հայ թատերական արվեստի սյուներից, հայ իրապաշտ դերասաններից առաջինի և մեծագույնի՝ Հովհաննես Աբելյանի կորստյան շարժառիթով, որոնք վախճանվեցին գրեթե միևնույն ժամանակ: Ողբալով թանկագին բարեկամների վաղաժամ մահը՝ Չոպանյանը հիշում է նրանց հետ ունեցած անմոռանալի հանդիպումները և հարգանքի խոսքեր նվիրելով նրանց հիշատակին՝ հակիրճ գնահատում նաև նրանց արվեստն ու գործը⁵⁰⁰:

Մեր ազգի քաղաքակրթական կարողությունների շքեղ ապացուցումներից մեկն էլ դաշնակահար, երգահան Ստեփան Էլմասն էր, որի մահվան կապակցությամբ շվեյցարական մամուլի էջերից մեջբերված քաղվածքներով հանգամանորեն ներկայացնելով նրա կյանքն ու գործը, երաժշտական ժառանգությունն ու հասարակական-բարեգործական ծառայությունները՝ Չոպանյանը նրա մասին գովեստալիր հողվածներից վկայակոչում է նաև հետևյալ տողերը. «Սթեֆան Էլմաս այն է Հայոց համար ինչ որ Շոփէն Փոլոնիացոց համար եղաւ. երկուքն ալ իրենց ճմլուած հայրենիքն ողբացած են»⁵⁰¹:

⁴⁹⁹ Օրինակ, տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1940, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 15-30:

⁵⁰⁰ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 32-35 և **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 23-26:

⁵⁰¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկի, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 90:

Ազգային դարավոր մշակույթը ներկայացնելուն զուգահեռ՝ նոր «Անահիտը» առանձնակի ուշադրություն դարձրեց նաև հայ ընթերցողին համաշխարհային արվեստի գանձերին և գեղարվեստական շարժմանը ծանոթացնելուն, որը ծրագրել էր դեռ նախորդ շրջանում, սակայն ըստ էության թողել չիրագործված⁵⁰²: Թատրոնի, երաժշտության, հոգևոր մշակույթի այլազան բնագավառներին վերաբերող լուրջ ուսումնասիրությունների կողքին⁵⁰³ «Անահիտում» վերատպվել են ժամանակակից եվրոպական գեղանկարչության առաջնակարգ հեղինակների գործերից, մատուցվել են մեծ թվով ցուցահանդեսներ՝ համաշխարհային արվեստի կերտվածքների, գեղանկարչական ստեղծագործությունների ու փորագրանկարների, ինչպես և հոգևոր և աշխարհիկ տարբեր կառույցների լուսանկարներով⁵⁰⁴: Նաև այս առումով «Անահիտի» դերն ու նշանակությունը առավել են ընդգծվում, երբ գիտակցում ենք, որ հանդեսի հասարակական ներգործության աշխարհագրական մակերեսը տարածվում էր գրեթե աշխարհով մեկ՝ հատկապես այն վայրերում, որտեղ կազմավորվել էին խոշոր հայ համայնքներ՝ Ավստրիա, Սիրիա, Եգիպտոս, Սուդան, Հունաստան, Բուլղարիա, Անգլիա, Ռումինիա, Պարսկաստան, Հնդկաստան, Իրաք, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի տարբեր քաղաքներ և այլուր:

⁵⁰² Տե՛ս **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը», Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 147:

⁵⁰³ Տե՛ս, օրինակ, **Մազմանեան Վ.**, Եօհան Սեպասիան Պախ, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 147-150, **Վուլչիք-Քեօփրիլեան Պ.**, Ֆրետերիք Շօփեն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ. թիւ 1-2, 23-26:

⁵⁰⁴ Օրինակ, տե՛ս Մեծ արուեսագետները. Օնօնէ Տօմիէ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 33-35, **Չօպանեան Ա.**, Հանրի տը Կրու եւ հայկական տարագրութեանց արհաւիրքը, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1, էջ 66-71, **Շիշմանեան Ռ.**, Անթուան Պուրտէլ (Վերջը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 20-30, **Շիշմանեան Ռ.**, Անթուան Պուրտէլ (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 13-20, «Պամպոչչիաթա». Նկար Տօսօ Տօսսիի, 1479-1542, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 118, **Մուքաֆեան Ջ.**, Նկարչութեան ձգտումները (Մնացեալը յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 51-58, **Մուքաֆեան Ջ.**, Նկարչութեան ձգտումները, Բ., «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 37-41 և այլն:

Հանդեսի արվեստի բաժնին աշխատակցում էին հայ և համաշխարհային մշակույթի բազմաթիվ ականավոր ու պատկառելի դեմքեր, ինչպես, օրինակ, անվանի հայագետ, արվեստաբան, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը (Փարիզ, Էջմիածին)⁵⁰⁵, նկարիչ, արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը (Փարիզ)⁵⁰⁶, պատմաբան, բանասեր, արվեստաբան Հարություն Քյուրդյանը (Ուիչիտո, ԱՄՆ)⁵⁰⁷, արվեստաբան, արևելագետ Արմենակ Սազրզյանը (Կոս-

⁵⁰⁵ Տե՛ս, օրինակ, **Յովսէփեան Գ.**, Լեւոն Գ-ի սաղմոսարանի մանրանկարչությունը, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 5-6, **Յովսէփեան Գ.**, Սեւանի Առաքելոց վանքին հարաւային դռաը, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 25-41, **Յովսէփեան Գ.**, Եղիշէ Թաղեոսեանի Էտիպների ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, 1935, էջ 23-28, **Յովսէփեան Գ.**, Էջմիածնի մեծ խորանի ասեղնագործ վարագոյրը, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4, էջ 20-24:

⁵⁰⁶ Տե՛ս, օրինակ, **Շիշմանեան Ռ.**, Անթուան Պուրտէլ (Վերջը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 19-30, **Շիշմանեան Ռ.**, Անթուան Պուրտէլ (Շար.), «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 13-20, **Շիշմանեան Ռ.**, Նկարիչ Վ. Մախոխեան, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 69-74:

⁵⁰⁷ Տե՛ս, օրինակ, **Քիւրտեան Յ.**, Գորգաշինությունը հայոց մէջ (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 67-75, **Քիւրտեան Յ.**, Գորգաշինությունը հայոց մէջ (Բ. եւ վերջին մաս), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 118-128, **Քիւրտեան Յ.**, Նիւթեր հայ երաժշտութեան պատմութեան համար. Երաժշտութեան մասին երկու հատուածներ Նախնեաց մատենագրութեան, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 30-34, **Քիւրտեան Յ.**, Նիւթեր հայ գեղարուեստի պատմութեան համար. Իզնատիոս մանրանկարիչ, «Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 32-44:

տանդնուպոլիս)⁵⁰⁸, ֆրանսահայ նկարիչ Ջարեհ Մուֆաֆյանը⁵⁰⁹, գրող, գրականագետ, արվեստաբան Արամ Երեմյանը (Երևան), որի հանրամատչելի, բնույթով ավելի տեղեկատվական հոդվածները ավելի հաճախ «Հայաստանի նկարիչները» (մաս՝ «Խորհրդային Հայաստանի նկարիչները») ընդհանուր խորագրի տակ արտասահմանի հայությանը հակիրճ կենսագրական ծանոթագրություն էին տալիս տաղանդավոր նկարիչներ Մարտիրոս Սարյանի⁵¹⁰, Գաբրիել Գյուրջյանի⁵¹¹, Սեդրակ Առաքելյանի⁵¹², Անուշ Սազի-

⁵⁰⁸ Տե՛ս, օրինակ, **Սազրզեան Ա.**, Հայկական գորգերը ԺԵ.էն ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, քիւ 5-6, էջ 72-87, **Սազրզեան Ա.**, Մարաջախտ Աւշիւնի անունով 1274ին գրուած հայերէն Աւետարանին լուսագարդութիւնը (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, քիւ 6, էջ 18-26, **Սազրզեան Ա.**, Մարաջախտ Աւշիւնի անունով 1274ին գրուած հայերէն Աւետարանին լուսագարդութիւնը (Շար. եւ վերջ), «Անահիտ», 1936, յունուար-մարտ, քիւ 1-2, էջ 4-13, **Սազրզեան Ա.**, Յիշատակներ Կոստանդնուպոլսէն (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., քիւ 5-6, էջ 10-17, **Սազրզեան Ա.**, Յիշատակներ Կ. Պոլսէն. Բ. (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, քիւ 1-2, էջ 33-40, **Սազրզեան Ա.**, Յիշատակներ Կ. Պոլսէն (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, քիւ 3-4, էջ 34-42, **Սազրզեան Ա.**, Հայկական գորգեր, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, քիւ 1-2, էջ 34-36:

⁵⁰⁹ Տե՛ս, օրինակ, **Մուքաֆեան Ջ.**, Նկարչութեան ձգտումները (Մնացեալ յաջորդ քիւով), «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, քիւ 1-3, էջ 51-58, **Մուքաֆեան Ջ.**, Նկարչութեան ձգտումները. Բ. (Շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, քիւ 1-2, էջ 35-41:

⁵¹⁰ Տե՛ս **Երեմեան Ա.**, Հայաստանի նկարիչներ. 1.- Մարտիրոս Սարեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, քիւ 1, էջ 20-22: Ի դեպ, նույն համարի 21-րդ էջում տպագրված է Ա. Չոպանյանի դիմանկարը՝ «Կենդանագիր Ա. Չ.ի (Փարիզ, 1927). Նկար՝ Մարտիրոս Սարեանի» մակագրությամբ. տե՛ս **Երեմեան Ա.**, Հայաստանի նկարիչներ. 1.- Մարտիրոս Սարեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, քիւ 1, էջ 23:

⁵¹¹ Տե՛ս **Երեմեան Ա.**, Հայաստանի նկարիչներ. 2.- Գաբրիել Գիւրջեան, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, քիւ 2, էջ 24-25:

⁵¹² Տե՛ս **Երեմեան Ա.**, Խորհրդային Հայաստանի նկարիչները. 3.- Սեդրակ Առաքելեան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., քիւ 3, էջ 16:

նյանի⁵¹³, Հակոբ Կոջոյանի⁵¹⁴, Վահրամ Գայֆեճյանի⁵¹⁵, Ստեփան Աղաջանյանի⁵¹⁶, Եղիշե Թաղևոսյանի⁵¹⁷, «Կովկասահայ առաջին արձանագործուիկ» Այծեմնիկ Ուրարտու Քոչարյանի⁵¹⁸ և այլ արվեստագետների մասին՝ կից վերատպելով նրանց նշանակալից գործերից բազմաթիվ նմուշներ: Ըստ ամենայնի ուշագրավ են նաև Ա. Երեմյանի՝ Նոր Ջուղայի նկարչական արվեստին նվիրված հոդվածները՝ տարբեր շինվածքների բազմաթիվ որմնանկարների արտատպումներով⁵¹⁹: Նոր Ջուղայի կապակցությամբ հետաքրքիր է նաև երիտասարդ արվեստագետ Գրիգոր Վահրամյանի հոդվածը՝ տեղի Ամենավրկիչ վանքի որմնանկարների վերաբերյալ⁵²⁰:

Հաճախ ստացվել է այնպես, որ «Անահիտում» տպագրված լու-

⁵¹³ Տե՛ս **Երեմեան Ա.**, Խորհրդային Հայաստանի նկարիչները, 4.- Անուշ Սագինեան, «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 63-65:

⁵¹⁴ Տե՛ս **Երեմեան Ա.**, Խորհրդային Հայաստանի նկարիչները, 4. Յակոբ Կոջոյեան, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 7:

⁵¹⁵ Տե՛ս **Երեմեան Ա.**, Խորհրդային Հայաստանի նկարիչները. Վահրամ Գայֆեճեան, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 27:

⁵¹⁶ Տե՛ս **Երեմեան Ա.**, Հայաստանի նկարիչները. Ստեփան Աղաջանեան, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 14:

⁵¹⁷ Տե՛ս **Երեմեան Ա.**, Ե. Թաղևոսեան, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 17-22: Նույն համարում Ե. Թաղևոսյանի տաղանդը գնահատել է նաև Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը. տե՛ս **Յովսեփեան Գ.**, Եղիշե Թաղևոսեանի էտիպների ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 23-28:

⁵¹⁸ Տե՛ս **Երեմեան Ա.**, Արձանագործ Այծեմնիկ Ուրարտու Քոչարեան, «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս-օգոստոս, թիւ 4, էջ 58-62:

⁵¹⁹ Տե՛ս **Երեմեան Ա.**, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (Մնացեալը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4, էջ 32-60, **Երեմեան Ա.**, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 44-63, **Երեմեան Ա.**, Նորագիտ էջեր Նոր Ջուղայի որմնանկարչութիւնից, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 24-32, **Երեմեան Ա.**, Փշռանքներ Նոր Ջուղայի Սեֆեւեան արուեստից, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1, էջ 23-25:

⁵²⁰ Տե՛ս **Վահրամեան Գ.**, Նոր Ջուղայի «Ամենավրկիչ» վանքի տաճարի որմնանկարները, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտեմբեր, թիւ 2, էջ 41-43:

սանկարները ստացել են սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ դրանցում վավերացված շինությունների մնացորդները, նրանց պատերի ու սյուների որմնանկարները չեն պահպանվել կամ մասամբ են փրկվել կորստից, ինչպես, օրինակ, Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչը⁵²¹ կամ Երևանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին⁵²², որի կիսավուղ շինվածքի և որմնանկարների ուսումնասիրության շնորհիվ, ինչպես հեղինակն է գրում, «Երեւան կը յայտնուի իբր հին եւ մշակոյթ ունեցող հայաքաղաք մը... եւ այսպէս քանդուող Պօղոս-Պետրոս եկեղեցին ցոյց կուտայ որ Երեւանի մէջ 5-6րդ դարերուն կար ճարտարապետական նկատելի կերտուածք, քանդակագործութեան նմոյշներ, ու կը հաստատուի նաեւ ուրիշ տեղերէ միայն աւանդութեամբ ծանօթ՝ նկարչութեան անժխտելի (նիւթապէս, մինչեւ մեզի հասած նմոյշներով) գոյութիւնը հոն»⁵²³:

«Անահիտի» շուրջ համախմբված թե՛ հայ, թե՛ օտարազգի արվեստաբան-գիտնականների՝ հանդեսի էջերում տպագրած տեսական դրույթներն ու գեղագիտական հայացքները, նորահայտ երևույթների վերլուծական գնահատականներն ու ուսումնասիրություններն անշուշտ պետք է նպաստեին և հարկավ օժանդակել են մեզանում արվեստաբանական մտքի զարգացմանն ու առաջընթացին, ընթերցողին դաստիարակել գեղեցիկի գեղարվեստական գնահատման և արժևորման ունակությամբ:

⁵²¹ Տե՛ս **Երեմեան Ա.**, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (Մնացեալը յաջորդով), «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիվ 4-5, էջ 32-60, **Երեմեան Ա.**, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (Շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիվ 5-6, էջ 44-63:

⁵²² Այն քանդվել է 1936 թվականին: Քանդելու որոշումը՝ այդ տարածքի վրա հետագայում մեծ շինություն կառուցելու նպատակով, տրվել է նաև պրոֆեսոր Ն. Մառի սխալ ու հապճեպ կարծիքի հետևությամբ: Նա հայտարարել էր, թե իբր եկեղեցին գեղարվեստական ու պատմական տեսակետից որևէ արժեք չի ներկայացնում. այդ մասին տե՛ս **Քիրոսեան Յ.**, Հայ գեղարուեստի պատմութեան համար. Նորագիտ հին որմնանկարներ Երեւանի Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցւոյն, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 63:

⁵²³ Նույն տեղում, էջ 62:

* * *

Նկատենք, որ «Անահիտը» նաև աչքի էր ընկնում քաղաքական տեսություններով, ոչ միայն ընթացիկ ազգային-քաղաքական, այլև համաշխարհային իրադարձությունների վերաբերյալ գնահատումներով ու վերլուծություններով, մասնավորապես ֆաշիզմի, «գերման ցեղամոլների» քաղաքականության գայրագին քննադատությամբ ու դատապարտմամբ⁵²⁴:

⁵²⁴ Այդ հարցերին մենք չենք անդրադարձել՝ դրանց հանգամանալից քննությունը վերապահելով պատմագետներին:

ԳԼՈՒԽ 5

ՎԵՐԱՀԱՍ ԱՂԵՏԸ ԵՎ «ԱՆԱՀԻՏԻ» ՓԱԿՈՒՄԸ

1937 թ. աղետաբեր տարվանից, երբ ամբողջ խորհրդային երկիրը սկսեց տնքալ ստալինյան դաժան, մարդատյաց ու ազգահալած քաղաքականության ճնշումների տակ, աստիճանաբար խզվեցին կապերը Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի միջև: Մոլորված ստեղծված իրավիճակից՝ ոչ այնքան հուժկու, որքան լրջությամբ Չոպանյանը գրում է. «Սասունցի Դալիթը... եթե արթննար իր դարատր քունեն եւ իմանար Հայաստանի ժողովուրդին եւ Սփյուռքի պանդուխտ Հայութեան միջեւ յարաբերութեանց այս բացարձակ խզումը, պիտի ապշէր ու գայրանար այսպիսի անողորմ արտառցութեան մը ի տես: Ու Քարլ Մարքսն իսկ, որ այժմ իբր նոր կրօնքի մը առաքեալ կը պաշտուի Խ. Հայաստանի մէջ, եթէ կարենար տեղեկանալ իրաց այս տխուր վիճակին, տարօրինակ ու գալթակղեցուցիչ պիտի գտներ որ Սփյուռքի հայրենագուրկ, վտարանդի, տարաբաղտ Հայութեան կողմէ յայտնուած այսպիսի տարրական բաղձանքներ - բոլորովին անմեղ եւ Հայաստանին բացարձակապէս օգտակար - տեսական մերժման մը հանդիպին»⁵²⁵:

Հայրենիքում այնքան վերելքով սկիզբ առած գրական-գեղարվեստական կենսունակ շարժումը սկսեց անկում ապրել: Ամենուր սովորական դարձան քաղաքական ամբաստանություններն ու պարսավանքները: «Կասումի բոպէ մըն է»⁵²⁶, - 1937 թ. տարեսկզբին փաստում է Ա. Չոպանյանը և ամիսներ հետո ցավով արձանագրում. «Ամեն պարագայի մէջ, Հայաստանն ու հայ ժողովուրդը՝

⁵²⁵ **Չոպանեան Ա.**, Պատերազմը, «Անահիտ», Փարիզ, 1940, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 36:

⁵²⁶ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 106:

հայ հիմնադրոց, բազմագլուխ, բազմաձեռն ողբերգութեան մէկ նոր գլխուն առջեւ կը գտնուին...»⁵²⁷: Իսկ երկու տարի անց վշտացած գրում է. «Յարաբերութեանց բացարձակ խզումը Խ. Հայաստանի եւ գաղութահայութեան միջեւ, որ կատարեալ աղէտ մըն է մեր ժողովուրդին համար, կը շարունակուի ու մարդ չի կրնալ գիտնալ թէ որքան աստե՛ն պիտի տեսէ դեռ: Երանելի էր այդ երէկը - իր բոլոր թերութիւններով մէկտեղ... եւ այսօր տասն անգամ ատելի «պանդուխտ» ենք, «հայրենագուրկ» ենք, քան երկու տարի առաջ. հայրենիք մը ունինք եւ չունինք. ոչ թերթ, ոչ գիրք, ոչ մամակ կը ստանանք Հայաստանէն, երթեակը դադրած է, ներգաղթը դադրած է, գործակցութիւնը դադրած է...»⁵²⁸:

Չոպանյանին ծանրագին ցավ են պատճառում Ակսել Բակունցին, Ալազանին, Վաղարշակ Նորենցին, Դրաստամատ Սիմոնյանին, Գուրգեն Մահարուն, Վահան Թորոզեցին և ուրիշ շատ մտավորականների՝ գրողների միութեանից արտաքսելու և նրանց հանիրաւի մեղադրանքներ ներկայացնելու լուրերը: Նա չի կարողանում համակերպվել այն մտքին, թե մեղադրված մտավորականները կապ են ունեցել տրոցկիզմի հետ, կազմել են իմպերիալիզմի օգտին գործող դավադիրների խումբ: Այդ ամբաստանությունների համար Չոպանյանը մեղադրում է Նաիրի Չարյանին⁵²⁹, նաև զարմանում, որ այնպիսի քաջածանոթ ու տաղանդավոր գրողներ, ինչպիսիք են Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Չորյանը, Չապել Եսայանը, Գեղամ Սարյանը, Սողոմոն Տարոնցին, ոչ միայն չեն պաշտպանել

⁵²⁷ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 81:

⁵²⁸ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 66-67:

⁵²⁹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 99: Նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1946, յունուար-յունիս, թիւ 1, էջ 57, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յունուար-յունիս, թիւ 1, էջ 54, **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 60:

իրենց ընկերներին, այլև իրենք էլ գրպարտել են նրանց⁵³⁰: «Հանցապարտ» գրողներին ներկայացված մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ նրանք իրենց գործերում արտահայտել են «ազգային զգայնություն»: Իսկ դա ոմանց կողմից որակվել էր որպես ազգայնամոլության դրսևորում: Չոպանյանը հանդես է գալիս այդպիսի անհեթեթության դեմ և այդ գրողներին «արդարացնելու» համար օրինակ բերում Մ. Գորկու գրականությունը. «Իսկ եթե մերք իրենցմե՛ն ոմանց ինչ ինչ էջերուն մէջ «հայկական զգայնություն» մը կը թրթռար, աստոր համապատասխան ռուսական զգայնութիւնը միթէ չե՞նք գտներ ամբողջ Խ. Միութեան պաշտած Կորքիի գրուածքներուն մէջ. միթէ նմանօրինակ էջեր, որ «ազգայնական» չեն, այլ «մարդկային», չե՞ կարելի գտնել նաեւ զիրենք ամբաստանողներէն ոմանց այս կամ այն գործին մէջ: Եւ ատիկա յանցանք չէ արդէն, այլ երեւոյթ մը որ ամենքին ալ պատիւ կը բերէ. որովհետեւ ճշմարիտ արուեստագէտը, գրագէտը՝ միջազգայնական մտայնութիւն կ'ունենայ, իր կարեւորագոյն գործերը յղացած ատեն, բայց իր արտայայտութեան եղանակին մէջ անձնական խառնուածքին ու ցեղային շէշտին, տեղական գոյնին կնիքը կը դնէ, որով եւ ինքնատիպ կը դառնայ, ուրոյն արժէք կը ստանայ, կենդանի գործ կ'արտադրէ»⁵³¹:

Մեկ այլ առիթով Չոպանյանը բացատրում է ազգային և ազգայնամոլ հասկացությունների իմաստները: Դրանք, իհարկե, նորություն չէին քննադատի համար. նա դեռ տասնամյակներ առաջ արդեն պայքարում էր ազգային միհիլիզմի դեմ, մերժում էր ազգայնամոլությունը⁵³²: Իսկ այժմ այդ հարցին անհրաժեշտ էր վերադառնալ՝ բացատրելու խորհրդահայ գրականության մեջ ազգայինի դրսևորումները քարկոծող քննադատներին, որ «Տեղական կամ

⁵³⁰ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 48:

⁵³¹ Նույն տեղում: Գրեթե նույն միտքը տե՛ս նաև **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 120:

⁵³² Տե՛ս նաև **Գաբրիելյան Վ., Ա.** Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 1, էջ 45:

ցեղային գոյնը, բնիկ միջավայրի, բնավայրի տեսարաններու նկարագրութիւնը, անհրաժեշտ մաս կը կազմէ **ազգային ձեւին**, առանց որուն ո եւ է կենդանի եւ ինքնատիպ գործ չի կրնար երեսան գալ, եւ ազգայնամոլութեան հետ ո եւ է կապ չունի»⁵³³:

Հայրենիքից եկող լուրերը գնալով դառնում են ավելի տագնապալի: Չոպանյանը մտահոգվում է Բակունցի, Մահարու, Նորենցի և մյուսների ճակատագրով, տագնապում Չարենցի բանտարկության, հետո նաև գնդակահարման մասին հասած կցկտուր, անստույգ տեղեկություններից. «Անասելի է ցարը զոր կը զգամ մանաւանդ Նորենցի, Մահարիի, Բակունցի պէս զմայլելի տաղանդով գրողներու եղերական խորտակումէն, ինչպէս եւ Թորոլենցի, Դրաստամատ Սիմոնեանի, Ալագանի պէս մտաւորական արժէքաւոր գործիչներու... Կը դողամ Չարենցի պէս հոյակապ քերթողի մը կեանքը վտանգի մէջ չըլլայ...»⁵³⁴:

Չոպանյանը որքան այդ բոլոր դժբախտությունների պատճառը տեսնում է իբրև ռուս համայնավար կուսակցության ներքին խռովությունների գրգռման հետևանք, ավելի մեծ չափով, սակայն, գնահատում է որպէս «հայ իրերատեսաց գձուճ կրքերու բորբոքման», «Յուդայի հոգիով» նախրեցիների ամբաստանությունների «արդիւնք»⁵³⁵:

Եվ ասես անգոր ստեղծված եղերական կացության հանդեպ՝ Չոպանյանին ուրիշ ոչինչ չի մնում անել, քան մաղթել, որ շուտափույթ հաստատվի հայ ժողովրդի համար այնքան պատվաբեր մտավորական գործիչների անտարակուսելի անմեղությունը, և նրանք վերադառնան իրենց գրական ազնիվ աշխատանքին: Քննադատը խուսափում է ուղղակի պաշտպանել «մեղավոր» գրողներին՝ հասկանալով, որ այդ պաշտպանությունը կարող է նույնիսկ վնասել նրանց. չէ՞ որ իրեն էլ «պուրժուա», «նացիոնալիստ» և «հա-

⁵³³ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 120:

⁵³⁴ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 99:

⁵³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

կայեղափոխական» էին համարում: «Միայն Արշակ Չոպանյանի հետ նամակագրական կապն ու հարաբերվելը, թեկուզ նամակազրույթյամբ, արդեն լուրջ խնդիր էր՝ շատ դեպքերում ողբերգությամբ ավարտվող (հալածանք, արքտր)»⁵³⁶, - գրում է գրականագետ Խաչատուր Վարդանյանը:

Իսկ քննադատին այդպիսի պիտակներ կայցնողներից էին նաև Ջապել Եսայանն ու Եղիա Չուբարը, որոնց, սակայն, գրողների միությունից հեռացվելու և իբրև տրոցկիստ վարկաբեկվելու լուրերը այնքան վշտացնում են Չոպանյանին: Մոռացած իրեն հասցված անձնական վիրավորանքները՝ մեծահոգի մտավորականը՝ որպես ճշմարիտ արվեստագետ, վերջիններիս մեջ տեսնում էր միայն ազգային տաղանդավոր գրագետների և հավասարաչափ տազնապում նաև նրանց ճակատագրի համար⁵³⁷:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ա. Չոպանյանի կապերը Հայաստանի հետ գրեթե լրիվ խզվում են: Դրանից առաջ էլ Չոպանյանը Երևանից լուրեր առնում էր միջնորդաբար՝ հիմնականում Նյու Յորքի «Լրաբեր», «Լուսաբեր» թերթերից, որոնք, ինչպես և արտասահմանում տպագրվող հայկական շատ այլ պարբերականներ, հայրենիքից տեղեկություններ քաղում էին «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթից: Անուղղակի ստացած լուրերով ոգևորված՝ Չոպանյանը ուրախ էր, որ Խորհրդային Հայաստանում տարիներ առաջ սկսված տնտեսական և մշակութային կյանքը եռանդով շարունակվում է, և ինքն էլ իր հանդեսում հաճույքով հաճախ արտատպում էր այդ հաղորդումներից⁵³⁸: Սակայն անհանգստությունը մի խումբ մտավորականների և քաղաքական գործիչների ճակատագրի վերաբերյալ շարունակվում է: «...Ի՞նչ եղան, ո՞րչ էն թէ մեռած, արքտրի՞ մեջ էն թէ բանտը, կամ Երեւա՞ն

⁵³⁶ **Վարդանյան Խ.**, Դանիել Վարուժանը և «գրական հեթանոսությունը», Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 5:

⁵³⁷ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Զրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 126:

⁵³⁸ Օրինակ, տե՛ս **Չոպանեան Ա.**, Պատերազմը, «Անահիտ», Փարիզ, 1940, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6, էջ 33-36:

կը մնան՝ բայց ամեն գործէ հեռացուած,- մեր այն խումբ մը ազնիւ հայրենակիցները...»⁵³⁹, - մտահոգ հարցնում է Չոպանյանը:

Շուրջ վեց տարի՝ գերմանական բանակի կողմից Փարիզի գրավումից մինչև 1946 թվականը, ընդհատվում է «Անահիտի» հրատարակումը. «Որոշեցի դադրեցնել թերթիս հրատարակումը, քանի որ գերման գրաքննութեան տակ՝ օրուան մեծ հարցերուն վրայ ազատօրէն արտայայտուելու կարելիութենէն զուրկ պիտի ըլլայի»⁵⁴⁰, - բացատրում է Ա. Չոպանյանը: Խմբագիրը զգուշացել էր նաև հնարավոր հետապնդումներից, քանի որ անթաքույց քննադատել էր հիտլերյան Գերմանիայի՝ իր հարևան գրավյալ ժողովուրդների հանդէպ տարած դաժան քաղաքականությունը:

Պատերազմից հետո շատ թե քիչ նորոգվում են մշակութային առնչությունները Խորհրդային Հայաստանի հետ, վերհաստատվում են արտասահմանյան հայ տարագիր զանգվածների ու բնօրրանի հայության միջև հարաբերություններն ու գործակցությունը, սակայն, ինչպես Չոպանյանն է բազմիցս նկատում և զանգատվում, դրանք հեռու էին օրինաչափ ձևից: «Բնականոն ձեւը այն է՝ բոլոր քաղաքակիրթ ազգերուն մէջ,- բացատրում է ազգանվեր գործիչը,- որ հայրենիքի բոլոր թերթերն ու հանդէսները կը փոխանակուին նոյն ժողովուրդի արտասահմանեան թերթերուն ու հանդէսներուն հետ, իսկ գրական, գիտական, գեղարուեստական գործերու մէջ կարեւորագոյնները որ լոյս կը տեսնեն հայրենիքին մէջ, կը դրկուին արտասահմանի գոնէ ամենէն տարածուած թերթերուն եւ ամենէն հեղինակատր գրագէտներուն, քննադատներուն եւ բանասէրներուն»⁵⁴¹:

Ստեղծված իրավիճակում և նոր հանգամանքներում Չոպանյանը դարձյալ կոչ է անում Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև կապը դարձնել կանոնավոր, վերջ դնել գաղութահայ զա-

⁵³⁹ Նույն տեղում, էջ 36: Տե՛ս նաև **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 60:

⁵⁴⁰ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1946, յունուար-յունիս, թիւ 1, էջ 51:

⁵⁴¹ **Չոպանեան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 59-60:

նազան հոսանքների կուսակցամոլական, միմյանց դեմ կատաղի ստեղծություն սերմանող, երբեմն ազգը ջլատող պայքարին⁵⁴²:

Վերականգնված «Անահիտի» էջերում դարձյալ արտատպումներ են հայտնվում Հովհ. Շիրազից, Գեղամ Սարյանից, Նաիրի Զարյանից, Վահան Թեքեյանից և ուրիշներից: Ստեղծագործություններ են տպագրվում նաև խորհրդահայ նոր սերնդի գրողներից (Աղավնի, Սարմեն, Անդրանիկ Թերզյան և այլք)⁵⁴³: Վերլուծելով Խորհրդային Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը՝ ծերունագարդ խմբագիրը հայրենիքի հետ մերձեցման նոր հարաբերություններ է փնտրում, հնարավոր տարբերակներ մտածում Հայրենիքի և Սփյուռքի միջև կապերի վերականգնման համար: Գործնական ծրագրեր է առաջարկում, նաև անհատական ջանքերով ձգտում արտասահմանի մանավանդ հայ նոր սերնդի մեջ պահպանել տալ ազգային զգացումը, օգնել նորեկ գրողներին և արվեստագետներին, օտարարության մեջ պաշտպանել նրանց շահերն ու իրավունքները, ազգային մշակույթի սերը վառ պահել հայկական գաղութներում⁵⁴⁴:

Սակայն, պետք է ասել, որ այդ տարիներին արդեն Չոպանյանը քիչ բան կարողացավ անել: 1949 թ. ընդմիջտ դադարեց լույս տեսնել «Անահիտ» հանդեսը. վերջին համարը լույս տեսավ այդ թվականի ամռանը: Նախորդ տարվա ընթացքում էլ լույս էր տեսել ընդամենը երկու համար: Գլխավոր պատճառը, ինչպես ինքը՝ խմբագիրն է նշում, ոչ թե նյութական միջոցների անբավականությունն էր, այլ ավելի շուտ մի քանի ազգօգուտ կազմակերպություններին իր անդամակցությամբ հայրենակիցներին ծառայություն մատուցելու անձնվեր ծանր աշխատանքը, որը սպառում էր նրա ուժերը⁵⁴⁵:

⁵⁴² Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, թիւ 1, էջ 25:

⁵⁴³ Խորհրդային Հայաստանի բանաստեղծներ, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1, էջ 9-13:

⁵⁴⁴ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 57-58:

⁵⁴⁵ Տե՛ս **Չոպանյան Ա.**, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 44:

«...եթէ բոլոր ուժերս ու ժամանակս «ԱՆԱՀԻՏ»ին յատկացնէի, ան շատ աւելի բաժանորդներ կ'ունենար եւ ես կարող կ'ըլլայի տարին ոչ միայն երկու թիւ, այլ վեց թիւ հրապարակ հանել, որովհետեւ «ԱՆԱՀԻՏ», հակառակ իր անկանոն հրատարակութեան, բարեկամներ, զնահատողներ շատ ունի: Բայց ես չեմ կրնար թերթիս նիւթական շահերը պաշտպանելու համար հրաժարիլ քանի մը ազգօգուտ կազմակերպութեանց գործակցելով հայրենակիցներուս ծառայութիւն մատուցանել»⁵⁴⁶:

Սակայն, պետք է նկատել, որ նյութական խնդիրներն էլ քիչ չէին: Չոպանյանը հաճախ էր դժգոհում բաժանորդներից բաժնեգները կանոնավոր չվճարելու առնչությամբ: Արդեն 1929 թ. 4-րդ համարում գրում է. «Անահիտ»ի չորրորդ թիւն է որ լոյս կը տեսնէ, եւ տարեշրջանը լրանալու համար երկու թիւ միայն կը մնայ. եւ սակայն դեռ բազմաթիւ են մեր այն բաժանորդները որ չեն վճարած իրենց բաժնեգինը: Կը խնդրենք որ անոնք հաճին փութացնել այդ վճարումը...»⁵⁴⁷: Նույն դժգոհությունն է հնչում և հետագա համարներից շատերում, օրինակ՝ 1931 թ. հերթական հատորում. «Աւելի քան երեք ամիս է որ երկրորդ տարեշրջանը լրացաւ, եւ այդ տարեշրջանի բաժնեգիններէն ստուար թիւ մը դեռ անվճար կը մնա...: Կը յուսանք որ երրորդ տարուան ընթացքին մեր ընթերցողները իրենց բարոյական գնահատման ջերմութեանը պիտի ջանան զուգորդել իրենց բաժնեգնին արագ վճարման դրական առաքինութիւնը»⁵⁴⁸:

⁵⁴⁶ Նույն տեղում:

⁵⁴⁷ **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1929, մոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 128:

⁵⁴⁸ **Չոպանեան Ա.**, Երկու խոսք մեր ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 191: Տես նաև **Չոպանեան Ա.**, Մեր բաժանորդներուն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 192, **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի բաժանորդներուն, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 192, **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1932, մոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6, էջ 237, **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2, էջ 112, **Չոպանեան Ա.**, «Անահիտ»ի բաժանորդներուն, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 120, **Չոպանեան Ա.**, Մեր բաժանորդներուն, «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 61 և այլն:

Իսկ նրանց, ովքեր երբեմն դժգոհում կամ զանգատվում էին «Անահիտի» ոչ կանոնավոր, երբեմն ուշացած հրատարակումներից կամ թվերի կցումից, խմբագրապետը դեռ 1931 թ. տալիս է մի պատասխան, որը խիստ բնութագրական է հանդեսի ողջ գործունեությանը. «...միանգամ ընդ միշտ ըսենք որ մենք տպագրուած թղթի վաճառական չենք եւ այս հանդէսը լրագրական ամսաթերթի ձեւով չէ որ յղացած ենք, այլ իբր շարք մը գրական հաւաքածուներու որ մնայուն արժէք ունեցող արտադրութիւններով մեր արդի մատենագրութեան իրական ճոխացմանը նպաստեն»⁵⁴⁹:

Իսկ «Անահիտի» լսարանի դրվատական անմիջական արձագանքներից առանձնացնենք միայն մեկը, որտեղ շեշտը դրված է հանդեսի հատկապես գրական-կազմակերպչական դերի վրա. «**Անահիտի** ամէն մէկ թիւը անակնկալ մըն է հայ գրական եւ գեղարուեստական աշխարհին համար, որ այժմ այնքան նիհարած է եւ տժգունած: Գրական հանդէս մը չէ **Անահիտը**, այլ անոր ամէն մէկ հատորը գիրք մըն է հոյակապ, որ անցեալի քաղցր օրերը կը կապէ մեր այսօրուան ազգային կեանքին եւ հայրենի ապրումներուն, եւ ցոյց կուտայ նոր ծիլեր ու ծաղիկներ որոնք վաղուան մեր գեղեցիկ գարունը կ'աւետեն»⁵⁵⁰:

⁵⁴⁹ **Չոպանեան Ա.**, Երկու խօսք մեր ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2, էջ 191:

⁵⁵⁰ Նույն տեղում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Շուրջ տասնյոթ տարի ընդմիջումից հետո (1912-1929 թթ.) Արշակ Չոպանյանը վերահրատարակեց իր խմբագրած «Անահիտ» հանդեսը՝ այն անվանելով «Հանդես մտածման եւ արուեստի»։ Նոր «Անահիտը» թեև ունեցավ անկանոն հրատարակություն, սակայն համեմատաբար կարճատև ընդհատումներով տպագրվեց քսան տարի. վերջին համարը լույս տեսավ 1949 թ. ամռանը:

Սույն ուսումնասիրության մեջ անդրադարձ կա վերածնված հանդեսի բազմազան գործունեության գրեթե բոլոր կողմերին՝ բացի թերևս միայն հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության և ռամկավար-ազատականների գործունեության և փոխհարաբերության, Հայկական հարցի, համաշխարհային քաղաքական իրադրության վերաբերյալ քննարկումներից, որոնք չեն բխել հեղինակի հետապնդած նպատակների բովանդակությունից:

Արդ, ո՞րն էր «Անահիտի» վերահրատարակման պահանջն ու անհրաժեշտությունը:

20-րդ դարասկզբի՝ հայ ժողովրդի ազգային ճակատագրի համար բախտորոշ իրադարձություններից հետո ստեղծված նոր կացությունը՝ Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի գոյությամբ, իրողություն էր: Պատմական այս շրջանում արևմտահայության մեծ մասը, ցրված աշխարհով մեկ, իր համար ստեղծված նոր իրավիճակում ապրում էր տագնապ. կար գոյատևման և ինքնապահպանության ծանր ու բարդ խնդիրը: «Հիմնական հարցը, որ սկզբից ևեթ զբաղեցնում էր սփյուռքահայ միտքը,- ինչպես գրում է Յու. Ավետիսյանը,- բնօրրանից հեռու տարագրված հայության ազգային-հավաքական նկարագրի պահպանում էր, Սփյուռքի հայոց գանգվածներին միասնական ձգտումներով իրար կապելու անչափ

կարևոր խնդիրը»⁵⁵¹:

Ահա այս գիտակցմամբ առաջին հերթին Ա. Չոպանյանը վերածնունդ տվեց «Անահիտին»՝ ցանկանալով և ձգտելով ողջ հայությանն առաջարկել և առաջադրել գոյապահպանման կոմուններ, որոնք կարող էին դառնալ հիշյալ խնդիրների իրականացման կարևոր երաշխիքներ: Որպես լուծում առաջ քաշված մտահոգությունների՝ «Անահիտը», ի դեմս Չոպանյանի, անհրաժեշտություն համարեց սփյուռքահայությանը հոգով և գործով կապել Խորհրդային Հայաստանի հետ, խրախուսել արտասահմանում ապրող հայրենակիցների մասնակցությունը հայրենիքի վերակառուցման աշխատանքներին, մասնավորապես արևմտահայության աջակցությունը բերել հայ ազգային մշակույթի առաջադիմության ընդհանուր ջանքերին, ինչպես նաև պահպանել արևմտահայ լեզուն ու գրականությունը:

Ընդհանուր այդ նպատակների առանցքում Ա. Չոպանյանը դրեց հայ գրականության զարգացման հարցը: Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի գոյության իրողությունը աչքի առաջ ունենալով՝ նա որքան էլ հայ ժողովրդի երկու հատվածների մշակույթի մեջ տեսավ այլազան ուղղություններ՝ պայմանավորված այն ծնող հիմքերի հասարակական ու քաղաքական տարբերություններով, սակայն հանդեսի հիմնական խնդիրներից մեկը համարեց երկու գրականությունների միջև փոխադարձ հարաբերությունների ձևավորումն ու աշխուժացումը, իսկ ավելի լայն իմաստով՝ Հայաստանի և Սփյուռքի մերձեցումն ու համակողմանի կապերի ամրապնդումը:

«Անահիտը» առաջին հերթին դարձավ սփյուռքահայ գրական կյանքի կազմակերպիչներից մեկը՝ ասպարեզ բացելով գրական նոր ուժերի զարգացման համար: Ճանաչել տալով և խրախուսելով նորահայտ տաղանդներին, տպագրելով նրանց երկերը և շատ հաճախ գնահատելով հեղինակներին՝ Չոպանյանը հանդեսի էջերում միաժամանակ հրատարակեց հին ու նոր դասական գրողների գոր-

⁵⁵¹ Ավետիսյան Յու., «Անահիտ» հանդեսը», Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 209:

Ժերից, մեծ տեղ հատկացրեց նրանց ժառանգության արժևորմանը՝ ձգտելով ստեղծել հայեցի, ազգային մթնոլորտ՝ համոզված, որ ցեղային արմատներից կտրված, անցյալը մոռացած ու միայն ներկա հոգսերով ապրող գրականությունը որքան էլ հզոր լինի, երբևիցե կորցնելու է ազգային բնավորությունը:

«Անահիտի» ծրագրի մի կարևոր մասն էր նաև խորհրդահայ երիտասարդ գրողների ու նրանց ստեղծագործությունների և ընդհանրապես հայրենիքի գիտական, մշակութային կյանքի իրադարձությունների մասին նորությունների փոխանցումը սփյուռքահայ ընթերցողին: Հանդեսի խմբագիրն ինքը, հետևելով երիտասարդ սերնդի գաղափարական և գեղագիտական զարգացմանը, շատ հաճախ տարբեր առիթներով անդրադառնում էր նրանց նորատիպ գործերին, քննադատաբար արժևորում դրանք՝ առավելությունների կողքին նկատելով թերություններ՝ մասնավորապես կապված գաղափարական միտումնավորության, քարոզականության, գռեհիկ սոցիոլոգիզմի հետ:

Հայության բոլոր սերունդներին պատգամելով ճանաչել նախորդների արածը համամարդկային քաղաքակրթության ասպարեզում՝ նոր «Անահիտը» իր առջև խնդիր դրեց նաև ընթերցողներին ծանոթացնել ոչ միայն եվրոպական և ամերիկյան, այլև արևելյան հին ու նոր քաղաքակրթության բարձր արժեքներին ու հոգևոր հարստություններին, որը, խմբագրի համոզմամբ, կնպաստեր մեր ազգային մշակույթի ընդլայնմանն ու զարգացմանը: Ծրագրային այդ դրույթի կենսագործմամբ՝ գեղարվեստական թարգմանություններ, ուսումնասիրություններ, ինչպես նաև համաշխարհային արվեստի բազմաթիվ մնուշների արտատպումներ, «Անահիտը» իր ընթերցողին լայն հնարավորություն ընձեռեց հաղորդակցվելու համաշխարհային մշակույթի նվաճումներին:

Հետամուտ հայ գաղթօջախներ-հայրենիք մշակութային կապերի զարգացմանը՝ «Անահիտը» հավասար ուշադրություն դարձրեց և հետևեց թե՛ սփյուռքահայ և թե՛ հայրենիքում ապրող և գործող մանավանդ նորահայտ արվեստագետների ստեղծագործական

ընթացքին: Հանդեսը հայկական հին ու նոր արվեստի մասին մասնավորապես եվրոպական գնահատումների, պատմական-արվեստաբանական ուսումնասիրությունների թարգմանություններով մաս քարոզում էր ոչ միայն հայ գեղարվեստի նվաճումները, այլև բացահայտում հայոց գեղարվեստական հանճարի համաշխարհային առնչությունները, ցույց տալիս նրա ինքնուրույն դիմագիծը և ճշտում տեղը միջազգային ասպարեզում և զարգացման մակարդակում:

Կարևորելով գրականության հարցերը՝ նոր «Անահիտը» ընդարձակեց մաս «մտածման» բաժինը: Հանդեսում գեղարվեստական գործերի, արվեստաբանական ուսումնասիրությունների, պատմաբանասիրական ու գրականագիտական գրվածքների կողքին շատ հաճախ տպագրվում էին գիտական բնույթի ամենատարբեր ուսումնասիրություններ, որոնք շոշափում էին փիլիսոփայական, հասարակական, իրավաբանական և գիտական այլ հարցեր:

Ամփոփելով նկատենք, որ վերածնված «Անահիտը» ըստ էության իրականացրեց այն խնդիրները, որոնք պարբերականի առջև դրել էր Արշակ Չոպանյանը: Գրականության, արվեստի, ընդհանրապես հայ և համաշխարհային մշակույթի քարոզը, հասարակական ամենատարբեր հարցերի վերլուծությունը, ժամանակի քաղաքական հարաբերությունների լուսաբանումը նպաստեցին սփյուռքահայ ընթերցողի աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանը:

Մեծ եղավ «Անահիտի» դերը սփյուռքահայ գրականության առաջընթացի ասպարեզում: Մակայն հատկապես նշանակալից եղավ հանդեսի ու նրա խմբագրի ծառայությունը սփյուռքահայությունը մայր հայրենիքի նկատմամբ սիրո ու անձնվիրության ոգով դաստիարակելու գործում:

РЕЗЮМЕ
АРШАК ЧОПАНЯН И ВОЗРОЖДЕННЫЙ
ЖУРНАЛ «АНАИТ»

Аршак Чопанян (1872–1954), западноармянский писатель, публицист, филолог и редактор, сформировавшийся в литературной среде Константинополя конца XIX века и впоследствии живший в Париже, основал литературно-художественный журнал «Анаит» в Париже. Издание имел два периода издания: первый- с 1898 по 1911 год, и второй- с 1929 по 1941 год, а также с 1946 по 1949 год. Если деятельность журнала «Анаит» в первый период стала предметом отдельных исследований, то второй период издания до сих пор не был детально изучен.

В данной книге представлены основные аспекты деятельности «Анаит» во второй период, дается национальная, общественная и эстетическая оценка журнала. Также описываются различные эпизоды и страницы, связанные с многогранной деятельностью редактора в этот период.

Пропаганда армянской и мировой литературы, искусства и культуры, анализ различных социальных вопросов и освещение политических отношений того времени на страницах журнала способствовали формированию и развитию взглядов армянских читателей в диаспоре.

Особенно велико было значение журнала «Анаит» в развитие литературы армянской диаспоры. Неоценима также роль журнала и его редактора в воспитании армян диаспоры в духе любви и преданности к Родине.

Книга будет интересна исследователям истории армянской литературы и прессы, студентам факультетов филологии, истории и журналистики, а также широкому кругу читателей.

SUMMARY
ARCHAG TCHOBANIAN AND THE REVIVED
ANAHIT JOURNAL

Archag Tchobanian (1872-1954), a Western Armenian writer, publicist, philologist, and editor, shaped within the late 19th-century literary circles of Constantinople and later residing in Paris, founded the journal **Anahit** in Paris. The journal had two publication periods: the first from 1898 to 1911, and the second spanning 1929-1941 and 1946-1949. While the activities of **Anahit**'s first period have been the subject of separate studies, its second period has not yet been comprehensively researched.

This book presents the main aspects of **Anahit**'s activity during its second period, offering a national, social, and aesthetic evaluation of the journal. It also recounts various episodes and pages related to the editor's multifaceted activities during that time.

The journal's promotion of Armenian and global literature, art, and culture, as well as its analysis of diverse social issues and coverage of contemporary political relations, played a significant role in shaping and developing the perspectives of its diasporan Armenian readers.

In particular, **Anahit** had a profound influence on the advancement of diasporan Armenian literature. The journal and its editor rendered invaluable service in educating the Armenian diaspora with a spirit of love and devotion toward the motherland.

This book will interest those engaged in the study of Armenian literature and press history, students of philology, history, and journalism, as well as a broader readership.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Աթաբեկյան Ս.**, Ակսել Բակունց. պատմվածքի վիպական աշխարհը, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1996:
2. **Ալեքսանյան Տ.**, Արշակ Չոպանյան, Աթենք, տպ. Պարթենոն, 1939:
3. **Ավագյան Ա.**, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 29:
4. **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը», Եր., Երևանի համալսարանի հրատ., 1999, 228 էջ:
5. **Արմեն Ե.**, Արշակ Չոպանեան: Կենսքը եւ գրական ու հասարակական գործունեությունը, Կ. Պոլիս, տպարան Ռ. Սագաեան, 1913:
6. **Բախչինյան Հ.**, Ֆրիկի բանաստեղծական ժառանգությունը. Բնագրեր և քննություն, Եր., ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2021:
7. **Գաբրիելյան Վ.**, Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 1981:
8. **Դալարյան Կ.**, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1987:
9. **Թամրազյան Հր.**, Հայ քննադատություն, Գիրք Գ., Եր., «Նաիրի» հրատ., 1992:
10. **Հապէեան Հ.**, Արշակ Չոպանեան: Կենսագրական գիծեր, Փարիզ, տպ. Կ. Յ. Ներսէս, 1924:
11. **Չոպանյան Ա.**, Նամականի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980:
12. **Չոպանյան Ա.**, Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988:

13. Վարդանյան Խ., Դանիել Վարուժանը և «գրական հեթանոսությունը», Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006, էջ 5:

14. Քալանթարյան ժ., Հայ գրականագիտության պատմություն (5-19-րդ դարեր), Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986:

15. Ֆեներճեան Գ., Արշակ Չոպանեան: Կենսագրական եւ մատենագրական նօթեր, Փարիզ, տպ. Խ. Մաթիկեան, 1938:

Բ. ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944:

Գ. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1. «Ակունք», Իջևան, 2016, թիվ 1:
2. «Անահիտ», Փարիզ, 1902, մարտ, թիւ 3:
3. «Անահիտ», Փարիզ, 1903, փետրուար-մարտ, թիւ 2-3:
4. «Անահիտ», Փարիզ, 1909, հոկտեմբեր-նոյեմբեր, թիւ 7-8:
5. «Անահիտ», Փարիզ, 1910, մարտ-ապրիլ, թիւ 11-12:
6. «Անահիտ», Փարիզ, 1911, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 9-12:
7. «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1:
8. «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2:
9. «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3:
10. «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4:
11. «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5:
12. «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6:
13. «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս-յունիս, թիւ 1:
14. «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2:
15. «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3:
16. «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4:
17. «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6:

18. «Անահիտ», 1931, մայիս-օգոստոս, թիւ 1-2:
19. «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2:
20. «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6:
21. «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2:
22. «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր-1933, ապրիլ, թիւ 3-6:
23. «Անահիտ», Փարիզ, 1933, յուլիս-սեպտեմբեր, թիւ 1-2:
24. «Անահիտ», Փարիզ, 1933, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 3-4:
25. «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6:
26. «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2:
27. «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ-յունիս, թիւ 3-4:
28. «Անահիտ», Փարիզ, 1935, յուլիս-սեպտեմբեր, թիւ 5:
29. «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6:
30. «Անահիտ», Փարիզ, 1936, յունուար-մարտ, թիւ 1-2:
31. «Անահիտ», Փարիզ, 1936, ապրիլ-մայիս, թիւ 3:
32. «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս-օգոստոս, թիւ 4:
33. «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6:
34. «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2:
35. «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4:
36. «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6:
37. «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3:
38. «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս, թիւ 4:
39. «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.-դեկտեմբեր, թիւ 5-6:
40. «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2:
41. «Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թիւ 3:
42. «Անահիտ», Փարիզ, 1939, յունիս-սեպտեմբեր, թիւ 4-5:
43. «Անահիտ», Փարիզ, 1939, հոկտ.-նոյեմ.-դեկտ., թիւ 6:
44. «Անահիտ», Փարիզ, 1940, յունուար-փետր.-մարտ, թիւ 1-3:
45. «Անահիտ», Փարիզ, 1940, ապրիլ-մայիս-յունիս, թիւ 4:
46. «Անահիտ», Փարիզ, 1940, յուլիս-դեկտեմբեր, թիւ 5-6:
47. «Անահիտ», Փարիզ, 1946, յունուար-յունիս, թիւ 1:
48. «Անահիտ», Փարիզ, 1946, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2:

49. «Անահիտ», Փարիզ, 1947, յունուար-յունիս, թիւ 1:
50. «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2:
51. «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1:
52. «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2:
53. «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, թիւ 1:
54. «Ապագայ», Բարիզ, 1924, մարտ, թիւ 16:
55. «Ապագայ», Բարիզ, 1924, մարտ, թիւ 17:
56. «Արեւ», Գահիրէ, Եգիպտոս, 1929, թիւ 3036:
57. «Արեւ», Գահիրէ, 1929, թիւ 3037:
58. «Արեւ», Գահիրէ, 1930, 2 յունիս, թիւ 3446:
59. «Բագին», Լիբանան, 1999, թիւ 4:
60. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1977, № 3:
61. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 1:
62. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3:
63. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1997, №3:
64. «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Երևան, 2020, № 3:
65. «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Երևան, 2023, № 3:
66. «Չուարթնոց», Փարիզ, 1929, յունուար:
67. «Էջմիածին», Ս.Էջմիածին, 2022, № 7:
68. «Կանթեղ», Երևան, 2016, № 1:
69. «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, № 1 (13):
70. «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, № 2 (14):
71. «Հայրենիք», Բոստոն, 1931, մայիս, թիւ 7:
72. «Հայրենիք», Բոստոն, 1933, հոկտեմբեր, թիւ 12:
73. «Պայքար», Երևան, 1996, թիվ 9-10:
74. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1972, № 3:
75. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2001, № 1:
76. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2005, № 1:
77. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2019, № 3:
78. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2022, № 3,

79. «Պատմության տարեգիրք», Երևան, 2020:
80. «Սիոն», Երուսաղեմ, 1964, մարտ, քիւ 3:

Գ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://hy.wikipedia.org/wiki/%D5%87%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D5%B6%D5%AB%D5%AF_%D4%B2%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6 (մուտք՝ 16.12.2024):
2. https://ru.wikipedia.org/wiki/%D0%A7%D0%B5%D1%80%D0%B5%D0%BF%D0%BD%D0%B8%D0%BD,%D0%90%D0%BB%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%D0%BD%D0%B4%D1%80_%D0%9D%D0%B8%D0%BA%D0%BE%D0%BB%D0%B-%D0%B5%D0%B2%D0%B8%D1%87 (մուտք՝ 29.01.2024):
3. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D6%80%D5%AB%D5%BD_%D5%8C%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC (մուտք՝ 29.01.2024):

ԱՆՎԱՆԱՅԱՆԿ

Ա

Աբելյան Հ. 24, 30, 160
Աբելյան Ս. 50
Աբեղյան Ա. 56
Աբեղյան Մ. 28, 43
Աբով Գ. 126, 141
Աբովյան Խ. 66-67
Արոնց Ն. 55, 134
Ազատյան Թ. 4
Աթաբեկյան Ս. 123, 182
Ալազան 30-33, 117, 120, 126, 128, 141, 168, 170
Ալեքսանյան Ն. 45, 135
Ալեքսանյան Տ. 5, 182
Ալիշան Ղ. 16, 49, 67
Ախիկյան Վ. 142
Ակինյան Ն. 52, 55
Ահարոնյան Ա. 104, 112-113
Աղաջանյան Կ. 137-138
Աղաջանյան Ստ. 164
Աղասյան Ա. 156
Աղավնի (Աղավնի Գրիգորյան) 173
Աճառյան Հ. 19, 28
Այգեկցի Վ. 56
Այվազովսկի Հ. 142, 145, 158
Անալիս (Եվփրիմեն Ավետիսյան) 47, 65
Անանյան Ա. 29
Աննուցիո Գ. 47
Անտոնյան Ա. 90

Անտոնյան Հ. 47-48
Աշտարակեցի Ն. 57
Առաքելյան Ս. 163
Ասատուր Գ. 43
Ասատուր Հ. 64-65
Ասլանյան Լ. (Լաս) 119
Ավագյան Ա. 83, 90, 97-101, 182
Ավագյան Վ. 5, 22, 53, 66, 69, 72
Ավետիսյան Ա. 140
Ավետիսյան Ե. (Անազիա) 65
Ավետիսյան Յու. 5-6, 8, 17, 161, 176-177, 182
Ավետիսյան Օ. 159
Ավետյան Ա. 24, 29
Արագի 124
Արլեն Մ. 153
Արմեն Ե. 5, 182
Արշարունի Վ. 136
Արսեն Երկաթ 114
Արփիարյան Ա. 68, 78, 83

Բ

Բաբայան Ա. (Կարմոնելի Արմենիա) 145, 156-157
Բաբայան Մ. (Ռոզ Պատմագրյան) 148-151, 156
Բաբայան Շ. 147, 156
Բաբայան Ս. 146, 156
Բագրատունի Ա. 67
Բախ Յոհան Սեպաստիան 136, 161

Բախչինյան Հ. 59-60, 182
Բակունց Ա. 15, 119-124, 132, 141,
168, 170, 182
Բայրոն Ջ. 110
Բաշալյան Լ. 78-79
Բաշինջաղյան Գ. 145
Բասմաջյան Կ. 136
Բեթգե Հ. 56
Բեթիովեն Լ. 15
Բողլեր Շ. 48
Բուրլա 152
Բունիաթյան Ն. 27

Գ

Գաբրիել Ա. 47
Գաբրիելյան Վ. 14, 31, 96, 129,
169, 182
Գալեմբյարյան Ջ. 157
Գայֆեճյան Վ. 164
Գասպարյան Շ. 65
Գյոթե Յ. 163
Գյուրջյան Գ. 163
Գոթին Թ. 49, 110
Գոթին Ժ. 43
Գորկի Մ. 20, 50-51, 169
Գուշակյան Թ. 134
Գուստավ Կ. 154

Դ

Դավլաթյան Կ. 5-6, 8, 23, 31-32,
35, 38, 53, 59-61, 63, 73, 76, 79,
83, 94, 117, 119, 154, 182
Դաշտենց Խ. 120
Դաշտեց Ս. 54
Դավիթ-Բեկ Մ. Ս. 47-48
Դեմիրճյան Դ. 15, 28-29, 72-73,
168

Դողեն Ա. 49
Դողեն Լ. 49
Դոլուխանյան Ա. 53
Դոստոևսկի Ֆ. 50
Դուրյան Ե. 64, 71
Դուրյան Պ. 66

Ե

Եղիազարյան Թ. 150
Եղիայան Բ. 136
Եղիշեն 66
Եսայան Ջ. 168, 171
Երեմյան Ա. 35, 71-72, 120, 141,
163-164
Երզնկացի Հ. 54, 58-59
Երզնկյան Ա. 29

Ջ

Ջամինյան Ա. 55
Ջարդարյան Հ. 21
Ջարդարյան Ռ. 62, 95, 117
Ջարյան Կ. 84, 86, 88, 108-114
Ջարյան Ն. 120, 141, 168, 173
Ջարոյան Պ. 120-123
Ջաքարյան Ա. 148-149
Ջոհրապ Գ. 43, 62, 64, 68, 78, 104
Ջորայան Ջ. 136
Ջորյան Հ. 25
Ջորյան Ն. 15
Ջորյան Ս. 15, 168

Է

Էլմաս Ս. 160
Էմինեսթու Մ. 47, 49
Էսքիլես 47-48

Թ

Թաղևոսյան Ե. 34, 142, 160, 164
Թամանյան Ա. 26-27, 160
Թամրազյան Հր. 73, 182
Թեղեղյան Մ. 117
Թերզիպաշյան Գ. 41-42, 44
Թերզյան Ա. 173
Թերզյան Է. 63
Թերզյան Թ. 62-63
Թերլենեզյան Փ. 27, 30, 142
Թեքեյան Վ. 63, 82-83, 86, 104, 106, 109, 173
Թիերստ Ժ. 146
Թիրյաքյան Հ. 42, 134
Թլկատինցի 62, 95
Թլկուրանցի Հ. 54, 58
Թոթովենց Վ. 28, 30, 132, 168, 170
Թորամանյան Թ. 27
Թոքաթյան Ա. 151
Թումանյան Հ. 15, 35, 62, 70, 120

Ի

Իշխան Մ. 115
Իսահակյան Ա. 15, 62, 65, 69-71, 88, 109, 119
Իսրայել Օրի 57

Լ

Լալուա Լ. 146
Լամարթին 49
Լաֆոնտե 86, 155
Լեո 18, 30, 49, 120
Լի-Թաի-Փե 43
Լևոնյան Գ. 14, 30, 142

Խ

Խալիտե Է. 44

Խայան Օ. 41, 56
Խանամիրյան Գ. 43, 154
Խանգաղյան Յ. 29
Խանջյան Ա. 29
Խանջյան Ջ. 80
Խոճասարյան Օ. 78
Խորենացի Մ. 55, 57-58, 69
Խորեն Ա կաթողիկոս 143

Ճ

Ճերենց 67

Կ

Կաղանկատվացի Մ. 55
Կամսարական Տ. 63, 78-79
Կան Գ. 156
Կասբուն Պ. 135, 146
Կաքավյան Վ. 95
Կերտան Լ. 154
Կիրակոսյան Գ. 50
Կոմիտաս վարդապետ 31, 44-45, 64-65, 135, 138, 141, 147-150
Կոջոյան Հ. 27, 142, 164
Կոստանդյան Ն. 148
Կորյուն 55

Հ

Հակոբյան Հ. 132, 141
Հակոբյան Ս. 30
Համաստեղ 86, 90-91, 94-95
Հայնե Հ. 111
Հապեշյան Հ. 5, 61, 182
Հարսման Թ. 148-150
Հարությունյան Ա. 135
Հաֆիզ 41-42, 56
Հեթում Պատմիչ 56-57

Հիսուս 152

Հովհաննիսյան Հ. 129, 131

Հովսեփյան Գ. 20, 162, 164

Ղ

Ղափանցյան Գ. 19

Ղոնչեկյուլյան Գ. 135

Մ

Մագսուտյան Ն. 134

Մազմանյան Վ. 136, 161

Մախոխյան Վ. 145, 158,

Մալխասյանց Ս. 34

Մակինցյան Պ. 19, 35

Մակրու Ժ. 137

Մահարի Գ. 15, 32, 117, 124-128,
131, 168, 170

Մամուլյան Ռ. 151-153

Մամուրյան Մ. 78

Մանանդյան Հ. 28, 55

Մանկունի Վահրամ եպիսկոպոս
65

Մանվելյան Ե. 137-138

Մանուշյան Մ. 81, 119

Մաշտոց 52

Մարկոսյան Ա. 26

Մարկվարտ Յ. 52

Մարտիրոսյան Ն. 136

Մելիշար Ա. 146

Մելիքյան Ռ. 26

Մելիքյան Ս. 28, 142

Մելիք-Օհանջանյան Կ. 25, 42

Մեծարենց Մ. 71, 109

Մեսրոպյան Ա. 28, 137

Մետերլինկ Մ. 110

Միսթրալ Ֆ. 47, 49, 61

Միրաքյան Լ. 26

Միրաքյան Վ. 62, 119-120

Միգլեկիչ Ա. 47, 49

Միքայելյան Կ. 20, 140

Մկրտիչ Ա. 120, 124, 129-130, 132,
141

Մորճիկեյան Պ. 7

Մութաֆեան Ջ. 136, 161, 163

Մուհամմեդ 152

Մուշեղ Իշխան 115

Մուրադբեկյան Խ. 23

Մուրադյան Հ. 153

Յ

Յորգա Ն. 31

Ն

Նալբանդյան Մ. 77-78, 142

Նանսեն Ֆ. 52

Նար-Դոս 68, 71-77

Նարեկացի Գ. 14, 42, 101

Նար-Պեյ (Խորեն Գալաֆյան) 49

Ներսիսյան Հ. 24, 140

Նիգշե 112

Նորենց Վ. 15, 117, 120, 124-128,
131, 168, 170

Նուրիկյան Բ. 95

Շ

Շաթոպրիան 49

Շահին Է. 23, 137, 145, 154-155,
157, 159

Շահնուր Շ. 16, 90, 96-107, 117,
182

Շարա Տալյան 24

Շաքլյան Ա. 117

- Շելի Պ. 47-48
 Շենի Պ. 155
 Շեքերջյան Պ. 50
 Շեքսալիբ Վ. 15, 86, 112
 Շիշմանյան Ռ. 158, 161-162
 Շիրազ Հ. 120, 132, 173
 Շիրվանզադե Ա. 27, 30, 68, 73-76, 104, 119, 131, 141-142
 Շնորհալի Ն. 66
 Շոպեն Ֆ. 160
- Ո**
 Ոսկանյան Ա. 24, 29
 Որբունի Ջ. 81, 96-97, 117, 131-132
- Չ**
 Չարենց Ե. 15-16, 29, 109, 111, 117, 119, 124-126, 131, 141, 170
 Չելսով Ա. 50
 Չերեպին Պ. 149
 Չոպանյան Ա. 5-6, 8-45, 48-54, 56-61, 63-119, 123-134, 136-138, 143-144, 146, 150-160, 163, 167-174, 176-177, 179, 182
 Չրաքյան Տ. 109
 Չուբար Գ. 77
 Չուբար Ե. 171
- Պ**
 Պասկովի Ջ. 47
 Պատմագրյան Ա. 135
 Պարթու Լ. 156
 Պարոնյան Հ. 66, 78-81
 Պեկյան Ն. 135
 Պեշկեթաշլյան Ն. 117
 Պետրոսյան Ա. 137
- Պերպերյան Օ. 159
 Պլեյքի 112
 Պրոմնթևս 47-48
- Ջ**
 Ջիվանի 30-31
 Ջրբաշյան Էդ. 124
- Ռ**
 Ռարլե Ֆ. 86
 Ռասին Ժ. 86
 Ռավել Մ. 149
 Ռեմբո Ա. 109
 Ռեմբրանդ Ռ. 15
 Ռոբաքիծե Գ. 17
 Ռումի 42
 Ռուստամ 43
- Ս**
 Սաադի 41
 Սագրգյան Ա. 159, 162
 Սազինյան Ա. 151
 Սայաթ-Նովա 31, 41
 Սարաֆյան Ն. 81, 108, 114
 Սարգսյան Ա. 27, 142
 Սարմեն 120, 173
 Սարյան Գ. 30, 120, 132, 168, 173
 Սարյան Մ. 27, 30, 43, 142, 163
 Սարոյան Վ. 118
 Սարովսան Ա. 145, 158
 Սեբաստացի Մ. 16
 Սեթյան Հ. 49
 Սեկեն Փ. 137
 Սեմա Ա. (Աթմաճյան Գեղամ) 81, 119
 Սիամանթո 83, 104, 106, 109, 132

Սիմոնյան Գ. 28, 30, 168
Սիմոնյան Ս. 55
Սիպիլ (Չաբել Խանջյան) 80
Սիրունի Հ. 47, 49
Սողոմոն Տ. 168
Սպենդիարյան Ա. 26, 141
Սվաճյան Հ. 78-79
Ստամպոլցի Ն. 54
Ստեփանյան Գ. 5
Ստեփանյան Ս. 142
Սունդուկյան Գ. 74
Սուրխաթյան Հ. 18, 35

Վ

Վահե Հայկ 95
Վահյան Վ. 81
Վահրամյան Գ. 164
Վաղարշյան Վ. 24, 140
Վարդանյան Խ. 171, 183
Վարուժան Գ. 83, 104, 106, 109,
117, 171, 183
Վերգիլիոս 47-48
Վերֆել Ֆ. 90
Վեցիկյան Ս. 136
Վիկտոր Հ. 47, 49
Վիյյոն 86
Վշտունի Ա. 141
Վրացյան Ս. 37-39, 125-126
Վուլչիք-Քեոփրոյլյան Պ. 136,
161

Տ

Տատուրյան Ա. 118
Տարոնցի Ս. 168
Տեմիրճիպաշյան Ե. 63-64, 109
Տերյան Վ. 86, 109

Տերտերյան Ա. 19
Տիգրանյան Ա. 35
Տիրանյան Ս. 82
Տիրանյան Վ. 82
Տյուսաբ Ս. 65
Տրապիզոնի Գ. 140
Տրուայ Մ. 153
Տուրգենև Ի. 50

Բ

Բաֆֆի 16, 65-69, 104

Փ

Փափագյան Վ. 151
Փեչիկյան Ե. 23, 116
Փիաշո Ռ. 140
Փոլատ Տ. 155-156
Փուշման Հ. 140, 157

Ք

Քալանթար Աշխ. 25
Քալանթար Ավ. 28
Քալանթարյան Ժ. 17, 75, 81-82,
84, 88, 96, 102, 105, 108, 113,
183
Քաջագնունի Հ. 29
Քաջարենց Հ. 47-48
Քեշիշյան Մ. 134
Քեպապճյան Մ. 145, 151, 154
Քյոսեյան Հ. 58
Քյուրդյան Հ. 159, 162
Քոչարյան Ուրարտու Ա. 142, 164
Քոչարյան Ս. 24, 140
Քուչակ Ն. 54, 56, 58, 61

Օ

Օշական Հ. 80, 91, 104

Օտյան Գ. 49, 64

Օտյան Ե. 80, 104, 158

Օրմանյան Մ. 65

Ֆ

Ֆեյդի Ֆ. 56

Ֆեներճյան Գ. 100, 101, 107

Ֆիդիաս 15

Ֆիզուլի 41, 44

Ֆիլոն 140

Ֆիրդուսի 42-43

Ֆնտգլյան Գ. 41, 65

Ֆրանս Ա. 155

Ֆրիկ 59-61, 182

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վաչագան Վարազդատի Ավագյան

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԸ ԵՎ ՎԵՐԱԾՆՎԱԾ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 11.03.2025:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 12.125:
Տպարանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am



publishing.yeu.am